891.99
Ձ-20

2004

341-ՀՀ
3834-Հ. Հ
391.99
Պ-20
1009 / 3898

ԱՐՀԵՍՏ

# ԲԱՐԻՈՔ ՄԵՌԱՆԵԼՈՅ

ԿԱՄ

## ԱՐՀԵՍՏ ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԵԱՆ

## ԳԻՐՔ ԵՐԵՔ

*Քերթուած թարգմանեալ 'ի Լատին բնագրէ*
*'ի Հայ ոտանաւոր չափմամբ*

*Աշխատասիրութեամբ Հ. Մանուէլ Վար-*
*դապետի Ջախջախեան 'ի Մխիթարեան*
*Միաբանութենէ :*

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1819

Հ.Ս.Խ.Հ. ... Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ճշմարիտ և օրինաւոր Իմաստասիրութիւն այն է միայն՝ որ երբէք կամ զԱստուած, կամ առ Աստուած առաջնորդէ մարդկան :

Գալլուպպոն :

# ՆԱԽԵՐԳԱՆՔ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Եթէ ըստ հնախոյզ իմաստնոց՝ Բանաստեղծու-
թեան առաջին սկիզբն և առաջին վախճան՝ Օրհնա-
բանութիւն է Այ, ոչ յածագեցիկ Հոգեբերողաց
և եթ գեղեցիկ հրաշաբանութեամբք ըղձաձայնեալ,
այլև 'ի նախնեացն արտաքնոց՝ 'ի Յունականացն ա-
սեմ 'ի Մուսէոսէ, 'ի Լինոսէ և յՈրփէոսէ՝ յԱծա-
բան վերաձայնեալ Բանահիւսացն, որք շարժեցին
զերգս նախ առաջին յօրհներգութե Մովսեայ չար-
ժանացելոց Ածական անուան, քաջ է տալ ընտրու-
թն սիրողիս Բանաստեղծութեան յընծայաբերն լի-
նել այսմիկ, զոյն մատուցանել նախանուէր ընծայ՝
տարժակից Մերազնեայս, գուզնաքեայ արդարև
ըստ գոյին, զի գոյզն է և մատուցողին զօրութեան
կար, այլ՝ անկշիռ և անբաւ ըստ ազնուականութեան
մատուցելոյն: Զի Արհեստ է սա Բարւոք սիրելոյ,
Արհեստ սիրելոյ զած, Արհեստ վարժելոյ զազնը-
ւագոյնն 'ի Կրից զՍէրն՝ յարժանապէս սիրել զամե-
նաբաւ զարարչապետ Սիրոյն և Սիրելեաց· որ ան-
բաւութեամբ բարութեանն արժանին է անդրանիկ
սիրոյ, միահեծան սիրոյ, գորովական և անպայման
սիրոյ: Որոյ սէր այսօրէն սկզբնաւորեալ՝ զսիրողն յա-
ջեցուցանէ գեր'ի վերոյ մարմնապէս սիրողացն, որք

կամ անյագութեամբ ախտանան , և կամ արագայագ-
տաղտկութեամբ , իսկ 'իգերաշխարհիկ կայանսն՝ ուր
ծծուիրացն են հայրենիք , նոյն ինքն Սերն՝ սիրոյ է
վարձ , սիրողաց կշտապինդ յագեցուցիչ , և յաւէժ
երանացուցիչ՝ անմահն և օտար 'ի յափրութենէ ։

Ցանկալի Արհեստիս ուսուցիչ՝ է նա ինքն Կայ-
ետանոս Գոռայցա Կրօնաւոր 'ի Կարգէ Մինորից ,
Դասատու երբեմն Բարոյական Ածաբանութեան
յակն ախեղերաց 'ի Հռովմ ․ որոյ գեղեցիկ չափաբե-
րութեամբ յԵրիս Գիրս համառօտեալ 'ի տիպ ար-
ձանացոյց անդ 'ի Լատին բարբառ՝ յամին 1724 ․ պատ-
կանեալ Նիւթոյն վսեմութեան զոճոյն Նորազուարճ
քաղցրութիւն և զծաղկափթիթ գեղեցկութիւն , գե-
տեղով չափ ազգաղական գոլ զԲանաստեղծականն ոճ
գեղապանծ և ոգելից քան զիմաստասիրականն ան-
պաճոյճ և ցուրտ՝ 'ի շարժել զօրաբար , 'ի զարթու-
ցանել զախորժակս հոգւոյ ընդարմացելոյ , որ միշտ
գեղեցկին է սիրող , նորութե՛ հետախոյզ , և անու-
շութեան խանդակաթ ․ որով և համոզեալ զօրէն
քմաց ախտացելոյ՝ քամէ զգեղոցն բաժակ , 'ի նոյն և
զառողջութիւն ,

Նոր այս Վարդապետ Սիրոյ՝ զոր միանգամ քեր-
թողական գեղեցկաբանութեամբն վարդապետէ , ոչ
ըստ քմաց ինչ առեղծաբանութեամբ ճամարտակէ ,
այլ՝ մադիւր թարթափեալ աշակերտութեամբ 'ի
դպրոց ածուայոյց պատգամացն , յառածս ածակիր
Հարց , իմաստուն Վարդապետաց և Ներանձնացե-
լոց , որպէս է իսկ հաւաստել 'ի հատընտիր իմաստից
Նոցա ծաղկաքաղ պատուատելոց 'ի վախճանի Իւրա-
քանչիւր Գրոց 'ի հաստատութիւն աւանդելոցն ։ Զօ-
րացուցանէ զբանսն և մխրալի օրինակօք Սրբոցն վար-

ժեղոց վաղ ուրեմն 'ի գալոց ճաճարորդք Սիրոյն, եր-
ջանիկ Հայաստանեայն անձնահամբոյր հոգեխաղրկելոց ընդ
անախտական երկնաւոր փեսային՝ յանմատոյց տա-
գաստ խանդաղակաթ սիրոյն, ամբարձելոցն 'ի գե-
րակատար աստիճան ծածայլն ամենաբաղցր սիրոյն, որ
հողաշուրթն լեզուաց է անճառելի, և յերկրաքարշ
մտաց անհասութեամբ վարագուրեալ։

Ուշինչ ակնածէ ծածախօս Բանաստեղծս 'ի հիւ-
սել զկանոնս Արհեստին՝ վարիլ յոճ բանաստեղծա-
կան, 'ի լեզու և 'ի պատկեր նմին սեփական, անձ-
նաւորել զկրից բնաւորութիւն, զմոլութեանց զաղ-
բութիւն, զառաքինութեանց գեղեցկութիւն, ան-
շունչ տարերաց անգամ այլովքն հանդերձ ստեղծա-
նել զզգայութն, անուն ընծայեալ ճշմարտիցն էակաց
զառ'ի նախնեաց զկերծեալսն այլաբանօրէն։ Զայս
ոչ օտար ինչ տեսանեմք և յածազգեստիցն Հայոց
ճշմարտութեանն քերթողաց, յորս բարձր 'ի գլուխ
ճոխացեալ քերթողաբանէ Նազիանզու Բանահիւս.
այն զի՝ և զբարձրախօս մարգարէս անգամ գիտեմք
յայսպիսիս զիջեալ 'ի պատկերս խոնարհագոյնս, զու-
արճանալ այլաբանութեամբք, թէև ընծայել տա-
ւոտու և հողմոց, և արեւու տապաստս, անզգայից
կենդանութիւնս և բան հանճարոյ, և անմարմին բը-
նութեանն՝ անդամս և կիրս և գործ մարմնաւորաց։

Այլ քանզի այսպիսի անուանք մնացածինք հը-
նախօս տաստպելարկուաց՝ ոչ փոքր մասյլ յիմաստս
արկանեն, յօժարեցաք տա լուսաբանութիւն նոցա
նշանակել յաւարտ իւրաքանչիւր գրոց ծանօթու-
թիւնս՝ բայց հակիրճ, զի մթութեանցն յայտնաբա-
նութիւն և եթ դիտեմք, և ոչ տիրապէս դիւցաբա-
նութիւն, որ չէ իսկ տեղւոյս և ժամանակիս։

Բանասէր դու և Ա՛ծասէր, 'ի պատահել քում բարեշնորհութեամբ երկասիրութեանս փոքու՝ (զորոյ զԹարգմանութիւն պարապորդութիւնն թելադրեաց յամին 1812 յառանձին պիտանութիւն, զհրատարակումն արգել անպարապութիւնն, իսկ զարդիս բարեկամութիւնն յորդորեաց հրապարակել զայն 'ի պէտս հասարակաց,) եթէ և ես բարեմասնութեան պատահեցայց քաղցրանալ քեզ 'ի վերծանութեան և 'ի վարժութեան Արհեստիս Ա՛ծսիրութեան, և բորբոքել սովաւ ոգւոյդ 'ի սէր անհուն Սիրելւոյն, մաղթեմ 'ի Նմանէ արծարծանել զնշոյլ կայծականն և 'ի սիրտ մատուցանողի Արհեստիս, և գտայց Լիաձեռն վարձատրեալ և շնորհապարտ անմոռաց:

ԱՐՀԵՍՏ

# ԲԱՐԻՈՔ ՍԻՐԵԼՈՅ

ԿԱՄ

## ԱՐՀԵՍՏ ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԵԱՆ

---

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

### ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Քանզի Սէրն անձնականից գոլով յամենայն ա-րարածս՝ եւս և յանշնչականս, ընդարձակելքն որպէս շքեղութեան յենան երկասէր գրականակէ, ամե-նայն մարդիկ շարժին 'ի սիրել, բայց 'ի սիրել բարւոք : Արդ՝ շնորհ Սիրոյ՝ որ բարւոք սիրողս գործէ յետ նշանակելոյ շքեղականց մերս, ցու-ցանէ բազմապատիկ ճառից բանից սրբոց Հարց, թէ ո՛չ դէմ առ առ Պաւղոսի, ո՛չ յետ Հայրա-պետութեամբք . եւ ո՛չ հրապարակ 'ի դիւրաբանական գեղեցկութեան մարմնոյ . որով առաւել եւս սով-րեցան սիրել կանխանդել Թղթաբանութեամբ : Յետ առաջագրութեան Կղեայ և Յաղթանակի Ս.հրո-դիտեայ, խորագին ամենեցեան ցուցել 'ի նոս : Յարհեստ բարւոք Սիրելոյ 'ի բաց ձգարեալ

զիւրաքանչիւր 'ի ստեղծական բարեաց , ցուցա-
նէ բազում ձեռնարկութեամբք՝ թէ պա́րտ է զա-
խորժակս հոգւոյն ուղղել միայն առ Ա.Ծ՝ ա-
ճշմարիտ , միակ և գերագոյն բարին : 'Ի ներքս
ածին սրովբէակրօն կուսանքն սրբուհին Թերե-
զիա , և սրբուհին Մարիամ Մագդաղենացի
Փացեան , պատմել թէ ո՞րչափ քաղցր և անուշակ
եղև նոցա Ա.Ծ , և՛ս և 'ի բնականն 'ի մահ-
կանացու յատուկ կեանս : Այլ քանզի զերկնային
գրգանս՝ զորոց մա́րթ է ճաշակէր հոգւոյն առ-
նուլ զգալ , անմա́րթ է ումեք յայտնաբանել ըստ
արժանոյն , նմին իրի զանց արարեալ զուրախու-
թեամբք՝ որովք լի է Սէրն ածային , ցուցանէ
միայն՝ ազա́տ գոլ սմա 'ի ցաւոց և 'ի տառապա-
նաց , որովք բնաւորեցաւ վարակիլ Սէրն արարա-
ծական . Մանաւանդ զի՝ Ա.Ծասէրն գիտա́կ է հա-
ստատեալ թէ սիրի 'ի նմանէ . որպէս քաջայայտ
ցուցանէն Արարչագործութեան աշխարհի և հոգ-
ւոյ , Մարդեղութեան Բանին , Օծման Ս.Հ.Ի ,
Կեանք նորա , Չարչարանք և Մահ և հաստա-
տութեան Խորհրդոյ սրբոյ Հաղորդութեան , և
այլ հասարակք յայս աստիճան Պետրս մի առ մի 'ի
քննէն մատուցեալք , որք զՍէրն Ա.Յ առ մար-
դիկ վկայեն , և 'ի սրբոյ Հայրց 'ի թիւ արկա-
նեն : 'Ի վախճանի առ 'ի քաջ ցուցանել զնուէր՝
որ 'ի մէջ Սիրոյն Ա.Յ և Աշխարհի , հոգևոր
զուարձութեանց և աշխարհական գրգանաց՝ 'ի
ներքս ածի սրբուհին Մարիամ Մագդաղենացի
խօսել 'ի Մաստիկեան Բարայէն .



ԵՍ ՄԱՅՐ ԳԵՂԵՑԻԿ ՍԻՐՈՅ



Որ փափաքէ քաջ ուսանել
զըստոյգ Արհեստ՝ Բարուոք Սիրել,
Ա՛ջ ընթերցցի ըզսոյն քերթուած,
զի մարզեսցի՝ բարուոք Սիրել.
Ես ոչ մատչիմ Դաստիարակ,
վարդապետել զՍէր անառակ
Եւ ոչ իմ տաղք յինքեան ունին
կանոնս ուսման զեղծ և խառնակ։
Անմեղ գըրուածք՝ հիւսեն և տան
զանախտական և սուրբ մատեան.
Ազնուական արհեստից Ձա՛հ,
ամբիծ կանոնք պատուիրական։
Արհեստ է սա, սուրբ կանոնօք
վարժէ զՍիրող՝ սրտի մըտօք,
Սարդէ ո՞ր Սէր է Ճշմարիտ,
և զի՞նչ իցէ Սիրել Բարուոք։

Ովիդիոս ուսուցանէ սիրել չարեօք ։

Պեղլիգնածին՝ այն Վարժապետ, [1]
զի ապիրատ՝ կանոնըս ետ,
Ոչ աւանդեաց Սիրել Բարուք
նա քերթուածովք իւրովք անպէտ ։
Չափաբանէ արուեստաբար
նուագ անոյշ՝ Պերեան 'ի լար, [2]
Այլ նիւթ անդէպ և դըժպըհի
եղանակաց գեղայարմար ։
Որչափ բարուք Անզուգաթիւ [3]
հիւսէ ըզտողս անոյշ տաղիւ,
Այնչափ վատթար զեղծ կանոնօք
ոստայնանկէ զանկուած ազնիւ ։
Որ ինչ բերէ շուք Մուզայից
ըզնոյն բառնայ 'ի բարոյից ·
Գեղ պակասեալ 'ի յԱրհեստէն
գո՛յ 'ի նորայն քերթուած տաղից ։
Թերևս իցեն մեր Կամենայք [4]
առ'ի զարդուց սինք և ունայնք ·
Այլ՝ զարդք պակասք 'ի Մուզայից
գըտցին յԱրհեստն առատականք ։
Թէ երգեցից գուցէ չարեօք,
գէթ ուսուցից Սիրել Բարուք ·
Այլ նա որչափ բարուք երգէ
այնչափ մարզէ Սիրել չարեօք ։
Ոչ ըզկատակ մեղկ իգական
ոչ ըզպըչրող զայրոյթ Փիլլեան, [5]
Ոչ ըզՊափեան նուագեցից [6]
կուրացուցիչ նետըս Մանկան ։

Զայս ամենայն նուագեցէ
 կիթեռաշարժ այն Մարգարէ․ [7]
 Իմ Արհեստիս վերակացու
 մի բազմեցի Ափրոդիտէ։
Անմիտ Սիրոյն մոլեկանի
 լիցի Կիպրիս՝ Ածուհի․
 Մին Արհեստից վայելչական
 ունել ըղձին Ածուհի։
Գո՛ւ ով Հոգիդ երեքսրբեայ
 Ածութեան յաւէժական․ — Կուսոյն Այ և Ածածնի.
 Ըզսուրբ օրէնս անմեղ Սիրոյն
 դու յիս ազդեա՛, ըզգոյշ վառեա՛։
Երկնակենցաղ դու Անակութեան
 Գեղջկո՛յդ Հըզօր՝ Կո՛յս մաքրական,
 Միակ 'ի մէջ մարց հողածին՝
 Մա՛յր անարատ անապական։
Գո՛ւ ինձ ծագեա՛ց Աստղ զերկնաւ,
 Գո՛ւ ուղղեսջի՛ր զերկչոտ իմ նաւ,
 Զի Քո վարեալ Ճառագայթիւք,
 հերձցէ անդորր ըզծով ամիաւ։
Քե՛ երգեցից յիմըս քընար
 չըքնաղ Սիրոյն՝ չըքնա՛ղ դու Մա՛յր․ [9]
 Ո՞ր այն իցէ Մեր Ճըշմարիտ,
 և զի՞նչ Սիրել Բարուոքարար։
Երիտասարդ մատաղահաս
 զոյգ ընդ Թառամ ծերունեաց դաս, — Յորդորէ անձնեայն ... Բ...
 Ո՛ն դիմեցէ՝ երամովին
 զինոց վարժից լսել ըզգաս։

Ալևորեալ այն ծերութիւն
յորում շիջեալ աշխոյժք տիոյն ,
Նո՛ր ջահ նո՛ր քոց արծարծեցէ
սառնասառոյց յերակ մարմնոյն ։
Իսկ Մանկութիւն քաջ և առոյգ
ծախեալ ըղձոց զախտաբորբոք ,
Բորբոքեսցի յանմեղ հըրոյն
յողջախոհ ջահ յերկնաբորբոք ։
Ոչ է բարիոք սիրտըն սիրէ ,
երջանկաբար՝ սիրով վառ է ․
Այլ տոչորի՝ թըշուառաբար ,
Ոչ է չարաչար՝ սիրտըն սիրէ ։
Ոչ է որ կամի բարւոք սիրել ,
քա՛ջ ընթերցցի զայս Արհեստ մեր ․
Երգեցի՛ց ես ախորժելիս ։
Յամենեսեան բընի՛կ է Սէր ։
Տիեզերական է Սէր և [illegible] Ցըրտասառոյց Աստեղք վերին ,
բնածին բոցով հրացեալ վառին ․
Նոյն ինքըն ձիւն՝ գըրգեալ տածէ
ըղտապ հըրոյն 'ի ծոց ցըրտին ։
Ո՛վ ծըփական երեքբալեայ
Թէ վայրենի ալեօք գոռայ ,
Եւ թէ լռիկ հեշտ կոհակօք
զափն համբուրէ , սիրէ և նա ։
Սիւք քաղցրասիւք յոգւոց հանէ
հեզիկ շընչմամբ զոր արձակէ ․
Գոգցես և նա ասէ Սիրեմ,
հեզիկ շընչմամբ 'ի խոր սըրտէ ։

Նուրբ ծառ Թանայ յոսկիացող,
գուցէ Սիրեմ կըրկնեն երգող,
Նորամբ հաւուց՝ որք ընդ գողգոջ
վարսիւք ոստոց ծածկեալք 'ի քող։
Առուակըդ դու որ սողոսկես
գանգատաւոր սահմամբ 'ի սէզ,
Դու ոչ արդեօք հեծեծէիր,
եթէ ոչ Սէր ծանօթ էր քեզ։
Շէկ մանուշակք դալկաւ անձին
ըզսէր իւրեանց խոստովանին.
Եւ վարդմընիք կարմըրադեղք,
գուցէ սիրով այնպէս վառին։
Սիրէ փլորա՝ այն ինչ Թանայ [11]
խիտ եղեամամբ սրեւելեայ,
Այն ինչ 'ի մուտ երեկորին
Թօշնեալ լուծեալ նա թալկանայ։
Ը. Կարծեմ եւ կիծ ըզգայ յինքեան
ըզ զարկ Սիրոյն ձիգ աղեղան.
Եւ ջերմանայ խիստ գայլախաղ
'ի կայծ բոցոյն համաշընական։
Որփեւս ըզժայռ լըսող գործեաց, [12]
եւ Սէր ըզնոյն խանդաղատեաց.
Սա աղեղամբ իւրով ըզնոյն,
նա քընարիւ զայն ներգործեաց։
Ով է ապառաժ վէմք ապառում՝
կակուղ նետիւք հարուած առնուն,
Ո՜ ինչ են զարմանք՝ թէ սիրտք գողտրիկք
խոց կարեվէր յանձին առնուն։

Մարդ-
կային սըր-
տի զգայա-
կան։

Սէրս հողակոյտ հէ՜մ ոչ լուծցի
'ի յորդահոս տեղ անձրևի ,
Թէ չիթ ծորեալ գխոէ գոգել
ընկարծրակուռ հատոր վիմի ։
Հէ՜մ Խեցգետին տօթով աղդու 13
ըղձօս խողան ոչ կիզուցու ,
Թէ ըղծառոյն դալարական
ըղմորչ սաղարթ լափեալ կիզու ։
Թէ անըղձայք ըղձան յանձին
ղաղդողական Սիրոյն փըքին ,
Հա՛րկ և վայե՛լ ըղձալ ըղնոյն
և ըղձայուն՝ մըտաւորին ։
Եթէ պարեխք Կովկասական
լինին երբէք սըրտի փոխան ,
Հա՛րկ է սըրտին հա՛րկ անհրաժեշտ
զնուրն ընծայել գործ սեփական ։
Սիրտ զնուրըն գործ 'ի սկըզբանէ ,
ըռկ սիրելով 'ի յայտ ածէ .
Քանզի Սիրել՝ եղև սըրտին
իւր սեփական միշտ գործ 'ի բնէ ։
Բոց սընանի 'ի շունչ հողմոյն ,
սիրտ սընանի 'ի շունչ սիրոյն .
Ոգի առնու և շընչէ սա
'ի բաբախել թևոց սիրոյն ։
Բոց շիջանի թէ կարկեսցի
փըչիւն հողմոյ մեղմականի .
Նոյն ինչ թօշնեալ թալկանայ Սէր ,
և սիրտ լուծեալ խապառ թօշնի ։

Կըրթոտ անդամք առողջանան
խոցք 'ի նըշտրակ բըժըշկական .
Առողջանան և սիրտք կըրթոտք ,
զոր Տէր խոցէ թափանցական :
Սիրտ ընդ մահուամբ լինի նըկուն ,
երբ ոչ ընկճեալ՝ տեղ տայ սիրոյն .
Կեանք է նըմին ախորժական ,
թէ մեռանի առ 'ի սիրոյն :
Վա՜հ բոցավառ՝ կեանքս անբաւ
պարգևատրէ Հաւոյն Արմաւ .
Սիրտ իւր յառնէ նորակենդան
յիւրմէ բոցոյն յոր մոխրացաւ :
Գո՛յ 'ի մարմինս հուր սեփական ,
տածէ հոգի և զիւրական .
Հըրով իւրեանց՝ կեան և մարմինք ,
կեայ և հոգի հըրով իւրեան :
Որպէս զինուոր խայտայ յանձին ,
հըպել 'ի ձորձ արիւնազին ,
Երբ զանտերունչ յաւար առնու
ըղկողոպուտ դիտապաստին :
Յընծայ ոչինչ այլազգաբար
և սիրտ սիրով լեալ նետահար .
Մէրք և փըքինք են եղկելոյն
ախորժելի հաճոյարար :
Կայտիւս առնու նըկուն յաղթած
յաղթողական զօրէն դընդաց .
Եւ զերթ յաղթած ցաւի յանձին
եթէ յառաջ յաղթանակեաց :

Սէր յաղթէ և՛ հզօրաց և՛ իմաստնոց։

Ո՞ր իմաստուն, կամ ո՞ր հզօր,
դեռ զօրացաւ անվիրաւոր
'Ի յասպարէզ բուռըն Սիրոյն
Ճակատ մըղել գալ 'ի յոգոր։
Ոյժ մարդկային ո՛չ զօրանայ
կամ բազմարուեստ խելք մեքենայ,
Վանել ըզնետ զոր արձակեաց
կապարճաւոր Սէրըն դըժնեայ։
Սամփսոն ահեղ և դիւցազուն,
ուժով յաղթող ամենեցուն,
Անկաւ կործան 'ի մաքառել
ընդ թեւաւոր այն Աստուծոյն։
Այն որ սովոր 'ի յԱյլազգեաց
բիւրուց պըրծիլ զինուց 'ի բաց,
'Ի Դալիլեայն թակարդեցաւ
սըտապատիր սիրոյն 'ի ցանց։
Ձեռըն Յեսսեան՝ արջուց վայրագ-
փըշրող ժանեաց գիշախանձակ,
Եւ պատառող բազօթելից
երկվայրաց լեռնաբընակ.
Բայց ձեռն յաղթող՝ որ զանտառին
նուաճեցոյց զազգ ձիւաղին,
'Ի յԻդալեան Աստուծոյն կապ [14]
շաղախեցաւ յանլուծելին։
Մինչ և Հրաշք զարմանազան
թագունք 'ի խոր 'ի ծոց Բնութեան,
Զանխուլ էին յանծիմաստ
'ի Հանճարոյն Սողոմոնեան։

Այլ Սէր մերկին՝ իբրև լարեաց
 յաղեղն 'ի կոր նետ թևազգեաց ,
 Անդէն և անդ իմաստք նորին
 լըքին ըզնա թողին 'ի բաց ։
Գիտէր զխոտոյ ամենեցուն
 բըժըշկական զազդեցութիւն .
 Այլ ոչ խոտովք էր բուժելի
 զոր յինքն էառ խոցուած Սիրոյն ։
Սէրըն քաղցրիկ՝ դիւրին նետիւ
 խոցէ ըզսիրտ ըզցայգ և տիւ .
 Բայց ո՛չ նոյնպէս նա հանդուրժէ
 վարիլ ուղղիլ դիւր արհեստիւ ։
Իսկ չէին զարմանք ։ Մանուկ է նա , 15
 և աչք երկուք կոյր են նորա .
 Մանուկ գոլով և կոյր կըրկին ,
 ո՞ր արհեստիւ ուղղեսցի նա ։
Այլ խաբիմ ես ։ Որ տայ մարդկան
 սիրել բարւոք պատշաճական ,
 Չէ՛ չէ՛ այն Սէր՝ կոյր զաչացու
 'ի տեսանել՝ որպէս արժան ։
Ո՞վ առասպել՝ սուտ յօդեցեր ,
 որ մեզ ըզՍէր՝ կոյր կեղծեցեր .
 Ոմն 'ի սիրոյ՝ կոյր է աչօք ,
 բայց ոչ նոյնպէս ամենայն սէր ։
Անսուրբ Սիրոյն՝ տուր ըզպարտակ ,
 և սուրբ Սիրոյն՝ աչըս երկեակ .
 Սա՛ 'ի տուէ ընծայեցաւ ,
 նա՛ գիշերոյն մըթին զաւակ ։



1002 3898
Публичная Библиотека 7/XI-1922 Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի զմըրթնածին՝ որչափ բարւոք
մեզ նըկարես՝ պարտակ զաչօք ,
Ո՛նչափ յուլ՝ ըզ լուսածին
նըկարագրես՝ մեզ պարտակօք :
Ո՛յլ մանաւանդ՝ ըզ լուսածին՝
դի՛ր հարիւրակն 'ի պատկերին .
Որդո՛ն արա , զի մի՛ այնչափ 16
քո սրտութիւնք երևեսցին :

Աստուա-ծն Մեր մի մանուկ , այն՝ յաւէ-ժամէն :

Նա մի մանուկ դու կարծեսցես
զոր դարք յաւէժք ածին 'ի տես ,
Որ քան զորոց ժամանակին
սիգայր կանխաւ ըսկայապէս :
Զև յաստղազարդ անհուն եթեր
բորբոքէին հըրատք 'ի վեր ,
Կայր ապաքէն հուր 'ի վաղուց՝
որ բոց յերկին արծարծանէր :
Զև ժըպտէին ծաղկաշըրթունք
մարգագետինք՝ խաղք և դաշտունք ,
Վաղուց ծաղկէր գեղածիծաղ
երեսք Սիրոյն՝ նոյն և աչքունք :
Յանքնակալէր Սէր կանխաբար
երբ զառաջին լերանցըդ պար
Յամպըս բարձունս ըսքօղեցին
ըզծագ իւրեանց երկնակատար :
Նա ո՛չ ծանեաւ իւր Մայր կենաց
'ի Կիթերեան աղի ալեաց , 17
Այլ կանխագոյն նա էացաւ
քան զէանալ շարժուն ալեաց :

Որդ չէ՛ Մանուկ. բայց թէ այսպէս
մանուկ կոչել ախորժեցես,
Զի միշտ նոյնպէս մընայ առոյգ,
ուր Ժամանակ՝ թըռչի նոյնպէս:
Արքին խոնջ դարք բազմավաստակ
բեռամբք ամաց յոգնակուտակ,
Խուձապ վազիւք անկանգնելի
գահավիժին առհասարակ:
Մերըն հաստիչ ամաց սահուն՝
թէպէտ դարուց է ծերագոյն,
Բայց ընդ ճընշող բեռամբ ամաց՝
ոչ ծանրացեալ լինի նըկուն:
Մըշտափըթիթ կայ և մընայ
նոր մանկութեամբ առուգանայ,
Բազում վիրօք ըզմեզ խոցէ,
բազում վիրօք խոցեցէ նա:
Զի զիւր կապարձ զանձամբ ունի
բիւրապատիկ նետիւք է լի.
Երբ կարեվէր՝ ըզսիրտ խոցէ,
արձակէ նա նետըս ոսկի:
Ըզմարդկային միտըս կիզու
լուսանըշոյլ պայծառ ջահու,
Ոյլ ջահ նորա զոր յաջն ունի,
յըստակ հըրով է լուսատու:
Ըզվէր ըզնետ ըզըոց ջահին
կըրէ այս՝ սիրտ կաթոգին,
Բայց և սիրէ զորըս կըրէ՝
ըզվէր ըզնետ ըզըոց ջահին:

Եւ ոչ մի Սէր գերազանցիկ
է համեմատ զուգակընիք ,
Սիրոյս այսմիկ ձրիւք այսչափ
Ճոխացելոյ գերաշխարհիկ ։
Ո՜վ, յի՜նչ (ասես) յի՜նչ նա բերի ,
յի՜նչ անուշակ բեռամբ ծանրի ,
Զի՜նչ նա ուղղէ յաղթողաբար
զիւրոյ բոցոյն ըղձողոջի ։
Աւ-Սէր ու տէրն — Պա- տէ- ։ Գուցէ բերի՜ առ նըպատակ
շըքեղ Պատուոյ գերփառունակ ,
Թեկըն ածեալ Ուագութեան՝
գամ քան ըղձամ բարձր 'ի գիտակ ։
Խաբիս խաբիս ։ Որ 'ի սըրտէ
Գիտց Պալատան երկըրպագէ ,
Յ՛ այնպիսին անմիտ սիրող .
բարւոք սիրել նա ոչ գիտէ ։
Օ՜ի գըտանէ սըրտի հարուած
ուր 'ի խընդիր էր խընդութեանց ,
Եւ 'ի սըրտի տածեալ պահէ
չար քան ըղձմահ զ'ի խոր խոցուած ։
Եւ զի՜նչ արդեօք իցէ Պատիւ .
Գահիճ սըրտի՝ պայծառ ձորձիւ ,
Քաղաքացի խըռովայոյզ
և բարեկամ՝ կեղծ արհեստիւ ։
Օ՜ անդորրութիւն խաղաղաւէտ
ըսպանանէ 'ի սիրտ յաւէտ ,
Սուտ գըգուանօք շընթեալ պատրէ ,
ծըփէ ըղմիտ՝ ծովու հանգէտ ։

Երբ նըշմարի նա մօտաւոր՝
բացակայն նա հեռաւոր.
Որպէս ըստուեր փախչի յառնէ ,
ծածկէ զ̊փախուստ՝ լեալ մօտաւոր ։
Այսպէս գողցես ըզՏանտալոս [18]
տանջիլ 'ի կից ալեացն 'ի հոս ,
Ջուր նուաբէկ յանըմպելին
'ի ջուրց կոհակ կարկաջահոս ։
Որչափ իցէ նըման Պատժոյ
պերճապաճոյճ անուն Պատուոյ ։
Այնչափ Պատժոյ է նըմանակ
առագաստեալ արդիւնք Պատուոյ ։
Ոչ թեթեւէ պատիժ բեռին
զոր յոյժ ճըմլէ զանզօր մարմին .
Եւ սին Պատիւ՝ զոր սիրտ ճընչէ ,
ոչ թեթեւէ ամենեւին ։
Տառապանօք նա յարակայ
ծանրէ զոգիս երբ բացակայ .
Կարծոտ ահիւ ծանրէ ըզսիրտ
երբ առընթեր առաջին կայ ։
Զի ըստացեալ յուսով տածէ ,
բայց յոյս երկբայ ըզմիտ տանջէ .
Զի յոյս թուի՝ է զի հաստատ ,
է զի թեթեւ ծեղ 'ի շամբէ ։
Նոր յոյս ըզհետ գայ ըստացման ,
անյագ մըտաց՝ նոր փառք խըլթան .
Նոր պատուհաս լինի նըմին
ընթացակից միշտ անբաժան ։

Սիրտ որ կարծիւր մ՟տացեալ պատուով
առնուլ անձին յագուրդ լիով,
Նովիմք ձըգի առ նորանոր
տխտղոս պատուոյ՝ լինուլ զիւր սով։
Այսպէս ջըրգող՝ յորբեալ ականց
ծարաւալից դառնայ 'ի բաց.
Եւ երբ ըմպէ՝ ցանկայ կըրկին
ըմպել յալեաց բերանաբաց։
Այսպէս լափեալ պատառաբոյծ
զառաստ սեղան փափկասընոյց,
Գընայ անյագ որովայնիւ
յագեցուցիչ 'ի սեղանոց։
Միտք հոգածու ո́րչափ անձկայ
լինել ըղձեալ պատուոյ երկբայ,
Նոյնչափ նեղեալ 'ի յարածուփ
զըմբաղ ահին նա թալկանայ։
Նախ երկընչի բարձր 'ի կատար,
գուցէ վերելք չիցեն հընար.
Յետոյ անդէն դողայ սարսէ,
գուցէ անկցի ողորմ 'ի վայր։
Դըժուա́ր են ելք և ահագին
'ի բարձրասեպ գագաթ լերին.
Այլ յետ ելից 'ի յարտեան
դըժուարագոյն գործք երևին։
Դըժուա́ր են ելք տարժանաւոր,
'ի բարձրաբերձ ծագ ժայռաւոր.
Այլ դարք բարձունք յետ վերելից՝
դիւրին գործեն զանկումն 'ի խոր։

Յաճախ շանթիք բախեն ըզծագ-
զաշտարակաց երկնադիտակ.
Այլ դուն ուրեք զան հարկանեն
ըզտաղաւար ըզցածայարկ:
Պատրեալ Համան Ամադովդեան
յանմիտ փաղփուն 'ի Պալատան,
Ըզտըրխրագին կախեաց ըզքեռն
'ի փայտ մահուն եղերական:
ԸզՄէյանայ յաւակնութիւն [19]
դաւաճանեաց յետկար թըղթոյն,
Բերեալ Նըմին անկարծ վըճիռ
զօրհաս մահուն անագորոյն:
Հըռչակաւորն այն Բելիսար
աշխարհասաստ 'ի տեղ 'ի սայր,
Կեսարական կըցորդ գահուն`
պատերազմաց` օրէնըս տայր:
Ս՝խում և եթ խոնարհէին
կամակատար գունդք բանակին.
Իւր ակնարկիք և բանք շըրթանց
ազգաց ւազանց օրէնք էին:
Նորա կոյր նախանձ քինաթաքոյց`
բաղդին ընդդէմ ըզմարտ յարոյց,
Նա նոյն հետայն զիւր յեղեղուկ
դըլեալ զանիւ 'ի բաց դարձոյց:
Նա փախուցեալ ընդ իւր ձըդեաց
զընթացակից ակումբ փառաց,
Որք նախ անյաղթ Զօրավարին
առմառուցին պըսակ փառաց:

Ո՛չ այնպէս շուտ հանէ Եթեր
զիւր քըղամիդ աստեղաբեր ,
Երբ 'ի խորոց Ովկիանու Հարաւ
ըղխիտ շոգիս ձըգէ 'ի վեր .
Որպէս արագ միգապատն
Համբաւ պայծառ և լուսալի ,
Երբ գոլորշի՝ սեաւ նախանձուն
Թանձրը մըռայլ գայ ծըռնանի :
Փառք ըստացեալ գընոց քըրտան
գխտնավաստակ և բազմաջան ,
'Ի գողանալ անիրաւին՝
գընան ցընդին անդարձական :
Այնչ ընդհատ հուղկահարուն
'ի դարանաց թաւուտ մայրւոյն ,
Նըտաքս ոստնու 'ի կողոպտել
զանցաւորին ըղձոխութիւն :
Միշտ երկիւղի են նըշաւակ
որք վըտանգաց են նըպատակ .
Չիք համդըստեան թագաւորել ,
ուր եդ երկիւղ գահաւորակ :
Միայն հանդխստ դերապանծիկ
առնէ զՄիրող անձն երջանիկ .
Նպա աւուրք մեր կենցաղոյս
չեն 'ի Պատուի բարեբաստիկ :
Նյւքո վիճակ թէպէտ ազատ
'ի յերկիւղէ 'ի սառնապատ ,
'Ի թըշնամեաց և ոչ ուստեք
ունիցի ինչ մարտ ըռնադատ ,

Բայց վայելել չի՛ք քեզ վասն այն
յանդորրութիւն երջանկական ,
Եւ ո՛չ ոգւոյդ տացի երբէք
ո՛չ մի հանգիստ անդորրական ։
Ոչի՛նչ օգտէ սրտի՛ն հոգած՝
դաս համերանգ արքանեկաց ․ 20
Ոչի՛նչ օգտեն ոչի՛նչ և կառք՝
զօրով վառի՛ն գունդք զինուորաց ։
Զի՞նչ օգուտ է՝ զի՞նչ հոլանոց
յուկխահուռ 'ի կերպասոց ,
Զոր ժիր ծառայն տանի 'ի ծալ
վերաքազմեալ հանդէպ անուոց ։
Եւ ըզսոսա՝ զոր տանի՛ն Կառք
ոսկեքեղիք և ոսկեվառք ,
Զորոց զամուլ քառընթացից
մետաքսահիւս՝ պըծնեն օձառք ․
Կըրծեն վարանք , տենդ անձարակ
ձըգէ յորսայս դիատեսակ ․
Գայ հասանէ երագ ոտիւք
և ծերութիւն կորաքամակ ։
Մ՝ընայ օրհաս անշարժագոյն ,
վազվազէ մահ գողոյ հանգոյն ․
Յո՛չ ոք խնայեալ գայ միապէս՝
գայ 'ի վերայ ամենեցուն ։
Զանշուք ոստայն ոսկականաց
և զԱրքայից փաղփուն անկուած ,
Քանտ Ատրոպէ նոյն մըկրատաւ 21
անխըտրաբար խըզէ 'ի բաց ։

Այնպէս բիւրս աջ 'ի խիստ մաճին
դարձցի յաճիւն վայրավատին ,
Որպէս դաստակ փայլակնացեալ
'ի դաւազան 'ի յԱրքենին ։
Զերթ ծըխամած ցընդի շոգի
յանդաստական օդ եթերի ·
Զերթ շանթք յաճախ փայլատակեն
յամառնային 'ի գիշերի ։
Այնպէս թըռչին Պատիւք համայնք ,
այնպէս ցընդին փառք երկրականք ,
Այնպէս տիտղոսք պըսակք և խուրձք , 22
այնպէս քանդին և ախոյեանք ։
Զանցուկ Պատիւ ո՞ սիրեսցէ
զոր ինչ աշխարհ մատուցանէ ,
Թէ սիրեցեալ Պատիւըն այն՝
պատրէ վնասէ և անցանէ ։
Որ բարիոք սիրել ցանկայ
զայս սրտանուն Ա՛ծ ատեայ ·
Սակայն յանյայտ 'ի թըշնամւոյն
չև ամրացեալ անքոյթ մընայ ։
Է՛ և այլ կերպ Ա՛ծութիւն
Թագուհին այն Հարըստութիւն ·
Զըստրուկ սըրտին բըռնակալեալ
պայազատէ ըզտէրութիւն ։
Սըմա զոհէ խուռըն խուժան
և նուիրէ զսըրտին սեղան ,
Նու լիաբուռն այրէ ըզխունկ ,
համէ կոըբանս Ա՛ծութեան ,

Մ՛ի յանկուցէ զաչըս քոյին
սա 'ի շողիւն չէկ մետաղին .
Կամ դաւեցէ գոհար ակամբք ,
փախիր 'ի բաց ըզգո՛յշ յանձին ։
Օ՛ի բարիոք սիրել ուսցիս՝
մ՛ի զայսոսիկ ըզըղնոտիս ,
Մ՛ի նըպատակ ազնուագոյն
սիրոյ քոյին դիցես յաստիս ։ Ո՛ւ բերի [illegible] ձոխու- թեան ։
Մեր ոչ խընդրէ զանձ ձոխութեանց
խոտիչ պատուոյ աւագութեանց ,
Օ՛ի մեծութիւնք մայր և ախթ՝
վատթարագոյն երս չարեաց ։
Դ Հարըստութիւնք են ախտք արդոյք
նենգամատոյց քաղցրահամ թոյնք ,
Նաւ փաղաքուշք սըրտի մըրոյ
բըռնակալողք անագորոյնք ։
Օ՛դիս մարդկան ապականեն ,
յուշիկ մահուամբ ըլկեալ տանջեն .
Ի՛զսիրտ գերի ընդ խիստ լծով
գոռոզաբար արկեալ պահեն ։
Ոչինչ է այլ հարըստութիւն ,
բայց թէ փարթամ կարօտութիւն .
Ի՛նձն ընչասէր լինի աղքատ
յընչից բազմաց 'ի լիութիւն ։
Ո՛չ լընանի մարմին օդով ,
ո՛չ լընանի սիրտըն ոսկւով .
Մ՛ըշտալըլուկ տանջեալ 'ի խայթ
յամօթապարտ յանյագ 'ի սով ։

Իմն զոսկին՝ չէկ աւազոյ
կարկառ ձուլեալ 'ի բով հրոյ ·
Իսկ պատուական գոհար ակունք
զի՞նչ են՝ բայց շիթք պաղեալ ջրոյ ։
Թագոյց բնութիւն իմաստնագին՝
հողագընտոյս 'ի ծոց խորին
Ըզշիկագոյն փայլուն մետաղ
տալ առ աթուր յանդուգն ոտին ։
Զակըն սուղեաց բազմանըշող
յարգանդ ծովուն դաւաճանող ·
Զի մերս հաւատ մի եղիցի
յայն դաւաճան վըստահ 'ի շող ։
Հաւատա՛մ ինձ, ցանկայ հողւոյն՝
վիշտ վըտանգի շըքեղագոյն,
Որ միանգամ զիւր պատրաստէ
հաւատալ սիրտ 'ի ծով գանձուն ։
Հառաչէ սիրտ միշտ անդադար
'ի յոյզ հոգոց մըրըրկավար,
Երբ շահաւէր հարաւահողմ
յուզեալ շարժէ զայն վեր 'ի վայր ։
Այսպէս խանչէ կինձ՛ մոլեգին
ընդ ամեհի ժանեօք գամփռին ·
Լաստ խորտակեալ՝ այսպէս ձայթէ
'ի սըրընթաց 'ի յորձանին ։
Այսպէս շաչէ ջուր ընկալեալ
յինքըն զերկաթ արտաշիկեալ ·
Այսպէս դալար և սարդենի
ձիկ արձակէ 'ի հուր արկեալ ։

Ճոխս մեծատուն միշտ դալկանայ
յոսկւոյն 'ի գանձ զոր ըստանայ.
Փերևս անձամբ իւր Աստուծոյն
նըմանատիպ հանդիսանայ.
Սարսէ լինել Թըշուառական
թէ ճոխ մըթերք իւր ոչ մընան.
Բայց թէպէտև այնք ճոխ իցեն,
հարկն լինել Թըշուառական.
Զի ոչինչ տուրք կասել մարթին
ըզԼ խըխտեայ ձիգ գերանդին, [23]
Ոչինչ կաշառք լինուլ դարձեալ
զունայն ըզսակ Աղեկատին.
Վասն այն գոլով անշուշտ գիտակ
թողուլ յերկրի զ̊գանձուց կուտակ,
Զանխուլ 'ի սիրտ տածէ 'ի խոր
ըզկարեվէր խոց անճարակ.
Նա միշտ սիրէ՝ միշտ և ցաւի,
աճէ ըզսէր ցաւըն սըրտի.
Յաճել սիրոյն աճէ նոյնպէս
և ցաւ սըրտին անպատմելի.
Սէր ճըշմարիտ տայ 'ի բաց
որինչ խո՛չ է քաջ սիրողաց.
Վասն այն Թըշուառ գանձուց ընչից
չէ՛ հետամուտ բերանաբաց.
Եթէ բարուոք սիրել ուսցիս,
յամենայնէ ատի խորշիս.
Որք առ աչօք ըստուերք բարւոյն,
ըստոյգ սերմանք չարեաց յատխս.

Արձանացի՛ր կա՛յց առ տեղեաւ ,
զի նոր վիրադ երևեցաւ .
Որոյ փետուրք են իւր Հրապոյրք ,
կապարճք նորա հընարք և դաւ ։
Սքարագ. բաղթեան կառայ և Յաղթա- նակի Աստղկան կամ Աթեր- գիթեայ ։
Ահա Աստղիկ Ածուհի [24]
վերաբազմեալ 'ի կառս ոսկի ,
Զոր լուսափայլ ձըգեն կարապք ,
ծաղիկ սըփռէ շուրջանակի ։
Եւ Յանկութիւն մըրտենազարդ [25]
բազմի ընդ Սէր 'ի զէն և զարդ ,
Խառնեալ գաղտուկ նետըս դաժան
ընդ շըրջափիւռ ծաղիկ և վարդ ։
Հանդիսակիցք գան հասարակ
ընթերակայք 'ի յաղթանակ ,
Գըգուանք՝ Կըռիւ և Գինեըմբուք ,
զուարճաբար Խաղք և Կատակ ։
Համեստութիւն ձերբակալեալ
սըգայ ըզսուգ , այտք իւր շիկնեալ .
Տըղայն Ամօթ՝ լայ արտասուէ
ընդ Սէր իւրում տըրտմագնեցեալ ։
Երիտասարդք գերի վարին ,
և օրիորդք տոռն 'ի ձեռին .
Կըկուն ամբոխ տայ հեշտաբար
զիւրըն բազուկ 'ի կապ նորին ։
Ո՛չ պակասին և խայծք խոստմանց
երջանկագոյն անդոյր կենաց ,
Յոր հրապուրեալ խայտան ազինք ,
ըզհետ երթալ նենգող կառաց ։

Գինայ Պարիս 'ի պահանջել [26]
ըզխոստացեալ Հլէնն 'ի խըլել.
Եւ ակն ունի 'ի յԱրգիվեան
չըքնաղ սեղեխ 'ի վայելել։
Հեգ Պիրամոս յետուստ երթայ [27]
վառեալ 'ի բոց 'ի մօտակայ.
Ուխտըս դընէ առ յաջողել
զիւրըն փախուստ զոյգ ընդ Թիսբեայ։
Լէանդըր աստէն մօտ Թարթափէ. [28]
չէ՛ բացական և խոց Դիդէ. [29]
Սա զծով խընդրէ ամէհանալ,
և նա յալեաց ցածնուլ խընդրէ։
Զի երկիւղիւ սա՛ տագնապի
թէ նաւեսցէ հիւրն Իդացի,
Նա՛ ոչ զօրէ գիրկս արկանել
ըզՀերոնեաւ՝ թէ ոչ լուղի։
Յետոյ Սապփէ Միտիլենեայ, [30]
( զի՞ զամենայն յիշես Մուզայ. )
Ճարտար մատամբ ըզքընարին
բախեալ ըզլար հետևանայ։
Համաժողով գունդ բազմութեան
պատրեալք վէրտեն պար ցընծութեան.
Ա՛շ վա՛շ կարդան, զանձանց կորուստ
անգիտանան զօրհասական։
Տէս որ ցանկաս բարւոք սիրել
'ի մահառիթ կառաց փախչել,
Զի մի Կիպրեան Աստուածուհւոյն
անկցիս անարգ ըստրուկ անել։

Սէրն որ փայ բար- ոյք ուրէն մտածէ գե- ղեցկու- թեամբ մարմնոյ :

Սէր ճըշմարիտ ոչ 'ի փաղփուն
յափըշտակի գեղեցկութիւն.
Եւ ոչ 'ի ձիր նա ղակատի
չըքնաղատիպ դիմաց մարմնոյն:
Նա ո՛չ ձըգի 'ի յերեսաց
կըրկնանըշոյլ փայլ աստեղաց ,
Նոյու բոցով ճարակ և նիւթ
առմատուցեալ խըրոց լուցկեայ:
Համբո՛ւշ և նա որ զայս խորհի
վասըն Սիրոյն ողջախոհի.
Զի այսպիսի ձըրիւք մարմնոյ
Սէր բողջախոհ՝ գայ ըմբռնի:
Պայծառութիւն է խաբեբայ
շնորհք դիմաց գեղերեսեայ.
Պատրողական գեղեցկութիւն՝
սըրտապաձոյձ փայլմամբ շողոյ:
Որպէս Սարսամ ժանտ դըժընդակ 31
փայլատակէ լոյս ձախողակ.
Նոյնպէս և աչք յիւրեանց հեղուն
ըղձառադոյթ մահագուշակ:
Որպէս պատեն փուշք դառնութեան
ըզվարդմընխս Պեստոնական , 32
Նոյնպէս պատեն փուշք աներկք
զայտիւք դիմաց ըզվարդերփեան:
Ըզգէս դեղձան արհեստացիր՝
ըզփըղոսկրեայ ուլամբ 'ի ծիր ,
Ինձ հաւատա՛ տուն ոսկեման՝
պարաւանդիչ հողեպատիր:

Ըզկաթնորակ գինւոյ տեսիլ՝
յոր անյագուրդ կաս 'ի յառիլ,
Դիմակաւոր մոխիր գոգցես
շիրիմ բըռնեալ մերձ 'ի բանիլ:
Սարմինք Սափորք դիւրակոտոր [33]
գանձեալ մոխրոյն որ կայ 'ի խոր,
Նոյն տիպ գինւոյ գեղադիտակ
է ապակեայն հանգունաւոր:
Փըշրի բիւրեղ գեղաքանդակ
ընդ ծանրութեամբ բեռնակուտակ,
Ընդ ծանրութեամբ ձընշող ամաց
կորընչի գեղ բարետեսակ:
Ժամանակն այն՝ ծախող ժանեօք
վատնէ զարձան ադամանդօք.
Զիա՞րդ զերծցին դէմք անվըճաս
առ 'ի ժանեաց իւր անողոք:
Ո՛չ, ո՛չ զերծցին՝ և ո՛չ ընաւ,
գօսասցին այնք տակաւ տակաւ.
Դէմք յոր մոլեալ՝ դուդ յիմարիս,
տըգեղասցին հարցին դալկաւ:
Քաղցրիկ փաղփիւն ախորժարար
'ի սըխըրալին գինւոյ տիպար,
Ոչ լոկ 'ի դալ ամաց վերջին
նըսեմանայ առնու վըթար.
Այլ յորժամ գարնանադեղ
Ապրիլ տիոց փըթթի շըքեղ,
Ախտիւք ծիւրեալ թառամանայ
դեռափըթթիթ երեսաց գեղ:

Մի՛նչ այլազգ պըտղեղ այգի
կարկըտահար ապականի ,
Կամ ծառատունկ մատաղաբոյս
նորոգ ցըրտով հարեալ խամրի ։
Նոյնպէս գիտէ գողաբարոյ
որդըն կըրծել զուղեղ պըտղոյ ·
Այսպէս գիտէն 'ի մաղմաղել
նաև ուտիճք ըզձորձ յասուոյ ։
Նոր մանկութեան լուսաթաղանդ
չըքնաղ տեսիլ որպէս մարմանդ
Ծնէ՛ և փըթթէր մըշտադալարուն ,
բայց և այնպէս չէ՛ ադամանդ ։
Զի դեղ կայտառ՝ թո՛յն անուշակ ,
ախորժելի՛ և փըլատակ ,
Եւ համբարու ճարտարամիտ՝
ծածկել շըրթամբք նենգ և ծողակ ,
Աղու բանիւք խառնէ ըզթոյն ·
ծածկէ դալար ոստովք ծառոյն ,
Զի մի՛ աչաց երևեսցի՝
զոր նայն պեղէ վիհ խորագոյն ։
'Ի հեշտութեան յուսկեղէն թաս՝
որովք ջամբէ զ°մահուն օրհաս ,
Մ՝եղր օծանէ՝ առ խորըշխաւ
պատրել ըզծագ շըրթանց տըհաս ։
Որպէս դաւին ձըկունք կարթիւ
ամոքարար պատեալ խայծիւ ,
Այսպէս դաւի անձըն թըշուառ՝
'ի բերանոյ քաղցըր բանիւ ։

Ըզկարթ ծածկէ պատեալըն խայծ
և բա՛նք ողորկ ըզհաղը շըրթանց .
Որք նա հաճոյ՝ վընաս բերէ ,
երբ սա չխասէ՝ հաճոյ անձանց ։
Սա ականջաց 'ի լուր քա՛ղցր է ,
որպէս և նա ըզքիմն հաճէ .
՝Նա ըզմարմին սատակամահ ,
սա ըզհոգի ըսպանանէ ։
Թէ՛ լուռ շըրթամբք փակէ բերան
ըզմարգարտեայ պար ատաման ,
Թէ ըզըքնաղ շարժէ շըրթնեակ
առ 'ի յաւէտ փայլողութեան ,
Միշտ ըզթակարդ լարէ հոգւոյն
դարանակալ գեղեցկութիւն .
Եթէ՛ անշարժք՝ եթէ՛ շարժունք ,
ծածկեն շըրթունք միշտ նենգութիւն ։
Թէ՛ փողփողեն 'յայրատ աչկունք
անոյշ ծիծաղք և թըրթըռունք ,
Եւ թէ՛ 'ի կեղծ 'ի շաղ ցօղոյն
թանան թըրմին բիբք թըխպադոյնք ,
Խաբէութիւն ուղղէ զայս շաղ ,
խաբէութիւն և զայս ծիծաղ .
Զերկաքանչիւր Ափրոդիտէ
լարէ ուռկան 'ի նենգ 'ի խաղ ։
Փոյթ՝ Պոտէպինդ էր Անահտայ [34]
դաւաճանել զվայրի երայ ,
Այլ ըզ մարդիկ դաւաճանել
փոյթ ջան եղև Ափրոդիտեայ ։

Արդ զի՞նչ զարմանք ըսքանչելեաց
թէ նա ոգւոց ձըգէ ըզցանց ,
Եւ նա այսպէս 'ի գործ դընէ
զիւրըն արհեստ խարդաւանաց ։
Բայց երբ պատրէ առ 'ի պատկեր
գեղեցկութեան ունայնաստուեր ,
Անդէն և անդ ըզսիրտ պատրեալ
տանջէ 'ի խոց 'ի կարեվէր ։
Յայնժամ երկիւղ յանկարծաբար
պատի զդիմօք ըզդալկահար ․
Հանգիստ ախորժ յանձին սըրտէն
վըտարանդի երթայ 'ի տար ։
'Ի նոյն և սիրտ նախանձոտի
սառնասառոյց պաղեալ թըմրի ․
Որչափ վառի այն առաւել
այնչափ յաւէտ կըծկեալ թըմրի ։
Այսպէս մըրցի ջուրըն գինին
ընդ լափլիզող հուրըն չորին ,
Որպէս կըռուի ընդ ջերմ սիրոյն
սառնասառոյց երկիւղ ցըրտին ։
Այսպէս գոռայ ցուրտ Հիւսիսակ
ընդ Հարաւոյն կիզող խորշակ ,
Երբ բըռնանան 'ի միասին
'ի զայրագին ծովուն կոհակ ։
Որ ոք սիրէ՝ սիրել կամէր
'ի փոխադարձ նըմանակ սէր ․
Այլ ո՞ գիտէ արդեօք սիրող
սիրի՞ այնպէս որպէս պա՛րտն էր ։

Թերեւս արդեօք նա հաւատա՞յ
'ի սիրալիր բանըս նորա .
Այլ բանք խաբել սովորեցին
զի հո՛ղմ է բան՝ շընչէ երթայ :
Նախ Քսանթոսի (Պարիս ասաց) [35]
վերջոտնեսցին յորձանք ալեաց ,
Քան թէ Պարիս յօժարեսցի
զիւրըն Ենոն թողուլ 'ի բաց :
Բայց չեւ ցուցան յետըս դառնալ
Քսանթեայ ալիք դահավիժեալ .
Կարաց Պարիս զիւրըն Ենոն
թողուլ 'ի բաց եւ ուծանալ :
Մեծն Ենէաս ախորժաբան
պատրէ զԴիդէ ըղձաղթական .
Բանք նենգալիք պատճառս ետուն
մահուան նորա եղերական :
Անձըն զիա՞րդ դիւրահաւատ
տամուկ աչաց տացէ հաւատ .
Շիթք արտասուաց ուսան զարհեստ
ըզխաբելոյն բազմահայթայթ :
Երբ Դեմոփոն լաստէր նաւակ [36]
թողուլ զՓիլլիս սիրատենչակ .
Բզլի՛ծ լուսոյն կեղծուպատիր
նա լուծանէր յաղի վըտակ :
Այլ Դեմոփոն ո՛չ զոյգ սիրէր
ըզՓիլլիդա կաթոտ 'ի սէր .
Զի զառագաստ անդարձական
'ի հողմըն կոյս առագաստէր :

Ողբայր Յասոն զՀիպսիպիլէ [37]
  Թողուլ ըստոյգ զայն 'ի սըրտէ .
  Այլ այն անձրև դառն արտասուաց
  էր կեղծաւոր՝ առ ականէ ։
Ոչինչ հաւատ 'ի բան խոստման ,
  ոչինչ հաւատ ցաւոյն արժան .
  Գիտեն խաղալ բանք խաբուսիկք ,
  գիտէ կեղծել ցաւ խարդաւան ։
Սան այն ուսեալ ո՛չ հաւատալ
  ո՛չ յարտասուս ու՛չ յասացեալ ,
  Մինչ 'ի յերկրայս լիցի սիրող
  իցէ՞ փոփոխ նա սիրեցեալ ։
Ոչ այսգունակ անդամք ծիւրին
  յերկարաւոր տենդ տապագին ,
  Որպէս հաշին միտք տատանեալք
  'ի կեղակարծ խէթ երկիւղին ։
Ոչ այսպիսի շաչեն կոհակք
  զորըս քախէ հիւսիս վայրագ ,
  Եւ ոչ դողայ այսպիսաբար
  հարաւաբախ սին եղեգնեակ ։
Անձըն սիրող միշտ 'ի ծո՛ւփս է՝
  Թէ սիրելին յի՞նչ միտս իցէ .
  Բոցոյն իւրոյ տա՞յ քոց փոխան ,
  և առ սիրոյն միշտ հառաչէ ։
Ւ՛ զի հանդէպ հեծող աչաց
  դայ ներկարի Միրանախանձ ,
  Յայնժամ նորոգ կատարութեամբ
  մըռընչէ սիրտ վառեալ 'ի խանձ ։

Է՛ զի ըզսիրտ զոր սիրէ նա,
հայի յայտնի՝ զի սառնանայ,
Ըզջահ սիրոյն զի ընթադրի,
և ըզփրքին զի յետ դառնայ։
Այլոց հայի աւար մատնեալ
զիւրոյ սիրոյն դաշըն կրուեալ,
Եւ զերդ մնակուռ առ ինքն հաւատ՝
դըժրողաբար ապախտ եղեալ։
Յայնժամ զայրոյթ՝ բոց մոլեգին,
արծարծանէ 'ի խոր սըրտին·
Այլ հուր նախկին սանձահարէ
ըզմոլեգին ըզ ջահ յետին։
Սէրըն յաղթէ ըզքարկութիւն
վասն զայրոյթ յաղթել Սիրոյն·
Է՛ զի զայրոյթ է յաղթական,
և է՛ զի Սէր՝ յաղթող նորուն։
Միանգամայն ատեայ սիրէ։
Զէ՛ր հաճ սիրել յորմէ զո՛ւրկ է·
Այլ ո՛չ վասն այն ատել կանխաւ
զայն յոր հաճի՝ կարո՛ղ ինչ է։
Կատաղութիւնք ներհակական
կանգնեն փոփոխ նիշ յաղթութեան·
Ատէ ըստէպ 'ի յո՛չ կամաց,
սիրէ ըստէպ հարկեալ 'ի յայն։
Յայսըմ պահու սիրտըն դողայ
յուզեալ 'ի ծուփ մարտից երկբայ,
Օ՛երթ լաստափայտ բախեալ 'ի մէջ
խորանդընդոց երեքալեայ։

Հողք խամատիչք և մոլեգին
կըրծեն յուշիկ զաղիս նորին,
Որպէս կըրծէ Անգղըն ծախիչ
ըզփորոտիս Տիտիոսին: [38]
Մընչեն տագնապք դըժնէագոյն
զանհանգչելի ըզսիրտ նորուն,
Որպիսաբար բեռն ահագին
ճըմլէ յաւէժ ըզՍիսիփոն: [39]
Հիմ զիսկաքանչ ըզխոշտանգել՝
կեղծ տանջանօք առնում երգել.
Ն՛ տարադէպ առ մեր քընար
ըրտապաճոյճ սին առասպել:
Դո՛ւք պատմեցէ՛ք ճուո՛մ քըրքուանք,
դո՛ւք ըզդըժնեայ ցաւոց տեսակ,
Որովք ըմկեալ Թըշուառ Սիրող
յոգւոց հանէ տըխրատեսակ:
Անքո՛ւն գիշերք՝ ծիծաղք դըժուար
դո՛ւք պատմեցէ՛ք ճըշմարտաբար,
Քանի՞ քանի՞ տաղտապութիւն
սովորք կըրել սիրտք սիրահար:
Ո՛չ բալք այնչափ ըստուերական
'ի Կիմմերեան վայր խըտանան. [40]
Ո՛չ հասկք այնչափ յաճախաբոյսք
դալարանան 'ի Գարգարայն: [41]
Ու ծովափամբք ո՛չ դիզանին
այնչափ կարկառք չէկ աւազին,
Եւ ո՛չ աստեղք այնչափ թուով
շողեն 'ի գունտ եթերային:

Կարծեմ զօղեալ հըրէշ սակաւ
'ի ճիւաղուտ Լիբեան անձաւ, [42]
Զ՚ան ըղձարիս որք ընդ սիրով
գոն որջացեալ նենգաւորաւ։
Այըմ վըկայ ինքըն Յասոն [43]
ուսուցչապետ անսուրբ Սիրոյն,
Խոստովանեալ 'ի յԱրհեստին՝
եղանակէ նուագ այսգոյն։
* Որքան 'յԱթովս են նապաստակ, [44]
,, որքան մեղուք յՀըբլեան ճարակ, [45]
,, Որքան հաշուին հատապըտուղք
,, 'ի Պալլասեան ծառ կապուտակ, [46]
,, Որքան խեցիք 'ի ծովեզեր,
,, այնքան և վիշտք և ցաւք 'ի Սէր.
,, Նետք զոր կըրեմք 'ի սիրտ յոգի՝
,, լի՛ են թունով լի՛ դառնաբեր։ ||
Սէր ճըշմարիտ քաջ դասասաց՝
որ տայ բարուք սիրել մըտաց,
Երջանկաւէտ առնէ զն°ոսին
զորըս բարուք սիրել մարզեաց։
Արդ չըմբռնի որպէս խելառ
'ի փախըստեայ 'ի գեղ պայծառ,
Թէ գեղ դիւրանց զիւրըն սիրող
գիտէ միայն առնել թըշուառ։
Սոսկայ դողայ յուրախութեանց
վարակելոց յայսչափ վըշտաց.
Օ՛ի արձակէ մեղրաթաթաւ
մահագործակ նետ սըլաքաց։

Սէրն՝ որ [illegible]

Ցանկամ գիտել ո՞ւր ուղղէ նա
զիւրըն թռուչ հոլաթեւեայ․
Հայեա՛ց աչօք յերանաւէտ
յարքայութիւն բազմաստեղեայ․
Ցանկամ գիտել զի՞նչ սիրիցէ,
զի՞նչ սիրելով նա ցընծասցէ․
Ակընկառոյց լե՛ր 'ի յերկին,
բե՛ր 'ի միտ զինքնաբուն Է՛ ։
Չի՛ք մեծ և լաւ՝ չի՛ք քան ըզԷ՛ի, Ե
ազնուագոյն և ցանկալի․
Նովաւ բարի է ամենայն,
առանց նորա ոչի՛նչ բարի ։

Որ ուրեմն [illegible]

Գոյ 'ի յԱծ պատիւ կայուն՝
անկապտելի ամենեցուն․
Պահէ 'ի գոգ ամենաճոխ
զանծախելի հարըստութիւն ։
Է՛ մեր Պատիւ ինքըն Աստուած,
ինքըն միայն՝ ինքն է մեր գանձ․
Գանձք 'ի նմա չե՛ն հոսանուտք,
և ո՛չ պատիւ սին և դիւրանց ։ Զ
Նա ինքն ուղղէ զերկիր համայն․
և ո՛չ յերկրէ լեալ բացական՝
Գընէ յեթեր կաթողաբար
զիւրըն գահոյս արարչական ։
Նա հոլովէ զերկինս երկնից․
և ո՛չ հեռի բարձր 'ի յերկնից
Ունի ըզզօ՛ռամբ իշխանութեան
ըզհողագունտ մարմնագոյից ։

Իշխէ վայրաց եթերային,
իշխէ վայրաց և երկրային.
Նա ինքն ուղղէ՝ և նա լնու,
բարգաւաճէ և զերկոսին։
Զարքայութիւնս 'ի բուռն ունի,
զԱրքայս ընտրէ նա միակի,
Թագաւորն այն Թագաւորաց,
վարիչն երկրի՝ Տէրն Աշխարհի։
Պատի՞ւ խնդրես դու բարձրութեան,
որդ զԱրքայից սիրեա՛ զԱրքայն.
Յարքունի՞ գահ անձուկ ունիս.
տացէ քեզ Գահ երանական։
Գա՞նձ դու կամիս. այլ քան ըզգանձ
է ճոխագոյն որ զայն հատեաց.
Սիրեա՛ ապա զ՛Հատիչ նորին,
և եղիցիս դու մեծագանձ։
է. Սիրեա՛մ զԱստուած՝ թէ գեղ սիրես.
գեղեցկագոյն ոչի՛նչ գտցես.
Յորոյ փայլէ՛ փայլեն և այլք
գեղեցկութիւնք որք գոն 'ի յէս,
Թէ աստեղօք եթեր շողայ,
թէ մարդ՝ անոյշ ծաղկօք խայտայ,
Եւ թէ վտակ յըստակաբուխ՝
գեղածիծաղ ալեօք խայտայ,
Ե՛ն գեղեցիկ՝ զի են պատկեր
Հաստչին իւրեանց՝ որ զայն եբեր.
Գեղեցկագոյն լիցի՛ Հաստիչ
քան ըզծաղիկ ըզգեստ զեթեր։

Ընդաշխարհիկ դէմք պանծագոյն՝
որ ինչ ունի գեղ բերկրագոյն,
Չէ՛ գեղ բընաւ, նըշո՛յլ է այն
ըսկըզբընատիպ անբաւ գեղոյն ։
Այսպէս ծագէ փոքրիկ առուակ
'ի յաղթ գետոյ մըշտակայլակ ․
Այսպէս ցայտէ կայծ նորածին
'ի մեծ հըրոյ բազմաճարակ ։
Նոյն իսկ անշունչ արարածք սիրեն զԱծ. Անբան գոյակք նիւթականաց
'ի գաղտնածիր գըրդեալք ազդմանց,
Եւ տընկակից վառեալք տապով՝
առ հասարակ սիրեն զԱստուած ։
Աստեղք և ձիւն և ծով լըռիկ
կամ սաստկայոյզ 'ի փոթորիկ,
Օդըն սուլի՛չ՝ հաւ կարկաչոտ
սիրեն զԱստուած ըզգեղեցիկ ։
Սիրէ զԱստուած՝ կարկաջաձայն
առուն 'ի սէգ թափառական ․
Դաշտք և շուշանք՝ վարդք մանուշակք
սիրեն զԱստուած զարարչական ։
'Ի ծոց վիմարդ ամփոփ ունին
մարմարիոնք հուր բոցածին ․
Կայծ թօթափեն փայլակնացայտ՝
ընդ հարկանել պողպատին ։
Եւ յընդածին տապոյ յուզեալ
ճախրեն շանթիք փաղփիւնափայլ,
Քանզի նոյն իսկ Մարմարիոնք
սիրեն անբան զԱստուած բարձրեալ ․

Իւրաքանչիւր արբանեկէն
տեառն Աստուծոյ երկրպագէն ․
Երկին ւերկիր Հաստչին իւրեանց
պատուիրանաց հըպատակէն ։
Արփին պայծառ խաղայ գընայ
ընդ միջնագիծ Զօդիակայ ․
Զոր ըսկըսել՝ լընու զընթաց
անյեղաբար, ւոչ յամրանայ ։
Երբ բոցաշունչ ձիովք դիմէ,
զի համբարձեալ 'ի վեր ելցէ
'Ի գ°լուխ Խոյին ոսկեգըզաթ՝
որով եթեր ճառագայթէ,
Գայ յերևան զուարթ գարուն,
յայնժամ և մերկ ծառք ըզգենուն,
Մարգք ծաղկաւէտք խայտան հըրճուելն,
և հաւք քաղցրիկ երգըս առնուն ։
Խարտէշ ամառն 'ի հասկ յուռթի՝
գայ յաջորդէ փոփոխակի,
Երբ կառք նորա վազէն յայքող
'ի յունելիս Կարկինոսի ։ [47]
Փութայ Աշուն երբ Կառք Լուսոյն
յաստեղատուն գայ 'ի Կշռոյն ․
Նա մինչ դիմէ 'ի յԱյծեղջիւր,
մօտ հասանէ Ձըմեռն խոկոյն ։
Այսպէս տարւոյն չորս եղանակ
շըրջան առնու կանոնափակ,
Յերթալ Արփւոյն անշեղելի
յիւր նըպատակ սահմանափակ ։

Ըզսոյն ընթաց Լուսնիա [48]
բովանդակէ միշտ միամնեայ ,
Անուոյ նորա հետք ձիւնափայլք
կան առ երի շաւղաց նորա ։
Եւ այլ աստեղք Մոլորական
ասա բազմազան ոլորտանան ,
Եւ զամենայն զառ ստորև
ուղղեն մարմին ըզտարրական ։
Երբ ըզփախձան զաստուածադիր
պահեն նոյնպէս անխախտ 'ի դիր .
Սիրեն զԱստուած չորս Եղանակք .
Արև՝ Լուսին ւԱստեղաց ծիր ։
Անշունչ շըրթամբք սիրեն զԱստուած
և յայն մարզեն սիրել զԱստուած .
Օ ի ոչ կասին շարժմամբ՝ լուսով
ասել առ մարդ՝ Սէրէ՛ զԱստուած ։
Զըդի մեր Սէր՝ յորում բերին
մարմնագոյակք ամենեքին .
Նոքա հըլուք են Աստուծոյ ,
սա փափաքէ յԱստուած մեկին ։
Քանզի Աստուած միայնակ է՝
որ երջանիկ զ̊Սիրող առնէ .
Եւ զամենայն ըզբերկրութիւն
Ամէն բարին յինքն ամփոփէ ։
Աճ'ինչ ճանաչողին Առնէր ։ Իմ՛ զԱստուած՝ Ակն Աղբեր
առատաբուխ կենդանաբեր .
'Ի յայս աղբիւր կենդանական
պարտ է բուժել զ̊ծարաւ անբեր ։

Որ միանգամ արբցէ յալեաց
կենդանակիր այս վտակաց ,
Միրտ 'ի բերան դարձեալ կըրկին
անկցի 'ի խոյզ արբեալ ականց ։
Արբցէ նա միշտ անյագելի
շականակիտ ջըրոյն ալի ,
ծարաւեսցի յայնժամ յաւէտ
յորժամ յաւէտ արբցէ անտի ։
Փարատեսցի անդարձ ծարաւ
յալեաց աղբեր յոր մերձեցաւ .
Այլ՝ նոր ծարաւ բորբոքեսցի
'ի յաղբերբն յոր արբեցաւ ։
Ոչինչ յափրանք հետեւանան
համեղահամ ջըրոյս արբման ,
Որչափ լըցցի ջըրովս այնուիկ՝
այնչափ յաւէտ ումպք քաղցրանան ։
Որ ախորժէ եռափափաք
զանհատ առուին առնուլ ճաշակ ,
Բորբոքեսցի՛ յԱստուածային
եթերական հուր անապակ ։
Ի սուրբ սիրոյն վիրաւորեալ
յոսկիաձոյլ նետ արձակեալ ,
Գըտցէ ըղձուր ապաքինիչ
դիւրիլ նուլաւ և զովանալ ։
Ոչինչ ընդհատ որթ եղջերուին՝
յերեքթեւեան հարեալ փըքին ,
Մատչի անձկաւ և թօսելով՝
յաւիշկ աղբեր մօտաւորին ։

Երակ աղբեր ոյր չէք ըսպառ
առոգանէ զերկնադաւառ ,
Եւ դայեկէ վերին անդոյ՝
յաւէժաբուխ կաթն անըսպառ ․
Լուսափետուր Մեր սըրբազան
Ճախրէ զաղբերբ հոլաթեւեան ,
Առ 'ի բերել անտի առ մեզ
զայն օշարակ 'ի մեր սահման ․
Այլ Մերըն այն չէ ինչ օտար
'ի յԱղբերէն երջանկարար ,
Երբ զինքն Աղեխւր սիրէ սերտիւ՝
սէր միշտ բըխէ աղեխւրաբար ․
Աղեխւրըն այն է մի միակ ,
և ոչ զատի յօտար վըտակ ․
Ե՛ մի միակ՝ սակայն հոսէ
յերիս առաջս 'ի նըմմանակ ․
Երկըրպագեմ սըրբոտանուէր
յանտես 'ի հրաշ սըրբոյ Աղբեր ,
Ո՛ր աչներև տեսից երբեմն
յաստեղազարդ վերին եթեր ․
'Ի հեշտութեանց յափըշտակիմ ,
յոր նուաբեկ միտք հեղձանին ․
Այլ զայն Աղբեր ո՞ պատմեսցէ
ըզհեշտութիւն զանձառելին ․
Ո՞վ դուք հոգիք երանելի
մըշտադարուն Ոլիմպոսի , 49
Որք կոխոտէք փափկիկ ոտիւք
մարգագետին ըզծաղկալի ․

Դուք ասացէք, զի՞նչ ցընծութիւն
'ի յանդ հողիս հոսէն զեղուն.
Որանի՞ անոյշ վայելք իցեն
յԱստուածութեան 'ի գերաքուն.
Բայց այն զըմբաղք զուարճութեանց
են անպատումք ձռւոմ՝ շըրթանց.
Նաեւ ո՛չ իսկ միտք խելամըտել
կարողանան բանականաց ։
Թէ ոք ցանկայ 'ի յայս աքսոր
յայս աղցալից թըշուառ 'ի ձոր
Դիւել սըրտիւ ըղձայրեննաց
ըղհեշտութիւնս աստուածաթոր,
Սիրեսցէ նա զ̊միակ բարին.
Տայ զինքն Աստուած՝ սիրող սըրտին,
'Ի ըստանալ զԱստուածըն իւր
երջանկասցի սիրտ ունողին ։
Պա՛րք Կուսական դո՛ւք յիշեցէ՛ք
ըզխընդութեանց զայնըր արժէք,
Օրոց յանզօր դեռ 'ի մարմնի՝
զառհաւատչեայն ճաշակեցէք ։
Բարուոք Սիոյն դո՛ւք անուանի
կըրկին փարթիչք Կարմեղոսի,
Ս՝ին Արնոսի՝ միւս Նոպերեայ 59
համապայծառ շուք պանծալի ։
Ցուցէ՛ք զխո՞րդ քաղցրիկ նետիւ
թալկանայի՛ն սիրտք ձեր խոցիւ.
Օ խո՞րդ փառեալ բորբոքէին
սիրաբորբոք պայծառ ջահիւ ։

Կէի երբեմն՝ (՚ի մի բերան
 այսպէս նոքա արձակեն ձայն.)
 Սակայն կեանքն այն՝ ինձ լեալ էին
 անբերելի բեռըն դաժան։
Զի մերթ անձն իմ անձկով տարփայր
 վարեւ ըղձկեանս յորում նա կեայր,
 Մերթ վայելել ՚ի տես Լին
 ժառանգելոյ յաւէժ ապար։
Այլ գըլանայր կեանք դիւրանցիկ
 ինձ ըղձկենցաղ դերերջանիկ.
 Եւ յարկ մարմնոյս յոր փակէի՝
 բանտ էր ինձ այն պըղընձանիդ։
Հարսըն էի, այլ ՚ի յաքսոր՝
 յիմ հայրենեաց լեալ հեռաւոր.
 Այլ յաքսոր անդ էր ինձ Աստուած՝
 ըսփոփութիւն քաղցրիկ և նոր։
Աստէպ ՚ի տես ընծայէին
 ինձ դէմք չըքնաղք աստուածային.
 Ո՜վ աստուածեան ցանկալի դէմք՝
 աչաց իմոց դէմք բերկրագին։
Տեսանէի այս ըղձոյն
 ընդ պատկերօք պէսպիսագոյն,
 Այլ ով այսպէս մարթի զըննիլ՝
 տեսիլ պայծառ յաչաց մարմնոյն։
Բայց գեղեցիկ էր այն Աստուած
 ՚ի զանազան քօղ պատկերաց.
 Ոչինչ քան զայն գեղեցկագոյն՝
 ունի աշխարհս այս գեղապանծ։

Քա՛ղցր էր հայել ինձ 'ի փեսայն
ընդ տեսակօք ամենազան .
( Օ՜ի միշտ նոյնպէս չքնա՛ղ էիր
ո՜վ իմ փեսայդ անճառական : )
Լո՛յս իմ աչաց ո՜վ գերարփի՝
համագոյից տեսանելի ,
Ո՜վ աստուածեան ցանկալի դէմք ,
աչաց իմոց դէ՛մք բերկրալի :
Լոյս իմ չքնաղ միշտ 'ի տեսիլ
աչաց մարմնոյս ո՛չ գայր ըմբնել .
Բայց միշտ 'ի տես մըտաց հոգւոյս
գոյր առընթեր 'ի նըշմարել :
Թէ քիմք բըռնի ճաշ առնուին
պատրաստական 'ի սեղանին ,
Եւ թէ անդամք յարթուն 'ի տախտ
'ի դիւրանալ ընկողմնելին :
Յափըշտակեալ անձն իմ լինէր
'ի փեսայիս տիպ առընթեր .
Նո՛ր ինձ փեսայս հանդիստ մըտաց ,
միանգամայն և խորտի՛կ էր :
Թալկանայի ուշաթափեալ ,
երբ սիրողիս կամք թալկանալ .
Խումբ երջանկաց գայր իջանէր
թալկացելոյս ծաղիկըս տալ :
Բուրեն ծաղիկք բազմաբուրեան
մատամբ քաղեալ հրեշտակական .
Ո՜վ այն ծաղիկք ոգւոյս իմոյ
բըժըշկական դեղք բերկրական :

Երեւեսջի՛ք դուք սո՛ւրբ Աղաւնեակք
երկաքանչիւր Կարմեղոսեանք ,
զԱմբրոսիայն զոր ըմպեցէք [51]
ըղ յորդաբուղխ երկնավըտակ :

Այդ խընդութիւնք յոյժ են օտար՝
անկիրթ մըտաց գեր քան ըզկար ,
Թէպէտ կարի ծանօթագոյնք՝
որոց առեալ փորձ հըմտաբար :

Ի վըտակաց որ միշտ հոսէ
յԵթերական 'ի յաղբերէ ,
Թէ ոք կամի դեռ կենդանեօք
առնուլ ճաշակ՝ թո՛ղ սիրեսցէ՛ :

Քաղցրութիւն Ածային սիրոյն է անպատմելի :

Առցէ ճաշակ սիրողն ոգւով.
այլ զոր ճաշէ նա սիրելով՝
Ոչ ոք սիրող՝ թէ՛ և ճարտար
կարողասցի յայտնել լեզուով :

Այլ իմ բաղձանք զի մի՛ նանիր
լիցին երազ հողմոց 'ի ցիր ,
Ո՛րչափ քաղցրիկ Սէրն աստուածեան ,
նուագեցից բանիւ 'ի գիր :

'Ի Սէրն Այ ոչ գոյ ցաւ կամ երկիւղ.

Ցուցից թէ չի՛ք և ո՛չ մի ցաւ
յաստուածային 'ի Սէրն անբաւ ,
Որովք տանջի չարալըլուկ՝
Աշխարհիս այս Սէր բազմադաւ :

Սա ո՛չ հեծէ առ ծանր ահի ,
զերթ նա առ սին՝ հեծէ յոգի .
Սա ո՛չ ցաւի անմըխիթար
զերթ նա խանդիւ մաշեալ ցաւի՛ :

Սէրըն մաքուր՝ մարդըս զուարթ
'ի Լիգուստրայս սըրբաստղարթ , 52
Նաւ արտորայս մըշտադալարուն
տընկագործէ մըշտազուարթ ։
Անխոց մատամբ և անվընաս
քաղէ ճերմակ ըզԼիգուստրայս .
Օ՛ի մաքրաբոյս այն Լիգուստրայք
'ի տատասկաց զուրկ և անհաս ։
Ժ. Սիրեամ զԱ՟ծ . միշտ մօտ է նա .
զի կեաս շընչես դու 'ի նըմա .
'Ի քեզ Ա՟ծ . շարժէ ըզքեզ ,
լընու տածէ նա յարակայ ։
Ո՛չ նենգ ո՛չ հեռ՝ ո՛չ թըշնամին
բարձցէ 'ի քէն ըզՍիրելին .
Ո՛չ ծերութիւն և ո՛չ խոկ մահ .
Սա առաւել յօդէ նըմին ։
ԺԱ. Յոր դուն ցանկաս՝ և այլք ցանկան
ընկերք 'ի սէրն անճառական .
Ո՛չ զոք ունիս նախանձակից
խիթալ անտի գոլ երկեան .
Ոչի՛նչ կոպար կամ ամբարտակ
ըզսուրբ ուղխին սեղմէ կոհակ ,
Ո՛չ նուաղին ո՛չ ցամաքին ,
յորդեն այս ջուրք համաճարակ ։
Ովկիանոս անբաւաջուր
հըրջապատի զերկրաւ հանուր .
Այլ նա ըզգետս խըռով ջըրով
բարգաւաճէ առատատուր ։

Ջահք աստեղեայք ճառագայթեն
'ի փերոսեան 'ի ղամբարէն. [53]
Բայց ոչ վասն այն իւր տիւք պայծառք՝
'ի նըշուլից նուագ փայլեն։
Զօրհանապազ առնումք ըզլոյս
'ի ճըրագէ նուաղալոյս,
Եւ ո՛չ նուազ պայծառութիւն
գոյ 'ի ճըրագ աղօտալոյս։
Խնկպէտ ականջք բազում թուով
լըսողք ձայնին մի առ միով,
Բայց ձայն հընչման ամբողջ մընայ
'ի լըսելիս բազմայոլով։
Հաստից ծովուն ւարեգական
և ճըրագին՝ ձայնին հընչման,
Ընթերաբար զինքն հաղորդէ,
չիք իւր սահման առատութեան։
Բոլորապէս զինքըն Աստուած՝
անթուելի տայ սիրողաց.
Սիրտք ամենայն բոլորապէս
'ի վայելել մարթին յԱստուած։
Մաքուր սիրող մաքուր սիրոյն,
իւր որոնէ ընկերս 'ի նոյն.
Եւ երբ վառմամբ կայ բորբոքեալ,
իւր ջահակիցս անձկայ հըրոյն։
Ոչ թըշնամիս՝ այլ սիրելի
իւր բարեկամ՛նա համարի,
Զորըս նոյն սէր վառեալ կիզու
անախտակիր բոցով սըրտի։

Ցընծայ խայտայ երբ տեսանէ
խոցեալ ըզսիրտ յանմեղ նետէ.
Եւ ցաւագնի երբ ըզնետեալ
յետս ընկըրկիլ նա տեսանէ:
Քանի՞ արդեօք ցաւի յանձին,
վըկայե՛ն աչք արտօսրագին,
Եւ այտք հըմուտք լուղալ ծըփիլ՝
'ի յորդաջուր գետս երկոսին:
Քա՜ջ վըկայեն այն սըրտեաց
խղձք փըրկութեան հասարակաց,
Զոր բոցավառ սիրտ սիրողին
անշիջաբար տածէ յինքեան:
Ըզսիրտ վարեալ միշտ սիրալից
'ի հեզաշունչ օդոյ երկնից,
Ոչի՛նչ դըրդուեն հողմք երկիւղի
ալիասաստ մըրըրկալից:
Այսպէս դիմէ 'ի յափըն կոյս
նաւ հողմալից և քաջայոյս,
Երբ 'ի խաղաղ տիրէ ալիս
խաղաղաշունչ հեզ Զեփիւռոս:
Մի՛ լինիցիս երկրայադոյն
սիրել փոփոխ 'ի բարձրելոյն. Որ սիրէն զԱծ. սիրէ ԱՅ.
Զո՛ւր երկրընչիս թէ չըսիրես.
զի սիրեցիս՝ սիրեա՛ ըզնոյն:
ԺԲ Թէ անձըն քո զԱստուած սիրէ,
այժմ իսկ փոխան ըզքեզ սիրէ.
Որպէս զի քեզ փեսայասցի
ոչի՛նչ 'ի քէն՝ բայց սիրտ խընդրէ:

Ո՛չ պերճ օժիտ զարմանազան ,
այլ սիրտ խնդրէ պաշտատական .
Այժմէն ըզքեզ հարսնացուցէ
Թէ այժմ ըզսիրտ տացես փոխան ։
Որպէս հարեալ վէհ Արքային
՚ի սէր գեղջուկ օրիորդին ,
Գնայ մտանէ ընդ շինական
յարկաւ անշուք տաղաւարին ։
Մերժեալ զընտել ըզպերճութիւն
յիւրոց դիմաց օդոստադոյն ,
Խանդաղատեալ գորովաշարժ
ժըպիտ քաղցրիկ բերէ ՚ի նոյն ։
Յետոյ հանէ բարբառ մեղմով
՚ի վառ սըրտէն սիրադորով ,
Զի զանձն երկչոտ զօրացուցէ
դիմօք աչօք և բարբառով ։
Թո՛ղ շինանիստ Նիմփայդ շըքեղ [54]
ըզգեղջկական յարկիդ ըզծեղ .
Մեր Արքունիք ՚ի քոյդ ցանկան
՚ի քոյդ հեծեն նազելի գեղ ։
Մերկեա՛ ՚ի քէն կապերտ զասուի ,
ա՛ռ պատուական արկանելի ,
Զոր նըկարէ փ̊ռիւգեան ասեղն [55]
՚ի զարդ գարնան ազգի ազգի ։
Այդ կերպարան ձա՛հ ՚ի քաղաք ,
և ո՛չ յանշէն ՚ի յագարակ .
Թո՛ղ զագարակ՝ եկ զարդարել
բարգաւաճել զիմըս քաղաք ։

Մի՛ այլ հիւսեր 'ի մորչ ուռեաց
ըզ սակառի չքնաղկանաց·
Ցուպ արքունի ոսկեձոյլ՝
այդ ձիւնափայլ վայե՛լ ձեռաց։
Փափկիկ անդամք խոնջեալ լինին
'ի տերևոց բիրտ փեկոնին·
Պահ փետրալից ցանկայ տածել
ըզՎարապետն ըզքոյդ մարմին։
Թող զադարան՝ ըզհիւղ պըրտուեայ,
Թո՛ղ ըզ սակառ ըզ տախտ յարդեայ·
Լոկ սիրտ խընդրեմ՝ տա՛ց քեզ դահոյս·
սիրեա՛ դու զիս՝ եղե՛ց փեսայ։
Ոչի՛նչ անտիպ յօրինակէս
զԱրքայն երկնից ինձ դու տեսցես·
Ա՛ռ մեր մատչի սիրտ աղքատին,
յիւր առագաստ կոչէ ըզմեզ։
Նա խոստանայ սիրող հոգւոյն
անախտական սուրբ հարսնութիւն·
Նա ողջախոհ Խմէնէոս՝ [56]
անախտ ճարակ ջամբէ ջահուն։
Նա սիրտ խընդրէ՝ զի քեզ տացէ
զԱրքայութիւն զոր ժառանգէ·
Սիրեա՛ ըզնա՝ մերժեա՛ զերկիւղ·
Թէ սիրեսցի, անշուշտ սիրէ։
Օ՛ այս խոստանայ որ ոչ խաբի,
և ոչ բընաւ խաբել մարթի·
Ոչ 'ի մըտի մոլորութիւն,
ոչ նենգութիւն 'ի բան լեզուի։

Մենիմաստ գոլով նորին ,
չիք մոլորել՝ անկար նըմին .
Ճըշմարտախօս միանգամայն ,
չիք խարդախել՝ անկար նըմին ։
Ապա ըստոյգ մատն Աստուած ,
առջի՛ր յանձին ըղձոյս հաստատ .
Ո՛վ քո Սիրող՝ հըզօր գըթած ,
և անխարդախ քաջահաւատ ։
Սիրեա՛ ըզնա ։ Երբ սիրի նա ,
սիրող սըրտին ըղձիրտ իւր տայ ,
Եւ առնուցու պարգևս առատ
քան զոր կանխաւ նա խոստանայ ։
Ո՛վ թէ Աստուած մինչ ո՛չն էաք՝ Ժ.Գ.
սիրեաց ըզմեզ , և ո՛չ ծանեաք ,
Մինչ եմք զարդիս՝ սիրէ ըզմեզ ,
թէ սիրեսցի նա փոխանակ ։
Արարչու- թեան աշ- խարհի յայտնէ ըզ- ձեռն Աս- տու- ծոյ ։ Ո՛ զարմանակարգ տիեզերաց
յոր աչք ափշին անհուն կերտուած ,
Եւ ՚ի ծոցոյ անդընդախոր
անգոյութեան մեզ ՚ի տեսուած ։
Երկինք՝ անգոյ ոչինչ էին ,
ոսկեձաձանչ որք արդ փայլին ,
Ոչինչ անգոյ՝ և քո արծաթք [57]
գեղածածան ալիք ծովին ։
Ոչ Պոմոնա՝ դըրախտ գործէր , [58]
ոչ Դեմետրէ զանդըս հերկէր . [59]
Ոչ սա արդիւն տոհմականաց ,
ոչ նա պըտուղ մատուցանէր ։

Յայնժամ ոչի՛նչ էր և փլորա ,
բոլորք վարդից ոչ էր 'ի նմա.
Որ այժմ 'ի դաշտ դալարագեղ՝
Ձեմըս առեալ նա ըզգընայ ։
Աստեղք ուղիք և արմըտիք ,
երանգք ծաղկանց՝ պէսպէս խայրիք ,
Հաստչին ձեռամբ ամենատէր
'ի դուրս ոստեան թաղեալքն 'ի չիք ։
Արար զսոսա կարգ ըստ կարգէ ,
զի մեզ աշխարհ ծառայեսցէ ։
Եւ զի մարդոյն ընդ տէրութեամբ
ամենայն ինչ հըլու կացցէ ։
Արկ ընդ սոսա իշխանաբար
ըզգունագեղ թըռչնոցըդ պար ,
Որք հըմտաբար բախմամբ թևոց
շարժեն հեզիկ զօդ անդադար ։
Արկ ընդ սոսա ըզբիւրազան
ըզկայտառաց սեռ կըրթական
Հերձուլ թիւք թեփազգեցիկ
ըզ ջուր բընիկ սընընդական ։
Հըպատակեաց ըզցուլ վայրագ
և զանարին ըզնապաստակ ,
Ըզգեղմնաբարձ խաշանց ըզհօտ ,
և զայծեմնիկ զոտիւք արագ ։
Զոր միանգամ յինքեան տանին՝
այս տիեզերք յանբաւ ծոցին ,
Եթեր ւերկիր և կամ անդունդք ,
առ ձայն մարդոյն գան նուաճին ։

Զոր Արարչին ամենազօր
աջ մեծաքանչ արուեստաւոր
Կարգեալ կացոյց համագոյից
միահեծան զերթ Խնագաւոր ։
Սիրո՛ղդ Աստուած , յորժ շռայլեաց 61
աջ քո հաստիչ եղականաց ·
Բա՛րէ քանի՞ ճարտարեցեր
'ի սէր առ մեզ Սիրո՛ղդ Աստուած ։
Կա՛ւ էի ես · Նա 'ի կաւոյն
ըստեղծ մարմին գեղեցկագոյն ,
Զոր պատրաստեաց 'ի յօթարան
գոլ տեսակին ազնուագոյն ։
Յանձնաւորել զանկերպարան
զանդամ մարդոյն նոյն և զիրան ,
Ըզկենսագործ ըզշունչ հոգւոյն
աստուածեղէն փչեաց բերան ։
Նոյնպէս յայտնէ ըս-տեղծագոր-ծութեան հոգւոյն ։
Իմանալի մերըս հոգի
պատկեր Աստուծին է կենդանի ·
Առ իւր Աստուծ բուռըն բերմամբ
Թևակոխել նա նըկըրտի ։
Յիւրըն կենդրոն վէմ ծանրագին
հակամիտեալ բերին ուժգին ·
Նա գո՛ւ թեթև բո՛ց դիւրաշարժ՝
'ի քոյդ 'ի մէտ թըռչիս յերկին ։
Զիրք երկնատուրք հըզօր գործեն
Թևակոխել ձըգտիլ անդէն ,
Յոր զըլանայ ոյժ կըթուցեալ
Թևակոխել ձըգտիլ անդէն ։

Արդ թէ Աստուած սիրեաց անսակ.
որք ոչ ըզնա դեռ սիրէաք,
Զիմ ոչ ըզմեզ նա սիրեսցէ,
թէ սիրեսցի նա փոխանակ:
Եթէ զիա՞րդ սիրեաց ըզմեզ,
մարմին զոր առ՝ ձայնէ առ մեզ,
Եւ վանատուր Բեթղեհէմեան
քարանձաւին դերբուկք երէղ:
Ո՞րչէ անդ Բան ծոցածին Հօր,
երկնից Արքայն դիէ առ Մօր.
Աչք լուսատուք Լուսաւորայ՝
են համակեալ արտասուաթոր:

Մարդե- ղութիւն Բանին և Ծնունդ Քրիստոսի ՚ի Կուս- էն սրբէն Մայ:

ԺԴ. Ո՞ւր արձակել՝ դիել և լալ,
Սէրն ըստիպէ բոցավառեալ,
Որով Մանուկն Աստուածային
՚ի սակըս մեր կայ բորբոքեալ:
Ո՞րչէ ներումն ՚ի գըտանել,
և գթանայ ՚ի պարգևել
Անուրբ սըրտից սուրբ պատմուճան,
և արտասուէ առ ՚ի մաքրել:
Ի չիթ լալեաց կաթիլ խառնէ
ըղսուրբ արեան զոր կայլակէ.
Եւ բաղանիս լալեօք կաթամբ
և սուրբ արեամբ այսպէս կազմէ:
Աւուա՛կ է արդ արիւն մանկան՝
զոր ցօղագնէ վիրաբերան.
Այլ ուղխօրէն հեղեղեսցէ
արիւն ծորեալ անտի յապայն:

Իզուր նորա վէրք վըկայեն
արիւնաբուխ շըրթամբք ձայնեն.
Բազո՛ւմ են վէրք համաձարակ
'յառեալ մարմնին, թիւք ոչ բաւեն ։
Հայեա՛ց յանդամս Ածարեալ, ԺԵ
աստուածային արեամբ ծորեալ.
Գոգցես ձայնեն անդամք նորա,
Այսպէս զԱշխարհ սիրէ Բարձրեալ ։
Տես ըզգըլուխ պատառոտած
ընդ պըսակաւ 'ի տատասկաց,
Գոգցես ձայնէ գըլուխ ծակոտ,
Այսպէս զԱշխարհ սիրէ Աստուած,
Այսպէս հընչէ օդ կարեկից
հերձեալ 'ի դա՛ն խարազանից.
Այսպէս ըզվէմս հընչել կարծեմ
հերձեալ փըշրեալ 'ի յաղետից ։
Զա՛յս յեղեղեն փուշք և պարան,
խաչք և բեւեռք՝ սայր գեղարդեան.
Սոքիմբք ըստոյգ ունի աշխարհ՝
առհաւատչեայս իւր փըրկութեան ։
Խորհուրդ սրբոյ Հաղորդութեան է առհաւատչեայ սիրոյն Այ։ Ունի ըստոյգ ։ Այլ մեծագոյն
իւրոյ անձառ առ մեզ սիրոյն
Կանգնեաց Աստուած ըզնըշանակ
զամենամեծ անձառագոյն ։
Զի կամեցաւ զիւրըն մարմին ԺԶ
ընդ տեսակաւ տածող հացին
'Ի կերակուր մատուցանել,
'ի կազդուրել զ̊սովեալ հոգին ։

Աստէ՛ն կըրեց իւր դըժընդակ
ըզերկրային եդ յիշատակ ·
Աստ պատրաստեաց խընձոյս երկնից
սստ փափկութիւնս անօրինակ ։
Մա՛յրըն սիրուն զորդիս գըրգուէ,
'ի գիրկըս իւր ըստեամբք ջամբէ ·
Ըզկեանս զոր ետ՝ 'ի գիրկըս իւր
և իւր կաթամբ տածեալ գըրգէ ,
'Նորածնելոց՝ իւրով մարմնով
տայ ճաշ և ումպ արեամբ իւրով,
Բանն Աստուծոյ՝ Մայր տիրապէս ,
նոյն և Դայեակ դիւրագորով։
Այսպէս նա ինքն 'ի մեզ մընայ ,
զի մընասցուք մեք 'ի նըմա ·
Կեայ նա 'ի մեզ · նոյն ինքն Աստուած
լինի մեզ կեանք , աճումըն տայ ։
'Նախ վասըն մեր կեանքըն անմահ
յանձին կալաւ ճաշակել մահ ·
այժըմ՝ 'ի մեզ ցանկայ նա կեալ
կենդանաձիր կեանքըն անմահ ։
Նու ո՞ր սիրող՝ համանըման
այսըմ սիրոյ եթող նըշան ·
Բարէ · ո՞վ Տէր՝ ճարտար ես յոյժ
հընարագիւտ առ ազգ մարդկան ։
Ապշին ընութիւնք իմանալեաց , Առ նը-ւանէ թը-ոյն Սի-րոյն ։
զի ըզխոստանս այսչափ սիրեաց ·
Այլ առաւել ընդ այն ապշին ,
զի զյանցուցեալ ընութիւն սիրեաց ։

Ըզմեղապարտ զազգըն սիրէ, ժէ
յորժամ նոցա ձիր ընձեռէ.
Զի 'ի մեղաց կարողացին
կարձել զընթաց յամենայնէ:
Որք մեղ բարդէն մեղաց վերայ,
նա ըզպարգև բարդէ նոցա.
Մոլորելոյն թողցէ յօժար,
թէ թողութիւն խընդրեսցէ սա:
Մեղք քո թէպէտ որդան կարմիր,
ձանձախարիթ աղտեղալիր,
Լուա՛ ըզնոյն և եղիցիս
առըր խնկոյն՝ ձիւն լուսակիր:
Եթէ ձըգէ ողոք բանիւ, ժը
եթէ սարսէ սաստող ձայնիւ,
Սիրոյ ծընունդք՝ եթէ գըգուանք,
եթէ բոհմունք ահեղ սաստիւ:
Թէ ըսպառնայ պատիժ անանց,
թէ խոստանայ ըզվարձ անանց,
Զանձին բերէ միշտ ըզգորով
սիրապատար հօր բաղձանաց:
Ըստէպ պընդելի ըզհետ հոգւոց
յորջըս անկոխ մոլորելոց,
Զընտրեալ հօտին յամուր փարախ
դարձուցանել 'ի թիւր հետոց:
Նյապէս փութայ հովիւ հըսկող
ըզհետ շաւղաց խաշանց փախչող,
Զի մի լիցի որոջ օձտեալ՝
Ճարակ ժանեաց գայլուն ծախող:

Բարձեալ 'ի յուս ածէ բերկրեալ
յանքոյթ գաւիթ պատըսպարեալ,
Ոչխար գըտեալ յանգէտ վայրի
զ'ի յարօտէ ըստերիւրեալ։
Մերժեալ յարկաց ըմբոստ սըրտին
յոգւոց հանէ հառաչագին,
Որպէս լըքեալ 'ի փեսայէն՝
Հարսըն նորեկ հեծէ ուժգին.
Սա սերտ սիրէ զիւրըն փեսայ,
և զի սիրէ՝ զթողութիւն տըրայ.
Դարձցի անդրէն փեսայն առ իւր,
և լըռեսցէ սըգալ ըզնա.
Սիրողն Աստուած զի զմեզ սիրէ,
երբ զայն թողումք՝ վասն այն կոծէ.
Բայց թէ կըրկին դառնամք առ նա,
ուրախացեալ նա ցընծասցէ։
Երբ Անառակ որդին անտուն
'ի հայրենին դարձաւ 'ի տուն,
Սեամք խընդագինք ըզտօնական
ուրախութեան նըշան ետուն։
Համբոյր բազում մատոյց որդւոյն
Հայրըն գըթոտ յետ դարձելոյն.
Նա փարեցաւ զպարանոցաւ
աղերսարկու կողկողելոյն։
Կօշիկ ոտից իւր հոլանի,
տուաւ մատին և մատանի,
Նա պատմուճան արկաւ զանձամբ.
ազգ ազգ խորտկաց 'ի սեղանի։

Խայտան պարեն 'ի կայթ կաքաւ
մանկունք լուսոյ զերկնից յարկաւ ,
Նոր մեղապարտ փըղձկի 'ի զեղջ
ընդ յանցանաց որովք յանցեաւ ։
Գիրկս արկանէ Հայրն երկնաւոր
հեգ Որդեկին իւր դարձաւոր ,
Համբոյր քաղցրիկ ըղձեստ և զարդ
և ջամբ բաշխէ սիրայորդոր ։
Նախ ցուցանէ զինքըն մեզ Հայր ,
յետոյ Դատող արդարաբար .
Զոր հարկանէ որպէս Դատող՝
ազդէ նըմին նախ Հայրաբար ։
Մեղապարտից որք գան մաղթել ,
ինքն առաւել ըղձայ ներել ,
Քան զոր ժըտող մընասապարտ
ներումն ըղձայ 'ի գըտանել ։
Այսպէս յորժամ ըզխեռ մանկիկ
մօրն հարկանէ ձեռըն սաստիկ ,
Մանուկըն լայ հեկեկաձայն ,
աղերսելով ներել հեզիկ ։
Յաղթեալ ծնողին առ լաց որդւոյն՝
ցանկայ ներել յանցուցելոյն ,
Քան զոր պատժոյն որդին ցանկայ
առ 'ի մօրէն ըզթողութիւն ։
Նաւ համբերող՝ ('ի նոյն դարձցուք)
յանդորր դադար ունի անձուկ ,
Որ ձողոպրիլ յալեաց պատրող
յորում ծըփի 'ի հողմ 'ի բուք ։

Ոչ այդունակ սպասէ Որսող
'ի թաւ անտառ հիւր դարանող,
Բերել արտաքս երէվայրեաց՝
որք 'ի մորուոջ նըստին 'ի քող.
Եւ ոչ այսպէս ձըկնորս ցանկայ
հանել գըլուխ յալեաց վերայ,
Մինչ ընդ ալեօք՝ կայտառ երկշոտ
քօղասուզեալ կայ որջանայ։
Բազում անգամ եցոյց Աստուած
երբ մեր տաղտուկ համբեր կենաց,
Եթէ քանի՞ նըմին ախորժ
մեր փըրկութիւն թըշուառ անձանց.
Զայս փոյթ յորդումբք առհաւատչեօք
'ի յայտ եած մեր զառաջեօք,
Այլ 'ի ժամուս շատ 'ի յիշել
մին 'ի բազմաց և դուզնաքեօք.
Ա՛ստ ուր անդեակ դալարանայր
փըթթեալ հասկօք մօտ 'ի Սուքար, Դուստր Սա-մարաց-ւոյն։
Մարմարոնեայ բըխէր ջըրհոր՝
ջուր բարեհամ առատաբար։
Աստէն Սիրողն այն երկնային
յերկայն ուղւոյն ըզխոնջ մարմին՝
'Ի նըստարան սալայատակ
վայր մի հանգոյց՝ դիւր տալ անձին.
Ճեպէր Տիտան երեքտապեան
առ միջնադիծ եթերական.
Սով տագնապեալ Ճարակ խընդրէր
'ի փարատել նըքօղութեան,

Նկըն եկաց յարուարձանաց
Սամարուհին բերանաբաց՝
Սուզել զծարաւ յանձախ ալիս
ախորժահամ յորդ աղբերաց ։
Զախտացելոյն բուժել կամի
ըղձօթութիւն որ չէ՛ր յայտնի ,
( Քանզի խօ՛թ էր մեղօք բազմօք
այն տառապեալ Սամարուհի ։)
Ըղձօթութիւնս 'ի յայտ ածէ ,
ողոք բանիւք ապաքինէ ․
(Այսպէս դարման ախտացելոյն
մատուցանել՝ վայե՛լ դատէ ։)
Խընդրէ Աղբիւր ջուր 'ի յըմպել,
որոյ ծորանք յորդ 'ի բըխել,
Որ անըսպառ խաղայ գընայ
յաւէժաբուխ գետահետել ։
Ջուր նա խնդրէ 'ի ծարաւին ,
զի ծարաւի Սամարուհին
Ջուր խնդրեսցէ զականակիտ
աղբերական աստուածային ։
Ապախտ առնէ զսեղան կազմեալ,
թէպէտ սովու էր նըքողեալ․
'Ի քարոզ անդ հոգեկեցոյց
ունի խորտիկ 'ի յագենալ ։
Ոչի՛նչ զարմանք ․ Որ ցանկանայր
հիւանդ ոգւոց գոլ կենարար ,
Նա ո՛չ նըքթեալ անսուաղէ՛
յայլ ինչ խորտիկ անուշարար ։

Փըշրեալ ըզնիգ ընդ գեհենոյն
ըզԲելիար առնել նըկուն ,
Զողորմելին մեղապարտից
շըղթայից կապ խըզել համբուն
Ջախեալ ըզմեղս զոյգ ընդ մահուան ,
բանալ ըզդուռն եթերական ,
Այս Միածնին՝ եղև լոկ քաղց ,
ա́յս լոկ ծարաւ անշիջական ։
Զորըս կապեալ եգիտ Աստուած
և ըզգերիս զորըս սիրեաց ,
Զի՞մ ոչ արդեօք նա սիրեսցէ ,
զորըս եղոյծ՝ զորըս փըրկեաց ։
Չըքնաղ Սիրող ըզգաղրոտիս ,
և ճոխ սիրեաց ըզ չըքոտիս ։
Ո՞չ սիրեսցէ զորըս սըրբեաց՝
զոր ճոխացոյց գանձուք յոգիս ։
վ.թ. Զոր դուն սիրես Փեսայդ մաքուր
զիա՞րդ բարուք է հեշտալուր .
Յապերախտիս բանայ զիւր աջ
բարերարել առատատուր ։
Երբ Իսրայէլն այն մոլեգին
փակէր անսաստ ըզմուտ սըրտին ,
Զի մի հաւատք ականջալուր
՚ի միտըս իւր պըտուղ ծընցին ,
Աստուածային այն Րաբունի
յաւել ՚ի բան զըսքանչելի .
Զի ընդ աչաց և միտք գերեալ
առ ՚ի հաւատ նըկուն լիցի ։

Բարերա-րութեանք Քի եղ-եալ առ Հրէայս՝ են նշանք որոց նա-րա ։

Վանդի խըլից լուր պարգևեաց ,
համրացելոց բարբառ շըրթանց ,
Յոր ժողովուրդք բարձրաբարբառ
ծափ ըզծափի հարին անձանց :
Բազում անգամ 'ի ընիկ գիշեր
Թաղեալ աչաց յանկոյս ըստուեր ,
Շնորհեաց նայել ըզցանկալին
ակնապարար տիւ լուսաբեր :
Է՛ զի դամբանք՝ է՛ զի դեսպակք
սեւազգեցիկք մարմնոց ունակք ,
Առին հրաման տալ ըզմարմին՝
անդրէն լուսոյն գալ 'ի ճաշակ .
Ըզլէգէոն տարտարոսեան
արար յօդոյս վըտարական ,
Զորըս մերժեալ սուզեաց 'ի լիճ
խաւարարգել ծըծըմբական :
Տէր բընութեան ծանօթացաւ ,
Տէր դըժոխոց քարոզեցաւ .
Նա ապշութեամբ եպաղ երկիր ,
սա առ ցասման մըղձկեալ անկաւ :
Սակայն Եդոմ ողընդըժնեայ՝
ըզգըրգըռեալ 'ի հեռ դըժնեայ ,
Զըսքանչելիս աստուածագործ՝
եպերանօք հենգնեալ լուտայ :
Զարուեստ հրաշից պախարակեալ
զերթ մոգութիւն արուեստակեալ ,
Ըզնախանձուն հեղու ըզթոյն
յիւրըն Արքայ ապիրատեալ :

Նա դատափետ յազգէն 'ի բուն՝
պարգևս հատոյց ընդ վնասուն .
Յանձին կալաւ վարել 'ի սպանդ
որպէս զանմեղ գառըն սիրուն ։
Զի զերթ ոչխար առ կըտրըչին՝
փակէ զբերան և կայ լռին .
Նա զերթ որոջ կայ անմըռունչ՝
'ի զոհարան սրբոյ բագնին ։
Այսպէս ժուժեաց Զոհն աշխարհի
ոչ ձիկ հանել 'ի յատենի ,
Զորս ձըրիւք էր զարդարեալ
հանդէպ դահճաց իւր կատաղի ,
Զաչըս մնաց ամբարձ դիտեալ
ուր ամբարձեալ կայ Գողգոթա . Մահն վճռի և պարգևայ այնպիսի՛ն նշանք մե- րոյ ։
Ընդ զԱստուածեան Սիրոյն տեսցես
ըղձըրձգըրիտ զառհաւատչեայ ։
Ի մէջ բաղկաց հապձեպ Մահուան
Թալկանայ Կեանք էիցս համայն .
Սոսկումն ածէ անդըրթուլթիւն
խըժդըժական ըսպանութեան ։
Արբեալ նորա ըղձըժընդակ
ցաւոց կըրից դառըն բաժակ ,
Քամեաց իսպառ զայն որ յառաջ՝
լի՛ թաթաղուն մինչ 'ի ոլըսակ ։
Բաժակ վըշտաց ըսպառեցաւ ,
այլ լի՛ և նոյն՝ մընաց ծարաւ .
Զի դեռ մահուամբ նա պապակէր ,
մեղուցելոց օգնել տակաւ ։

Ապառաժից վիմարդ ընդէր
աղետացեալ յոգւոց հանէր ,
Սակայն խուժան արիւնըռուշտ
բոցականագոյն մահ մըռընչէր ։
Ծածկեաց Փեբոս յանլոյս խաւար
զանիւ կառաց լուսապատար ,
Եւ թըխազգեաց երիվարօք՝
այլագունեալ դիմօք գընայր ։
Զաչսըն քօղեաց՝ զի մի՛ ինքնին
յանգութ մահուն կայցէ զընին ,
Խոր աղջամուղջք համատարածք
յայտնի նըշա՛նք ցաւոցն էին ։
Երեսք դահճաց կապուտակեալք
էին յայնժամ ընդարմացեալք ,
Որք նախ տըգեղ կատաղութեամբ
'ի բոցագոյն էին ներկեալք ։
Զերկին մըթով նորանըշան ,
և զապառաժս 'ի ձայն հերձման
Կարծեմ յայնժամ խընդրել վըրէժ՝
գործօնէից աստուածասպան ։
Սակայն Աստուած խոց կարեվէր՝
զաստուածասպան ազգըն սիրէր ․
Քանզի առ Հայր յողոք բերեալ՝
այսպէս աղերս մատուցանէր ։
Ըզքո ցասման զարդար մըտրակ՝
Հա՛յր իմ արգե՛լ 'ի քո դաստակ ․
Ցասումըն քո յաղթեալ սիրով՝
խորտակեսցէ ըզքոյդ նիզակ ։

'Ի քինահան աջոյ քումմէ՝
Դուժ ըղձանդիս թող կորզեսցէ .
Նոր հաստուածոյդ ողորմեսցիս ,
նա բարձր 'ի գլուխ յաղթանակէ ։
Մ՚եղս ահագին՝ իմ չարարարք
անկղխտացան մահուս սատարք .
Պատիժք համայնք քըստմընելիք՝
քան զայս ոճիր յոյժ են խոնարհք ։
Եւ Դըթութիւնդ որով գովիս ,
քան զամենայն յաղթէ չարիս .
Նաև յորժամ ներես գըթած՝
ամենազօր դու ճանաչիս ։
Դարձեալ նուազէ զեղեռնութիւն
որ 'ի նոսայն անդիտութիւն ,
Որ դիւրաբար գիտէ հորդել
շաւիղ պատրաստ առ ներութիւն ։
Փըշովք խոցէ զիմըս սընար ,
զիրան մարմնոյս կարծօք եհար .
Նու բեւեռօք մահ պատրաստէ
ինձ գումարտակ կոյր և մոլար ։
Ահէ զի՞նչ գործէ՝ անդիտանայ .
զի ըստուգիւ թէ գիտէր նա ,
Ոչ յիմ արիւն լըբէր արդեօք՝
ներկել զանդեւ զաջըն դըժնեայ ։
Ներեա՛ Հայր իմ՝ ներեա՛ կուրաց ,
ներեա՛ հայցեմ ողորմելեաց .
Զայնիւ արեան մաղթեն թողուլ,
մարմնոյս իմ վէրք բերանաբաց ։

Արդ թէ Աստուած 'ի մահ խաչիս՝
այսպէս սիրեաց զիւր թշնամիս ,
Ըզքեզ սիրող՝ նա սիրեսցէ ։
Սիրեա՛ ըզնա՝ զի սիրեսցիս ։
Երբ ծընընդեամբ եկն 'ի մարմին ,
ետ զինքն Աստուած՝ ընկեր քոյին
'Նախ քան ըզմահ 'ի կերակուր ,
և 'ի մահուն՝ փըրկանք 'ի գին ։
Եւ այժմ 'ի գահ իւր արքունի Ի
զինքըն տացէ վարձ սիրողի .
Ապա սիրէ . Սիրեա՛ և դու .
կամի Սիրել , սաստէ՝ ժըտի ։
Դու որ զԱստուած սիրես սերտիւ .
սիրեալ լիցիս միշտ ըստուգիւ .
'Ի սէր մաքուր ոչի՛նչ երկիւղ ,
ոչի՛նչ և ցաւ՝ հոգ ըզ սըրտիւ ։
Խորհր 'ի վեցերորդ-դոր և երի-նաւոր հեղ-փոխեցաց ։ Սա հեշտութեամբք որ 'ի յերկնէ՝
երջանկաւէտ ըզսիրտ գործէ .
Եւ ոչ որպէս գիւրանց բերկրանք՝
ըզթոյն զանխուլ յինքն ամփոփէ ։
Դըրդանք երկրի չեւ ըստացեալ
քա՛ղցր են սըրտի ակընկալեալ .
Հազիւ ստացեալ՝ բերեն տաղտուկ . ԻԱ
դառըն լեղեաւ են համակեալ ։
Զուրախութիւնս եթերային՝
չեւ ըստացեալ խոտէ հոգին .
Այլ խնդրէ զայն՝ երբ ըստանայ .
յայնժամ յաւէտ ցանկայ նըմին ։

Խոստովանիմ, սէր մաքրական
յոյժ է օտար և այլազան.
Քան զայն որում ըղձեա երթայ՝
խոնջեալ ոտիւք անմիտ խուժան։
Որում կամք են լինել գիտակ՝
ըղ սոյն խըտիր ընդ սէր երկեակ,
Մ՛ինկըն դիցէ արձագանգաց՝
որովք հընչեն ժայռք անբընակ։
Կըրկնեն քարայրք Մասիսոյ
ըղ մարդկային ձայն բարբառոյ.
Չիւր Մագդաղեան ունի կայան
'ի յապառաժ Մասիսոյ։
Թափ առնու նա յանձաւ 'ի խոր՝
ժանտ գազանաց ընակաւոր.
Նա չերկընչի 'ի ձիւաղաց՝
առանձնացեալ և մենաւոր.
Ըզմերկ մարմին հերք ըզօղէն՝
խառնափընդոր խըռուաց զօրէն,
Գոգցես յաւէտ լինել այնմիկ՝
ըստուեր մարմնոյ անասնեղէն։
Ընդամք նորա ծիւրեալք ոսկն,
հազիւ բերեն կերպ մարդկային.
Օ՜ի մորթ նըրբին երիթացեալ՝
պատէ զցամաք ոսկերոտին։
Բայց վէմք ասեն՝ թէ ոչ է այն
անտիպ մարմնոյ ըստուեր անբան,
Օ՜ի կանացի ձայն արձակեն՝
բարբառ լալոյ աւաղական։

Սրբուհին Մարիամ Մագդաղենացի 'ի ներքս ա- րի խօսել 'ի Մա- սիլեան գա- ւառէն :

Աւա՛ղ անձին (գոչէ այսգոյն
ըղձլըռութիւն լուծեալ մայրւոյն ,
· Մագդաղուհին այսպէս խոցեալ
յաստուածամուխ նետից սիրոյն ·)
Աւա՛ղ անձին · յո՞ր քոց թըշուառ
ես վարէի շամշեալ խապառ ,
Չեւ տակաւին յայտնեալ առ իս
Աստուածային Սէր քօղավառ ·
Անձկանայի պայծառանալ
'ի սընոտի գեղ փողփողեալ,
Եւ զանցանել չըքնաղ տեսլեամբ
զԱստուածուհեօք առասպելեալ ·
Աղեղն էին յօնք մըրաձիգ ,
որով աչքոյկ էր նետաձիգ ·
Աղեղն էին շըրթանց իմ լարք ,
ծաղըր նոցին՝ նետ ընկեցիկ ·
Աչք և շըրթունք (ո՞ հաւատայր)
արհեստաշարժք ճարտարաբար ,
Աչք համախոհք շըրթանց էին՝
առ 'ի պատրել նենգողաբար ·
Վարսիւք շըրթամբք՝ նոյն և աչօք ,
փաղփուն ոսկւով և գոհարօք ,
Հաճոյանալ գուն գործէի
հէգ հոմանեաց ես դարանօք ·
Բերկրէի յիս զայլըս հաճել ,
չըկայր յիս փոյթ յանձին բերել ,
(Վա՜յ է անձին , եղո՜ւկ զինև ,)
իմ փեսայիս հաճոյ լինել ·

Թո՛ղ ինձ սի՛րուն՝ թո՛ղ պաղատիմ,
ա՛նոխակալ՝ թո՛ղ ինձ ժըտիմ.
Արդ ցաւ է ինձ՝ թէպէտ անժամ,
քեզ անհաճոյ գոլ մորմոքիմ:
Յորժամ ըղքոյդ ծանեայ ըզգեղ՝
փոյթ սիրեցի Ա՛մենագեղ.
Ո՛վ թէ կանխաւ ըղքեզ Փեսայդ
ճանաչէի անճառագեղ:
Անդէն և անդ յորժամ ծանեայ՝
'ի յաշխարհէ անդարձ փախեայ.
Հի՛մ ոչ կանուխ ո՜վ խաբուսիկ
ըզգուշագոյն ըղքեզ ծանեայ:
Աշխարհ աղքատ կեղծաւորէր
ուրախութիւն առատաբեր.
Բայց ճըշմարիտ ուրախութիւն
հիքացելոյս ոչի՛նչ բերէր:
Այսպէս խաբէ ամուլ անդեակ
ըզ բազմաբաղձ հողավաստակ.
Այսպէս պատրէն և ամպք փախչողք
բերանաբաց ըզ հող ցամաք:
Շըրթամբք ծիծաղ ցուցանէի ,
այլ 'ի սըրտի գաղտ հեծէի.
Եւ այն ծիծաղ՝ նորոց ցաւոց
լինէր 'ի յիս պատճառ յուռթի:
Եւ արդ ցընծայ սիրտ խընդագին ,
երբ արտասուօք աչք ցօղագնին.
Աչք ցօղագինք առոգելով
զուրախութիւն տածեն սըրտին:

Միտք թալկանայր առ 'ի քաղցուն
'ի կըշտապլինդ խառն սեղանոյն .
Այլ նա յայժմուս առոյգ կայտառ
'ի տուայտիչ 'ի մէջ սովոյն ։
Առատ բաշխեն վիմարդ խըշտիք՝
կոչկոձելոյս դուլ խաղաղիկ .
Այսչափ քաղցրիկ յառաջագոյն
ինձ ոչ տային տախտք փետրալիք ։
Սառնամանիք ձըմերայնոյ
ոչ վըհատեն հոգւոյս իմոյ ,
Որ նախ պաղեալ ընդարմանայր
ընդ վերարկուաւ ջերմ ծիրանւոյ ։
Տեսիլ մարմնոյս չըքնաղադեղ ,
այլ 'ի դեղ անդ՝ հոգիս տըգեղ .
Օլի զազրոտի իւր մոլութեամբք
էր ձառադէմ կըրկնատըգեղ ։
Գեղ 'ի դիմաց այս գընաց ,
այլ ես խընդամ՝ զի անց գընաց .
Ո՜վ աղետիս . այն գեղ պատիր
յո՜րչափ ոգւոց ըզգեղ խըլեաց ։
Ա՛նշըքեալ հերք անհիւսակ ,
փոշուով լըցեալ զազրատեսակ .
Այլ հաճելի՝ քան երբ փայլէր
յազնիւ նարդեան իւղ անուշակ ։
Հայիմ 'ի յայտ՝ լալեօք դոդեալ ,
(ինձ հայելի են գետք հոսեալ .)
Խընդամ յանձին , Թաղեցին մեղք
'ի խորոփիս այտից դոդեալ ։

Րընկի՛կ` բոցով, սաւամբ Հիւսիս
դըժնէացեալ խարշատեն զիս .
Ցընծամ յանձին , եղէց այսպէս
արժանագոյն իմ փեսայիս :
Ոչ յաչս այլոց գեղեցկանալ,
այլ քեզ միայն՝ է իմ անձկալ .
Դո՛ւ ինձ միայն հաճոյագոյն ,
դո՛ւ ինձ միայն փեսա՛յդ օրհնեալ :
Որ յաշխարհի սէր խաբեբայ
խանդակաթեալ ըզհետ երթայ ,
Անգիտանայ զի՞նչ իցէ Սէր .
և ոչ բարուք սիրել ցանկայ :
Սէրըն միայն Աստուածական
առնէ զՍիրող՝ երանական .
Ուստի երկնից լըցեալ ըզսիրտ՝
երջանկարար նա է միայն :
Վարդ 'ի ձեռին նա ընձեռէ ,
այլ փուշ 'ի սիրտ մատուցանէ .
Սա փուշ 'ի ձեռս՝ այլ վարդ 'ի սիրտ
ներհակաբար մատուցանէ :
Օ՛ որ նա բերէ վարդ ախորժակ ,
է փշեղէն ցաւոց պըսակ .
Իսկ ըզսորայս տատասկ և փուշ
ես համարիմ վարդ անուշակ :
Ըզկենցաղոյս ըզվարդ կոխեմ,
աստուածային փըշոյն տարփեմ .
Ուրախութիւնք փո՛ւշ են խայթիչ ,
ըզմերըս վիշտ՝ վա՛րդ ես կոչեմ :

Ըզ փըշանիւթ պըսակ վըշտաց
իմըս փեսայ յիշեմ սիրեաց .
փո՛ւշք պըսակի իմ փեսային
զիմըս հարկե՛ք ըզ սիրտ ցաւած ։
Նոր Մագդաղեան՝ այսպիսաբար
ձայն արձակեալ արտօսրանայր ,
Կըքեալ բարձից կըթուցելոց
և նուաղեալ անկանի վայր ։
Սիրով նուաղ՝ անկանի նա ,
այլ զուարթնոց կաճառ փութայ .
Կանգնէ զանկեալ և պատրաստէ
թալկացելոյն ըզ մըյթ ծաղկեայ ։
Ձեռք ծաղկաքաղք բազմաբուրեան՝
զանձամբ նորա սըփռեն շուշան .
Յօղք քաղցրահոտ սըրսկեալ տածեն
ըզ լանջ նորա զանշընչական ։
Դարանձաւաց վէմք մըտադիր
վերտեն 'ի պար բոլորածիր ,
Յեղանակել վերին դասուց
քընար և երգ պատկանակիր ։
Նոր Ոլիմպոս ծափէ սոյնպէս
առ Մասիսեան սիրող այսպէս .
Դա՛ջ վըկայէ՝ ո՞ր Սէր ըստոյգ ,
և զի՞նչ սիրել բարւոքապէս ։
Արդ կա՛ց Մուզա՝ կախեալ վայր մի 63
ըզ քո քընար 'ի թաւ բարտի .
Դարձեալ 'ի ձեռս առցես ըզնոյն
լուռ կընդընդոց յայսըմ վայրի ։

Չէք ինչ այնպէս կարծր և երկաթակուռ՝ որ հրով սիրոյն ոչ յաղթեսցի: Օգոստինոս: Ա

Արհեստ Արհեստից է՝ Արհեստն Սիրոյ, զորոյ զվարդապետութիւն՝ ինքեան պահեաց Բնութեանն և Բնութեանն Արարիչն Ած: Բեռնարդոս:

Սէրն ուժգնութի՛ է հոգւոյ, ընդածին իմն ծանրութեամբ մղէ նմին յիւր տեղի կամ ի վախճան: Նոյն:

Եթէ պատուոյ և մեծութեանց լինիս ի խնդրիր, ոչ չափ ունիցիս եթէ կամիցիս: Օգոստինոս: Բ

Ի պատուասիրութեան քանի՞ փուշք: Նոյն:

Չէ՛ պարտ սիրել՝ որում հնար է բառնալ ի ձայուն և ի վայելող սիրոյ: Նոյն:

Թշուառ է ամենայն անձն կապեալ սիրով մահկանացու իրաց, և պատառի ի կորուսանելն զայնս, և յայնժամ զգայ զթշուառութիւնն որով է թշուառ, և յառաջ քան զկորուսանել այնոցիկ: Նոյն:

Անդ աշխատութիւն, ուր բազում ինչ երք խնդրին և սիրին, յորոց ի ստացութեան և ի պահպանութեան կամք չեն բաւական, զի չունի կարողութիւն հասու այնոցիկ: Նոյն:

Ստացի՛ր զպատիւ, ստացի՛ր զաւագութիւն: Եւ ո՞ւր եղիցին այս ամենայն ի հասանել մահուն: Նոյն:

Դ. Դրամք չառնեն զմեզ երջանիկս : Նոյնն :

Աղքատս կոչեմք զագահս՝ մեծ ընչաքաղցս եւ կարօտեալս. զի թէպէտ մարթ է ստանալ նոցա դրամ բազում, այլ յամենայն 'ի լիութեան այնոցիկ՝ անմարթ է նոցա չկարօտել : Նոյնն :

Ո՜վ մեծատունդ՝ աղքատ քան զամենեսին, զի՞նչ ունիս՝ թէ չունիս զԱ՟Ծ. կամ զի՞նչ ոչ ունիս՝ եթէ ունիս զԱ՟Ծ : Նոյնն :

Ուր գտեր մեծութիւնս, կորուսեր զհանգիստ ... 'Ի սուէ հոգած, եւ 'ի գեղջերէ երկչոտ, մեզ մոլորացիկ : Նոյնն :

Հարստանալ կամեցեալ՝ ցանկայ, սաղէ, ծարաւէ. եւ զո՛րօրինակ ձարակեալն ջրգողութեան ախտիւ, յառաւելն ըմպել՝ առաւել ծարաւէ ... ագահն՝ ամենայնիւ ջրգո՛ղ է 'ի սիրտ : Օ՜ է ջրգողն 'ի մարմնի՝ լի է ջրով, վասնզի ջրով եւ ոչ յագի ջրով. այսպէս ջրգողն 'ի սիրտ՝ որչափ առաւել ունի, այնչափ առաւել կարօտի :

*Օգոստինոս :*

Օ՜ երկոսին եւս (այսինքն զմեծատունս եւ զաղքատս,) մերկս ընկալաւ երկիր. երկոցուն եւս սպասէ մահ. յերկոցունց եւս ոչ երկնչի տենդն : Ունի զնա աղքատն 'ի գետնախշտի տապատի. բայց եւ ոչ մեծատունն զգալուստ նորա երկեւղացանէ արծաթահոսս անկողնօքն : Նոյնն :

Ոսկի՝ հո՛ղ է շողշողուն ... Ոսկի՝ թէպէտ արարած է Ա՟Յ, բայց չարար Ա՟Ծ զոսկին 'ի պատկեր քո, այլ զմեզ. ուրեմն զոսկին եդ 'ի ներքոյ քո : Արդ զայս ոէր պա՛րտ է արհամարհել : Նոյնն :

Ոչ անյաւ կորնչեն որք սիրով պատուեալ են։ *Նոյնս*։

Որդիք Ադամայ՝ մեղկ ագահ և փառասէր, լուարուք։ Օ՞հ կայ ձեր ընդ երկրաւոր մեծու-թեանց և ընդ ժամանակեայ փառաց, որք ոչ ճշմարիտ են և ոչ ձեր։ Ոսկի և Արծաթ ո՞չ ապաքէն հո՛ղ են դեղին և սպիտակ, զոր մարդ-կան միայն մոլորութիւն պատուական առնէ, կամ մանաւանդ թէ համարի։ Եւ դարձեալ. եթէ ձե՛ր են այսոքիկ, փորձ՛այք ընդ ձեզ։ Այլ՝ մարդ 'ի վախճանել իւրում ոչ տանի զամենայն, և ոչ իջցեն ընդ նմա փառք նորա։ *Բեռնարդոս*։

Որ սիրես առ ժամանակ մի՝ զի՞նչ օգտա-կէ։ Կա՛մ դու բարձցիս յայնմանէ, կա՛մ այն բարձցի 'ի քէն։ Յորժամ դու բարձցիս՝ կորնչի նոյն ինքն սիրողն. յորժամ բարձցի այն՝ կորնչի զոր սիրեցերդ։ Արդ եթէ կորնչի՝ կա՛մ սիրողն և կա՛մ սիրեցեալն, չէ՞ պարտ սիրել։ *Օգոստինոս*։

Այդ դրամդ 'ի ծոցի քում, զոր կարեն գողք բառնալ 'ի քէն. և թէ գողք ոչ բարձցեն զայն, թողցես զայն 'ի մահուան քում, թէպէտ ոչ թող-ցէ զքեզ այն առ կենդանութեամբ։ *Նոյնս*։

Պարզ սէր ո՞րչափ վիշտս բարձեալ բերէ, ո՞ր-չափ անձկութիւնս ածէ 'ի կենցաղումս։ Թողում զգեհենանն։ Տե՛ս զի մի դու ինքն՝ այժմէն գե-հեան լիցիս անձին։ *Նոյնս*։

Գեղեցկութիւնն՝ սո՛ւղ է և նման փայլական. երիտասարդութիւնն ոչինչ այլ՝ բայց փօթաժամ. ալեւոր ծերութիւնն՝ արև է 'ի մուտս։ *Նա-զիանզացի*։

Պատն գործեմ ոչինչ սիրել՝ որում հնար իցէ հեռանալ յինէն ակամայ : *Օգոստինոս* :

Նոյն ինքն Տէր արարիչ, եթէ ոչ ընտանար հա-րազատութեան նորա խաչանեացն ախորժանօք ինչ օտարոտեօք, նոյն ինքն (ասէ) անձամբ զանձն տառապեցանէ : Եւ՝ տէրասամանօք իւր՝ տէրասա-մանօք Տառածոյ : *Բեռնարդոս* :

Ե Սիրեցէք զԱԾ . ոչինչ լաւագոյն գտանէք : *Օգոստինոս* :

Զինչ ընտրեսցուք զոր սիրեսցուք առաւել, բայց քան զոր լաւագոյն ոչինչ գտանեմք : ԱԾ է այդ . որում թէ 'ի սիրելն՝ համարեսցուք ինչ զեր 'ի վերոյ և չամ հասանար, չգիտեմք սիրել զան-ձինս մեր : *Նոյնն* :

Յոր հողմն և տարցի հոգի մարդոյն, թէ ոչ դարձցի առ քեզ, 'ի ցաւս մխի այլուր, թէպէտ և մխեսցի 'ի գեղեցիկս արտաքոյ քո, և արտա-քոյ իւր : *Նոյնն* :

Կատարելութեան ամենայն բարեաց՝ ԱԾ է մեզ . ԱԾ է մեզ ծայրագոյն Բարի : Ոչ ստորև ար-ժան է մեզ կալ, և ոչ անդրագոյն 'ի խնդիր անկանել : *Նոյնն* :

Միայն ԱԾ է սիրելի . իսկ այս ամենայն Աշ-խարհ, այսինքն զգալիքս ամենայն են արհամար-հելի : *Նոյնն* :

Բարի քան զամենայն բարի, յորմէ ամենայն բարի . Բարի՝ յոր ոչինչ լինի յաւելուած, զի նա ինքն է բարին . . . Ո՛ պարզ բարի՝ նոյն ինքն բարին, որով ամենայն ինչ է բարի . նոյն ինքն բարի՝ յորմէ ամենայն ինչ է բարի . *Նոյնն* :

Զբարին քո խնդրեա՛ ո՛վ անձն դու ... Չի՛ք ոք բարի՝ բայց մի Ա.Ծ.։ Ծայրագոյն Բարին՝ այս է քո բարի։ Նոյնն։

Զորո՞ց իրաց զուէր արժան իցէ խնդրել, բայց զայնր և եթ՝ որոց չէք պատկառել՝ յորժամ սի-րի ... Եւ զինչ կայցէ յաւիտենական որ յաւեր-ժացուսցէ զհոգի՝ բայց Ա.Ծ.։ Նոյնն։

Ագա՛հ ես, զարծաթ սիրես։ Կամի՞ս լինել երջանիկ. սիրեա՛ զԱ.Ծ. քո։ Նոյնն։

Անդ եղիցի ճշմարիտ փառք, ուր ոչ գովի Չ.
ոք՝ ոչ մոլորութեամբ գովչին և ոչ շողոմութեամբ։
Ճշմարիտ պատիւ՝ որ յարժանաւորէն ոչ զլասցի,
և անարժանին ոչ մատուսցի. բայց և ոչ անձ-
կասցի այնմ անարժան ոք, ուր ոչ ումեք տասցի
մօտ՝ բայց արժանաւորին։ Օգոստինոս։

Վարձք քո եղիցի Ա.Ծ. ... Նա ինքն կարո՛ղ է յագեցուցանել զքեզ ամենայնիւ։ Նոյնն։

Բաւական է ինքն, բաւական է միայնակ ... Եթէ ագա՛հ եմք՝ սիրեսցուք զնա։ Եթէ ընչից ցանկամք, նա՛ միայն կարո՛ղ է յագեցուցանել զմեզ։ Նոյնն։

Ամենայն առատութիւն որ ո՛չ է Ա.Ծ.ն իմ՝ չքաւորութիւն է ինձ։ Նոյնն։

Զինչ հրամայէ քեզ Ա.Ծ.։ Սիրեա՛ զիս։ Ոսկի՞ սիրես։ Խնդրեսցես զոսկի, և թերևս ոչ գտցես։ Որ խնդրէն զիս՝ ընդ նմա եմ։ Սիրեսցես զպատիւ, և գուցէ այնմ ոչ հասցես։ Ո՞վ սիրեաց զիս, և ոչ եհաս առ իս, ասէ քեզ Ա.Ծ.։ Նոյնն։

Զբանական հոգիս եղեալ՚ի պատկեր Աստուծոյ՝

ճարո՛ղ է գրաւել ամենայն ինչ, բայց ընուլ՝ անճարող։ Զընկալուածն Աստուծոյ ոչ լքցէ որ ինչ փոքր է քան զԱծ։ *Մենանդրոս*։

Սիրեա՛ պատեհականութիւն։ Անվախճան թագաւորեսցես՝ եթէ Վախճան քեզ եղիցի Քս, ընդ որում թագաւորեսցես յաւիտեանս յաւիտենից։ *Օգոստինոս*։

Է. Ամենեքին որք (այսինքն արարածականքս) ժամանակային բարի են յոյժ, զի զամենայնն արար Ած՝ բարի յոյժ։ Ամենայն ուստեք գեղեցկութիւն գործուածոյ, որ գովելի ընծայէ քեզ զԱրուեստաւորն։ Զարմանաս ընդ յօրինուածն, սիրեա՛ զյօրինողն։ Մի՛ զբաղնուր յարարածն, և հետամնար յարարչէն։ *Նոյնն*։

Զարմանաս ընդ աշխարհ, և ընդէ՞ր ոչ ընդ արարչապետ աշխարհի... Որ արարն զայս ամենայն՝ Ած քո է։ Դիր ի նմա զյոյս քո՝ զի լիցիս երանեալ։ *Նոյնն*։

Եթէ սիրես զոր արարն, և՛ս առաւել զնա որ արարն։ Եթէ գեղեցիկ են զորս արար, ո՛րչափ գեղեցկագոյն է՝ որ արարն։ *Օգոստինոս*։

Ի սմանէ (այսինքն ի տեսութենէն Աստուծոյ) գեղեցիկ է ամենայնն։ *Նոյնն*։

Վա՛յ քեզ՝ եթէ սիրեսցես զստեղծուածս, և թողցես զստեղծիչն։ Գեղեցիկ են յաչս քո։ այլ՝ ո՞րչափ գեղեցկագոյն է որ արարն զայսոսիկ։ *Նոյնն*։

Ը. Երկին և երկիր և ամենայն որ ի նոսա, ահա՛ ասեն ինձ յամենուստ՝ զի սիրեցից զքեզ։ *Նոյնն*։

Թ. Յորժամ (հոգին) բերիցի յԱծ, անդ գտա-

նէ զճշմարիտ՝ զպատոյժ և զյաւիտենական հան-գիստ, զոր յայլս խնդրէր՝ և ոչ գտանէր։ Նոյնն։

Համբերելով տո՛ւ՝ ուսիցես զնա. և ուսիցես՝ որում համբերեցեր։ Յա՛յլ ինչ փափաքեմ, եթէ գտցես ինչ մեծագոյն, կամ լաւագոյն, և կա՛մ քաղցրագոյն։ Նոյնն։

Զոր ոչ տեսանես։ Սիրեա՛ և տեսցես։ Նոյնն։ Ժ

Ծայրագոյն Բարին որչափ կատարելագոյն ստացանի, այնչափ առաւել սիրի, և այլ ինչ ա-մենայն արհամարհի. զի որչափ առաւել ՚ի յետս բերի, այնչափ առաւել ճանաչի։ Թովմաս Ագուինացի։

Նա՛յն է մի միայն Բարի, յոր ՚ի ներքս ամենե-ցուն ընդ քեզ ոչ նուազեալ անչափանայ։ Օգոս-տինոս։ ԺԱ

Յա՛յտ է՝ թէ չէք մեծագոյն պատճառ սիրե-լոյ կամ աճման սիրոյ, քան զոր ճանաչէ ոք թէ սիրի ինքն անձն՝ որ չև ևս սիրէին, կամ յառաջ թէ հնա՛ր է ինքեան սիրել փոխարէն. և կամ ար-դէն ՚ի նայէ՝ որ յառաջն սիրէ։ Նոյնն։ ԺԲ

Բարի ես Տէր՝ հոգւոյ որ խնդրէ զքեզ։ Ընդ առաջ ելանես, գիրկս արկանես, փեսայա-նաս որ Տէրդ ես։ Բեռնարդոս։

Բարեկամ Աստուծոյ ահա՛ այժմ իսկ լինիմ՝ եթէ կամիցիմ։ Օգոստինոս։

Փեսայ ընծայէ զանձն՝ որ Տէրն է։ Պետրոս Ոսկեբան։

Ապահով եմք և հաստատ՝ զի է անխաբ. ԺԳ

Սիրէ զմեզ։ Բայց զանձանց մերոց դեռ չէմք հաստատէ։ Օգոստինոս։

Եթէ ուզէնք մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի նորա, զի՞նչ մարթի լինել ոչ լաւագոյն միայն, այլ և ստուգագոյն քան զայս Բարի։ Օգոստինոս։

ԺԴ Սիրէ և Ա՛ծ, և ոչ այլապէս ունի զայս․ այլ՝ ինքն է յորժ սիրէ․ և վասն այն սաստկագոյն, վասն զի զսէրն ոչ այնչափ ունի, որչափ թէ է՛ նոյն ինքն (Սէրն)․․․ տեսանե՞ս և զմեծվայելչութեանն տեղի տալ սիրոյ։ Այդպէ՞ս է։ Ոչ ումեք այն առնու սէրն, բայց և ոչ եւս անգամէ․․․ Խնդրես համարես դու արդեօք զԱ՛ծ առատագոյ այսմ կանոնէ սիրոյ․․․ Նա ինքն եղև իբրև զմի 'ի մէնջ։ Նստաւ աստէ․ ոչ իբրև զմի, այլ՝ մի 'ի մէնջ։ Արժա՛ն է հասարակ լինել մարդկան։ Սիրտ է։ Բեռնարդոս։

Սահմանեալ յայն սակս եկն Ք.ս, զի ծանիցէ մարդ՝ թէ քանի՞ սիրէ զնա Ա՛ծ. և վասն այն ծանիցէ, զի 'ի սէր նորա յորժ նախ սիրեցաւ՝ բորբոքեսցի։ Օգոստինոս։

Եթէ ծանր էր մեզ սիրել, գէթ այժմ ոչ ծանրասցի սիրել փոխարէն։ Քանզի ոչ էր մեծագոյն հրաւէր առ 'ի սէր, քան կանխել 'ի սիրել. և չարի խստասիրտ է սիրտ, որ զսէրն թէ ոչ կամէր ընծայել, ոչ կամիցի հատուցանել։ Նոյն։

Ոչինչ խնդրէ 'ի մէնջ. և խնդրեաց զմեզ՝ յորժամ ոչն խնդրէաք զնա։ Նոյն։

ԺԵ Այսպէս գրեալ է։ Ս՛է երկնից Հայրն՝ թէ գոյցէ ըղձ 'ի Փեսայէն։ Ոչ թողու զգրեակար։ Զ՞ինչ գրեալ է։ Եհեղ զիւր արեան․․․

Թէ չէր նորա սիրել, ոչ արդեօք տայր գրաւ աւետեաց : Ած սէր է : Նոյնն :

Սէր դիցուք ցուցանէ սիրոյն Աստուծոյ : Խոստմանն Աստուծոյ աւետեաց ընծայեալք առհաւատչեայս : Ունեմք զմահն Քրիստոսի . ունեմք զարիւնն Քրիստոսի : Ընդ հաստատութեամբ երկնային խոստմանն՝ որ ունիս 'ի ձեռին գրաւ աւետեաց : Նոյնն :

Զինչ քեզ խոստանայ Ած մահկանացուդ : Ոչ հաւատաս թէ հանդերձեալ է քո կեալ յաւիտեան : Հաւատա, հաւատա . Ապաքէն յոլովագոյն է զոր արարն՝ քան զոր խոստանայ : Զինչ արար . մեռաւ վասն քո : Զինչ խոստանայ . զի կենդանի լիցիս ընդ նմա . . . Եթէ վասն մարդոյ մեռաւ Ած, չունիցի արդեօք մարդն կեալ ընդ Աստուծոյ : Օգոստինոս :

Զանձն իւր ընդ մեզ խառնեաց, եւ զմարմին իւր ընդ մեզ յօդեաց, զի իցեմք մի, եթէ եւ զմարմին պատուաստել 'ի գլուխն . զի եռանդագին սիրողացն է այս : Սեւերիանոս : Ժ.Զ

Որ աստանօր զանձն իմ ետու քեզ, առաւել եւս 'ի հանդերձելումն արարից զայն : Նոյնն :

Զմեզ արեամբ իւրով կերակրէ, եւ ամենայնիւ զմեզ ընդ ինքեան մարմնակից առնէ : Նոյնն :

Սիրեաց եւս եւ զչէչէալսն, այլ յաւել սիրել եւ զընդդիմամարտս : Բեռնարդոս : Ժ.Է

Ո՛վ ոչ յաղողոշ կրթեայց ընդ սէր Աստուծոյ անարգելոյ եւ չոչոչի : Նոյնն :

Սէր սիրէ, եթէ 'ի գգուելն, եւ եթէ 'ի պատուհասն : Օգոստինոս :

Զինչ Ած ոչ տայցէ որդւոց որք խնդրեն, Ժ.Ը

որոշեալ զսոյն զայս եւ յառաջագոյն՝ զի լի-
ցին որդիք։ *Նոյնն*։

Որ զդատաւորն 'ի Հայր ծոխեաց, սիրել խա-
ծեցաւ, և ոչ ահ արժանել։ *Ոսկեբերան*։

ԺԹ Սիրեաց զմեզ յառաջագոյն՝ որ միշտ է գեղե-
ցիկ։ Նա զո՞րս արդեօք սիրեաց, եթէ ոչ
զզազիրս և զտգեղս. Բայց ոչ վասն այնր՝ զի
զազիրս արձակեսցէ, այլ զի փոխեսցէ, և զտգ-
եղս գեղեցիկս արասցէ։ Զիա՞րդ եղիցուք գե-
ղեցիկք. սիրելով զնա՝ որ միշտ է գեղեցիկ։ *Օ-
գոստինոս*։

Ի Պահանջէ Ա՟ծ երկնչել 'ի նմանէ իբրև 'ի
Տեառնէ, պատուել զնա որպէս զՀայր, և սի-
րել որպէս զՓեսայ։ Զի՞նչ յայտնէ լաւա-
գոյն, զինչ գերազանց. յայտ է թէ Սէրն։
*Բեռնարդոս*։

Յորժամ սիրէ Ա՟ծ, ոչ այլ ինչ կամի՝ բայց
սիրել. զի ոչ առ այլ ինչ սիրէ՝ բայց առ 'ի սի-
րել, նովին իսկ սիրով առնելով երանելս՝ որք
զինքն սիրեսցեն։ *Բեռնարդոս*։

ԻԱ Յո՞ր կողմն և դարձայց՝ նուաստանայ յաչս իմ
ստացեալն, թէպէտ և բորբոքէ ցանկացեալն. իբր
զի զամենայն ինչ զոր կամ ունիմ՝ սիրեմ, յոռնեմն՝
արհամարհեմ։ *Օգոստինոս*։

Հեշտութիւնք հոգևորք աճեցուցանեն զծարաւ
'ի միտս 'ի յագեցուցանելն. զի որչափ առաւել
ճաշակէ ճաշակ նոցա, այնչափ և ճանաչէ թէ
սիրէ խանդաղատանօք. Վասն որոյ 'ի լռութեանն զսոյն՝
չէք սիրել, զի ճաշակ նոցա մեզ անծանօթ։
*Մեծն Գրիգոր*։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅԱՌԱՋԻՆ ԳԻՐՍ

1. Պէլիգնածին Վօրծաղէս. Ովիդիոս Նասոն քաջ բանաստեղծ լատին։ Ծնաւ 43 ամօք նախ քան զԾնունդ Քրիստոսի 'ի Սուլմոն քաղաք Պելիգնացւոց, որք 'ի հնումն էին բնակիչք Սամնիոնի, կամ Աբրուցիոնի որ 'ի թագաւորութեանն Նէապօլսոյ։ Սա բաց յայլոց բանաստեղծութեանց յօրինեաց և Ողբերգութիւնս անուանեալ սիրոյ առ Յուլիա դուստր կայսեր Օգոստոսի ընդ անուամբ Կորիննեայ, մակադրեալ զայն Յաղագս Արհեստի սիրելոյ. յոյր սակս ըստ կարծեաց բազմաց աքսորեալ յերկիր Գոթացւոց յամի տն 17, յետ 10 ամաց մեռաւ յաքսորս անդ 'ի հասակի 60 ամաց։

2. Պիէրէան 'ի լոր. Այսինքն քերթողական քնարաւ. Պիերոս, կամ Պիերիոս, լեառն Թեսաղիոյ մօտ յՈլիմպոս՝ նուիրեալ Մուսայից։

3. Անդրագոբէ. Ողբերգութիւնք Ովիդիոսի են երկտողք, մին վեցոտնեան, և միւսն հնգոտնեան, յոյր սակս և կոչին՝ Կող, կամ Անդրագոբէ։ Յօրինող Սրբազան Արհեստի Սիրոյն ածայնոյ՝ զնոյն առնէ և յիւրումն Լատին չափաբերութեան. մեք 'ի Հայ թարգմանութեան զմերն յօրինեցաք քառատող. զառաջինն՝ զերկրորդն և զչորրորդն՝ նմանայանգ, և զերրորդն՝ աննմանայանգ։

4. Կամէնայք. Լատիններէն Գամէնէ, այսինքն Մուսայք. որք ըստ հեթանոսաց են Ածուհիք գիտութեանց և ազատական արհեստից, բանաստեղծութեան, երաժշտութեան, ևն։ Էին դստերք Արամազդայ և Մնեմոսինեայ, (այսինքն Յիշողութեան.) թուով ինն, բնակեալք ընդ Ապողոնի դից բանաստեղծութեան 'ի Պառնասոս լեառն և յՀելիկոն։ Անուանք նոցա և գործք են այսք. Կլիոն, գախ Կլիթաևի, վերակացու Պատմութեան։ Մէլպոմենէ, վերա-

կայու Եղերերգութեան, ( ըստ Ովրատիոսի՝ ) և Երաժշտութեան ։ Թալիա վերակացու Կատակերգութեան ։ Եւտերպէ, գտաւ Սրնգաց և ամենայն փչողական նուագարանաց ։ Տերփսիքորէ, գտիչ Տաղի վերակացու Կաքաւուց ։ Երատո, վերակացու Սիրողական քերթուածոց, գտիչ Քնարի ։ Կալլիոպէ, Դիւցազնաբանութեան ։ Ուրանիա, Աստեղագիտութեան ։ Իսկ Պոլիմնիա՝ Ճարտասանութեան ։

5. Փիլլիս. Փիլլիս էր դուստր Լիկուրգոսի արքային Թրակիոյ, խանդակաթ սիրով Դեմոփոնեայ իւրումն փեսայի. Տես և 36 ։

6. Պաֆեան Մանուկ. է Սէրն որդի Աստղկան, կամ Ափրոդիտեայ, որում նուիրեալ էր Պափոս քաղաք Կիպրոսի.

7. Կիթերոնեան Մարգարէ. է Ովիդիոս բնաստեղծ շարժեալ յաղագս Կիթերեայ, այսինքն Ափրոդիտեայ ։

8. Կիպրիա, կամ Կիպրեան Աստուած. Ափրոդիտէ պաշտեալ 'ի կղզւոջն Կիպրոսի ։

9. Չքնաղ Սիրոյն ծնօղ դու Մայր. ակնարկէ 'ի բանն Սիրաքայ գլ. իդ. համար 24. ըստ Լատին թարգմանութեան. Ես Մայր՝ գեղեցիկ սիրոյ. զոր մեկնիչք Լատինացւոց 'ի խորհրդական միտս իմանան զՍրբոյ Կուսէն ։

10. Յամենայն Բարի է Սէր ։ Յամենայն արարածս՝ եւս և յանշունչս գտանի նմանութիւն ինչ գործոյ սիրոյ, և ախորժական բերման. զոր բանահիւսք սովորական առեղծաբանութեամբք սեթևեթեալ պերճաբանեն և անձնաւորեն. զորօրինակ զընթացս վտակաց 'ի ծով՝ նմանաբերեն 'ի սիրողական ախորժակ, ըստ այսմ իմն և զայլոց.

11. Փլորա, կամ Քլորիա. Յունարէն Խլորիս. էր Յաւերժահարսն և Ածուհի ծաղկանց. նկարի ծաղկապսակ ։

12. Որփեւս, կամ Որփէոս, կամ Որփիոս, քաջ բանաստեղծ Յունաց, և երաժիշտ Թրակացի. զորմէ

ասի յառասպելս, թէ քաղցրութեամբ իւրոց նուագաց գործովք յինքն ձգէր և շարժէր զանտառս և զանձաւս անգամ, զգազանս, զթռչունս, զհողմս, զգետս և զքարինս ։

13 ․ Խեցգետին ․ մին յերկոտասան Աստեղատանց, յորում մտանէ Արև յառաջնումն ամսեան ամարայնոյն ։ Նշանակի սովաւ Տօթ ամառայնոյն ։

14 ․ Իդալեան Ապառաժ ․ է Սէրն՝ որդի Աֆրոդիտեայ, որում նուիրեալ էր Իդալեան քաղաք Կղզւոյն Կիպրոսի ։ Մօտ է յԻդալիոն լեառն ։

15 ․ Սէր, կամ Ցանկութիւն, որ և Կուպիդոն ․ ըստ հասարակացն կարծեաց բանաստեղծից՝ է որդի Արեսի և Աֆրոդիտեայ ։ Նկարի մանուկ գեղեցիկ, աչօք կոյր և թեաւոր, կապարճ զթիկամբք՝ լի նետիւք ոսկեղինօք, 'ի ձեռին ջահ և աղեղն ։ Զորս միանգամ նետահար առնէ 'ի գազանաց և 'ի մարդկանէ, բորբոքէ 'ի սէր ։

16 ․ Արգոն, էր իմաստուն և աչալուրջ թագաւոր Արգոսի ․ առասպելաբանութք ընծայեն նմա հարիւր աչս, յորոց ննջէին երկու երկու, իսկ այլք կային բաց և անքուն ։

17 ․ Կիթերեան ալիք ․ ծով Կիթերայ կղզւոյ արշիպեղագոսին, որ է Չէրիկօ ։ Ըստ առասպելաց ծնաւ Աֆրոդիտէ մօտ յայս կղզի 'ի ծովային փրփրոյ ։

18 ․ Տանտալոս ․ էր արքայ Լիւդիոյ ․ ըստ առասպելաց՝ վասն մարդադաւ ամբարշտութեանն դատապարտեցաւ 'ի չնծոց 'ի անդնդսն Տարտարոսին, ընկղմեալ կզակով չափ 'ի լիճ յատակաջուր, պատեալ 'ի պտղալից վայրահակ ծառոց ․ այլ՝ ոչ քաղցն նորա բժշկիւր 'ի պտղոց՝ որք միշտ հեռանային 'ի նմանէ, և ոչ ծարաւ անհնարին գտանէր զով 'ի ջուրց արագ հոսելոց ։

19 ․ Սէյանոս Էլիոս ․ Էր առաջին Պաշտօնեայ Տիբերիոսի կայսեր, մտերիմ յաջս նորա, բայց փառամոլ յոյժ ։ Ոչ շատացեալ ընդ գերագահ աստիճանութիւն իւր՝ թեկն առնէր կայսերութեան ․ զոր ծանու-

ցեալ խորամանկ կայսերն կործանեաց զնա հնարիւք։ Առաքեաց առ ծերակոյտն արուեստաւոր նամակ ինչ. զոր կարծեալ Սէյանոսի՝ իւր նպաստամատոյց, իբր կցորդ լինել նմա Տրիբունական իշխանութեան՝ ապահովացաւ. որով ոչ զգուշացեալ՝ արկաւ 'ի բանտ, դատապարտեցաւ 'ի մահ, և մարմին նորա ընդ քարշ ածեալ բիւր նախատանօք զաւուրս երիս, արկաւ ապա 'ի Տիբերիս գետ։

20. Դրաա համբրանգ արբանեկաց. Խումբ ծառայից՝ որք ունէին միագոյն նշանազգեստ յապարանս ազնըւականաց և իշխանաց։

21։ Ատրոպէ. Ըստ առասպելաբանութեան՝ Պարկեանք էին երեք քորք՝ դստերք Երեբոսի և Գիշերոյ, վերակացուք Ճակատագրոյ և Մահուան։ Անուանք սոցա են Կլոթէ, Լաքեսիս և Ատրոպէ։ Կլոթէ պատրաստէ զալեկատն՝ պատեալ զնովաւ զարն մանելի․ Լաքեսիս մանէ՝ պտուտեալ 'զիլ, կամ 'զիլիկ։ Իսկ Ատրոպէ հատանէ մկրատաւ զթել մանածին։ Առաջինն՝ վերակացու է ծննդոց մարդկան. երկրորդն՝ ընթացից կենաց, և երրորդն՝ մահուան։

22. Խուրձք. էին ուրցանկք դաւաղանաց, յորոց 'ի միջի կայր տապար։ Էր սա նշան Հիւպատոսական իշխանութեան նախնի Հռովմայեցւոց, զոր տանէին դահիճք առաջի Հիւպատոսաց՝ 'ի ցոյց գերադոյն տէրութեան 'ի վերայ քաղաքացւոց 'ի պատուհասել զնոսա կենօք չափ։ Ախոյեանք. լատիներէն Թռօքէօ, կամ Թռօփէօ. էին յիշատակարանք կանգնեալք 'ի յաղթականեն 'ի պատիւ Դիւց 'ի տեղւոջ անդ՝ ուր եղև յաղթութիւնն 'ի վերայ թշնամեաց։

23. Լիբիտինա. Ածուհի մեռելոց, և վերակացու յուղարկաւորութեան նոցա։

24. Աստղիկ, կամ Աֆրոդիտէ. լատիներէն Վէնուս. յառաջապետ է Ածուհի սիրոյ, գեղեցկութեան, շնորհաց, և հեշտութեանց։ Տես և 17։

25. Ցանկութիւն. Տես 15։ Իսկ Ամօր է որդի կամ ծնունդ Համբոփութէ։

26. Պարիս. էր որդի Պրիամոսի արքային Տրովադայ. հարեալ 'ի սէր գեղեցկին Հեղինեայ կնոջ Մենելաւոսի արքային Սպարտիոյ, էառ բռնի զքաղաքս, և յափշտակեաց անտի զՀեղինէ, որով և ծագեցաւ պատերազմն Յունաց 'ի վերայ Տրովադայ։

27. Պիրամոս. պատանի բաբելոնացի՝ սիրող Թիսբեայ օրիորդի դրացւոյ։ 'Ի չառնուլ յանձն ծնողաց սոցա ամուսնանալ ընդ միմեանս, սոքա հաստատեցին 'ի միջի փախչել 'ի քաղաքէն։ Պիրամոս եդ բանս ընդ սիրուհւոյն գալ առ 'նա առանձինն ուրեք արտաքոյ քաղաքին։ Եկն Թիսբէ, բայց տեսեալ անդ առիւծ՝ փախեաւ տագնապաւ, մինչև թողուլ զճանապարհայն զիւր արկանելիս, զոր 'ի գտանել առիւծուն՝ պատառեաց 'ի ծուէնս։ Յետ սակաւուց եկեալ անդր Պիրամոսի, և տեսեալ զարկանելիս սիրուհւոյն այնպէս պատառոտեալ, կարծեաց և զսիրելին նոյնպէս գէշադէշ պատառեալ 'ի գազանէն. առեալ սուսեր չոքաւ զիւրովի առ յուսահատութեան։ Դարձաւ Թիսբէ 'ի նշանակեալ տեղին, և տեսեալ զՊիրամոս դեռ կիսամեռ բարախեալ, եհան 'ի վիրաց անտի զսուսերն, և սպան 'նովաւ և զանձն։

28. Լէանդր. պատանի Աբիւդացի՝ խանդակաթ սիրող Հերոնեայ օրիորդի բնակելոյ 'ի Սեստոն քաղաքի Հելլեսպոնտոսի, դէմ յանդիման Աբիւդոնի. անցանէր 'ի լող գիշերայն ընդ ծով՝ երթալ յայցելութիւն սիրուհւոյն։ Այս անցք ծովային՝ էին իբր 7 ասպարէզ, այսինքն իբր 875 քայլ։ Հերոնէ զամենայն գիշեր լուցանէր ջահ 'ի ծագ աշտարակի միոջ առաջնորդել նմա։ Յետ բազում այցելութեանց՝ անկարացեալ Լէանդրի անցանել ընդ Հելլեսպոնտոս զաւուրս եօթն վասն ալէկոծութեան ծովուն, բայց կարճմնեալ ապա 'ի տեսանել միւսանգամ զՀերոնէ, ոչ սպասեաց լինելի հանդարտութեան ծովուն, այլ համարձակեցաւ անցանել 'ի լող ընդ այն. բայց պակասեալ զօրութեան եղև հեղձամղձուկ։ Մարմին նորա վարեալ յալեաց 'ի ծովափն Սեստոնի՝ եկն 'ի

ծանօթութեն ։ Յուսահատեալ Հերոնեայ ընդ ողորմ մահ սիրելւոյն, որոյ պատճառ խոստովանէր զանձն, ոչ և կամեցաւ կեալ յետ նորա. ընտրեաց զհեղձուցիկ մահ, ընկէց զինքն 'ի ծով՝ որ զրկեաց զինքն 'ի նմանէ՝ զոր սիրէր քան զանձնոյն ։

29. **Դիրկէ**, կամ **Դիրկոն**. դշխոյ կարքեդոնի. ըստ կեղծեացն Վիրգիլեայ հարեալ 'ի սէր Էնէասայ **Իլիացւոյ**, այսինքն **Փռիւգացւոյ**՝ զոր ասպնջականութեամբ ընկալաւ առ ինք, իբրև ետես զնաւել նորա 'ի բաց, խոցեաց զինքն դաշնակաւ, և անէծ զնա յանէծս ցաւագինս լինել ծովահեղձ ։

30. **Սապֆէ**. էր քաջ քնարերգակ բանաստեղծուհի Միտիլինեայ որ 'ի Լեսբոս կղզի ։ Պատմի՝ թէ զակատեալ 'ի սէր Փաւոնի գեղեցիկ պատանւոյ Լեսբացւոյ, իբրև արհամարհութիւն ընկալաւ 'ի նմանէ, այնչափ զայրեցաւ՝ մինչև իւրովի լինել ծովակուր ։

31. **Վարոս**. գիսաւոր կամ վարսաւոր աստղ. առ հինս կարծեցեալ գուշակ ձախող պատահարաց ։

32. **Պէստանական**. Պեստոն էր քաղաք 'ի Լուկանիա գաւառին Նէապոլսոյ, հռչակաւոր վասն որ 'ի նմա վարդիցն եղելոց ։

33. **Սափորք** գերեզմանականք. 'ի հնումն սովորութիւն էր այրել զմարմինս մեռելոց 'ի խարուկի, և զմոխիր նոցա պահել 'ի սափորի ։

34. **Գոփէզինէ Անահիտ**, որ և **Արտեմիս**. դուստր Դիոսի և Լատոնայ, քոյր Ապողոնի ։ Էր սա կոյս ողջախոհ. իւր գործ սովորական՝ էր որսորդութիւն, և համարի Ածուհի Որսորդութեան, անտառաց և լերանց ։ Նկարի աղեղն 'ի ձեռին, և կապարճ զթիկամբք, և կարճահանդերձ, ունելով առընթեր և շուն որսական ։

35. **Պարիս** որդի Պրիամոսի արքային Տրովադայ հարեալ 'ի սէր Ենոնի Յաւերժահարսին՝ ած զնա 'ի կնութիւն, խոստացեալ լինել հաւատարիմ 'ի սէր նորա, և չթողուլ զնա երբէք. թէպէտ յետոյ թողեալ զնա՝ զակատեցաւ 'ի սէր Հեղինեայ ։ Տես և

26 : Իսկ Քրանիոս էր գետ Փռիւգիոյ:

36. Դեմոփոն արքայ Աթենայ. Սա 'ի դառնալ իւրում յետ 'ի պատերազմէն Տրովադայ, վարեալ 'ի մրրկաց 'ի ծովեզերս Թրակիոյ՝ եգիտ մարդասիրութիւն բազում 'ի Փիլլիդեայ դշխոյէ, և եղև սիրելի յոյժ յաչս նորա: Այլ վասն իրողութեանց թագաւորութեանն հարկաւորեալ դարձ առնել յԱթէնս՝ խոստացաւ դառնալ յետ միոյ ամսոյ առ Փիլլիս, և առնուլ զնա կնութեան. բայց դրժեալ հաւատարմութեանն խոստացելոյ՝ ոչ ևս երևեցաւ, մինչև յուսահատեալ Փիլլիդեայ առ սիրոյն սաստկութեան, և վասն արհամարհութեան եղելոյ՝ խեղդ էառ անձամբ. ընդ որ կարեկցեալ Դիցն՝ փոխեցին զնա 'ի Նշենի:

37. Յասոն գլուխ Արգոնաւորդաց. 'ի հասանել իւրում ընդ ընկերաց 'ի Լեմնոս կղզի՝ հարաւ 'ի սէր Իպսիպիլեայ դստեր Թոասայ արքայի կղզւոյս, և ամուսնացեալ ընդ նմա՝ ծնաւ և որդիս: 'Ի առնուլ իւրում յառաջ վարել զընթացս 'ի յունաստան, խոստացաւ կնոջ իւրում դառնալ փութով, այլ պատրեալ 'ի սէր Մեդեայ՝ մոռացաւ զԻպսիպիլէ:

38. Տիտիոս որդի Դիոսի և Ելարայ: Տարփացեալ 'ի Լատոնա 'ի մայր Ապողոնի՝ սպանաւ 'ի նմանէ. և դատապարտեցաւ 'ի դժոխս. զորոյ զլեարդ կրծեն հանապազ երկու Անգեղք:

39. Սիսիփոս որդի Էողոսի՝ սատակեալ 'ի Թեսէոսէ վասն իւրոց աւազակութեանց: Ըստ կեղծեաց բանաստեղծից դատապարտեալ 'ի տարտարոսն՝ հոլովէ անդադար զվէմ ինչ ահագին ընդ զառ 'ի վեր լերին:

40. Կիմմերեան խաւար. այսպէս կոչին ցրտագին և մառախլապատ ծմակավայրք ինչ, որոց գլխաւորքն են յաջակողման Պոնտոսի, որ երբեմն կոչեցաւ Կիմմերիա, և ապա Փոքր Սկիւթիա, և այժմ Թաթարք. ուստի և բալք կամ թանձր մառախուղք՝ կոչին՝ Կիմմերեան Խաւարք:

41. Գօրգօրա, կամ Գօրգօրեա, է աւան 'ի վերայ լերինն Իգայ 'ի Փռիւգիա, բերրի յոյժ արմտեօք ցորենոյ ։

42. Լիբեան անյառ · քարանձաւ Ափրիկեայ՝ լի Ճիւաղօք, կամ նորանշան գազանօք ։

43. Ովեգիոս յաղագս Արհեստի սիրելոյ · գիրք Բ ։

44. Աթօզէ, կամ Աթօշէ, կամ Աթօն, է բարձրաբերձ լեառն Մակեդոնիոյ ։

45. Իբլէան մօրաջ · Իբլա, կամ Իբլէ, է լեառն Սիկիլիոյ՝ հանդերձ համանուն աւանաւ, լի Թիմոնիւ և այլ բազում ծաղկօք, ուր յաճախութիւն է մեղուաց · և մեղր երկրին՝ ազնիւ յոյժ և անուշահամ ։

46. Պալլադեան ծառ · այսինքն Ձիթենի ։ Գիւտ ձիթոյ և աստուագործութեան ընծայի Պալլասայ, կամ որ նոյն է Աթէնասայ Ածուհւոյն ։

47. 'Ի յօննէլիս Կօրքինոսի · այսինքն 'ի խիղջս Խեցգետնոյ Աստեղատան ։

48. Լոփոնիա · գաւառ Լատինայ ։ Կոչի և Աբրուծօ, կամ Աբռուծօ · ըստ քերթողաց՝ Լոսին ։

49. Ոլիմպոս · է անուն զանազան բարձրաբերձ լերանց · ռամկօրէն Աննօսօղ ։ Ըստ քերթողաց՝ Երկինք · Եթեր ։

50. Արնոս, գետ Փլորենտիոյ ։ Եսպէրիա, Սպանիա ։ Սրբոց յիշատակին Կարմեղեան Կուսանքն, այսինքն Սրբուհին Մարիամ Մագդաղենացի Փացեան Փլորենտացի, և Սրբուհին Թերեզիա Սպանիացի։ Տես 'ի Վարս Սրբոց · Հատ · ԺԲ ։

51. Ամբրոսիա · ըստ առասպելեաց է անմահարար կերակուր Աճոյ, որպէս և Նեկտար՝ ըմպելի նոցա ։ Բայց քերթողք 'ի վար արկանեն զայն և փոխանակ Նեկտարի ։

52. Լեւքանթեմօն, կամ Լեւքանթեմոն · Լատ․ Լեւքանթեմում · է Թուփ ինչ սպիտակածաղիկ, կամ ծաղիկ ինչ սպիտակ յոյժ ձիւնափայլ ։

53. Փէոն, կամ Փէոնն · Ապողոն Աստուած ։ Ըստ քերթողաց՝ Արեգակն ։

54. Նիմֆայ, կամ Նէմֆայ. յունարէն Նէմֆէ. լատ. Նէմֆա. Յաւերժահարսն: Եւ՝ Օրիորդ, կամ կին գեղեցիկ:

55. Փռիւգեան ասեղն. Արհեստ նկարակերտ ասղնեգործութեան կոչի Փռիւգեան, զի զառաջինն գըտաւ 'ի Փռիւգիա:

56. Հիւմէն, կամ Հիմենէոս. Աստուած Հարսանեաց: Նկարի 'ի պատկերահանից՝ պատանի առոյգ, գիսաւք գեղեցիկ և ծաղկապսակ, ջահ յաջոյ ձեռին, և 'ի ձախն՝ քող դեղին:

57. Արծաթի. Այսինքն արծաթագոյն փայլմունք և մկանունք ծովուն:

58. Պոմոնա. Յաւերժահարսն, և Աստուածուհի պարտէզաց և պտղոց:

59. Դեմետրէ. Աստուածուհի երկրագործութեան. Եւ՝ Երկիր. գետին:

60. Փիւռա. Տես 11:

61. Շռայլեաց. Այսինքն յանչափս առատաձեռնեաց և առ անարժանս:

62. Մուսա. Աստուածուհի բանաստեղծութեան. Եւ՝ Բանաստեղծութիւն: Տես 4:

# ԱՐՀԵՍՏ
# ԲԱՐԻՈՔ ՍԻՐԵԼՈՅ
ԿԱՄ
## ԱՐՀԵՍՏ ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԵԱՆ

---

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Թէ ամենայն ինչ ուղղէ արհեստիւ՝ ցուցանէ բազմապատիկ Աստուածութեամբ. յորմէ իմաստասէրք՝ թէ նաեւ Եւրոպայ պարտ է հրահանգել պարզաձայն խրատու. զի յետ գտանելոյ զայն՝ որ բարւոյն սէրն, ուսցին զմարդ սիրեցեն բարւոք: Նաև որոյ նախ առաջին պարտ է մեզ տնել գեղեցկութեան հոգւոյն, որով մայն յգի երկնաւոր Փեսային. նմին իրք ոչ լոկ մահացու մեղք՝ որովք պղծի հոգին, և առաքինք նոցա՝ են ամեն խորշելիք, այլ նաև 'ի ներելեաց որք աշխարհացուցանեն զհայլ հոգւոյն՝ զգուշանալ պարտ է, որպէս հաւանիւր գառաւք և օրինակօք Սըրբոցն արտայայտէ. որովք ամէն յեղեղ և անխոնջ պահպանութիւն զգայարանաց, և երագ Ապաշխարութիւն յետ անկմանն: Պարզել և զարդ ամենայն առաքինութեանց որով գեղեցկանայ հոգին և լինի աստուածահաճոյ՝ վայելչաբար զրոյատ: 'Ի հաստատնել զհայրն առաւածային օրհնաբանութեան և ապաշխարհութեան առաւելագէս հրաւէրին Աէրոջ, և պառերի նոցա արդարին բարեշնորհութեան և մաքրութեան յաղօթս, և նշանակէ աղօթելոյն եղանակ: Աբրադն զգուշանալ 'ի անօրէնութենէ, առնէն գրել զամբարելս զբաղդանս այդպիսեաց,

և 'ի հրապարակաց աշխարհաւորաց 'ի բաց դարձուցանել զուանքն առ 'ի չմոլորելոյ, մանաւանդ թէ՝ որպէս մատուցանել զայն 'ի լուր ապառաժային բանին քարոզութեան: Այս և սովորել 'ի պարապումն ոգեշահ ընթերցման 'ի սահմանեալ ժամս ինչ ասոր՝ բազում յետնարկութեամբք յորդորէին: Թէ Սէրն Աստուծոյ 'ի սիրոյ ընկերին ո՛չ երբէք անջատի, և թէ ձգի առ նաև առ թշնամի՝ ապացուցանէ բանիւ և վկայութեամբ: Յորդէ 'ի վերայ բերէ՝ թէ պա՛րտ է ընուլ ըզգործս հոգևոր և մարմնաւոր ողորմութեան. և թէ ըզջոյթ գթութեան արժա՛ն է տարածել և առ հոգիս ննջեցելոց 'ի թեթևացուցանել զպատիժ նոցա: Հաւոնչ յետոյ պատուէրէ Նարեկոյ Սերոջայն՝ զի Սրբոյն կոչմամբ, և մանաւանդ՝ պաշտպանութեամբ Աստուածամօր Կուսի, (որում պա՛րտ է արժանի կացուցանել զանձն յաճախ ապաշխարհութեամբ նմին,) յինքն յանձնուցանել զսէր Թագաւորին փառաց. քանզի նա ինքն զՄ՝այր իւր զոր սիրէ անչափ սիրով, հրամայէ մեզ սիրել. և Մ՝այրն բարեգութ առ 'ի մեզ սիրեցեալ և աղերսեալ՝ հայցէ յՈրդւոյն զոր սիրեմքն, սիրել զմերոցս:



*Սիրտ իմ եւ մարմին իմ ցնծացեն*
*առ աստուած կենդանի*

Նուագեսցէ՛ Նորդ Յոբելեան
Սիրողաց պար հրճուողական ․
Հընչեսցէ՛ օդ 'ի յարձագանգ
'ի կայթ 'ի ծափ ուրախութեան ․
Հըմուտ Սիրող՝ իւր գըրտանէ
զանախտ ըղձուր որ վառեսցէ ․
Գիտէ ո՞ր ջուր՝ զիւրոյ բոցոյն
զողջախոհ ջահ շիջուցանէ ։
Գիտէ ո՞ւր կայծք սըրտին իւրոյ
թըռուչիւ ճախրել հա՛րկ և պիտո՛յ ․
Նիւթք ամենայն լուցկիք դիպան
առ 'ի ճարակ բոցոյն իւրոյ ։
Ա. Գըտանէ նա զ՞քաղցր 'ի սիրել,
և որ գիտէ ուրախ առնել ․
Ուրա՛խ առնէ Աստուած միայն ,
զԱստուած միայն քաղցր է սիրել ․
Այլ ո՛ւր ուրեմն հասու լինի
յեղեալ 'ի կէտ նըպատակի ․
Օ՜ի չէ՛ հերիք լինել գիտակ՝
թէ զի՞նչ է այն որ սիրեսցի ։
Ընդ տեսանել նաւավարին
ըզ կայարան նաւախըմբին ,
Ըզ լաստ դանդաղ ձեպէ թիովք ,
բարդէ ըզ թիւ առագաստին ։

Ժամ է այժմիկ ընդ Աերոյն նաւ
վարել ճարտար Թիավարաւ .
Ժամ է այժմիկ դիպող խրատուք
զանձըն Աերոյ մարզել բարեաւ ։

Անձնային ինչ ուղղէ օրհնութիւն ։ Ո՛չ ապահով հերձու նաւակ
Թափառ զալեօք ընդ կապուտակ ,
Եթէ յարթուն ղեկավարէն
դըրտցի Թափուր և միայնակ ։
Պնդնի՛ անդեակ զոր մըշակ ժիր
հերկէ 'ի խոփ 'ի կորածիր ,
Երբ կըրկնարօր լինին անդէք ,
լընուն համբարք առատալիր ։
Գոհարք շողման արհեստապէս ,
մետաղք փայլեն գեղեցկապէս ,
Օր աջ հըմուտ Ձեռագիտին
տաշեալ յըղկէ գործեօք պէսպէս .
Ուղղէ Արհեստ ընդ զուգապար
կաքաւողաց դոփիւն և պար .
Ոչ անկանոն և ոտք ըսթափ
շարժին առ զարկ յոսկի քընար ։
Ուղղէ Արհեստ զերգոց դըրուակ ,
և տայ հրաման ձեռն աջողակ .
Ի զդողդոջուն ձայն գեղգեղել՝
առ չափ Թուոց 'ի դէպ և անկ ։

Նշանա- կին որն- դայրք կա- նանց ։ Այն Արհեստիւ ընդ դեղ բնաւոր
զխուրոց դիմաց տածէ ցայսօր .
Ի զպակասորդ վայելչութեան
լընու Արհեստ նըպաստաւոր ։

Սա պատրաստէ ըզհաց Թըրմեալ,
նա զՏիեզերեայ զալիս հօսեալ.
Այպէս միշտ կին սառնատեսակ
փայլէ դիմօք իւր փողփողեալ
Ճերմակադեղ փոխ տայ Թըխոյն
ըզ ձիւնեղէն ըսպիտակ գոյն.
Կարմիր սընդոյրք տեղակալէն
ըզբնակաւոր վարդից ըզգոյն։
Ճաղատացեալ գըլուխ կընտակ
պարածածկի 'ի ծամ պիտակ,
Իզ զօսացեալ կարկամ ըզմորթ
օծանելեաց կակղէ տըփեալ։
Որ ինչ ազնիւ և գեղանի
յամենագեղ 'ի յԱշխարհի՝
Այն օգնեալ 'ի յԱրհեստէն,
Սըքեալ աստի՝ և նա բառնի։
Ժուժէ Սէր գարշ յօժար սըրտիւ
առաջնորդիլ գարշ Արհեստիւ,
Եւ Սէրըն սուրբ անախտական
ժուժէ վարիլ սուրբ Արհեստիւ։
Նա իւր խրատուք վընաս առթէ,
և սա օգուտ մատուցանէ.
Մեղք և յանցանք են այնոքիկ,
այլ 'ի մեղաց սա ազատ է։
Թէ զհետ երթաս զինուորութեան
Սիրոյ Լին աստուածական,
Հարկ է մարզիլ նոյն Արհեստին
քեզ 'ի հրահանգ ներվարժութեան.

Անյաղթ գործէ մարտից կանոն
ընդ զինուորաց ընդ լեգէոն.
Կիրթ գումարտակ ընդ յաղթական
հընձէ ուղէշ ընդ սարդենւոյն ։

Ստորագ-րութիւն զինուորա-կան կր-թութեան ։

Զօրական կիրթ ՚ի կեղծեալ մարտ
գ°րոհ տայ քաջիկ ՚ի բուն ճակատ.
Յոխորտաբար շանթէ՛ սըրով՝
որով խաղաց ՚ի կեղծեալ մարտ ։
Գունդըք զօրաց որք դադարեն
երբ թագաւորք յանդորրու են ,
Բազում անգամ աջող մատամբք
կեղծ պատերազմ վարեալ մըղեն ,
Յորժամ գոչէ Սալար արի՝
՚ի պատենից սուսե՛ր հանցի ,
Շողայ յօդոյն ՚ի յասպարէզ
երկաթակուռ թաւուտ մայրի ։
Տեսցես զաշտէս երեքսայրեան
՚ի վեր շարժեալ միանգամայն.
՚Ի ձեռն առեալ՝ ապա ՚ի յուս ,
յոր ժողովուրդք յակնճիռըս կան ։
Փողք երկաթիք լե՛ վառօդիւ
լե՛ կապարաւ և փամբըշտիւ ,
Թէպէտ բազումք՝ այլ միագոչ
որոտընդոստ թընդան ձայնիւ ։
Այսպէս առ մարդ Զօրավարին
պատերազմողք ՚ի մարտ վարժին.
Վայելչութիւն պատերազմաց
է հաստատեալ յԱրհեստ մարտին ։

Ըմպէն սիրող զինուորին,
զ̊բանակ Սիրոյն պահել ծրգնի.
Ըրհեստք ուղղեն ըզպատերազմ.
ՙՆոյն Ըրհեստիւ և Սէր ուղղի:
Ուստի Ըրհեստ զի՞նչ սիրեսցես.
ըզ սիրելոյն տալ արդ զորպէս.
Օ երկրորդ մասին հաղներգութեան
ժամ է երգել կանոն պէսպէս:
Տես ջան նախկլին 'ի քեզ բերել,
զոգույդ ըզգեղ 'ի պահպանել,
Ըռ 'ի զանախտ քո փեսայի
զաչըս մաքուր յափըշտակել:

Պա՛րտ է ջոյժ ձե- ռնել զե- ղեցկու- թեան հոգ- ւոյն:

Գեղաւորաց՝ անկ գեղաւոր,
գեղն է սըրտին առ Սէր յորդոր.
Ըմնագեղ գոլով նորա,
ցանկայ լինել՝ լէր գեղաւոր:
Որ միանգամ սիրես ըզնոյն,
յանքոյթ սիրել՝ լեջի՛ր սիրուն.
Օ այդ ոչ տացէ քեզ վաղանցիկ
գեղեցկութիւն դիմաց փաղփուն:
Սէր աստուածեան ապախտ առնէ
ըզ ձիր մարմնոյ որով փայլէ,
Նաև զարտաքին ձոխ սեթևեթ
որով զանձն իւր գեղազարդէ:
Օ այս ո՛չ ձրգեն ոսկի գիսակք
քաջագանգուրք օղատեսակք.
Ոչ այտք պատրեն 'ի հաղըրս իւր
շուշանագեղք վարդատեսակք:

Որ տայ փայլել լուսաւորաց
'ի մշտափայլ բոց ղամբարաց ,
Ոչ զերկուորեակ շարժուն աստեղս
սիրէ ինչ նա պայծառ դիմաց :
Օ՜ փափկիկ շըրթանց յակինթոսեայ
ըզլար կարմիր անգոյնէ նա .
Օ՜ կայտառ դիմաց անփոյթ առնէ
ըզ ձիւնափայլ տիպ փղոսկրեայ :
Սիրտըն ներքին՝ նըմին հաճոյ ,
Նա ցանկանայ 'ի գեղ հոգւոյ .
Լիցիս չըքնաղ և գեղեցիկ՝
Թէ մտօք լիցեն սուրբ յարատոյ :
Լիցիս անշուշտ գեղեցկագին
Թէ՛ և սընարք ալեօք խըռուին ,
Եւ այտք կախեալք և թաթամշեալք
խորշիւք ծերոց խորշոմեցին :
Բերան թէ՛ և անատամունք ,
Թէ՛ և 'ի ներս կըծկեալ շըրթունք ,
բայց և այնպէս լիցիս չըքնաղ՝
Թէ՛ և արեամբ աչք շառագոյնք :
Ազնուագոյն մասըն մարդոյն
յորժամ ներխի 'ի փուտ հոգւոյն ,
Արկպարագի փըթթի մարմին
'ի դիւրաթափ ծաղիկ գեղոյն :
Անշքանայ ծառ հերապանծ
յապականիլ իւրոց խայլեաց ,
Եւ ոչ միայն նաղեալ վարսիւք
հաճոյանայ 'ի տես աչաց :

Ընդէ՞ր պանծան դէմք երկրայնոց
ընդ սեթեւեթ սին տերեւոց ,
Եթէ փուտ սիրտ՝ թափուր ունայն
՚ի ծանրութեանց առատ պտղոց ։
Մի՛տք ուղղադատ է պանծալի
և ՚ի հաշմեալ ՚ի գոնջ մարմնի
Այլ թիւրադատ՝ կայ կորացեալ
և յողջանդամ յուղիղ մարմնի ։
՚Ի հոգեսպան մեղաց փախի՛ր
՚ի բաց դարձեալ երկիւղալի՛ր ·
Որո՛մ մահուամբ յոգի դատէ
վրիպագործ չարեաց ոճիր ։
Ոչի՛նչ ընդհատ մահունք խանձի՛ն
անակընկալք ՚ի քաղաքին ,
Յօդոյն սահման զոր կըլանեմք
՚ի ժըւայթքել ըղժահ ախտին ։

՚Ի հոգեսպանաց մեղաց պա՛րտ է բացէ ՚ի բաց խորշել ։

Դ. Ոչ ոք սիրող երբէք ատէ
զոր Ճըշմարիտ սերտիւ սիրէ ·
Սէր ո՛չ երբէք Ատելութեան
՚ի միասին վանակի՛ց է ։
Հազիւ մըտեալ Ատելութիւն
յընկճեալ սըրտին ՚ի բնակութիւն ,
Յընկճեալ սըրտէն անդէն և անդ
Սէրըն մեկնի յօտարութիւն ։
Որ անարգէ՝ նոյն և ատեայ ,
են անարգանք մեղքըն դըժնեայ ·
Ոճիր չարեաց առ խիստ պատիժ
նիւթ և լուցկիս բարդէ և տայ ։

Այր ժանդագործ մեղանչական
վազէ ըստ չափ համեստութեան .
Եւ մեղք գործեալք առնէ զգործող
արժանաւոր ատելութեան ։
Նշկահելով ըմբոստ որդի
ըզՀօր պատուէր անխոտելի ,
Թաղծի յանձին՝ զի եւ յաչաց
Հօրն անդոսնեալ յանիրաւի ։
Նա զտիպ առնու պարտաւորին ,
և սա ըզտիպ դատաւորին .
Նա զկիզըն առնու թըշնամանալ ,
սա ոչ եւս է Հայր կաթոգին ։
Լինել քեզ Հայր զԱստուած տեսցես ,
թէ ոչ առ նա դու մեղիցես .
Զի մի լիցի նա Դատաւոր ,
մի յանցաւոր զանձըն ցուցցես ։
Զօրէնս Լին յաւէժագիր
արթուն մըտօք պահել ջա՛ն դիր .
’ի յանձկական շաւղաց ուղղոյն՝
յաջ և յահեակ մի խոտորիր ։
Ի սըտախօս որ ոք պանծայ
սիրել աննենգ զիւրըն Արքայ ,
Թուէ զարքունի բան հրամանին
անարգաբար կոխան իւր տայ ։
Մի յամպահերձ թիւրագալար
’ի կայծականց այնպէս դողար ,
Զոր օրինակ դողալ պա՛րտ է
առ ’ի մեղաց քեզ մահարար ։

Եւ մի՛ այնպէս սարսիր իսպառ
'ի վիհ խորոց լայնապատառ ,
Եւ ընդ երկիր սասանական
'ի գաղտ հըրոյն ծըծըմբավառ :
Պա՛րտ է ըզմահ անձին ընտրել
քան մեղսալից կեանըս վարել .
Մ՛ահ այնպիսի՝ կեա՛նք եղիցի ,
կեանք այսպիսի՝ է մեռանել :
Արքայամայր Լուդովիկեայ [1] Օրհնեալ արքայուհւոյն Պլանշայի :
որով ծաղկէր մեծ Գաղղիա ,
Որով ծաղկի նաև զարդիս՝
երկնանըպաստ ձեռամբ նորա :
Ա՛յն ինչ զանգամն Արքայորդւոյն
գըրգուեալ տածէր 'ի գիրկ ծոցոյն ,
Արտասուախառն այսպէս բարբառ
նա արձակէր 'ի դէմ որդւոյն :
Կեա՛ց ընդ երկար քաղցրի՛կ որդեակ ,
կեա՛ց ընդ երկար Մ՛օրդ անուշակ ,
Պայծառացեալ անմեղ սըրտիւ ,
կեա՛ց ընդ երկար սիրու՛ն որդեակ :
Կեա՛ց աղօթեմ՝ ցորչափ մաքուր
բարք 'ի մեղաց լիցին թափուր .
Ցորչափ անցցեն աւուրք քոյին
անաղտք անբիծք յախտից 'ի մուր :
Եթէ քո կեանք նորոգընթաց
ունին շաղիլ 'ի կորկ մեղաց ,
Յօժարէի խըլել դահճին
ըզքեզ յիմոց գըրգուող գըրկաց :

Զիմ ընդ բազուկ գորովական
ցանկայի գոլ գագաղ մահուան ,
Կամէի ես՝ մեռանել քեզ ,
զի մի մեռցիս 'ի յաւիտեան :
Եւ մինչ յաճախ համբոյրըս տայր
փափկիկ շրթանց կարմրալար ,
Զուլըն կընքեալ ընդ կաթնաթոյր
ծիրանանիշ գեղեցկաբար ,
Ուէ զբարձրելոյն ունիք ասէր՝
Ո՞վ դուք շրթնեակք խոտել ընդ Սէր ,
Այս իմ յետին առ ձեզ համբոյր ,
մի կրկնեցից՝ մաղթեմ զեթեր :
Ինձ քաղցրացե՛ն համբոյրք ցըրտին՝
զոր գողացայց շրթանց դեղին .
Երբ գխտացից ընդ քոյդ շրթնեակ
անխօսացեալ 'ի բան սրտին :
Այպէս Դըշխոյն այն սըրբազան
ձայնէր բարբառ գորովական ,
Ընտրեալ զորդւոյն ըսպանդ անմեղ՝
քան կեալ յապայս մեղօք բըծկան :
Նա մահ անարգ համարեցաւ
ընդ կեալ մեղօք զազրաթաթաւ ,
Կեանք գեղեցիկ՝ ուր մահ զազիր
զայսպիսի մահ համարեցաւ :
[illegible] Զայս վըկայեն անթիւ կաճառ
'Մըրեան խոխոջ բարձրաբարբառ ,
Ընդայլք 'ի տալ ընդ կեանս իւրեանց
կաճառք հըզօր ծիրանափառ :

Անմիտ դատեալ և չըմարթուն
գըտնել մեղք կեանս անկայուն .
Նոյլք թանձրախիտ ընթադրեցան
ճարակ մահուն անագորուն ։
Տես առ 'ի մահ դաժանական
ճախրել զերամ ըզկուսական ,
Որպէս կաթոտ հարսըն ճախրէ
'ի յանուշակ 'ի սըրսկապան ։
Ըզկոփածոյ Աստուածոց պար
պաշտել հըրով խընկապատար՝
Սաստէ ոխորտ Եղեռնութիւն
բազմեալ 'ի գահ ծիրանատար ։
Լըսեն ըզսաստ լըսեն ըզձաղ ,
յարժանաւոր բարձր 'ի ծիծաղ ,
Ըզբարկացայտ ըսպառնալեօք
ըմպահկելով ծաղրեն 'ի խաղ ։
Այպէս հըսկայ յաղթահասակ
'ի բարձրամուր կացեալ դըղեակ ,
Նաղրէ ըզնետ տըղայաձիգ՝
յառաջին անդ լարուած դիւրանկ ։
Ըզխուժադուժ բազմահարուած
խոտեն պըսակ բըռնաւորաց .
Եւ ոչ 'ի սէգ 'ի մահախ˚որխտ
սարսեն դողան Գաւազանաց ։
Չէ ինչ նոցա՝ մահ ցաւագին ,
այլ մի միայն՝ յամել նորին .
Սա՛ առաւել տանջանք նոցա ,
նորայն տանջանք՝ փո՛քր է նոցին ։

Գունդ ինչ պայծառ խաղայ խընդայ
'ի սառուցեալ ալեաց վերայ ,
Եւ այլ ամբոխ՝ 'ի բոցաշունչ
'ի փայտակոյտ խաղայ խայտայ ։
Սոքա 'ի բոց՝ նոքա 'ի պաղ
զուարթագին ձեմեն 'ի խաղ ․
Գոգցես ընդ բոց՝ դաշտ ծաղկաւէտ ,
դաշտ ծաղկաւէտ՝ գոգցես ընդ պաղ ։
Իւրաքանչիւր այն կարաւան
են ծարաւիք ցաւոց արբման ․
Յաչըս դընեն նոքա ընդ մահ
առ 'ի մեղաց փախչել միայն ։
Ոչ այսգունակ քիմք ճաշակէ
զանուշարար մեղր և գաղպէ ,
Եւ ոչ այսպէս թանան շրթունք
'ի յԱմբրոսեան օշարակէ ։
Ի լանջս հայեաց դիմագ°րաւեալ
'ի սուր 'ի տէգ առ մահ սըրեալ․
Հայեա՛ց 'ի հող գլխո՞րդ փայլէ
կենդանացայտ ծիրանացեալ ։
Տես և ուսի՛ր ընդ մահ ընտրել
քան ընդ Բարձրեալ արհամարհել ,
Կամ ընդ նորայն սուրբ օրինօք՝
գործովք մեղաց ապախտ առնել ։
Պարտ է [illegible] [illegible] մեղաց ։
Եւ մի սոսկար 'ի յարհաւրաց Դ
լոկ 'ի ժամանախտ ծանըր մեղաց ․
Ուսի՛ր դողալ և զանգիտել
և առ վըտանգ ծանըր չարեաց ։

Ոչ անշաղախ մնայ ոգի
'ի չարութեանն 'ի սահմանի,
Որ 'ի յայտնին յանդըգնաբար
կոխէ վըտանգ՝ յայն կորընչի ։
Փախի՛ր խո՛յս տուր առ ճողոպրել,
առ ո՛չ ճարակ մահուն մատնիլ.
Փարախ խաշանց՝ վայրագ գայլոց
միշտ մօտ լըցի արեամբ շաղիլ՝
Ի լուղորդաց սակաւք պըրծին
'ի ըռնաշարժ 'ի յորձանին.
Կայծ ինչ փոքրիկ հըրկէզ առնէ
ըզդիւրակէզ օրան յարդին ։
Ըզ չարամէտ ըզգայութիւն
գըրգռել յուզել է շամբութիւն.
Ոչ բարւոք խայթէ խըլթան
ըզձի անսանձ ամեհագոյն ։
Գիտեն ըմպել ականողք [illegible]
ըզ մահաբեր ըզթոյն սաստիկ.
Մահուն 'ի սիրտ ըստէպ տան մուտ
այս լուսամուտք մեր երկբացիկ ։
Զանի՞ դըժնեայ հարուած և զէն
աչք 'ի յոգւոյ տան ներգործեն.
Յեսսեածին Թագաւորին
ահեղ վընասք 'ի յուշ ածեն ։
Իբրև յագուրդ ա՛ռ 'ի սեղան,
ետ ըզ մարմին սուղ հանդըստեան,
Ընդ անցանել արևակին
'ի միջնակէտ եթերական,

Եւ 'ի տանիս բարձրակատար
'ի պաղպաջունս ոսկեկամար ,
Ուր մեղմաշունչ Զեփիւռսիւ
ամարայնոյն տօթ զովանայր ։
Բերսաբէն գեղեցկահեր
յաւազանէն մերկ փողփողէր ,
Զերթ դողդոջուն փայլէ Կինթեա ։
յականակիտ 'ի ջինջ աղբեր ։
Ետես Յեսսեան զայն առնակին
գեղեցկատիպ և ցօղագին ,
Ետես ըղձա՝ 'ի նոյն ջեռաւ ,
և ջուրք ըղձոց արծարծեցին ։
Ջուն արքենի շուն բըռնադրաւ
յոտարոտի գիրկ փարեցաւ .
Ապահովեաց առըն մահուամբ
ըղձսէր նորա զոր գողացաւ ։
Աւա՜ղ , ո՞րքան Դաւիթ գըթեաց
'ի մի միայն 'ի հայեցուած ,
Թէ անըզգոյշ տեսանելիք
ծընան նըման կըրկին յանցուած ։
Վասն այն զանկումն 'ի միտ բերեալ
և յանկմանէ կըրկին սարսեալ ,
Հոգւած շըրթամբք այսպէս ձայնէր
բան աղօթից ահաբեկեալ ։
Բամբէ . դարձո՛ , դարձո՛ զաչս իմ
'ի նանրութեանց ո՜վ Աստուած իմ .
Թէ դիպեցին ինձ ոտնատուք՝
դուցէ անկցին սահուն ոտք իմ ։

Քանզի անկայ՝ և ցաւիմ յայն ․
եղէն հիքոյս գայթ 'ի կործան ,
Յուրխայլին կլին լուացեալ
միակ հայեացք զննողութեան ։
Փակեա՛ զաչս իմ՛ 'ի տեսլենէն ,
զի մի՛ թափառք ըզմեղս արբցեն ․
Փակեա՛ հայցեմ՝ զաչս իմ փակեա՛ ,
ըզնանրութիւն զի մի՛ տեսցեն ։
Մաղթէր ըստէպ ողորմագոյն ,
զի մի՛ աչք իւր արբցեն ըզթոյն ․
Քանզի յառաջ անըզգոյշ լեալ՝
էարբ նոքօք ըզմահաթոյն ։
Արդարըն Յովբ՝ զաչսըն սանձէր
յօրինաց սանձ 'ի խըստամբէր ,
Եւ արդարակ ընդ իւր աչաց
ուխտ և դաշինըս հաստատէր ։
Աչք՝ Յորձանուտք են սոսկալի ։
Ո՞ր նաւուղիղ ընդ ժայռ կըրկնի ,
Յոր զարկուցեալ ուժգին թընդեաց
եղևնափայտ իւրոյ նաւի ։
Վընաս բերեն աչք երկոքին
վընաս բերեն և ժայռք ծովին ․
Բայց փոքրագոյն ըզքոյդ կարծեմ
ո՞ Սկիլլա՝ ո՞ Քարիբդին ։ [3]
Արդ թէ փախչիս երկիւղալից
յայսչափ ահեղ 'ի վըտանգից ,
Զի մի՛ զԱ՟Ծ տրտմեցուցես ,
փախչիս յոճրաց ծանրագունից ։

Նման 'ի ճանաւանց պայմանաւ. Բեանց պա՛րտ է ծախել:

Նոր 'ի մեծաց դու խօսս տացես. Ե
Ե՛ 'ի փոքունց խուսել տեսցես.
Փո՛յթ պընդադոյն բե՛ր 'ի յանձին
և ըղ մանունց չարեաց նոյնպէս.
Սեաւըն Սերող դողայ սարսէ
Ե՛ 'ի մեղաց ե՛ յանուանէ.
Ո՛ւ 'ի փախչել Սերող անձին՝
չա՛տ է միայն թէ մեղք լցէ.
Ուկի՛նչ թեթև 'ի մէջ մեղաց
սա տեսանէ զոր ինքն առեաց.
Ո՛չաց նորա ծա՛նր երևի
և գըլխովի՛ն ըստուեր մեղաց.
Ո՛յսպէս սարսեալն 'ի խօլական
առ 'ի ցնորից անըրջական,
Կարծէ ցընոր միշտ տեսանել
թէ գիշերայն երթայ միայն.
Որ խաղարկու զահեղ մայրւոյն՝
երբ տատանէ զ՛բազուկ ոստոյն,
Նաւ կամ վըտակ կերկերաձայն
երբ խոխոջէ 'ի մէջ ձորոյն,
Կեղծէ հանդէպ աչաց իւրոց՝
վըտխտ բազուկ շարժել ոգւոց.
Կամ հեծեծել յողորմ 'ի ձիչ
ձիւաղաձայն ոսկերոտւոց.
Եւ է ըստ դիպաց՝ վատ նաղաստակ
ըղլոււռ մայրին շարժէ արագ,
Ո՛ղաղակէ՝ ահա՛ ձեռեն
ուրօ՛ւականաց տխպք 'ի պուրակ.

Կամ թէ խանչէ կինձ 'ի շամբէն ,
 կամ ըստ դիպաց՝ գամբըռք հաչեն ,
 Նա քըստմընի՝ գըրեա՛ եթէ
 դըժոխայինեայք անդ կաղկանձեն ։
Յորժամ մարմինք 'ի շող լուսնոյ
 ձըգեն ըստուեր 'ի հանդիպոյ ,
 Ահ արկանէ 'ի սիրտ նորա՝
 նոյն իսկ ըստուեր անձին իւրոյ ։
Տեսանէ նա կըտրօն սոճի ,
 կարծէ դիտել անշարժ անդրի ․
 Անձամբ անձին ձուլէ կոփէ
 ցընորս անտիպ՝ յորոց սարսի ։
Անկեղծ Սիրող այսպէս սարսէ ,
 զի սիրելին մի խեթասցէ ․
 Այլ այս երկիւղ օգտէ նըմին ,
 և ոչ որպէս նայն վընասէ ։
Իմա՛ զ՚նախնին՝ մոլորութեան ,
 զերկըրորդն ընկեր՝ Սիրելութեան ․
 Այն ցուցանէ զ՚նըրկուն ոգի ,
 սա բարեպաշտ և սըրբական ։
Աճի սիրով՝ մեղաց երկիւղ ,
 ըղ սէր մաքուր աճէ երկիւղ ․
 Յորժամ յաւէտ վառի Սիրող
 յայնժամ յաւէտ աճի յերկիւղ ։
Խընդայ սիրել , նոյն 'ի մեղաց
 խընդայ դողալ խորշիլ 'ի բաց ․
 Եւ 'ի մեղաց երբ երկընչի ,
 սիրէ անքոյթ և անկասկած ։

Օրհնեալ որդւոյն Աստուծոյ Գոնզագայի ։

Արտօսրաթոր աչք Գոնզակայ՝ [4]
դո՛ւք ասացէք ըզփոյթ նորա ·
Ո՞րչափ երկեաւ՝ զի մի՛ գըտցի
'ի ստգիւտ մեղաց պարտաւո՛ր նա ։
Յետ հայելոյ ան՚զգուշաբար՝
որ զինքն երկնեաց յիւրոյին մայր ,
Հարեանցի ակնարկութեամբ
'ի կանացի դեղոյ տիպար ·
Երկեաւ աչաց ըմծաւորիլ
'ի մօր իւրոյ դիմաց տեսիլ ,
Աչացն ասեմ յըստակագոյն
և անշաղախ 'յարատ հայիլ ։
Զարատ մեղաց երկուանալի
լուաց յաղբիւր արտօսրալի ,
Թէպէտ ոչի՛նչ արատ մեղաց
կայր լուացման ինչ արժանի ։
Գոնզակայի լաց սրբական
խ՞րատէ ըզքեզ Ճռուոմնաձայն ,
Ա՛ւ 'ի մեղաց դուզնաքէից
լինել 'ի բաց փախըստական ։
Փոքու մեղօք սիրտ դարշանայ
զազրատեսիլ երևանայ ·
Թեթև յանցանք՝ քո՛ս են հոգւոյ
զազրաթորմի և անդեղեայ ։
Ըզգեղադէշ մանկան դիմակ
այսպէս կըտեալ գողէ պիսակ ·
Այսպէս և բոր ըզյոյր մարմին՝
ապականեալ փըտէ 'ի ժանկ ։

Ըզսոյն շարաւ խոլխայթարար
լուա՛ յոգւոյդ երագաբար.
Որ պահապան չէ՛ իւր գեղոյն՝
է՛ նա սիրող անմըտաբար ։
Խիթան մանկտի գեղեցկագին՝
ոչ վըթարել զառոյգ մարմին.
Եւ կանացի հայթայթանօք
զայտ շըպարեն՝ և ո՛չ շիկնին ։
Ընկեն ըզդէմ 'ի նուրբ փոշւոյ
տըքնեալք անթարթ 'ի հայելւոյ,
Ծածկել ծեփիւ գեղայարմար
ըզ տարրացեալ զանգայտ խոռոչ ։
'Ի հոտ ծաղկանց զ̊բերան ցօղեն՝
զորըս յաւիչկ բոյք լուծանեն.
Բերանք ցօղեալք 'ի վարդայօղ՝
վարդըս բուրեն երբ բարբառեն ։
Օ՛չ մի ըզպար ըմբոշխնելեաց
հարցէ կանաչ ժանգ ատամանց,
Մարեն ըզջուր՝ փողալաձառ
ճամարտակող 'Ի խմիզ ոսաց ։
'Ի նուրբ մաղխիլ սանջեն քանցեալ
զանտառ այտից ըզթաւացեալ.
Օ՛չ կարձնովին խըլեալ անկցին
մրադիր մօրուաց բողբոջք տիգեալ ։
Կոտրեն զեղունգ՟ն յոլովակի,
մաքրեն զունկան ըզխորոփի,
'Ի գոգաւոր ծակ ըռընգանց
մազ ոչ ներեն՝ զի աձեսցի ։

Տարփա-
ծառս փայլ
մեծ անձին
մարմնոյ գե-
ղեցկու-
թեան ։

Ըզգուշանան զի հողմ արագ
մի՛ ցըրուեսցէ ուժգնահընչակ ,
Ըզգէս հերաց ըզքըրքմագոյն
որ 'ի յետուստ թափէ զքամակ :
Զարտախուրակ 'ի ձեռն ունին
'ի դառնաշունչ ձըմեռայնին ,
Զի մի՛ դուցէ եղծցին նուաւ
ցըցունք վարսից արծաթագին :
Կան աչալուրջ՝ մի՛ կըռուեսցի
'ի բազմազգոյշ հանդերձանի՝
փոշի մանրիկ մաղեալ ընդ օդ ,
կամ ցայտ տըղմոյ անկարծելի :
Դահիճ քեմուխտ զարդելական
տանջեալ կըտտէ զոտից ներբան ,
Նոր ըզմատունս անձկապատ մորթ՝
սեղմեալ ճընչէ իբր 'ի գելան :
Բուրէ ըղհոտ բացէ 'ի բաց
բազմատեսակ անոյշ ծաղկանց ,
Կակուղ թաթպան 'ի յօդենւոյ
արկեալ 'ի զարդ փափկիկ ձեռաց :
Խընդրեն նոքա ըզմաքրութիւն
և զերեսաց շուք բարեմոյն ,
Քանզի գիտեն թէ սիրտք ձըգին
առ 'ի զարդուց պատշաճագոյն :
Խընամ ունին նոքա մարմնոյ ,
կա՛լ դու խընամ հոգւոյդ գեղոյ :
Ընդանէ այն ծաղկի նըման ,
այս գեղ անանց մընայ արդոյ :

Առ 'ի հաճել զաչըս այլոց
մերժեն ըզդոյզն արատ մարմնոց ·
Եւ դու զԱստուած առ 'ի հաճել՝
ըզքոյդ պահեա՛ սիրտ յարատոց ։
Տանջին սիրողք յանարգանաց ,
Թէ և լիցեն 'ի թեթևաց ·
Այլ ոչ ժուժէ համբերատար
և ոչ միում անարգանաց ։
Թէ կին սիրող յառնէն առցէ
Թէ գան դաժան՝ թէ բան դըժնէ ,
Տրտմեալ ընդ գան՝ տրտմեալ ընդ բան
անմըխիթար յանձին հեծէ ։
Նա միշտ 'ի ցաւ համակեսցի՝
Թէ 'ի յառնէն անգոսնեսցի ,
Տիգօք աչաց և կամ ձոռոմ
ակնարկութեամբ նըշանացի ։
Սիրողն Աստուած տըրտմի մեղօք ,
տըրտմի նորին և ըստուերօք ·
Ե՛ւ ըզփոքունս առ 'ի մեղաց
մեզ արգելու պատուիրանօք ։
Որ հրաժարեալ կայ բացական
առ 'ի ծանունց մեղաց միայն ,
Հազիւ թէ գաղջ բարեկամի
արժանաւոր լինի անուան ։
Ըզթանձրամած խաւար մեղաց
և զարշալոյս աղօտ չարեաց ,
Յաւէժական լուսոյն նըշոյլ՝
'ի յաշխարհէ հերքէ 'ի բաց ։

Որ էջ յերկնից 'ի բարձրային՝
 հուր արկանել յերկիր ստորին ,
 Ոչ հանդուրժէ ընդ առկայծեալ
 նըսեմաղօտ ընդ ջահ սըրտին ։
Անձըն սիրող՝ Աճայնոյն
 առ գոլ հաճոյ անմուտ Արփւոյն ,
 Բորբոքեսցէ մի թերավառ ,
 և ծաղեսցէ առանց ամպոյն ։
Ամպք անձրևաց են նըշանակ ,
 լոյս երեկեան՝ ցայգոյ գուշակ .
 Յետ սակաւուց կայծակն աղօտ
 աճիւնանայ գորշատեսակ ։
Թէ արդ թողուս դու ղերասան ,
 անօրինել 'ի դուզնաքեայն ,
 Յետոյ ծանունք ըղձեալ գայցեն ,
 լիցիս ոսոխ յայտ յանդիման ։
Սօս երխվար կիրթ և ընտել
 արձակասանձ վազըս առնել ,
 Ըզփոկ կալեալ յանվարժ ձեռաց
 ամեհաբար դիտէ ցընցել ։
Նաւ շաւակլի ըզթափ առեալ
 յանյայտ վըտանգս անձամբ բերեալ ,
 Ջուրըն լըկէ ըզ սանձակոծ
 յուս անհամբեր աշտանակեալ ։
Ըզ դառնաբըոյց ըզբաժակին
 առ ումպ քըմաց հիւանդ մանկին
 Հազիւ կըլանէ կայլակ կայլակ՝
 առ սաստ դիմաց հօրըն սաստիկ ։

Ըստէպ արբեալ երբ սովորի
այսպիսաբար 'ի հիւթ լեղի ,
Զընտելական զայն ջուր ըմպէ
ախորժաբար բերանալի :
Սարսափ չարեաց գայ 'ի մոռաց՝
ընտելութեամբ վրիպանաց .
Նոր մեղք լինի ընկերակից
և առաջնորդ նորոց մեղաց :
Թեթև յանցուածք յոճիր դըժնեայ
հորդեն շաւիղ և պողոտայ .
Որ անկանի ըստէպ յերկիր ,
յոտին ձըմլիլ յետոյ կաղայ :
Որ միանգամ հեղձեալ կորեան
յանդընդախոր եղեռնութեան ,
Գըտցես ըզնոյն նախ վըտանգեալ
յափըն չարեաց 'ի դուզնաքեայն :
Նա ոչ մի նաւ տեսաւ սուզեալ
'ի յաղթ ջըրոց ալեկոծեալ ,
Որ 'ի մատաղ սաստից խոյս ետ
փըրփըրադէզ Ովկիան յուզեալ :
Ոչ գիշերայն 'ի յանտառին
Ճանապարհորդ գողայր յանձին ,
Թէ յերեկոյն տարաժամեալ՝
ըզկեղակարծ թողուր զուղին :
Զի մի յանդունդ մոլորութեանց
նաւաբեկցիս յողորմ ալեաց ,
Փախի՛ր ըզգոյշ՝ 'ի բա՛ց փախիր
'ի դուզնաքեայ ջուրց յանցանաց :

Ըղձամածուռ թո՛ղ պողոտայն
նրբաշաւիղ բազմայածեան ,
Ո՛չ ի մի թեքուածք տարտամ ուղղոյն
քոյդ ընթացից լիցին խափան ։
Ի մեծ մեղաց առ 'ի խորշիլ ,
հա՛րկ 'ի փոքունց քեզ հրաժարիլ .
Ո՛չ ի մի մեծաց տեղի տացես ,
դու 'ի փոքունց տե՛ս երկընչիլ ։
Ո՛չ ի նետ ձըգեալ անվըրիպակ
հարցէ զեդեալ ըզնըպատակ ,
Հա՛րկ է ձըգել միշտ բարձրագոյն՝
քան զերեւեալ զիւր նըշաւակ ։

Պա՛րտ է տալ պատերազմ ընդ մոլութեանս ։

Ըսկիզըն արա պատերազմի
ընդ մոլութեան ամենայնի .
Չէ՛ պարտ շնորհել դուլ և դադար
պատերազմաց արդարացի ։
Նոր յապաղանք զեա՛ն ըսպառնան ,
որ վընասուց դըժուար դարման ,
Կամք յապաղման է կամք կըրել
'զեղեալ վընաս ըզ յապաղման ։
Մարտի՛ր ըզ մարտ յաւէժաբար ,
և մի՛ երբէք տացես դադար .
Քեզ մըրցանակ տացեն մըրցմունք
մըղեալք անդուլ ոչ յամրաբար ։
Արթուն Պահպան պահպանեսցէ
ազատ զոգի՛ն 'ի վըտանգէ ,
Յորժամ մարմին վըտարանջեալ
ճակատամարտ յայտնի մըղէ ։

Պահպանեսցէ նաեւ յայնժամ
  երբ զուխտ կեղծէ սերտ հաշտութեան .
  Ընդվզելոյն ոչինչ օրէնք ,
  յոր իշխեսցես դու ապաստան ։
Անքուն զինուորք պահակերեն
  յորժամ խառնուրդք մարտից յուզեն .
  Գունդք կողմնապահք զազգ դաշնադրուժ
  զլսպեալ յոտին կացուցանեն ։
Թէ զգայութիւնք նուաճէին
  յանկարկութիւն Գըշխոյ Բանին ,
  Ոչինչ պատճառք սայթաքելոյ՝
  երկիւղալի քեզ լինէին ։
Այլ զի իսպառ չիջուցանել
  ըզխայթ լուցկեաց յար 'ի դըրդել՝
  Խիծ Ադամեան քեզ ոչ թողու ,
  վասն այն ըստէպ գիտես գըթել ։
Թէ ըստ դիպաց անկցիս 'ի վայր ։
  արի կանգնեաց երագաբար .
  (Մերթ անկանիմք վաստակաբեկք
  'ի հաղը չարեաց ախտապաշար ։)
Սոսկ անկեալ յորսայս երկրի ,
  Թէ ոչ կանխէ՝ անդէն վարսի .
  Կինճ վիրաւոր խանչէ ոխոր ,
  'ի յորսողաց զի մի կալցի ։
Սաւառնէ հաւ ոստեղամած
  Թռուչել թեւօք անտի 'ի բաց .
  Ճըգնին երէք թակարդապատք՝
  պատառոտել ժանեօք ըզցանց ։

Աղաւթարութիւն չէք անման ։

Եւ դու արի մի դանդաղիր,
'ի սուրբ ատեան ցաւոյք մատիր.
Լուծցին 'ի քէն կապանք մեղաց,
լիցիս ազատ և անբասիր։
Մեղք և յանցանք բազմադիմակ
ախտք են հոգւոյ բազմատեսակ.
Իսկ սուրբ արեան ծծաբուխ`
ախտից հոգւոյն դարման միակ։
Գոն վէրք բազումք յԱստուածըն Բան`
որք զերկնային ծորեն Բալսան.
Օ այս ամենայն վիրաց խոցուած
Սէրըն եբաց քեզ 'ի դարման։
Ունիս խոցուած ըզգործ մեղաց.
խընդրեա՛ դու քեզ զՍիրոյն խոցուած.
Բըժըշկեն վէրք` գործածք Սիրոյն
ըզքոյդ խոցուած ըզգործ մեղաց։
Եղըն հեծեալ բարձրակըռուիչ`
փութայ մատչել 'ի ջուր բուժիչ,
Երբ հարկանէ ըզկուշտ երկչոտ`
երեքթևեան սըրաթըռուիչ։
Յետ յանցուածոյ հանջիր յոգւոյ
ողորմագին թառաչ ցաւոց.
Հայցեա՛ շըրթամբք ըզթողութիւն,
ձեռամբ բախեա՛ զտախտակ կըրծոյ։
Յետ խոյս տալոյ հեզ աղաւնոյն
'ի գիշատիչ մագլաց Որւոյն,
Յորժամ 'ի բոյն դառնայ ողջիկ,
ըսկիզըն առնէ մընջել ուրոյն։

ՙՈւք և թառաչ ներումն հայցեն
'ի Բարձրելոյն զոր մեղք խոտեն.
Ողորմութիւն ցածնու լալեօք,
դառնայ հաշտի և Տէր անդրէն:
Ո՛ւ ամոքել Ջարսն յանցաւոր
ըղփեայլն սիրտ վիրաւոր,
Ընդ առաւօտ յառնէ հեծել,
ընդ երեկոյս հեծէ 'ի խոր:
Ա՛յն հեծութիւնք ազդին ունկան,
ազդին 'ի սիրտ գորովական:
Ջարսն անտերունչ ածի կըրկին
յայրիացեալ 'ի սըրսկապան:
ՙՆերբէ փեսայ քո երկնային՝
յետ լըրբաբար յանցման նըմին.
Ա՛յլ առ ներել՝ փութա՛ կանխեա՛
նախ հեծեծել ընդդէմ նըմին:
Ի հեկեկանս հառաչելոյ
յաւե՛լ անհատ զաղըխուր լալոյ.
Յետ որոտման տեղան հոսեն
առատահոս սահանք ջըրոյ:
Ա՛չք երկոքին լուսոյ լըձակ՝
'ի կըրկնաբուխ դարձցին վըտակ.
Զաղտ յանցանաց խոհերալի
ողողեսցեն վըտակք կըրկնակ:
Մ՛ի գիշերայն բիբ լըռեսցէ,
մի՛ լըռեսցէ և 'ի տուէ.
Զի լըռեսցեն մեղք հեղձուցիկք
յանլըռելի յայդըմ ձայնէ:

Հաշէ յանցուած հաշէ սաստիկ ,
որով՝ի սիրտ տայ երկեղիկ .
Թէ ոչ ողբաս՝ նա միշտ հաշէ .
թէ հառաչես՝ նա կայ լռիկ :
Երբ լայր Պետրոս՝ արօրէին
թորք արտասուաց զերես նորին .
Ակօս էին այտք իւր դիմաց ,
և լիճք լուսոյն՝ գետք ՚ի նոսին :
Թանայր Արքայն սաղմոսասաց
մըշտագիշեր ըզգահ մահճաց ,
Օ՛ խուրըն մահիճ պատրաստելով
իւր բազմանիս ՚ի յարտասուաց :
Խառնէր յափսէս՝ լաց և աշխար ,
խառնէր ՚ի թաս ուրախարար .
Եւ խոնջելոց աչաց իւրոց
չէր և ո՛չ մի դուլ և դադար :
Ո՞հ . մի՛ ձըրջդեր , լա՛ց և ողբա՛ :
Ողբալի յոյժ գիտեմ ըզնա՝
Որ զողբալիս գործել գիտէ ,
բայց լալ ողբալ ոչ ցանկանայ :
Բայց չէ՛ն լալի բընաւ յաստիս՝
որք քաւեցին լալեօք զ՚լալիս .
Օ՛ ի մի՛ լալի լիցիս և դու ,
ըզմեղըս լա՛ց միայն լալիս :
Նըստին անմեղ սուրբ աղաւնեակք
առ լիահոս ջըրոց վըտակ .
Բայց ՚ի զազիր աղտեղութեանց
է աղաւնին ջինջ և յըստակ :

Թէ և լիցես ջինջ մաքրական ,
(այլ ո՞վ անմեղ կենցաղեցան .)
Բայց զի յաւէտ պայծառասցիս՝
վառակք լուեաց տացեն քեզ զայն ։
Է Օ՜ հատոր կըձեայ ըզ սըրբափայլ
՚ի գոյն ձերմակ ներգոյացեալ,
Յաւէտագոյն ըսպիտակէ
աղբիւր յըստակ զայնուիկ սահեալ ։ Պարտ է քաջարու- թեամբք (այսինքն առաքինու- թեամբք) զարդարել զոգին ։
Այլ երբ ամբիծ յամէն աղտոյ
լիցիս հաճոյ յաչս Աստուծոյ ,
՚Ի պերճ օժիտ քաջարութեանց՝
զանձըն պըճնել լիցի՛ փոյթ քոյ ։
Պատանուհի չըքնաղ գունեայ
ըղձարմնական ըզգանձ մուրայ .
Որ երեսօք հաճելին է ,
նաև օժտիւ հաճել ցանկայ ։
Որպէս պըճնէ փայլուն գոհար
ըզգեղեցիկ տիպ անվըթար ,
Այնպէս բազում քաջարութիւն՝
ամբիծ հոգւոյն է զարդարար ։
Քաջարութիւնք զոգիս պըճնեն ,
քաջարութիւնք միայն գիտեն ,
Գեղով իւրեանց արժանապէս
զիւրեանց Հաստիչ ՚ի սէր շարժեն ։
Օ՜ի սիրեսցէ ըզքեզ Աստուած ,
քաջարութեամբք յոգի պըճնեա՛ց .
Անմարթ է քեզ պըճնիլ զարդուք
քան ըզսոցայն գեղեցկապանձ ։

Եւ այգունակ 'ի կախ շողան
ականակուռ գինւոք 'ի յունկան ,
Նւ ոչ այսպէս լանջք փըղոսկրեայք
փայլատակեն 'ի քայլ ական ։
Եւ գէսք վարսից այնպէս շողին
ներքոյ փողփուն ադամանդին ,
Նւ ոչ այնպէս Ճախարակեայ
մատունք յեռեալք 'ի գոհարին ։
Որպէս չըքնաղ փայլէ հոգի
քաջարութեամբք ազգի ազգի ·
Զարդ քան ըզսա պայծառագոյն
չի՛ք 'ի մերում չի՛ք յաշխարհի ,
Բանից երկին հրաշատեսիկ
յաստեղանիչ շողայ լոգիկ ,
Նւ կամ սիգայ ներկարակերտ
մարգագետին բազմածաղիկ ,
Եւ այնպիսի փայլէն շողմամբ ,
որպէս հոգի քաջուղղութեամբ ·
Մարդ և երկինք են անպաճոյճ՝
սինք առ նորայն գեղեցկութեամբ ։
Քաջարութիւն յանկոխ դիմէ ,
'յԱրութեան գործ թեւակոխէ ·
Միշտ յաղթական հանդիսանայ ,
ոչի՛նչ վաստակ ըզնա ընկճէ ։
Կոխէ գընայ աներկեան
ըզփըշահեղձ ըզպողոտայն ,
Նւ զարհուրի 'ի ծաղկափիւռ
'ի վըտանգաց գիրգ փափկութեան ։

Բուռն հարկանէ քըշտել 'ի բաց
ըզգեռարմատ ընձիւղ չարեաց ,
Եւ կոխոտեալ հեղձուցանէ
ըզնախասերմ՝ անյայտ չարեաց ։
Մինչ ընդհատ ժիր հերկարար
քաղհան առնէ զիւր արտավար ,
Որովք հեղձեալ մոլախոտն
դաշտագետին անյոյս 'ի լոյր ։
Նոյնպէս յորժամ աղուէս լըրբն
ապականել զայգիս յուռթի ,
Նոյգեգործին արթուն ձեռամբ
գխաթաւալ յորսայս դընի ։
Քաջարութիւն մի է միակ ․
ոչ միաթիւ՝ այլ միակարգ ․
Միակ գոլով կապէ 'ի մի
ըզզանազան շարից ըզկարգ ։
Որպէս բաղում ականց ճարմանդ
ըզմի միայն կապէ բահուանդ ,
Նոյնպէս բաղում քաջարութիւնք
ըզմի միայն գործեն բահուանդ ։
Սոցա ականք որովք փայլեն ,
ոչ են ծընունդք 'ի Գանգիսէն ․ [5]
Այլ են պարգեւք ապականիւթք
յոսկիաբուխ Պեղագոսէն ։ [6]
Այլ շողշողեն որպէս նոքին
'ի բեկանուտ փայլ բոցագին ,
Եւ ըզկըշխս ունին գընոյ
ազնուագոյն քան ըզնոսին ։

Յորս 'ի փայլման հաստատագոյն՝
 յաղթէ զ°զմրուխտ գարնանագոյն ,
 Եւ ոչ վառիս պայծառ Սուտակ՝
 բոցանըշոյլ Սիրոյն հանգոյն ։
Չքնաղ Կուսութիւն վանէ ըզփայլ
 ըզմարգարտաց գեղեցկափայլ ·
 Ու ժուժկալէ 'ի տես նորին
 եղենգնաքար պայծառափայլ ։
Եւ՛ Միտք Խոնարհ՝ բարետեսակ
 քան ըզհաճոյն զայն Մանուշակ ·
 Ո՞վ գեղապանծ դու Մեղեսիկ՝
 չես դու քան զայն գեղեցկորակ ։
Կամք անխախուտ է հաստատուն
 քան զԱդամանդ կուռ և տոկուն ·
 Առ ամենայն չարեաց արկած
 կայ անխորտակ և կանգաղուն ։
Ոսկետեսիլ Ոսկիաքար
 նըսեմասցի որպէս խաւար ,
 Թէ ընդ սորայս ներքին ձըրից՝
 զոյգ կըշռեսցի 'ի մի նըժար ։
Արդ այսպիսեօք ազգի ազգի
 պա՛րտ է ակամբք պըճնել զոգի ·
 Ո՜վ ճոխացեալ վայելչազարդ
 հաճոյասցի իւր Արարչի ։
Այս գեղ դիմաց փըշրէ ուժգին
 զ°ծախող ժանիս ժամանակին ·
 Սա ճողոպրի անկիզանուտ
 'ի հըրդեհից բոցոյն վերջին ։

Ոչ այլ ինչ գեղ ըղձեր անանց
յինքըն ձըգէ՝ բայց գեղ անանց.
Ըզսա միայն Քաջարութիւն
տիրականին տացէ մըտաց :
Ի յընդաբոյս 'ի ձիրս ոգւոյն
պատուաստեսջի՛ր Քաջարութիւն.
Քաջարութեանց գործ սեփական
զի սիրեսցես միշտ բարեգոյն :
Քաջարութեանց պարք ամենայն
մաքուր սիրոյն հետեւանան.
Սէր ոչ գիտէ քայլափոխել
առանց նոցին ուղեկցութեան :
Ջուրք գետահոսք 'ի դուրս բըղխեն
'ի համափիւռ Պեգազոսէն.
Սարաք աստեղաց Լուսաւորաց
յԱրփիական լուսոյն ծագեն :
Յառողջութեան գըլխոյն բազմին
կեանք անդամոց բոլորովին.
Եւ ընդ ձեռամբ եղեալ գաւառք
ծաղկեն 'ի կամս Թագաւորին :
Քաջարութիւնք՝ բըղխմունք սիրոյ,
քաջարութիւնք՝ շողք 'ի սիրոյ.
Զոր սէր ծնանի՝ սէրըն կազմէ,
սէրըն տածէ՝ աճէ 'ի գոյ :
Լիջի՛ր սիրող քաջարութեանց
եթէ սերտիւ սիրես զԱստուած.
Օրինադրէ սիրել զնոսին
նոյն ինքն Աստուած քաջարութեանց :

[illegible]

Եթէ սիրես զԱստուած միայն,
լիցիս ընդհետ Արքայութեան,
Յորժամ զըրդանք ակընկորեալք
լիցին 'ի քէն փախըստական ։
Ո՜ որ կարծէիր դու անհընար,
արասցես զայն հեշտ դիւրաբար ·
Երբ արասցես դու զամենայն,
զամենայն ինչ տեսցես հընար ։
Որինչ կանխաւ եղև հաճոյ՝
ուսցիս արագ խոտել յետոյ ·
Եւ հետամուտ լիցիս նըմին՝
որ ինչ կանխաւ էր անհաճոյ ։
Յօժարեսցիս դըժկամակիլ՝
որ ինչ յառաջ քա՛ղցր էր կամիլ ·
Եւ որ յառաջ կամիլ ծա՛նր էր,
յօժարեսցիս իսկոյն կամիլ ։
Ա՛յսպէս խոտէ այր չափահաս
ըզմանկութեան ըզգործ տըհաս ·
Եւ 'ի խաղուց 'ի բաց փախչի,
ընդ որ հաճէր մինչ դեռահաս ։

[illegible]

Ոչ այլ կամի տըղայաբար
զընտել իւր խաղ՝ կոճատ և զար ·
Ընդ եղէգնեայ ձիս ծիծաղի,
յորըս յառաջ հեծնոյր երթայր ։
Ո՛չ ինկնի լումայս յորմէն ձըգել
'ի թիզ 'ի քիլ զերկիր չափել,
Կապիլ տոռամբ 'ի խաղակցաց,
և եզնօրէն բառաչ կեղծել ։

Ոչ գըծագրէ փոսս 'ի մանեակ ,
ընդ որս անցցէ ընդոստ գընտակ ·
Եւ ոչ վիգաւ յերկիր ձըգէ
ըղյարաբարդ վիգայ կուտակ ։
Եւ ոչ շըրջեալ զիւր գըլխանոց
ցընցէ զ՚փոքրիկ Միտալ Սըրբոց ·
Ծածկի՞ն արդեօք պատկերք նոցա ,
կամ ո՞ր արդեօք կընիք փողոց ։
Կապեալ աչօք ոչ ըմբըռնէ՝
որ զողըն իւր լախտիւ գանէ ·
Եւ ոչ ցանկայ զաչըս նորա
զի Թաշկինակ քօղարկեսցէ ։
Ոչ յառկախեալ 'ի յակուըջին
վերաբազմի 'ի տախտակին ·
Մերթ 'ի գետին ոտիւք դոփել ,
մերթ 'ի ձեռուն առաստաղին ։
Ոչ 'ի սենեակ կերպարանի
մանկիկ երէց փոքր 'ի բեմի ·
Ընտես առնէ կաւակերտել
տուն և գըզեակ 'ի շիւղ յարդի ։
Ըյպէս գիտէ չափահասակ
խօտել զ՚մանկան խաղըս պիտակ ·
Գիտեն և ծերք խօտել ըզգործ
չափահասից անփորձ և խակ ։
Առեալ ըղբոց զեթերական
'ի սիրտ մանքուր անախտական ·
Եւ նոյնհետայն աշխարհ աղքատ
յաչըս քոյին գըտցի խոտան ։

Ծանրատաղտուկ է մոլութիւն ,
քաղցր է միայն քաջարութիւն ·
Յորժամ սրտին առաջնորդէ
աստուածային Սիրելութիւն ։
Երբ խոտեսցես բնաւ զատիս ,
շնորհօք երկնից հարստասցիս ·
Եւ առ խոտել տացեն քեզ զայն՝
զշնորհք երկնից կանխեալ յոգիս ։
Խնդրեա՛ ըստէպ աղերսահայց
զայս բազմագանձ շնորհ նախընթաց ,
Յայնժամ լիցի՛ս սերտ սիրելի ,
յորժամ լիցիս դու մեծագանձ ։
Բայց զի լիցիս դու սիրելի՝
փոյթ կալ ջանիւ պատուոյ յարգի ·
Պատիւ ըսպաս՝ գեր զամենայն
են յանկուցիչ սիրոյ սրտի ։
Երիտասարդք որսան սովին
ըզ սիրտ հաճոյ օրիորդին ·
Իւրաքանչիւր մի ըզ միով
մրցի յաղթել պաշտմամբ անձին ։
Ամէն վաղ քաջ յառաւօտուն
և յերեկեան կանխել ժամուն ,
Յուշիկ ձեմէ ընդ այն փողոց՝
յորոյ վերայ վանք են նորուն ։
Ոչ ցուրտ Հիւսիս ըզսա կասէ ,
և ոչ Շընիկ տապով խարշէ ·
Ի միգապատ յանձրևայոյզ
օդոյ երկնից ոչ զանգիտէ ։

Եթէ Գըրհոս ամպրոպաւոր
զջուրըն շըրջէ ըղկոր սափոր ,
Կամ թէ Ճայթէ փայլակնացայտ
ջահիւ Եթեր որոտաւոր ։
Ընթացակցի սիրապատար
իւր սիրուհւոյն 'ի սուրբ Տաճար ․
Եւ չամաչէ տանել ձեռօք
ըղբազմական ծառայաբար ։
Այլ ոք որում՝ ընծայք բացին
ըղծանրալուր սեմոց դըրանդին ,
'Ի ներս վազէ յերջանիկ յարկ
անձկացելոյ ապարանին ։
Եւ մինչ նըստեալ կազմէ կուսան
զիւր ոսկեվարս գէս գագաթան ,
Կայ խընդագին ունել ձեռամբ
ըղհայելին դէմ յանդիման ։
Յետոյ ցանեալ Կիպրեան փոշի
'ի գանգրացեալ իւր խոպոպի ,
Ծառայամիտ այն Սիրահար
կանխէ վարէ գործ նաժըշտի ։
Յայս ամենայն գործ պաշտամանց
զանմիտ սեղեխ՝ Սէրըն վարժեաց ․
Սորօք ծնանի սորօք աճէ
Սէր երկրաքարշ մարմնաւորաց ։
Ըզսէրըն սուրբ սընուցանէ
նըպաստահարկու յարգ 'ի սըրտէ ․
Օ այս՝ Գըթութիւն բազմապաշտօն՝
Է ծընանի և ըստածէ ։

Առաւօ- տեան գո- հութիւն :

Որդ 'ի յայգուէ յորժամ կանխիկ
ըղձքո թողուս մահի՛ճ ջերմիկ ,
Դարձո՛ յառեա՛ ըղձքո դէտակն
'ի քո փեսայ գերաշխարհիկ :
Ջերմ հառաչանք եռանդագին
Թէ՛ք երագունք սըրտիդ լիցի՛ն ,
Որով արթուն գեր 'ի վերոյ
միտք թըռչիցեն յեթեր վերին :
Թռչիցեն միտք ա՛նդ բարձրագոյն
յարժանաւոր 'ի գոհութիւն ,
Նըրախտագէտ լինել նըմին՝
որ պարգևեաց քեզ գոյութիւն :
Այդ գոհութիւնք՝ պա՛րտք են նըմա ,
է՛ն և ախորժ ձօնից ընծայ .
Սակաւ խընդրէ՝ հատո՛ նըմին .
պարգևըս մեծ պարգևեաց նա :
Նա՛ աւանիկ միշտ պարգևէ՝ Բ.
որ ըղտուեալ պարգև պահէ .
Նըրա զաւանդեալ պահէ պարգև ,
նաև յայնժամ տայ աւանդէ :

Բարեխօսու- թիւն տէրու- թեան մարմ- նոյ յեկե- ղեցւոյ :

Յետ գոհութեան մըւտ 'ի տաճար
'ի տուն Տ՛ին ահեղավայր :
Նու ծունըր եղեալ հեղջի՛ր նըմին
աղերս հայցմա՛ն խոնարհաբար :
Մի՛ 'ի պաշտման՝ մարմնոյ քո դիր
ըղձքեղ ժըլատ ցուցցէ՝ տեսջի՛ր .
Կիսամասնեայ պաշտօն ձօնել՝
գործ անարժան համարեսջի՛ր :

Ահեակ բարձիւ կորացելով
և կիսաբարձ աջու ծընկով՝
Ի՛ դըժպատեհ աղօթս առնել
պըղերգաբար առ սեղանով։
Այդ ծաղրողի է կերպարան ,
ոչ մաղթողի խոնարհական .
Օ՜ այդ եղանակ աղօթելոյ
ոչի՛նչ պատկեր տայ յերեւան ։
Մի՛ բազմախոյզ տըղայապէս
աչս 'ի յանցորդ յածեցուցես .
Ըզբիբ աչաց թափառական
կա՛լ 'ի գետին զոր պագանես ։
Մի՛ դարձուցես թիկունս ընդդէմ
'ի խընկելի՛ն սըրբազան բեմ.
Եւ մի՛ առ սուրբ ջուր օրհնութեան
կացցես կառեալ յեցեալ 'ի վէմ։
Այն ինչ փոփոխ եղանակեն
քաջ երաժիշտք յերգարանէն ,
Եւ մըրտէնիք բազմաբուրեանք
ըղտօնական սեմօք պատեն .
Յայնժամ 'ի ներս դիմել փութա՛
'ի տաճարին սուրբ դաբիրայ ,
Օ՜ ի կարասցես ուշի ուշով
ըմբռնել աղերս հանդէպ նորա ։
Ընդ քո տարփող աչք ձըգեսցի՛ն
'ի տես դիմաց սուրբ Փեսայի՛ն .
Նա՛ եղիցի յափըշտակիչ
եթէ՛ աչաց եթէ՛ սրտին ։

Մատու- ցումն աղօ- թից ։

Յայսըմ պահու դու լռելեայն Թ.
հատո՛ ըզհարկ օրհներգութեան .
Երկին ւերկիր իւրեանց Հաստչին
անլռելի են օրհնաբան ։
Զայս յայգորեն աստեղաց պար
յայգուն ՚ի շող լուսապատար .
Եւ Կինթիա ՚ի ցօղ ցըրտին [7]
եղանակէ երգ քաղցրաբար ։
Երբ Արշալոյս ոսկէծըղի [8]
զերկնից բացեալ ըզդրունս ոսկի ,
Եդեմնապատ ՚ի մէջ օդոյն
ածել ըզ տիւ մեզ պատրաստի ,
Նախանձաւոր լեալ աստեղաց ,
նոյն և Լուսնոյն ցօղատարած ,
Ըզ ցօղագին շարժէ շըրթունս
յերգ Բարձրելոյն հասարակաց ։
Եւ զի Փեբոս՝ արժանագոյն
փառըս տացէ անմուտ Արփւոյն
Զիւրոց կառաց փոկ զըսպիտակ
թօղու ձեռամբ ծիրանագոյն ։
Այն ինչ Արև բախէ ըզծագ
նախկին շողիւք ոսկեգիսակ ,
Ըզնորածին ճաճանչըս իւր
վարժեալ կըրթէ առ նոր նուագ ։
Վարժեալ կըրթէ հընչել նոցին
ըզքաղցր անուն զըստեղծողին .
Ունին ճաճանչք գեղանըշոյլք
ըզզօրութիւն ճոխում լեզուին ։

Հաւ կարկաչոտ ծափէ 'ի ձայն ,
ծափէ 'ի թև սաւառնաձայն .
Ոի ոստ յոստոյ թռուիչս առնու՝
երգաբանեալ ախորժական :
Եթէ թռչուն թևապարէ
եթէ շռուինչ եղանակէ
Օրհնաբանել ըստ զօրութեան
զիւր արարիչ նա գուն գործէ :
Որ հաւք օրհնեն քեզ լու 'ի լու ,
և զոր աստեղք՝ օրհնեմ և գու .
Ազգէն երկինք անխօսութեամբ ,
մի՛ լռեսցէ խօսուն լեզու :
Ազգէն երկինք աստեղընթաց ,
մի՛տ դիր արթուն՝ լռիկ հընչմանց .
Սիրտ ծանրալուր՝ յառի ապուշ ,
միայն 'ի շող լուսաւորայ :
Յեսսէածին սուրբ հագներգակ
տողէ սաղմոս տաղ հոգերգակ ,
Տաղ սըրտաբուխ եղանակեալ
սըրբոյ տաւղին առ 'ի նուագ :
Այն ինչ 'յօրոց ճըչէ Արփին , 9
այն ինչ աճէ յառոյգ 'ի տին ,
Եւ երբ ծերեալ զիւր լոյս սուզէ
'ի ծովական ջուր աղտաղտին ,
Ո այս փոխ առ փոխ եղանակէ
կուսակենցաղ գունդ 'ի դասէ .
Սա՛րթ է և քեզ դաշըն ձայնիւ
սաղմոս քաղել օրըստօրէ :

Երբ սաղմոսս գայ շար 'ի շար՝
Լինի անուն սիրապատար .
Օ՜ ի գո՛յ յայն տաղ անլռելի
անուն Լինի խընկապատար ։
Գան ընդ առաջ Սաղմոսողիդ
յաւէժ ներբողք քո փեսայիդ .
Լի են այս Երգք հոգենուագ
լի գովեստիւք քո Փեսայիդ ։

Պարտ է աղօթել մտօք ։

Բայց զի սաղմոսք քեզ քաղցրասցին ժ.
և 'ի հաճոյս Տեառըն լիցին ,
Ուշի ուշով եղանակեա
զայս նուագերգ աստուածային ։
Որ կամակար դատարկամիտ
զուամղէտ որոճ տածէ 'ի միտ ,
Յեռուէ ընդ միտ ըզ ցուրտ աղօթս
զոր ընդ բերան վիժէ անմիտ ։
Բանիցըս մտաց թափառական՝
կամաւ յածին աստանդական ,
Զայնք աղօթից փետրաթափեալք՝
յերկինս 'ի վեր ոչ թևանան ։
Խօս մարդկային կեղծէ թութակ ,
ըզ սաղմոսին կարդայ նուագ ,
Բերան նորա սաղմոս ասէ ,
բայց չաղօթէ խուրըն հագագ ։
Յաղօթել քում սաղմոսաց
սանձեա՛ զհոգած թռուիչ մտաց ,
Եւ մի՛ հողմոց հոսեր թափուր
ըզ քո հայցուած պաղատանաց ։

Յանկա՛ծ սըրտիդ դու մեծապէս
վառիլ 'ի քոյ Սերովբէապէս ,
Օ՛ի զօրացիր երգաբանել
ջերմեռանդ սըրտիւ անախտապէս ։
Լե՛ր երգակից դու 'ի կաճառ
քռաթեւից քաղցրաբարբառ ·
(Քանզի գիտեն բախել նոքա
զխմանալըն զոսկի կիթառ ։)
Ըզքոյդ յօդեա՛մ զօրհներգութիւն
ընդ օրհնութեան Սրբոց դասուն ·
Թէ ընդ նոցայն կըցորդեսցին՝
լըցցին սոքա հաճոյադոյն ։
Օ՛ր ինչ երկնից ձօնեմք յերկրէ
պաղատանաց ձիր դուզնաքէ ,
Յանմաքուր դիրտ կըղկըղանաց՝
այն ամենայն շաղախեալ է ։
Բայց յերակաց Աստուածական
հոսէ վըտակ բոսորերփեան ,
Մաքրել սըրբել զաղօթս անսուրբ
ըզձօնելըն ըզնուիրան ։
Լուա՛ 'ի շիթ Աստուածային
զոր ընձեռես նուէր նըմին ·
Օ՛ի փեսայիդ սիրեցելոյ
արժանաձիր նուէր լիցին ։
ԺԱ Ընտրեա՛ և զայն · ըզքո ձօնի
ո՛ր մատուցէ աջ սիրելի ·
Օ՛ի զընծայից ծանրէ կըշիռ՝
ընծայատուր աջ սիրելի ։ [illegible]

Զաստուածեան հարկ աղքատ և խուն՝
զոր վճարէ ամբիծ լեզուն ,
Կոյսըն մաքուր՝ աներկեան
զօրէ դընել հանդէպ որդւոյն ։
Ըզպատարագ զոր Մայր ձօնէ
մերժել յերմէ նա ոչ գիտէ .
Վասնզի ըզնա աջ ծընողին
հաճոյական նըմին գործէ ։
Զըստինըս իւր Մայրըն բանայ ,
զաղբիւր կաթին յիշէ նըմա .
Մեր աղօթից զոր նուիրէ՝
յարգ և արժէս նա ցանկանայ ։
Տեսեալ Որդւոյն զըստեանց պըտուղ՝
զոր դիացաւ մինչ էր մանուկ ,
Ըխորժալուր լսէ ունկամբ
ըզ մայրենին ձայն և անձուկ ։
Վաղցրաժըպիտ առ այն հրաւէր
և զ̊մեր առնու դոյզըն նըւէր .
Նոր մայրըն արար խըրովք պաշտմամբք
զայն հաճելի սըրբանուէր ։
Ընդ զուխտըս քո նըւիրական
յանձնեա՛ 'ի ձեռս 'ի կուսական ,
Ըխորժաբար ընդ դըրկեսցէ
մայրօրինակ նա նոյն հետայն ։
Զի ախորժէ արագաբար
կարկառել նա ձեռն 'ի սատար ,
Որդեգրելոց որք աղերսեն
գորովախիտ և մայրաբար ։

Բազում անգամ ինքնին օգնէ ,
 Թէ և ձայնիւ ոք չաղաչէ ·
 Բայց դու կանխեալ աղերսահայց ,
 զի օգնութիւն քեզ մատուցէ ։
Նոր 'ի կարգեալ ժամ պաշտաման
 հատուցանես զ°սակեալ պայման ,
 Լեր աչալուրջ մի՛ տիրեսցեն
 երիկամանց փառք ընդունայն ։
'Ի գործ պայծառ բերէ մըռայլ ,
 այդ գովեստից անմիտ տըռփալ ·
 Այսպէս տըխուր ժանգ խաթարէ
 ըզպղընձոյն տանի ըզփայլ ։
Ծըծէ ըզհիւթ քաջարութեանց
 որպէս զարիւն ազգ տըզըրկաց ·
 Ըզգանձ արդեանց կըրծէ վատնէ
 հալողական զօրէն ուտճաց ։
Վասն այն որքան 'ի տաճարին
 կաս 'ի պաշտօն աստուածային ,
 Մի՛ զայն առներ՝ զի աղօթկեր
 երևեսցիս ոյց 'ի զընին ։
Որ յուռուցիկ վարձ փանաքեայ
 սին գովութեան տարփմամբ ըղձայ ,
 Ոչ ըզԲարձրեալ փառաւորանէ ,
 այլ ինքն ինքեան հաճոյանայ ։
Օ որ կատարես սա հըլութեան
 սուրբ օրինաց աստուածական ,
 'Ի մարդկային բա՛րձ գովեստից ,
 և եղիցիս աներկեան ։

Պա՛րտ է փախչել 'ի անձնափառասիրութենէ ։

Գայ կեղծաւոր 'ի յասպարէս
'ի գոյն տըխուր ներկեալ զերես.
Հիւծ կերպարան կեղծէ յանձին
յանխուզ մօրուս՝ յերկայն 'ի գէս։
'Ի տենչ սաստիկ վառեալ լուցեալ,
Հըռչակ անուան անձին որսալ,
Զանձն համբաւէ յարգելական
'ի կերակրոց պարկեշտացեալ։
Քանիցս անգամ 'ի ծոմ լինիս,
յօժարակամ յոր ոչ հարկիս,
Լուա՛ յայգուէ զերես ջըրով՝
զի արտաքուստ դու մի՛ տեսցիս։
Նա ըստ դիպաց փող աղքատին
Թէ կարկառէ 'ի փողոցին,
Զաջըն մեկնեալ տայ նըշաւակ
ականատես անդ ամբոխին։
Իսկ դու յորժամ բաշխես ըզդանկ
չըքաւորաց առ 'ի ճարակ,
Գո՛ւն գործեսջիր՝ մի՛ գիտասցէ
ըզգործ աջոյդ ձեռնըդ ահեակ։
Նա յաղօթելն աղերսահայց
զիւրըն դողէ վաստակ բարեաց,
Եւ մատընցոյց իշխէ առնել
ըզպարտաւոր ընթերակաց։
Մի՛ զանձն առներ նախամեծար,
մերժեա՛ յանձնէդ ըզփուք յիմար.
Յայնժամ օգտէ զ̊մեղաց և եթ
'ի յուշ բերել զանթիւ համար։

Այսպէս զԱստուած հաճել մարթիս
և թողութեան արժանացիս ,
Յորժամ յաւէտ խոնարհագոյն՝
յայնժամ յաւէտ հաճոյ լինիս :
Յայնժամ տարափ առ 'ի յերկնէ
ըզքեւ հոսեալ ողողեսցէ ,
Զի 'ի ծործոր ջրարբի հովտաց
ուխ յորդաջուր հեղեղատէ :
Յետ սանձելոյ ըզմարմաջին
ըստամբալոյ զանուան փաղփին ,
Ջա՛ն տարագիր 'ի մեղկ սըրտէդ
ըզսողոսկեալ երկչոտութիւն :
Խուսեալ Նաւակն 'ի Փարիզեայ
խուսափեսցէ և 'ի Ակիւլեայ ·
Վա՛ւ յաղթական սին գովութեան
Սիրո՛ղդ դու զերկիւղ մերժեա՛ :
Որպէս ըզծափ առնես դու խաղ ,
այնպէս խոտեա՛ զանմիտ ծիծաղ ·
Մի՛ ձըգեսցէ համբաւ ըզքեզ ,
մի՛ հարթուսցէ կատակ և ձաղ :
Նաւ ոչ անմիտ պակաս իցէ
որ բարձրածաղր ունչս արասցէ :
Նաւ խածատող ժանեաք լեզուին
ըզգործ բարի եպերեսցէ :
Կամ յետ ըզքոյդ եպերելոյ
շատախօս մատամբ վաստակ բարւոյ ,
Ծիծաղաշարժ բան խառնեսցէ
ընդ ճըշմարիտ լուտանըս քոյ :

[illegible]

Բաջաղեսցէ այն խեղկատակ
ընդ ընկերաց հրճճել յառակ,
Մըպերհ շըրթամբք ժայթքեալ ըղքէն
բան լըրբենի զայս օրինակ.
Դա պատրաստի զաղձատ վեղար՝
առնուլ զուսովք պըղերգաբար.
Եւ զանարծաթ գուցէ սեղան՝
կազմէ անձին պորտապարար:
Ուր թխուրավիզ տըխրահայեաց
մըտեալ ընդ սեամ Սրբարանաց,
Ծընրադրութեամբ մաշէ անդուլ
զմարմարիոն սուրբ յատակաց:
Եւ հոլովեալ շուրընչաձայն
Հացեայ գընտակս 'ի խոր գեհեան, 19
Ուժով պարսից մետաքսէից
պարսաքարէ ըզՄեծ Դաղան:
Ծամէ զաղօթս առ 'ի սովոյ,
խըլէ զպատկերս 'ի սեղանոյ.
Տեսիլ դիմացն յանձին բերէ
ըզ տիպ Կուսին խոցեցելոյ:
Ըզխորհըրդոյն աստուածային
դարձուցանէ ըզ բարձ Տեառըն.
Ջերմիկ համբոյր ըստէպ տուեալ
սուրբ հանդերձից ժամարարին:
Ե՛կ մըկրատաւ հատցուք 'ի բաց
ըզվերարկուի նորա քըղանց.
Որոյ նըշխար կախեալ ընդ վիզ
պաշտպանեսցէ յԱլին ցասմանց:

Թերեւս այսպէս զօղանջեսցէ
անմիտ խուժան՝ և ծաղրեսցէ ,
Եւ ժայթքեսցէ բան թունաթափ
յԱխերոնեան արբեալ ճահճէ ։
Մ՛ի ունկնալուր ձայնք թունալի
ճարակ առցեն 'ի քո հոգի ։
Եւ մի՛ ըզսիրտ ցուրտ երկիւղիւ
վըլթարեսցեն անբուժելի ։
Թո՛ղ և հաչէ Սանդարամետ
ձայնիւ նոցա որք խելաժետ ,
Մ՛ի 'ի գործոյդ ձեռնարկելոյ՝
սըրտաթափեալ կասիր 'ի յետ ։
Յեկեղեցիս անդո՛ւլ դընա ,
'ի սուրբ պաշտօն բեմին կանխեա՛ .
Յաստուածային օրհներգութիւն
որպէս կանխաւ դու յաճախեա՛ ։
Չարսըն անձկոտ ցանկայ միակ
իւր փեսային դող ընդունակ .
Օ՛ որ նայն մերժէ՝ թողու 'ի բաց ,
յոր նա հաճի՝ առնէ կամակ ։
Գործք քո համայն՝ դո՛հ եղիցին
հաճոյանալ քում փեսային .
Ո՛ւա և հերիք դու համարեա՛ ,
թէ զոր առնես՝ հաճոյ նըմին ։
Օ՛ անմիտ ռամկին անդոսնեսջի՛ր
բան ապիրատ նախատադիր .
Ա՛յլ առաւել յողորկ բանից՝
զի մի՛ անկցիս՝ զահի՛ հարջի՛ր .

Պարտ է զգոյշ լինել 'ի Պինդարոսեան ճոխաբանութեան ։

Թերևս ուրուք մրտերմաբար
ծածկեալ 'ի քօղ բազմահընար ,
Ոտըս դարձո՛ քեզ ասացէ
առ 'ի շաւղաց դըժուարալայր ։
Թո՛ղ քաղեսցէ զՍաղմոսարան
սըքեմաւոր դաս արթնական .
Հաւատարիմ Հովուին քերթուած 12
այն արժանի քեզ ընթերցման ։
Թո՛ղ հառաչել ըզհեծութիւն
զողբանուէր Յեսսեայ որդւոյն .
Ի սըգալից շարժեալ նուագ-
սիրտ ընկըղմին 'ի դառնութիւն ։
Էրմինիա անտառադոյժ , 13
և Գըլորինտա հիւծեալ անոյժ ,
Կամ Արմիտա բանդագուշեալ ,
վարազախոյց Թամուզ անքոյժ ։ 14
Սոքա բերկրեն ըզսիրտ մըղձկեալ
առ 'ի բեռանց հոգւոց ձընշեալ .
Ո՛ր զխնդութիւն վըտարանդի
կոչեն եռմաք ըղձաձայնեալ ։
Պարզ դխակամիք բակք զարդարեալք 15
սեաւ տապանօք շըրջապատեալք ,
Ին ցըրտագին ուրուականաց
ոգւոց բընակք քաջ յարմարեալք ։
Արդ հի՛մ յաճախ առնես անդ այց .
ո՞չ . աղաչեմ՝ թո՛ղ անդր 'ի բաց .
Ի նեխ հոտոյն ժողխեալ արիւն՝
գործէ զերակ դանդաղամած ։

Այժմէն գիտեմ զանդամբս քո
ընդարմացեալ խրցմամբ ծակուցյ ․
Մարմին բոլոր այլագունեալ
'ի տիպ նորոգ գեղին մոմոյ ։
Առ կազդուրիլ վաղ և դիւրաւ
մուտ գիշերի յուրախ կաքաւ ․
Կամ քաղցրասցի քեզ Թէատրոն ,
ոգի զուարճ 'ի խաղ անբաւ ։
Յորչափ յոսկի փայլէն գիսակք ,
ցորչափ 'ի յԱյտ՝ շուշանք ձներմակք ,
Բաղեա՛ ըղվարդ 'ի քոյդ կապել
'ի գագաթան գեղադիտակ ։
Հասցէ ըշտապ հասակըն այն ,
յոր գօսացեալ մորթք թուլանան ․
Եւ ձիւնասցին հերք անօսրունք
'ի դանդաչոտ 'ի գագաթան ։
Երբ ըսկըսին ոտք դեդևել
'ի յօդատանջ ախտըս անել ,
Եւ կոր քամակ ծանրաբեռնեալ
ըստիպեսցէ յերկիր նայել ։
Յայնժամ խոտեալ ըղձեշտ գըրդանք՝
յոյց եւ Վնասուց , ոչ գոն խափանք ,
Ուր կան տըխուր դագաղք ըսփիւռ ,
ուր կան և շուրջ դամբանարանք ․
Խի՛ց դու զականջ՝ խի՛ց մըտերիմ ,
յայսպիսի ձայն գեհենածին ․
Օ՛ ի ընդ ողորկ աղու բանիւք
դաւաճանող թոյնք դարանին ։

Բայց զի մի սիրտ մեղմով լուծեալ
առ Թըմբրութեան ներգոյացեալ՝
Յառաջադիր 'ի դիտմանէն
վերջնանեայի ընդարմացեալ,
Յետ քեցելոյ ըզգուշաբար
զունկն 'ի յողոք ձայնից մոլար,
Ուղղիր ընդ ունկն ոգեպահիկ
ճարակ յուռեաստ յօժարաբար։
Խայտան ալօջք մատաղագոյն
յուռել ըզմօրէ ըզՎխտխան. 16
Հօտք գեղմնաբարձք արօտականք
խուզեն ըզ սէզ պարարտագոյն։
Ի պակասել հըրոյն լուցկեաց
չիջանի հուր վառարանաց.
Յայնժամ ցընդի բոցն 'ի շոգի,
դառնան յաճիւն վառք կայծականց։
Ո՛հ մի հոգւոյդ քոյ ցընդեսցի
'ի ծուխ անդայտ ա'ի գոլոշի,
Զամենայն ճարակ լուցեալ հըրոյն,
որով սիրտ քո վառեալ այրի։
Պարտ է հատուցել յանձնընդ-բանութեան [illegible] Ընկա՛լ ըզսերմ բանին կենաց
աստուածեղէն սուրբ պատգամաց,
Ո՛ր ձոխ լեզու ցանէ 'ի սիրտ
յԱ՛մբիոնէ սուրբ տաճարաց։
Յորժամ մոխիր ըզգ°լուխ ծածկէ,
աստուածայնոց 'ի յուշ ածէ.
Նա սեւազգեաց բեմ տաճարաց
'ի հեծութիւն ըզսիրտ շարժէ։

Յորժամ յայգուն ազգ լերջական
  խորշի մատչել 'ի օպանդարան,
  Եւ ընդ երեկ պարկեշտացեալ
  զիւր չափաւոր ճըշդէ սեղան,
Յականջըս կայ աստուածայնոյ
  'ի լուր բանից ասացելոյ·
  Եւ զամենայն բան պատգամաց
  արթուն միտօք պահեա՛ 'ի ծոց։
Սերմըն պահեալ 'ի յանդ սըրտին,
  տացէ պտուղ քեզ երկնային·
  Պըտղաբերէ տոհմականօք
  սերմանապահ յուռթի գետին։
Առուք յորդաբուխք ոռոգեսցեն
  ըզսիրտ փըղձկեալ 'ի պատգամըն·
  Անդք ինքնաբոյս կանաչանան,
  ում ըստընտրու գետք դայեկեն։
Են արտասուք քաղցրակայլակ՝
  յորդախաղաց սըրտին վըտակ·
  Սովոր են աչք յոլովակի
  ջամբել միտաց առատ ճարակ,
Բանիցս անդամ միտք փութաջան
  զականջալուր բան որոճան,
  Եւ կամ աչաց ներգործութեամբ
  յիշէ ըզգիր խորհրդական։
Կարդա՛ յայգուն և գիշերի
  ըզհոգեշահ տառ մատենի։
  Գիրք ոգեշահք մատուցանեն
  յարօտ հոգւոյն ճարակ յուռթի։ Գործ է պարապել յոգեւոր վերծանութեան։

Ըզսիրտ ներքթեալ սա կազդուրէ ,
և ըզծիւրեալ սա պարարէ .
Ըզջաց շիջեալ կամ առկայծեալ՝
'ի լոյս ու'ի բոց սա ըստածէ ։
Աստ առ Սիրող միտք կաթոգին
խօսի փեսայն սուրբ երկնային .
Աստ միտք ներշնչեհ վերտարական
զիւրըն լըսէ ձայն փեսային ։
Գիրք ոգեշահք քեզ յայտ ածեն ,
յորո՞ց ժայռից ոտք խուսեսցեն .
Ընդ ո՞ր շաւիղ գընալ անքոյթ՝
քեզ մատնանիշ ուսուցանեն ։
Աստուածային շընչմամբ լընուն
զոգիս նոցա որք ընթեռնուն ,
Յո՛ր և նըման հեշտ Օփիւռին՝
ըղթուլացեալ կերպաս նաւուն ։
Ոչ այգունակ բուրէ պարտէզ
նորածաղիկ փըթթեալ առ մեզ ,
Որպէս շընչէ բուրումն անոյշ
հոգեխըրրատ գըրոց քարտէզ ։
Յայս մարդ զուարձ՛ թեւօք հոգւոյն
վերաթեւեալ յաձախագոյն ։
Այսպէս ձախորեն ըստէպ ըստէպ
մեղուացըն պարք բարձր 'ի Հիմետ ։ 17
Աստէն հոգին լինի հասու
գործել անձին խորիսխ մեղու ,
Իլիսական նըման մեղեր , 18
զոր ձաշակէ՝ յադուրդ չառնու .

Ի սոխ խըստոր և յիւղ պուտան՝
Նա տաղտկանայ յԵգիպտական .
Համեղանայ յայնժամ նըմին՝
երկնատեղաց հեշտ Մանանայն ։
Ընդ ըղԲարձրեալ քո Թագաւոր
ուսցիս սիրել սըրտիւ բոլոր .
Յայնժամ անցնիւր 'ի մարդկանէ
լիցի առ քև նըմին եղբօր ։
ԺԲ. Ո՛չ բերանով և ոչ սըրտիւ
սիրէ զԱստուած նա ըստուգիւ , — Որ սիրէ զԱստուած պարտի սիրել և զընկերն ։
Յորոյ 'ի սիրտ բորբոք սիրոյն
է գաղջացեալ ամենայնիւ ։
Սէրն սիրող անխաբեբայ
ամենեցուն զաղխ բանայ .
Ամենայն ոք մօտակայուտ
է նըպատակ բոցոյն նորա ։
ԺԳ. Վասն այն զընկերս առ հասարակ
զոր միանգամ սիրես յըստակ , — Նաև զընկերս պարտ է սիրել ։
Սիրեա՛ զնոսին եղբայրաբար ,
և առ սիրոյ Նորին միակ ։
Նաև սոսկ քո յայտնապէս
զանկեղծ սիրոյդ տեսցէ հանդէս .
Եւ ըզխեռեալ ըզպարանոց
ընդ երախտեաց լըծով արկցես ։
Թէ նետաձիգ 'ի լաւ անուն
ոխորտախօս լիցի լեզուն ,
Դու մի՛ անմիտ անարգանաց
չափեր փոխան անարգութիւն ։

Եթէ անմեղ ծընօտ աջեակ
Հընչէ 'ի բախ՝ զոր տայ դաստակ,
Դու մըտադիւր ըզմիւս ծընօտ՝
Հարկանողին մատո՛ յապտակ։
Մեր օժանդակ վընասողին,
տո՛ր թունաթափ զըրպարտողին
Ձեռք հարուածողք վընասաբերք
պարգեւ բարի 'ի քէն տարցին։
Քամբեա՛ ըզհաց առ թըշնամի,
դուցէ երբէք թէ նըքողի.
Եւ ըզծարաւ անցո՛ ջըրով
եթէ պասքեալ նա պապակի։
Եւ մի՛ գըրեր դըժուարագոյն
ըզպատուիրան քո Րաբունւոյն.
Քանզի անձին օրինակաւ
դիւրակատար արար ըզնոյն։
Որ աւանդէ՝ գործով լըցոյց,
զոր պատուիրէ՝ կանխաւ եցոյց.
Որինչ հաճոյ Տեառըն եղեն
վայել են այնք և ըստորնոց։
Եւ թէ օրէն առ թըշնամիս՝
տալ ըզսիրոյն քաղցր հաւատիս,
Ո՛ աղքատ տընանկ ե՛ս առաւել
որ չէ՛ ոսոխ՝ սիրել ունիս։
[illegible] Ձեռն անդանդաղ սատարեսցէ ԺԴ
մուրիկ խըմբին որ դեդեւէ.
Եւ խօթագին աղերսարկուն
'ի հոգ խնամոց վայելեսցէ։

Քո օգնութեամբ երախտարար
տեսցէ կարօտ եւ վշտահար՝
Տեղի տուեալ ըղձանըր վշտո ,
զի՛ւր քաղցրացեալ՝ զաղէտ երկար ։
Աղքատք նըրշդեհք օտարական՝
ածցե՛ն 'ի տուն ասպընջական .
Եւ եղիցի՛ն ձեռք քո գըթոտ
առ վշտատես անօգնական ։
Պաշտպանեսցէ՛ ըզգեստ տուեալ
ձըմերայնի զաղքատ մերկեալ .
Ի՛ զգալկահար սով բազմատանջ
փարատեսցէ՛ սեղան կազմեալ ։
Երբ բազմառատ գործես կոչիւն
մինչ 'ի պորտոյն 'ի պարպատիւն ,
Ոչ թողուս շանց կալ սովատանջ
որովայնիւ 'ի կաղկանձիւն ։
Մ՛ի թողուցուս հաչել աղեաց
եւ անսուաղ սինլքորաց .
Մ՛ի ոք բընաւ անճաշ անձամբ
կողկողեսցի հանդէպ դըրանց ։
Ի՛ զճոխութիւնս առատ Բաղդին
մեծ Տանուտէր տիեզերին ,
Ետ քեզ բաշխել մասն 'ի նոցունց՝
որոց առ դուրս 'ի մոյր շըրջին ։
Չե՛ս տէր ոսկւոյն զոր քեզ նա ետ .
այլ տընօրէն հազարապետ .
Ի՛ զմեղս ագահ տընօրինին
պատուհասէ Տէր գանձապետ ։

Խորտկավայել պորտապարար՝
որ սովելոյն չե՛մ ըզպատառ ,
Մատնեալ լուցկիք անշէջ բոցոյն՝
այրի՛ և արդ յաւէժավառ ։
Յիւրըն ծարաւ հայցէ կաթիլ
առ տապ բոցոյն 'ի ցօղադնիլ .
Եւ ոչ մի կաթ ծորէ լեզուին .
չի՛ք յաւիտեան բոցոյն խամրիլ ։
Ուսի՛ր դիւր տալ փոքր 'ի շատէ ,
տառապելոյն զոր աղերսէ .
Քեզ պատուիրե՛ն օրէնք ըզնոյն ,
հարկէ՛ պատիժ , սէ՛րն համոզէ ։
Գտցես ըստէպ 'ի փողոցի
դաս աղքատաց ողորմելի .
Եթէ լռեն՝ եթէ հեծեն ,
Նըպաստ խընդրեն կողկողալի ։
Խօսին վի՛րօք՝ խօսին որդւովք ,
ողորմ տեսլեամբ և հայցուածովք .
Թէ խըստացեալ փակես զաղխս ,
չի՛ք սէր 'ի քեզ չի՛ք և գորով ։
Եղբայր է քո անըստացուած ,
հասարակաց Հայր ձեր Աստուած .
Սիրեա՛ զեղբայր . սիրել ըզնա՝
քեզ պատուիրեաց Հայր քո Աստուած ։
Բաշխեա՛ ըզգանձ յօժարական՝
որով արկեղք լիք ծանրանան .
Բեռամբ ոսկւոյն և արծաթոյն՝
Ճըմլեալ քըսակք հեծեն ողբան ։

Դրամ ապագործ յարկեղ 'ի բանդ՝
Նիրհէ դանդաղ անարգաւանդ.
Պըտղաբերէ հարիւրաւոր,
յաղքատ 'ի ձեռս արկեալ յաւանդ։
Ոսկոր դիզեալ նեխի ինքնին,
այլ երբ ցրուի՝ անդք պարարին.
Ինձ քակորոյ խմա՛ հանդոյն
ըղձքս մըթեր գանձարանին։
Սըփռեա՛ սըփռեա՛ յաւելորդաց,
զի գընեսցես զերկին անանց.
Աստուած վաշխիւ հատուցանէ՝
զոր աջ գըթած տայ աղքատաց։
ժն Եթէ չիք հասոյթ 'ի տուչութիւն՝ Պարտ է գործել և [illegible]
մատո՛ զսըրտիդ փարթամութիւն.
Օգնէ սըրտիւ որ անձկանայ
յօգնամատոյց կարողութիւն։
Յաւե՛լ ողոք բան մըխիթար
'ի յիղձ լեզուիդ և 'ի բարբառ.
Բազում անգամ և բանք բարիք
են օգնութեան զոյգ հաւասար։
Կարո՛ղ ես տալ խորհուրդ բարի՝
երկբայ մըտաց որ ծըփծըփի,
Դանդաչելոյն հաստատութիւն,
և հեծելոյն ըղձլիւր սըրտի։
Առ բանտարգել և առ տենդեալ,
և առ 'ի թիս դատապարտեալ,
Գորովական սէրն համոզէ
յաճախակի 'ի յայց գընալ.

Մի՛ խորշեսցիս յայց ելանել,
թէ՛ և հոտ գարշ իցէ արգել.
Թէ՛ և շարաւ թէ՛ և խըլխայթ,
բայց և այնպէս փութա՛ յա՛յց ել.
Մի՛ դըժուարիր հիւանդ քըմաց
խահագործել ըզճաշ խորտկաց,
Եւ կըրակով ջեռուցանել
ըզյարդարուն տապաստ մահճաց:
Պաստառակաւ սըրբել ջընջեա՛
ըզթարախոտ ըզկեղ՚նոցա.
Ազնուաց տանց խօթացելոց
աւել ածել քա՛ղցր համարեա՛:
Զոր ինչ ՚ի յայլս առնես ըսպաս՝
ինքեան գըրէ Աստուած քո զայս.
Աջ բարեսիրտ ըզՏէր պաշտէ,
զոր ինչ առնէ առ պաշտօնեայս:
Յորժամ մարմնոյ դարման տանիս,
մի՛ լըքաներ ըզխօթ հոգիս.
Առ ՚ի բուժել դու ըզնոսա,
ըզբերանոյդ ըզդեղ ունիս:
՚Ի սպաս ձեռաց պաշտօնասէր
յաւէ՛լ խըրատ դու կենսաբեր.
Լեզու և ձեռք մի ըզմիով
գայցեն ՚ի վէգ երախտասէր:
Զոր դիպագոյն կարծես հոգւոյ
ըզնոյն նըմին դարման մատո՛.
Զի յարիցէ ազատացեալ
՚ի յախտաբեր ցաւոյն իւրոյ:

Յանցուցելոյն ցո՜յց թէ քանի՞
խոհերք մեղաց զազրաթորմի ,
Որ արտասուեալ ըզմեղըս իւր
'ի յանցանաց նահանջեսցի ։
Յաւագնի՞ ոք , յո՜ւշ ած նըմին
ըղձերս անմեղ իւր փեսային ․
փափաքելով կըրել բազում՝
դադարեսցի գոլ ցաւագին ։
Թալկացելոյն զանմահ կենաց
յիշել ըղձարծ ազդեմ մըտաց ․
Որ թալկացեալ նուաղեսցի
սէր անցաւոր աստի կենաց ։
Կազդուրեսջի՛ր զոգիս նոցուն
զոր խոնջ մարմինք առնեն նըկուն ։
Որ թեթեւեալք մըտցեն զուարթ
յանձուկ շաւիղ 'ի յերկնաչուն ։
Սոք կըրթուցեալք յամր ընթանան
նաեւ 'ի գիւր 'ի պողոտայն ․
Հազիւ սողայ նաւ բեռնաւոր
յանհողմ 'ի ծով խաղաղական ։
Յանցուածք՝ հոգւոյ են թուլութիւնք ,
բեռն են սըրտի եղեռնութիւնք ․
Գընալ յերկին խափան լինին ,
եւ կամ ուղղոյն են յամրութիւնք ։
Ծանըր մեղանք խո՜չ են գընալ,
իսկ որ թեթեւ՝ յամրէն զերթալ ․
Ո՞ր յանցուած թեթեւ պա՛րտ է խրատել
եւ ըզծանունս ջընջել բառնալ ։

Խրատել պարտ է զհիւանդեալս։

Եւ դու որչափ յառողջ մարմնի
հիւանդացեալ տեսցես զոգի,
Եւ զսիրտ ճըմլեալ ընդ ծանրութեամբ
եղեռնութեան մահուչափի,
Ձեռընկալու լինիր խորատուք
և դիւրեսջիր ողոք բանիւք.
Խըրատք բարիք՝ ռետին բուժիչ,
թեթևարար են բանք աղուք։
Բայց թէ տեսցես աճել ախտին
դըրդուողական բանիւ խըրատին,
Եւ սաստկագոյն ծանրիւ զանձամբ
տաժանաբեկ ճընշող բեռին,
Զի մի յաւէտ զայրասցի ցաւ
մեղկ և անոյշ ըսպեղանեաւ,
Եւ զի մի ոյժ նւազացեալ
ընդ սաստկութեամբ անկցի բընաւ,
Յայնժամ յաւէլ 'ի մեղմութիւն
զեռանդագին բոց նախանձուն.
Գողտրիկ բանից ո՛յժ մատուցէ
աստուածային սուրբ բարկութիւն։
Երբ մեղկաղէտ աջ զայրագնէ
ըզհըրնացեալ խըլխայթ դըժնէ,
Ձեռըն ճարտար խարէ հըրով,
կամ սըղոցաւ 'ի բաց քըրշտէ։
Զոր ոչ զըսպէ խիտ ուռենի
զափամբք հիւսեալ ըզհեղեղի,
Խուամբ վիմարդեայ սանձահարէ
ըզյորձանաց սաստ ամեհի։

Ըզմոլորեալ ըզմիտ խրատեա՛,
ըզսիրտ պաղեալ հրով տածեա՛.
Յընդոստուցիչ 'ի ձայն ահեղ
քուն մահաբեր լիցի՛ բացեալ։
Ըզմահաքուն թըմրողական
'ի բաց մերժէ հրաշէկ խարան.
Հրացեալ բաժակ զարթուցանէ
զընդարմացեալ մարմնոյն անդամ։
Քանիցս անգամ անգէտ օտար
'ի յերկիզուտ յածի 'ի վայր,
Ամենայն ոք յայտնէ նըմին
ըզգահավէժ վըտանգ դըժուար։
Յորժամ գըրաստ թօսեալ ընկճեալ
ծանր ըզբեռամբ կայ ըզգետնեալ,
Ձեռք մըտադիւրք վըտանգելոյն՝
սատար մատչին 'ի համբառնալ։
Որ մեղանչէն՝ շեղի 'ի բաց
'ի յուղղահետ երկնից շաւղաց.
Պիտի խըրատ դարձուցանել
'ի թիւրաթեք ճանապարհաց.
Կան մեղաւորք յորսայս գետին՝
բեռամբ մեղաց ողորմագին.
Ազդեա՛ ըստէպ յառնել 'ի վեր
ըզծանրութիւն թափեալ բեռին.
Պա՛րտի սիրել յաւէտագոյն՝
հոգի քան զանձն ազնուագոյն. [19]
Ո՞ւմ է գըրաստ՝ սիրելագոյն,
բայց թէ միայն ցընորելոյն.

Թէ ձեռըն տայ սիրողպէս
անկեալ եղըօր անտես առնես,
Զի՛ք սէր 'ի քեզ եղբայրական,
և ոչ բարուք զԱստուած սիրես։
Օ՜ի տաս հրաժեշտ լինել հաւան
առ պատուիրան աստուածական.
Թողուս զոգիս երամոլին
սուզիլ 'ի վիհ Տենարոսեան ։ [20]
Կատարինէ շուք Սենացւոց՝ [21]
զի մի՛ բացցի հողածնելոց՝
Տարտարոսեան այն Արքունիք
յԱխերոնեան պատեալ գետոց,
Յանկայր արդեօք յաւէժ նըստել
առ դըժընդակ սեմովք սրդել,
Եւ զիւր ըղձանջ դիմադրաւեալ
կարող լինել ըղձուտ փակել։
Յի՞նչ ոչ իշխէր ձեռնարկել նա
լոկ առ խընուլ զայն մուտ դըժնեայ,
Որ յօժարեաց դեհեան կըրել,
այլ 'ի մեղաց գոլով բացեայ։
Օ՜ի մի՛ հոգիք անկցին այսպէս՝
ձայն արձակել զի՞ հրաժարես.
Յարհամարհիլ Աստուածութեան
է՞ր համրացեալ զլեզուդ աղխես։
Որ միանգամ սիրով վառի՝
ընդ սիրելւոյն եպեր սըրտնի.
քանզի ընդ վիշտ սիրեցելոյն
սըրտառուչ լեալ յոգի խոցի։

Սիրողն՝ ըզվէր 'ի սիրտ կըրէ,
զոր սիրելին յանձին բերէ.
Ըզգաս սիրող քան զիւր ըզվէր
ըզխոց վիրաց՝ որ իւր ոչ է:
Դիմագրաւի 'ի հուր 'ի սուր,
յաչըս դընէ վըտանգըս բիւր.
Ցանկայ սուզել 'ի գետ արեան՝
վընաս զոր կրէ, և ոչ է իւր:
Խոցեն ըզսիրտ աստուածական
'ի սայրասուր սըլաք դաժան,
Գործք մահաբերք յառաջընթացք
անմահ մահուն 'ի խոր գեհեան:
Որ մեղանչէ զուարթագին՝
Թըշնամանայ սուրբ Փեսային.
Եւ ըզչարեալ սըրտիւ առ նա
նետէ նըմին 'ի զուր փըքին,
Օւէ անտեսես ըզգեհենոյն
չիջուցանել ըզտապ բոցոյն,
Որով վառեալ մոլին մարդկան
սիրտք խօլթացեալք բըլշակնագոյն:
Ըզմիտ նոցա ըզվարակեալ
յաղջամըղջին մեղաց մըռայլ,
Օւէ չախորժես լուսաւորել
ես 'ի սիրոյ զուրկ և յետնեալ:
Ցորոտաձայն լեզուիդ բարբառ
ըզմարդկային մերժեա խաւար.
Եւ զերկնառաք ըզպաղատանս՝
'ի ձայն լեզուիդ յաւել սատար:

Յոյս աշխարհի զուարճաբեր
ըզմեղսածին բարձցէ՛ գիշեր՝
Կենդանութիւն ազգի մարդկան
զ̊յաւէժ մահուն վըտանգս անբեր։

Պա՛րտ է թեթեւել նպաստիւ հոգւոց ննջեցելոց։

Եւ մի՛ միայն դու Կենդանեաց
սատարեսցես քոյոց եղբարց,
Այլ և նոցա՝ զորոց անգութ
կըտրեաց Ատրոպ ըզթել կենաց։ 22
Ի մէջ երկրի անդընդախոր
պարզի խորշ ինչ նըսեմաթոյր,
Սահմանակից խոր վիրապին
ծըծըմբաւէտ և ահաւոր։
Թողեալ հոգւոյն ՚ի մեկուսի ժԶ
ըզխորհս մարմնոյն ՚ի յաշխարհի.
Ընդ լուծանէ ըզսակ պատժոյն՝
եթէ գո՛յ ինչ լուծանելի։
Այրի տապի հըրոյն ՚ի ջամբ՝
աստուածային վառեալ փըչմամբ,
Վերաթևել անաղտ ամբիծ
՚ի հայրենին իւր պատըշգամբ։
Այսպէս ըզկաւ բոցք զատանեն
՚ի բըրածոյ ՚ի մետաղէն.
Այսպէս քարտէզք՝ անհարթ սընկով
ողորկելով յըստակ փայլեն։
Ոգիք բըծկանք կապեալք ուժգին
՚ի բոցավառ յանձաւ բանտին,
Ողորմ լալեօք գանգատաւոր
ձեռըն սատար ցանդ կողկողին։

Քանզի ելեալք քան ըզսահման
գործոց բարեաց արդիւնական ,
Ոչինչ զօրէն ամենեւին
բարեգործել յանձանց օձան ։
Արդ մատիր մօտ՝ լեր ձեռընտու ,
ընդ հեծելոց հեծեա՛լ եւ դու ․
Յորժամ հեծես կարեկցաբար՝
ցաւըն նոցա զիջեալ ցածնու ։
Յաւէ՛լ 'ի սուգ ըզպաղատանս ,
հեծեա՛ զՅովբայն ըզհառաչանս , 23
Զոր դաս երգէ աղերսակից
ընդ երգիոն յողորմ 'ի ձայնս ։
Մ՛ի ծանրասցի այցելութիւն
սեւազգեցիկ բեմից ժամուն ,
Ուր խիտ կերոնք վառին 'ի շար ,
շիրիմք խընդով ծըխեալ կիզուն ։
Մ՛ի առ տաճար երթալ արագ
յորդորեսցէ շարժուն կըրպակ ,
Ի՛ զեխութեամբ ազգի ազգի
հարեալ վըրան 'ի հրապարակ ։
Այլ Գըթութիւն ըստիպեսցէ
անդըր փութալ որպէս պա՛րտն է ․
Զի սա՛ միայն՝ ոգւոց սըրբոց
դիւր եւ նըպաստ բերել զօրէ ։
Սա՛ ըզգանտեն խաւարարգել
դիտէ զամուր ըզնիգ փըշրել ,
Սա՛ ըզկիզող խանձող հըրոյն
'ի բաց տարեալ շիջուցանել ։

Նշկանայ բոց քաւիչ հոգւոյն
  երբ առ շիրմաւ վառի կերոն.
  Ջուր օրհնութեան շիջուցանէ
  ըզմեղսավառ ըզլի՛ճ հըրոյն։
Այսպէս եղկլի տօթ ամարան
  ’ի տեղ տարափ յորդահոսան.
  Այսպէս մեղմէ սիւկ մեղմաշունչ
  ըզզայրագին ծովուն մրկան։
Բայց զի ոգի արագ սրբեալ ժե
  ելցէ անտի առ խոյանալ,
  Ի յարկ վերին հոգեղինաց
  առ ’ի խառնել ’ի դաս ընտրեալ,
Մատո՛ ըստէպ զոհ քաւչարար
  սուրբ սեղանոյն երկնակատար,
  Նա զերկնային ըզսեամ բացցէ
  առ մուտ ոգւոց որք ’ի խաւար։
Ա՛նդ նորոգին խորհուրդք փայտին՝
  կենդանարարք տիեզերին.
  Ա՛նդ զոհն Աստուած կայ առընթեր
  յաղթող վանիչ Տարտարոսին։
Զոհ անարիւն ա՛նդ զենանի
  խորհրդական ’ի սուրբ բեմի.
  Բեմ անարիւն մեզ կանգնեցաւ
  ընդ արիւնոտ Բեմի խաչի։
Թէպէտ Սեղան ոչ տամկանայ
  հեղմամբ արեան ոչ երփնանայ,
  Բայց ըզհեղեալ արեան ունի
  զանբաւելըն ձիր Աստուածեայ։

Զայս մատուցեալ գի՛ն փըրկանաց ,
լուծցի՛ն սարի՛ք խի՛ստ կապանաց .
Լուծցի՛ խաւար , և զերծ հոգի՛ն
ելցէ՛ 'ի պար լուսաւորաց :

ժԲ. 'Ի զընդանաց խաւարայնոց
յորըս քաւի՛ն ոգիք Սրբոց ,
Ըզսիրտ և զաջ վերաբերեա՛
'ի յերկնայի՛ն յարկ ընտրելոց :

Ուխտիւք հայցեա՛ զՍրբոց նըպաստ
զերագահաս և միշտ պատրաստ ,
Եւ որ այլոց սատար լինիս
մաղթեա՛ ինքնի՛ն՝ սատարիլ աստ :

Տո՛ւր Երջանկաց պատիւ արժան
զի քեզ տայցեն ձեռն օգնական .
Քանզի պատիւ տուեալ նոցի՛ն
քեզ 'ի յօգուտ շըրջեսցի այն :

Զի երջանի՛կ այն գումարտակ
յաչըս Լի՛ն սիրատենչակ ,
Ըզերասարկու ժողովըրդեան
յօժարաբար գայ յօժանդակ :

Ըզվի՛րէժ ցասման խոտեալ Լի՛ն
առ 'ի դերև հանէ՛ նոցի՛ն .
Պարգևս առատ խընդրէ՛ յաճախ
տառապելոց որք կարօտի՛ն :

Սասըն սիրող հայցէ՛ սըրտից
ըզնորանոր բորբոք ջահից ,
Պաղջացելոց ընդունի նա
արծարծանել զխանձող կայծիս :

Պա՛րտ է
հարկաւ
յօգնութեան
զՍբրս ըւնել
կոչել թա-
գաւորեալս:

Քաղցըր առ ինքն ունի զԱստուած՝
բարեբաղդն այն ում վիճակեաց
Յինքըն ձըգել զհաճոյ աղերս
աստեղազարդ Ապարանաց ։
Թէ սիրողին է անձկագոյն
նըպաստ երկնից Աւագանւոյն ,
Ե՛ւս առաւել պարտ է ըղձէր
յանկուցանել իւր Թագուհւոյն ։
Աստեղազարդ գըլուխ նորա , ԺԶ.
զանձամբ Արփին՝ պայծառանայ ·
Յուպ արքենի 'ի յաջ փայլէ ,
է բարձրագահ մօտ առ Արքայ ։
Յաղթէ պայծառ փայլմամբ իւրով
Աւագանւոյն երկնաժողով ,
Որպէս Արեւ նորափըթիթ
զաստեղաց պար յաղթէ լուսով ։
Իշխէ 'ի գահ յօգոստաւոր
և ծառայեն Երկինք բոլոր ·
Զիշխանութիւն Գերիշխոյութեան
ունի յՈրդւոյն իրաւամբք Մօր ։
Ետ միածնին իսկակից Հայր
իշխանութիւն գերակատար ·
Եւ Միածին Մօրըն իւրում
զայն աւանդեաց ծայրապատար ։
Շահեա՛լ ըզ սիրտ ըզՏիրածնին
սուրբ պաշտամամբք եռանդագին ·
Մ՚ի ըզփոքումբք զանց արասցես ,
նաև փոքունք հաճոյ նըմին ։

Երբ եօթնամթիւ տօնք տարեկան
Աստուածամօր առնուն շրջան ,
Ուշի ուշով և սուրբ հըսկմամբ
և ծոմապահ փափուկ կալ զայն ·
Որչափ տեսցես յանցըս փողոյն
զարձան և տիպ ըզՏիրուհւոյն ,
Ա՛ռ ըզտեղի՝ բա՛ց ըզգըլուխ
և խոնարհեալ ասա՛ Ողջոյն :
Ասա՛ Ողջոյն՝ յորժամ զանգակ
հընչէ ձայնիւ 'ի յաշտարակ ·
Քանի՞ լիցին ժամք տուընջեան
ժամք գիշերոյն՝ տալ նըշանակ ·
Երբ ընթեռնուս դու եռանդուն
գիրս աղօթից մըտօք արթուն ,
Ջերմ համբուրեա՛ ըզսուրբ քանդակ
անուշանուն Մարիամուն :
Ստէպ դարձո՛ զհընգետասան
թիւ Պըսակին խորհըրդական ·
Շըրթունք և ձեռք մըրմընջեսցեն
'ի յայն մըրմունջ սուրբ պաշտաման ,
Սիրէ անչափ՝ Որդին ըզՄայր · Որ սիրեն
սիրե՞ս զՈրդին՝ սիրեա՛ ըզՄայր · զՄայր որ-
Կամի Որդին զի սիրեսցես դի սիրեն և
խանդաղակաթ զիւրոյին Մայր : զնոյ Մայ-
Սիրոյն զոր Մօր հատուցանես , րենն :
Որդին զիւր սէր չափէ առ քեզ ·
Նա պատուիրէ Մօրըն իւրում
մայրօրինակ սիրել ըզքեզ :

Զոր տաս վըճար Սիրոյ Որդւոյն,
  զիւր սէր չափէ քեզ Մայր նորուն.
  Զի սիրեացէ Որդին ըզքեզ
  հայցէ յՈրդւոյն Մայրըն սիրուն:
Սիրեա՛մ ըզԿոյս Աստուածածին
  ընդ Միածին Աստուածորդին.
  Յայնժամ ուսցիս սիրել բարւոք,
  յայնժամ սիրուն լիցիս նըմին:
Արդ աջողակ լեալ հողմավար
  ունի այժմէն զանքոյթ դադար.
  Ոչ եւս են պէտք Լաստափայտիս
  ոչ առագաստք ո՛չ Թիավար:
Խումբ երկնային խայտայ պարէ,
  Քաջ Սիրողաց ծափս հարկանէ.
  Երբ երկնային տօնեն հըրճուանք
  լըռեա՛ Մուզա ափ՚ի բերան:

Այս է երանական կեանք, խնդալ 'ի քեզ, Ա
զքէն, և վասն քո. այս է, և ոչ այլ: Օգոստինոս:

Ճշմարտապէս երջանիկ է (մարդ,) ոչ թէ ունիցի զայն զոր սիրէն, այլ թէ սիրեսցէ զայն որ սիրելին է: Նոյնն:

Եւ թէ Աստուած է ծայրագոյն Բարին մարդոյ, զհետ գայ ստուգիւ, թէ փափագել ծայրագոյն Բարւոյն՝ է կեալ բարւոք. Զինչ չէ կեալ բարւոք ոչ այլ ինչ է՝ բայց սիրել զԱստուած յամենայն սրտէ, յամենայն ոգւոյ և յամենայն մտաց: Նոյնն:

Ոչ ինչ իցէ գեղ ներքին դիմաց, բայց եթէ Բ
մաքրութեան: Բեռնարդոս:

Ո՛չ կարեն սիրել զնա՝ զորոյ ատեն զպատուի- Գ
րանս: Օգոստինոս:

Ո՞վ իցէ որ ասիցէ. Սիրեմ զՀայր, այլ ատեմ զօրէնս նորա: Յայսմ ճանաչէ Հայրն թէ սիրես զնա, եթէ պահեսցես զօրէնս նորա զգաստականս: Նոյնն:

Արդեամբք ցուցանելի է սէր, զի մի լիցի վարկպարազի անուանականութեան: Նոյնն:

Որպէս աղջամուղջք զաչս, նոյնպէս մեղք զմիտս խաւարեցուցանեն, և ոչ թողացուցանեն տեսանել ոչ զլոյս և ոչ զինքն: Նոյնն:

Որպէս կեանք մարմնոյ է հոգին, նոյնպէս

չեանց հոգւոյ՝ Աստուած ։ Որպէս մեռանի մար-
մին ՚յարձակելն շնչոյն, նոյնպէս մեռանի հոգին
՚ի խոտորանելն զԱստուած ։ Արդարեւ Աս-
տուծոյ մահ հոգւոյ . արհամարհանք հոգւոյն՝ մահ
մարմնոյ ։ Մահ մարմնոյն՝ հարկաւոր, մահ հոգ-
ւոյն՝ կամաւոր ։ Նոյն ։

Եթէ յարել ՚ի նա (այսինքն յԱստուած) չեմք էն, մահ է ապրելն հեռանալն ՚ի նմանէ ։ Նոյն ։

Յորժամ եղիցի առաջարկութեան պայմանաւոր, կամ յանցանել ըստ պատուիրանս Աստուծոյ, և կամ եղանել յաւելի կենացս, յորոց երկոցունց զմին ընտրել ատելեացն մարդ՝ ՚ի սպառնալ հալածչին զմահ, անդ ընտրեսցէ մեռանել՝ սիրելով զԱստուած, քան թէ կենդանի դառնացուցանելով զնա ։ Նոյն ։

Ընտրէ մաքուր ՚ի մեղաց և անմեղ երթալ ՚ի գեհեան, քան պղծեալ աղտեղութեամբ մեղաց՝ մտանել յարքայութիւն երկնից ։ Անսելմոս ։

Դ. Մի՛ որ խաբեսցէ զանձն՝ սուտ ապաշխարութեամբ . մի՛ որ ՚ի զօրութիւն իւր յանձնապաստան լիցի վտանգաւ ։ Օգոստինոս ։

Օգտակար եւս է մարդոյ ճանաչել զանձն տկար, քան կամիլ հզօր երևել, և եղանել տկար ։ Նոյն ։

Վտանգաւոր ապահովութիւն է ննջել առ ընթեր օձի ։ Հերոնիմոս ։

Մի՛ ամօթ համարեսցուք փախչել . զի քաջաւոր է այս փախուստ՝ փախչել յերեսաց մեղաց ։ Ամբրոսիոս ։

Որպէս պա՛րտ է մարդոյ համբերել մահուան քան մեղանչել մահուչափ, նոյնպէս և ներելի : Թովմաս Ագուինացի : Ե

Թէպէտ չեմք անանց մեղաց, բայց ատեսցուք զայնս, և մանաւանդ 'ի մահուչափիցն հրաժարեսցուք . հրաժարեսցուք բաց չարէ 'ի թեթևաց : Օգոստինոս :

Այնպէս ողբայր զմեղս թեթևս, որպէս թէ պարտաւոր գոգցես զնա մեծամեծ ապիրատութեանց : Հերոնիմոս զսրբուհւոյն Պաւլայ :

Բարեաց մտաց է՝ անդ ևս ըստ իրաց ինչ նշմարել զմեղս, ուր չիք մեղք : Մեծն Գրիգոր :

Օձն այն որ հարկանէ զխիղճ մարդոյ, խոս- Զ
տոճն լեր խոնարհութեամբ, մաքրութեամբ և հաստատարմութեամբ : Բեռնարդոս :

Անհնար է մարդոյ ցորչափ է 'ի մարմնի չունել գէթ մեղս թեթևս : Այլ զոր թեթևս կոչեմք՝ մի արհամարհեր : Եթէ արհամարհես 'ի կշռելդ, զարհուրեսջիր 'ի թուելդ . բազում թեթևք առնեն զմի մեծ : Բազում շիթք լնուն զգետ . բազում հատք գործեն զդէզ : Եւ ո՞ր յոյս կայցէ : Յառաջ քան զամենայն՝ Խոստովանութիւն : Օգոստինոս :

Եթէ առ տկարութեան կենցաղոյս 'ի ներքս ողողեցին մեղք, հայեա՛ց 'ի նոյնս մեղս, ապաշաւեա՛ մեղս, և դատապարտեա՛ մեղս : Ալոնն :

Մեղայ մեղս մեծամեծս : Խռովի խիղճ մըտաց, այլ ոչ ծփեսցի իսպառ . վասն զի յիշեցից զվէրս Տեառն . եթէ զի վիրաւորեցաւ վասն անօրէնութեանց մերոց : Բեռնարդոս :

Զի՞նչ այնպէս ազդու 'ի բժշկել զվէրս խղճի մտաց, համայն և 'ի սրբել զաղս մտաց, քան ըղ-ջութաջան մտածութիւն վիրացն Քրիստոսի ։ Նոյնն ։

Բարկացիր զի մեղար, և պատուհասեալ զանձն մի՛ ևս մեղանչեր ։ Օգոստինոս ։

Զի հաստատեցի սիրտ սուրբ, բեկցի՛ անսուրբն ։ Նոյնն ։

Լիցուք անձանց անհաճոյ՝ յորժամ մեղան-չեմք, զի մեղք անհաճոյ են Աստուծոյ ։ Նա-զի չեմք առանց մեղաց, գէթ յայսմ նմանեսցուք Աստուծոյ, զի այն ինչ անհաճոյ է մեզ, որ ինչ նմին ։ Նոյնն ։

Է Մաքրութիւն սրտին լինի առաքինութեամբք և պարգևօք ։ Անտոնիոս Պադուացի ։

Մեծութիւնք ձեր չեն քանցին, այլ առա-քինութիւնք զորս ընդ իւր տանի խիղճ մտացն, զի յաւիտեան մնացուն լիցի ։ Բեռնարդոս ։

Ը Որչափ առաւելու 'ի քեզ Սէր, առաւելու և գեղեցկութիւնն. զի նոյն ինքն Սէրն է գե-ղեցկութիւն հոգւոյ ։ Օգոստինոս ։

Թ Զի՞նչ լաւագոյն ունիմք 'ի մտի, և բերա-նով արտայայտեմք . . . քան Շնորհք Աստուծոյ ։ Զայս չէ մարթ ասել ոչ համառօտագոյնս, ոչ լսել զուարճագոյնս, ոչ իմանալ քան զայս մե-ծագոյն, և ոչ առնել պիտանագոյն ։ Նոյնն ։

Որդեակ սոք են Սիրոյ . . . Ոչ ոք կարող է ասել ։ Բայց են նորա սոք, զի նոքին ածեն առ Եկեղեցին ։ Նոյնն ։

Ամենայն ուստեք ամենայն արարածք հնչե-

ցուցանեն քեզ զԱրարիչն. և նոյն իսկ ազգք ազգք արարածոց՝ են բարբառք իմն օրհնաբանողաց Արարչին: Նոյնն:

Գոհութեամբ նորա առ որ ուղղեն աղօթս, սովորութիւն է յանկուցանել զբարեյօժարութիւնն: Նոյնն:

Ի սաղմոսելն մի այլ ինչ խորհեսջիք, բայց զոր սաղմոսէք: Բեռնարդոս: Ժ

Աղաչեսցիր, այլ՝ մտօք. մի մարմնով, այլ՝ ոգւով, այլ՝ եռանդեամբ, այլ՝ հոգւով: Նոյնն:

Զսակաւն զայն զոր մատուցանել ցանկաս, ԺԱ
փոյթ կալջիր աւանդել ՚ի հաճոյագոյն և յամենայն ընդունելութեան արժանի ՚ի ձեռս Մարեմայ, զի նա ինքն մատուսցէ (Աստուծոյ,) թէ չկամիս հանդուրժել երեսդարձութեան: Բեռնարդոս:

Կեղծաւորաց է՝ յաղօթիցն ժամ ընծայել զանձինս ՚ի տես այլոց, որոց պարտ է՝ հաճոյ լինել մարդկան: Օգոստինոս:

Ոչ նահանջել ողոքանօք, ոչ մոլորել պատրանօք, և ոչ սրտաբեկիլ նախատանօք, այս է սիրել յամենայն սրտէ, յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ: Բեռնարդոս:

Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած, և ԺԲ
զեղբայր իւր ատիցէ, սուտ է: Ի՞նչ ցուցանես՝ թէ սուտ է. լուր: Որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես, զիա՞րդ կարիցէ սիրել: Օգոստինոս:

Զմարդ թշնամի վասն զի առ ոչինչ է՝ ըստ որում ոչ սիրէ զԱստուած, ապաքէն ոչ կարես

սիրել զնա իբրեւ զանձն քո՝ որ սիրեաց զԱստ-ուած. Բայց սիրեա՛ զի սիրեսցէ։ Բեռնարդոս։

ժԳ Ի՛ է ողորմութեան, ինքն է հատուցել ողոր-մութեան։ Ինքն է՝ որ սիրէն, ինքն՝ որ սիրէ եւ գտանելին իսկ։ Օգոստինոս։

Ընդարձակեսցէք զսէր ձեր եւ առ թշնամիս. զերծո՛ւք աներկեանք։ Նոյնն։

Սիրանէ այնմ (Աստուած է՛) որ սիրէն ըզ-քեզ, եւ զբարեկամն 'ի քեզ, եւ զթշնամին վասն քո։ Նոյնն։

Գծնեա՞յ 'ի քեզ ոք. նմ՛ դծնեանայ, դա՛-տղծնա արա. նմ՛ ատեայ, եւ դա՛ ողորմեա։ Նոյնն։

ժԴ Որ ինչ քեզ աւելորդն է, հարկաւո՛ր է աղքա-տաց։ Նոյնն։

Նա չեղ զի ճանապարհ՝ զչենցալս զայս։ Գտեր զչեղ ոտքնեկաց միայնց, զի գնայք ճա-նապարհ։ Նա ոչինչ բառնայ, դու հարի ծան-րաբեռն ես ... փո՛ռ նմա յորոց ունիս. (որով) և՛ զնա հերահրես, և՛ զբեռն թեթեւացուցա-նես։ Նոյնն։

Տենչացայ 'ի հաթել զբոյն՝ որ չէր զծղրան. զընհալա արդար դատաստան՝ որ չէր անգութ ագահութեամբ։ Օգոստինոս։

Տամք զհող, եւ առնումք զերկինս. տամք ըզ-ժամանակեայս, եւ առնումք զյաւիտենականս։ Տամք զոր ետ Աստուած, եւ առնումք զնոյն ինքն զԱստուած։ Նոյնն։

ժԵ Վարժի սիրել եւ զընկերն իբրեւ զանձն. զի զոր ծանուցան եւ ոչ հարող իցէ՝ ածցէ հա՛մ մխիթա-

բութեամբ երախտեաց, կամ հրահանգութեամբ խրատուց, և կամ սաստիւ կշտամբանաց 'ի պաշտել զԱստուած : Նոյնն :

Որ ուղիղ սիրէ զընկերն, զայս պարտի առնել ընդ նմա. զի և նա ինքն սիրեսցէ զԱստուած յամենայն սրտէ, յամենայն անձնէ և յամենայն մտաց : Նոյնն :

Մտեղէք և գեհենի հրոյ, բայց ծանրագոյն եղիցի այն հուր քան զամենայն՝ զոր հնար իցէ մարդոյ կրել յաստի կեանս : Նոյնն : ԺԶ

Որ կարողասցէ ելանել 'ի մարմնոյ՝ հաղորդակից լինել աստուածութեան, թէ ոչ զերծցի 'ի հոգւոց մածեալս ընկեսցէ հուրն մաքրողական : Գրիգոր Նիւսացի :

Բաւականս գիտէ օգնել հոգւոց ևս և յետ մահուան՝ սրբազան նուէրն ճրկագործ Պատարագին : Մեծն Գրիգոր : ԺԷ

Զի զնոցայն (այսինքն է զՍրբոցն) պատուեմք զյիշատակ, մեզ է օգուտ և ոչ նոցա : Բեռնարդոս : ԺԸ

Զսրբոցն, կամ զհրեշտակաց և կամ ըզՄարդկան խնդրեսցուք զյաճախ ձայն մեր բարեխօսութեանս առ ողորմութիւն ամենագութ Տէրանչէն : Բեդա :

'Ի վտանգս, յանձկութիւնս, 'ի վարանս ըզՄարեամ խորհեսցի, զՄարեամ կարդա՛ : Մի՛ հեռասցի 'ի շրթանց, մի՛ հեռասցի և 'ի սրտէ. և առ ընդունելոյ զնորա աղօթից զօժանդակութեան մի՛ թողուր զկենցաղավարութեանն զօրինակ : Բեռնարդոս : ԺԹ

Աղաչեմք զքեզ Տէրունի, վասն այնր շնոր-հաց՝ որով զքեզ բարեգութն և ամենակալն Աստ-ուած այնպէս բարձրացոյց, և զամենայնն իւրև-ջեղ հնարաւորս գործեաց, որպէս զի զայնս ա-'ի նմանէ մեզ խնդրեսցես և ընկալցես. զի լրու-թեան շնորհացն արժանացելոց՝ 'ի մեզ այնպէս ներ-գործեսցէ, զի շնորհեսցի մեզ երբեմն բարե-գթութեամբ հաղորդս լինել երանաւէտ վարձուցն հատուցման: Ողորմեա:

Հ՛այրն բարերար աղօթեսցէ և ընկալցի վասն մեր: Նա ինքն հայցեսցէ և առցէ զճարևորն մեզ: Նա ինքն աղաչեսցէ զորդին վասն որդւոցս, զմիածինն վասն որդեգրելոցս, զտէրն վասն ծա-ռայիցս: Որդին բարերար լուիցէ Հ՛օրն վասն եղբարցս, միածինն վասն որդեգրելոցս, տէրն վասն իւրև ձրիելոցս: Ամէն:

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԵՐՐՈՐԴ ԳՐՈՑ

1. Պրովանսայ․ Այսինքն Սրբուհին Պլանշա, կամ Բլանշա․ Խասդիլ"․ Պլանշա, մայր Սրբոյն Լուդովիկոսի արքային Գաղղիոյ, զոր ծնաւ յամի տեառն 1215, և դաստիարակեաց յերկիւղ Տեառն։ Տես 'ի Վարս Սրբոց․ Հատ․ ԺԲ։

2. Կինեա․ Տես առորև 7․ Կինեա։

3. Սինլա և Քարիպտին․ են երկու վտանգաւոր ժայռք և անդունդք 'ի Սիկիլեան ծովուն։

4. Գոնզալ․ Սուրբն Ալոյզիոս Գոնզագա, որ և Լուիճի․ կրօնաւոր Յիսուսեան, պատանի հրեշտակակրօն։ Տես 'ի Վարս Սրբոց․ Հատ․ ԺԲ։

5. Գանգէս․ գետ Հնդկաց մեծ և հզօր, որոյ աւազ լի է փոշւով ոսկւոյ։

6. Պերուվիա․ Ծով․ ովկիանոս։ Յունարէն Բէլագոս։

7. Կինթիա․ Արտեմիս, կամ Անահիտ․ ըստ քերթողաց՝ լուսին։ Կինթոս․ է բարձրակատար լեառն Դելոս կղզւոյն․ յայս լեառն ծնան և սնան Ապողոն և Անահիտ։

8. Արշալոյս ոսկեծուփ․ Յաւասպելս՝ է դուստր Հիւպերիոնի և Եթրայի, կամ Տիտանայ և Երկրի, գեղեցիկ յոյժ․ քերթողք ընծայեն սմա վարդագոյն բազուկս և մատունս, յոյր ոտս և կօշիկն զոս Ոսկեծուփ և Վարդամատն։ Նկարի վերաբարձեալ 'ի զոյգս վարդագոյնս, զոր ձգեն երիվարք սպիտակք․ ունի 'ի ձեռին ջահ, կամ զամբար, և քօղ արկեալ զյետին կողմամբ գլխոյն՝ 'ի նշանակել զխաւարն գիշերային մթոյն։ Սա է՝ որ բանայ զդրունս երկնից։

9. Ածխնի 'յօրոց, և այլն․ այսինքն յելս արևուն, 'ի հասարակ աւուր, և ընդ երեկս․ այլաբանութիւն նմանաբերեալ 'ի հասակ մարդոյ։ Բանաստեղծք կեղծեն սուզանել արեգական յՈվկիանոս, կամ 'ի Ջուրս ծովուն։

10 · Հայեաց գնդակն, և այլն · այսինքն դարձուցանէ զՎարդարան, կամ մատուցանէ զՊսակ Կուսին, որոյ հատք են յօրինեալ 'ի Հացւոյ, յոսկերէ, կամ 'ի Գոֆոյէ, և այլն · և Թելք 'ի մետաքսէ, որովք որպէս Թէ արձակէ պարապարս 'ի բեւեռս ։ Ըստ այսմ ընդ խաղ և հեգնօրէն խմէ և զբանս յաջորդ տանց 'ի վերայ պաշտօնասէր տնձանց ասացեալ 'ի դիմաց ծաղրածու և բաջաղկոտ Թուլակրօնից, որք այսպիսի անհեԹեԹ աղձատանօք ընդ վայր հարկանեն յայլս զաղօԹասիրուԹիւնն՝ յորմէ Թափուր զանձինս տեսանեն ։

11 · Ախերոնեան · ըստ քերԹողաց՝ Դժոխային, Տարտարոսեան ։ Ախերոն, էր անուն զանազան գետոց · յորս Եպիրոսեանն Ախերոն՝ է երևելի վասն վնասակար և դառնահամ ջուրցն, որոյ սուզեալ և 'ի գետին՝ ետ առիԹս բանաստեղծաց մտաբերել յայսպիսի կեղծիս ։

12 · Հօվիւ Հաւատարիմ · է Հովուական առասպելաբանուԹիւն ինչ Սիրոյ · որոյ քերԹող է մեծանուն իտալացին Ճիամպատիստա Կուառինի ։

13 · Էրմինիա անփառաֆոյծ · Օրիորդ տարփաւոր · որոյ յայլակերպս եղեալ և 'ի խնդիր անկեալ տարփաւոյն, մոլորի յանտառս, դուժէ և լոյ զաղէտս մոլեկան սիրոյ ։ Գօլրինտա, կամ Կլօրինտա, դշխոյ այրասիրտ, սպանեալ 'ի Տանկրեդեայ 'ի մենամարտիլ իւրում ընդ նմա ։ Արմիդա, կամ Արմիտա, վհուկ՝ մոլեգնեալ և ցնորեալ 'ի վրիպել իւրում 'ի Ռինալդոսէ սիրելւոյ ։ Զայս ամենայն բանաստեղծական կեղծեօք անԹեւեԹէ Տորքուատօ Թասսօ իշխան իտալական բանաստեղծից յերգս իւր անուանեալ Երուսաղէմ Ազատեալ, կամ Կօֆրէտօ ·

14 · Թամուզ, որ և Ադոնիս · էր որդի Կինարայ արքային Կիպրոսի ։ Յորսալ իւրում 'ի լերինն Իդայ՝ սպանաւ 'ի Կնճէ · էր մեծապէս սիրելի յաչս Ափրոդիտեայ, յորմէ և փոխարկեցաւ յետոյ 'ի ծաղիկն կոչեցեալ յանուն՝ Անեմոնէ ։ Հին հեԹանոսք՝ սուգ մեծ կատարէին յաւուր մահուան սորա, զորոյ զանո

որ պաշտօն յանդիմանէ Եզեկիէլ Մարգարէ և 'ի կանայս Եբրայեցւոց: Առասպել սորա աղէտալից՝ ստորագրի յՄվեգիոնէ:

15. Գաւիթ դժոխամէտ բանէ զարդարեալ· Գաւիթք ե-կեղեցեաց պատեալք տապանօք մեռելոց:

16. Կիփիոն· Է Թուփ ինչ ախորժելի խաշանց, այծից և մեղուաց:

17: Թիմոն· Ծոթրին բոյս և ծաղիկ անուշահոտ, մեղուաց սիրելի:

18. Ելիւսեան· ըստ հեթանոսաց՝ Ելիւսեան դաշտ, կամ Ելիւսիոն, է մարմանդ ինչ զուարճալի՝ բնակարան ոգւոց Երանելեաց յետ մահուան:

19. Հոգի քան շունչն աննիւթագոյն· այսինքն քան ըզ-մարմին:

20. Վիհ Տենարոնեան· ըստ քերթողաց՝ Տարտարոս, գեհեան: Տենարոս, կամ Տենարոն է սարաւանդ ինչ Լակոնիոյ· կայ անդ քարանձաւ խորխորին և աչա-գին, ընդ որ լինի իջանել 'ի դժոխս ըստ կեղծեաց նոցա:

21. Կատարինէ լեռ Սինայեայ· Տե՛ս Վարք Սրբոց. Հատ. Ժ:

22. Աւրորայ· Տե՛ս 'ի վերոյ. Գիրք Ա. 21:

23: Հեծեծա՛ն Յովբայն ըղձաւորելոյն· Ակնարկին առ-վաւ զանազան մաղթանք եկեղեցւոյն Լատինացւոց առեալք 'ի բանից գրոցն Յովբայ, զորս երգեն 'ի պաշտաման հանգստեան ննջեցելոց:

ԱՐՀԵՍՏ

# ԲԱՐԻՈՒՔ ՍԻՐԵԼՈՅ

ԿԱՄ

## ԱՐՀԵՍՏ ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԵԱՆ

---

## Գ Ի Ր Ք  Ե Ր Ր Ո Ր Դ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Որովհետեւ 'ի Սէրն Աստուծոյ զանազան են աստիճանք, Բնարեւք Սերովբէն յորդորէն յայս երրորդ Գիրս՝ անյօդակ ոտնել առ գերագոյն աստիճանն, օժանդակութեամբ աստուածային շնորհաց : Սան որոյ եւ Աստուծոյ որ շարժէ ըղձերս առ կատարելութիւն, պարտ է եւս եւ եւս առնել պատրաստական՝ զի մի դարձուցէ զերեսս իւր, ցուցանէ այս յԱռաքելոյ Առաքելոյն. եւ թէ պէտք զանձնայն զիւրս եւ զիւութ 'ի բաց առնել, ապացուցանէ մեծանչնելոյ օրինակաւ արբոյն Աղեքսանդրոս : Ո՛նչուածս Մարթայ ( բայց շատ ... եւ անյօդարեալ ըստ ... ) ... եւ յօրինաւոր ... , եւ ... ... , որք ... Գնեցաւղոն ... ... 'ի ... , ... հեմանք կատարեալ Սէրոյ : Բանն ... նոյն Սէրն՝ ... եւ ... խօսել զԱստուծոյ, եւ ըստ օրինակի Հարուէն որ յԱռաքել Առաքելոյ՝ քաղցրութեամբ յորդորականս առնէ : Յանցնէ նոյն մեծապէս համապատարեան ներքնայոս-

թեան Աստուածոյ, արարածովքս եւս առ Արա-
րիչն, եւ յաճախ կիրառութեան աղօթից՝ որք կայ-
ելեալք ոսկեբերանն կոչել *Օրհնասացք*, կամ
*Սրբալսանք*, եւ *Երաժշտական շարժմունք*:
Նշանակեալ շօշափ Մտածութեան, բացատրէ
մտածելոյն եղանակ, եւ առաջի դնէն պատճառ
եւ դեղս Յամառութեան որով երբեմն վշտանայ
հոգի: Հոգեկան արթեցութեան մտաց օտարացե-
լոյ 'ի շփոթմանց, եւ յառելոյ 'ի նկատողութեան
աստուածայնոցն՝ կշռէ կշռորդա Խորհրդական
Աստուածաբանութեան: Սուրբ եւ անձեղ Հան-
գիստ այն՝ որով 'ի Բարեկար մոլորութենէ ան-
դի Հանգստականաց: Տէր Թովմայեան ( կամ
Մանդակունի,) Տէր Գործող, Տէր Ներսէսեալ
եւ Տէր Փոխանէրդէն, (որոնք անտանանկայու-
թեամբք որոցն Հոգեւորք չլանալ աստեմնա
մաքուր Սերոյն) համառօտ բացատրէն: Ընդերք
ածէ Հարան, այսինքն Սուրբ եւ ետանդնող հո-
գին՝ ծագել թախանձանօք, զի քաջկութեանց հայ-
րենեացն՝ յորս (դեռ յաջորս գոլով) լնուլէ եւ
յաճախ յղփանայ, դէպ շնաք: Երբեմն՝ զի 'ի
ծանրացուցանել յոյժ մարմնոյն, անզօր է տանել
այնոցիկ: Եւ երբեմն՝ զի մեծահոգի առաքինու-
թեամբ հրաժեշտ տայէ յայնցանէ, առ 'ի մեծա-
գէս շարշարել յատուէ կեանս, եւ առ 'ի շարշա-
րանէց լինելոյ երկնաւոր Սերովբէն: Ներքին ա-
տեանն Սերոյն՝ որով հոգի միանայ ընդ Աստու-
ծոյ, բաղդատէ ընդ նախընթացեցն, եւ բացայայ-
տէ խտեր՝ 'ի մէջ այս անձնայն ատեանաց նշա-
նակելոց 'ի որերոյ Մարգարէտաց: Յետոյ ստո-

րագրին երջանիկ ելս հոգւոյ Սերովբէ 'ի մարմնոյ աստի, և յաղթական մուտ նորա 'ի Հրեղէն երկինս, ուր զծայրագոյն Նարեկին' յոր առ կենդանութեամբ 'ի մարմնի յարեցաւ սիրով, տեսցէ պայծառ դէմ յանդիման, և սիրեսցէ 'ի յաւիտեան ։ 'Ի վախճան ամենայնի' 'ի վերայ ածի երբև ինչ, թէ առ այս ճշմարիտ Լուսաւորութեան և մաց յանձալք' որ 'ի վեր է քան զամենայն բան, պարտ է անդադար դնել ախորժակօք սրտի ։



Սէրն աստուծոյ սփռեալ է ՚ի սիրտս մեր,

Յետ Մուզայիս աջողելոյ
մասըն բարի վայելելոյ՝
Զաստեղազարդ Ապարանին
կայըրդական տօնից խընջոյ,
Բուռն հարկանէ դարձեալ բախել
զիւրըն Կիթառ՝ զոր եդ հանգչել,
Եւ զոր ուսաւ 'ի լըռութեան՝
զեթերական պատուէրս երգել։
Հըմուտն յԱրհեստ սիրոյն ճարտար՝
թէ՛ և լցէ յանքոյթ դադար,
Եւ գիտիցէ մինչ ցոր վերջին
սիրել բարւոք արուեստաբար,
Թէպէտ Սիրողք ոչ կարօտին
ոչ պաստառաց ո՛չ թխակին,
Թէ պահեսցեն զորըս ուսան
զերգեալ խըրատս աստուածային,
Բայց և այնպէս պա՛րտ է մարզել
որոյ են կամք բարւոք սիրել,
Առ եռանդեամբ և վաղագոյն
'ի ծագ սիրոյն վերելակել։
Ա՛ զի շատ նաւք միահաղոյն
ընթեւս իւրեանց պարզեն հողմոյն,
Սա՛ անագան և նա՛ արագ
հասեալ բըռնէ զափըն ջըրոյն։

Մի՛ բոց աղօտ մեզ շողշողէ ,
և միւս յաւէտ փայլատակէ ․
Եւ ոչ աստեղք ՚ի լոյս հանգէտ
Ճառագայթեն մեզ ՚ի յերկնէ ։
Արդ զի անզոյգ լուսով շողան
խարոյկք լուցեալք եթերական ,
Եւ աստիճանք յանախտ ՚ի Սէր
են բազմաթիւք և զանազան ․
Երգեցից ես առ առաջնոք ․
Օ՜ի նոր խըրատք գո՛ն առ սոքօք ,
Առ լաւագոյն եւս սիրել
այն որ ուսաւ սիրել բարւոք ։
Ուսոյց Արհեստ զի՞նչ սիրեսցես ,
ետ ըղՍիրոյն օրէն պէսպէս ․
Մընայ գործոյս մասըն վերջին՝
զիւր կատարման առնուլ հանդէս ,
(Երկրորդ (կամ պայման) սիրելոյ մասն ։) Սա երգեսցէ ուսուցանել Ա
զոճ և պայման քեզ ՚ի պահել ․
Եւ ո՞ր է այն ոճ սիրելոյն ։
Ե՛ւրս քան զնս է միշտ սիրել ։
Ըստոյգ սիրոյն միակ պայման՝
է ոչ ունել չափ և պայման ․
Անգէտ է նա առ ՚ի սիրել՝
որ որոշեալ պահէ պայման ։
Սիրել քաջին հերիք ասին ,
բայց սո՛ւղ է այս քաջ սիրողին ․
Որ քաջ սիրէ՝ ոչ հաւատայ
հերիք և շատ սիրել անձին ։

Քո սուրբ Փեսայ չընաշխարհիկ
է սիրելի՛ սիրով սաստիկ.
Նա զամենայն սաստիկ սիրէ,
պա՛րտ է և քեզ սիրել սաստիկ:
Չէ բաւական սըրտին բորբոք
Թէ՛ և սաստիկ բազմաբորբոք.
Ո՛ր քան ըղձեր արժանապարտ
միշտ փոքրագոյն է այն բազմօք:
Ո՛ անչափն Աստուած՝ անչափ սիրով
պա՛րտ էր սիրել և ոչ կըշռով.
Անհամեմատ և անարժան
է սէր առ նա սեղմեալ չափով:
Հըրդեհք սիրոյ Սերափիմաց
որով սուրբ միտք են բորբոքած՝
Աճիւն են այնք. Հա՛րկք են նոքին,
ո՛չ արժանիք Տեառըն իւրեանց:
Այլ զի սիրել որչափ արժան
և որչափ պա՛րտ՝ չե՛ս բաւական,
Սիրեա՛ զԱստուած բոլորասիրտ՝
որչափ կարող որչափ ժամն:
բ. Սիրտ քո ելցէ՛ 'ի բարձրագոյն
քան զամենայն կատար սիրոյն.
Յաւա՛ջ խաղա՛ անկասելի
կալ յաստիճան 'ի ծայրագոյն:
Այն ինչ սըրբեալ գոլով յաղտից
հաճոյանաս աչաց մաքրից,
Նաեւ ճոխութեամբ Քաջարութեանց
գեղեցկանաս Հաստչին Լւից,

Ըղձիցն ոգւոյդ ամենամեծ
ձըկտեսջիր դու առ մեծամեծ ,
Լե՛ր անդրադոյն բարձրաթըռիչ
և յօժարեա՛ց միայն առ մեծ ։
Կամի Աստուած սիրողն անբաւ
զի դու առ մեծ բերցիս կամաւ ։
Կա՛յ առ սըրտիւ բախէ ըզդուրս
և ապաժոյժ կոչէ առ լաւ ։
'Ի խուէւ Աստուածոյ գործ է նուաճումն փառ գործոյն։ Բա՛ց բախողին ըզսիրտ արագ ,
տո՛ւր կոչողին բան ախորժակ ․
Եթէ վայր մի յապաղեսցես ,
երթայ 'ի բաց , զո՛ւր է վաստակ ։
Այսպէս ազդեն հեղգ սիրողաց
աստուածեղէն բանք պատգամաց ․
Վըկայէ զայս և Հարսն 'ի նիրհ՝
'ի ձայն ողորմ հառաչանաց ։
Փեսայն ու Երգ Երգոյ՝ առ դուստր Հարսին ։ Գիշեր անլոյս խոնաւագոյն
պատէր զերկին 'ի քօղ ցօղոյն ,
Յորժամ Փեսայն կարօտակէզ
եկաց առ դուրս Հարսին 'ի քուն ։
Բախէր ասէր աղերսալի՝
բա՛ց ինձ մաքո՛ւր իմ Աղաւնի ․
Բա՛ց ինձ հայցեմ ըզսեամ դըրան
ո՞վ անուշակ իմ սիրելի ։
Մըրսի ճակատ իմ գագաթամբ
ըսպիտակեալ ցուրտ եղեամբ ,
Եւ խոպոպիք իմ կըռածոյք
Թանան 'ի շաղ երկնատարափ ։

Սահմա՛ն են կիցք ճանապարհին
'ի սառնորակ կաթուած գլխին ,
Եւ սայթաքել զոտից ներքան
գլուրասաղապ հող ցողագին ։
Բա՛ց ինձ Տէ՛ր իմ ըզդուրս հայցեմ ,
բա՛ց ինձ Հա՛րսն իմ ըզքեզ մաղթեմ ·
Դուրք թերաբաց դէթ մուտ անձուկ
ինձ մատուցէ՛ն՝ արգահատեմ ։
Այլ նա ձայնէ առ 'ի ներքոյ՝ Պատասխանի Հարսին ։
ծա՛նր է յառնել քաղցր յանկողնոյ ։
Գի՛րգ անդամոց փափկասընունդ
ահ արկանէ ցուրտն արտաքոյ ։
Ըզձորձ ջերմիկ եմ մերկացեալ ,
զի՛սրդ առից ըզգեստ պաղեալ ·
Ինձ ոչ ներբէն սառնամանիք
'ի գիշերոյս ժամ զօրացեալ ։
Եթէ ելից ես առ ժամայն
ըզփակաղակ պարզէլ դըրան ,
Փոշոտ գետին աղտեղեսցէ
ըզլուացեալ ըզսուրբ ներքան ։
Դարձի՛ր փեսայդ յա՛յնժամ դարձի՛ր
երբ բարձրացեալ Արև յերկիր ,
Ըզգիշերոյն ցուրտ վանեսցէ ,
յա՛յնժամ փեսայդ առ իս դարձի՛ր ։
Յա՛յնժամ բացից ըզներգահար
զերկոսին դուրս հեշտ և յօժար ·
Օ՛ի զօրասցին աչք ըզմայլել
յայդ գեղեցիկ սիրուն տիպար ։

Յօժարալուր յա՛յնժամ լուայց
ըզխօսողին ըզլան շըրթանց.
Եւ մատուցից պատասխանի
ախորժալուր քոյդ լըսելեաց ։
Որ զքո բազուկ որով յաղթես ,
զինմով յաղթեալ ուլամբ արկցես ,
Եւ 'ի ջերմիկ 'ի ծոց Հարսին՝
ըզցուրտ մարմին քո տածեսցես ։
Զի՛ աւարտեալ բանից նորա
յառնէ 'ի վեր դուռըն բանայ .
(Այնու զի Սէր՝ երկարագոյն
ոչ դանդաղեալ պըղերգանայ ։)
Սակայն չետես զոք 'ի նըմին ,
զի ա՛նց գնա՛ց իւր Սիրելին ,
Իբրև լուաւ ըզցուրտ պատճառ
յապաղանաց պըղերգ Հարսին ։
Ե՛կ փեսայդ իմ՝ ե՛կ առձայնէր ,
զանուն սիրոյն ըստէպ կըրկնէր .
Այլ չէ՛ր անդէն սիրուն փեսայն՝
որ առ 'ի կոչ պատասխանէր ։
Անկաւ 'ի խոյզ՝ սիրտ 'ի բերան ,
այլ ո՛չ եգիտ զիւրըն փեսայն .
Այլ և պահակք գիշերապահք
մերկացուցին զիւր ըզխըլայն ։
Հարուած գանից էառ սաստիկ ,
էառ և վէր բազմապատիկ .
Այն զի զըմուռ կաթեցուցին
նաև քընքուշ ձեռք իւր փափկիկ ։

Ուսե՛ր աստի երագ բանալ
զականջ առ ձայն աստուածարեալ.
'Ի վընասուց դոյզն յապաղման
լե՛ր անձնապահ ըզգուշացեալ,
Քանիցս ազդէ շընչմամբ ներքին
փեսայդ սիրուն ա̃ծային՝
Գալ մըտանել սիրողաբար
յիւր առագաստ թագուն սըրտին,
Ե՛ւ ընդ առաջ երագ երագ,
մի՛ զմուտ ձըգեր 'ի յայլ նուագ.
Ընդ երկնային Սիրոյն հանգչիր
դերակատար ծայրագոյն ծագ.
Եւ զի սըրբոյ առագաստիս
մասնաւորիլ արժանացիս,
Ընդանձառիցըն ծածկութեանց
ընդ զուարթնոց յոր խառնեսցիս,
Գ Ե՛ւ խորտակեա՛ զամենայն փակ
աշխոյժ ձեռամբ և ուժեղակ, [illegible]
Բարձըր ուղղոյդ յոր դէմ դընես՝
մի՛ կանգնեսցես չափ նըպատակ.
Առ սէր Յ̃ին մի՛ երկուանար
տարաշխարհիկ դընալ յօտար,
Մի՛ ծանրանար մի՛ ըզչարիր
զընտելական թողուլ դադար.
Մի՛ զօրասցին ծընողք սիրուն
ըզքեզ կասել 'ի սուրբ սիրոյն.
Եւ մի՛ դաշինք անկողնակցիդ
յետս ընկըրկել 'ի քո ուղղոյն:

Որ անվրդով զԱ՛ծ սիրէ Դ.
քաջագօտի զօսոս կոխէ .
Զերկնային Սէր քան զամենայն
նախամեծար առնել պա՛րտ է ։
Մեծի սիրոյն տիպ գեղեցիկ
զանձն ընծայեաց չքնաշխարհիկ ,
Աղեքսիոս Աւզոնական [2]
գահուն պարծանք գերազանցիկ ։
Դիւցազնական քախոստովոր. քոյն Աղեքսիոսի : Նա զհայրենին թող զապարան
ըզգահ ըզխուրձ ըզգանձարան , [3]
Եւ ըզնորոյ Առագաստին
զարդարութիւն ամուսնական ։
Գիշեր էր ժամ յոր Մորփէոս [4]
պատեալ 'ի մաք զճակատ անլոյս
Մուղէր 'ի խոր ըզհոգ սըրտից
'ի գետ Լեթեան 'ի սեւահոս ։ [5]
Զոլորտ հանուր Տիեզերաց
ծածկեալ էր Քուն թեւատարած , [6]
Եւ թըմրութիւն ախորժելի
գըրգռէր ըզխոնջ ըզբիբ աչաց ։
Աղեքսիոս միայն հըսկէր
անքուն ըզժամս անցուցանէր ,
Ապահովել զխուրըն փախուստ
խաղաղանիստ 'ի լուռ գիշեր ։
Ասաց 'ի չուն դիւցազնաբար ,
Հա՛րսն իմ եւ Մա՛յր կացջիք յամայր .
Այս հոյակապ դարպաս շքեղ՝
իմ հարսանեաց ոչ է յարմար ։

Երկի՛նք են ինձ՝ երկի՛նք դարպաս,
Ա՛ծ միայն իմ Մ՛այր և Հարսն,
Լաւ կենաց իսկ գըլխովին
եղից զԱ՛ստուած ես վերադաս ։
Պա՛րտ ինձ խընդրել պա՛րտ զԱ՛ծն իմ
յոտարոտի 'ի սահմանին,
Յորժամ զԱ՛ստուած ըմբըռնեցից՝
ոչի՛նչ սահման ինձ օտարին ։
Վասն այն ոչի՛նչ երկեայց զաղթել
նըրշղեհութեամբ վըտարանդել,
Եւ ընդ երկնիւք անծանօթիւք ՚
տառապագին կեանըս վարել ։
Ոչի՛նչ վըտանգք խափանեսցեն
զիմ գարշապար յապաղեսցեն,
Ոչ ձըմերունք անսաստ ծովուն
ոտնակաւել ըստիպեսցեն ։
Թէ եղեւին ընդ վէմ հարեալ
'ի մէջ ալեաց լիցի փըշրեալ,
Ուսցուք հերձուլ և պատառել
զամփոփ կոհակ վայրենացեալ ։
Ձըմեռըն խիստ դառնաբարոյ
անզօր յաղթել սըրտիս հըրոյ ․
Կա՛ր 'ի գըլուխ պատկառանօք
տեղի՛ տացէ բոցոյն իմոյ ։
Ա՛հ սոսափիւն ամենադրաւ
Թագաւորեալ յանտառս 'ի Թաւ՝
Ոչ հարկեսցէ ընդ դաշտ փախուստ
բերել 'ի յիս զեղջ ապաշաւ ։

Եթէ առիւծ սէգ ամեհի
ցընցեալ ըզբաշ ոխորտասցի ,
Կամ թէ վարազ մահ ըսպառնայ
գերանդաձայն կըռաժանի .
Ամրացուսցէ՛ ըզսիրտ անզօր
աջ աստուածեան ամենազօր՝
Օ ըսպառնալեօք ձեռովք ծաղրել
Ճիւա՛ղք վայրագք յարիւն սովոր :
Նա՛ եղիցի ինձ մըխիթար
պանդըխտելոյս յաշխարհ 'ի տար .
Նա՛ ունկընդիր իմ հայցուածոց ,
նա՛ եղիցի ինձ 'ի սատար :
Եթէ պըճնէ զանհոգ շուշան
'ի կաթնորակ 'ի պատմուճան ,
Եւ տայ աճել անջան անհոգ՝
'ի շաղ ցօղոյն արեւելեան .
Ոչ մերժեսցէ զիս յերեսաց՝
որ հ՞րամայիմ յայց սուրբ տեղեաց ,
Ամենուրեք յառաջատես
խընամք նորա ինձ մօտակայ :
Արդ առխմ՞ ոչ փարատին
զուր ահափետք զարհուրագին .
Հի՞մ դանդաչեմ՝ հի՞մ հեղգանամ,
ըզ յամրութիւն հերքել յանձին :
Դառնամ 'ի բաց ըզ յամրութիւն
'ի բաց գընայ երկչոտութիւն .
Յո՛ զիս ձըգէ քոյ աստուածեան ,
անդայթ ոտամբ դիմեմ 'ի նոյն :

Ո՞վ թէ զօրէր մարմին կրշռեալ
յամպոց վերայ գերամբարձեալ՝
Ընդ լուծական տարեր շաւիղ
սաւառնաթեւ 'ի խոյանալ:
Այժմ 'ի Սաղէմ պադանէի
խոնարհ յերկիր ոլորոյ շիրմի,
Յոր թաղեցաւ վաղու արդեօք
խաչաչարչար իմ Սիրելի:
Այլ զի եթեր մեզ անարգել
ոչ շնորհեցաւ 'ի նաւարկել,
Ըստիպեցայց ես անագան
ըղպաշտելին վայր տեսանել:
Ի վախճանի գերանական
տեսից աչօք ըզԴամբարան.
Այս յոյս քաղցրիկ զիմ թեթեւէ
զոր կրեմ վիշտ՝ օտարական:
Զե էր յանդեալ քան 'ի շըրթանց՝
մինչ 'ի սեմոց եւ հայրենեաց,
Թացան ծընօտք Երանելոյն
յերկարաժոյժ 'ի յարտասուաց:
Տայր Կինթիա՝ ջահ ցըրտագին [8]
'ի լոյս շաւղաց փախըստէին,
Օ երթ ուղեկից բարեմարդիկ
'ի տարադէմ երկար ուղին:
Նա աստեղաց պարք շողշողուն
ցուցանէին 'ի ցայտ փաղփուն՝
Յո՛ր կողմ ուղղել հաստատաբար
զանաւ շաւիղ իւր թափառուն:

Ջերմամբք խուրեանց փաղփինափայլ
հորդան տայլին քաջալերեալ,
Այլ վերջոտներ սեր ընդածին
ըզգաղթական վըտարանդեալ։
Ե՛ զի յերկնից ՚ի մօրն հայեր
՚ի նուաղեալ ողորմ պատկեր,
Դողդոջ մատամբք ցըտեալ վերեւս,
ցըտեալ զալխս արձակահեր։
Ե՛ զի ՚ի գիրկ Մահուն երկար
հանդէպ աչաց արձանանայր
Նուաղ դիմօք նորապըսակ
Հարսըն քաղցրիկ թողեալ անայր։
Անդ գըթութիւն գորովական
կասէր ըզքայլ վարանական.
Մերթ ոտք արագ եւ մերթ յուշիկ
ընթանային ըզպողոտայն։
Մին ՚ի Սիրոյ ձա՛յն տայր յուղին,
ձա՛յն տայր եւ միւս զընդդէմ նըրմին,
Չ՛եպ տալ դառնալ ըստիպաբար
յայրխացեալ տաճար յարկին։
Նա ըստիպեր ըզդիմակաց
ներբան ոտից յարագ գընաց,
Ում սա հրաման տայր դադարել
՚ի կեղակարծ տարտամ ընթաց։
Այպէս յորժամ դիմամարտիկք
խուժեն ՚ի ծով անսաստ մըրրիկք,
Նաւնու ՚ի վեր ՚ի կոհակաց`
յոր թաղեցաւ Ակատ փոքրիկ։

Սակայն յաղթեաց Սէր տէրունի ,
այն որ յաղթող յամենայնի ․
Յանձն Ալեքս եկաց իսպառ
յիւրում դիտման անդրդուելի ։
Ո՜ որ լինչ գործել գործ ուղղութեան
առաջադրես քո յանդիման ,
փո՛քր համարեա քան զիղձ քոյին
թէ չիցեն այնք դիւցազնական ։
Տե՛ս Դիւցազանց հաւատարել ,
բայց մե՛րս լաւ՝ նոցին յաղթել ․
Ո՜ ի բարձրելոյն սատարութեամբ
կարօղ ես դու զանցուցանել ։
Բայց զի նոցին հանդէտ իցես
միանգամայն և յաղթեսցես ,
Պա՛րտ և արժա՛ն զի ընդ երկար
զ՛նոցայն շաւիղ դու կոխեսցես ։

Պա՛րտ է նմանող լինել դիւցազանց ։

Այո անձո՛ւկ՝ այն պողոտայ ,
որով և գաղջ սիրող դողայ ․
Սակայն ոգւոյ բորբոքելոյ
յերկնային բոց՝ այն քաղցրանայ ։
Հարթի՛ լայնի՛ այն անձկահետ՝
յորժամ զընթնի դիւցազանց հետ ,
Արիաքայլ կընթնիք ոտից
յանկուցանէ ձըգէ ընդհետ ։
Ձըգեն ըզմեզ տիպք օրինակք ․
Սոքա դանդաղ մըտաց մըտրակք ․
Թէ չէք մըտրակ՝ սիրտ եռանդուն
վաղ գաղջանայ սառնատեսակ ։

Լաւ է ըղնաւ հողմաթռուիչ՝
վարել թիովք առ 'ի թռուիչ
Լաւ է մըտրակ խայթողական
և՛ նըժուղին օդաթռուիչ:
Տես ըղկաձառ սըրբանուէր
գիւմնագրեալ յերկնից Մոփեր.
Մոքա լիցին քեզ առաջնորդք
գերազանցել յաղթել 'ի սէր:
Ի՛ գործ բարեաց ըղձետ երթեալ
լաւագունից միշտ խընամ կալ,
Զամենալաւ զոր նըկատես,
զայն ընտրեսջիր՝ զայն դու պինդ կալ:
Բայց զի ըղքոյդ զանվեհեր ջան
հոգւոյդ կամաց արիական՝
Մարմին ըմբոստ մի պատրանօք
գերև հանցէ և ընդունայն,
Պարտ է նուաճել զմարմին: Արկ ընդ լծով զայն զօրապէս,
մի՛ գիւր ինչ տար, մի՛ գըդուեսցես.
Այդ խըստութիւն լիցի յօդուտ
ձեռնարկութեանդ արիապէս:
Հարկ՝ նըժոյդ դըժուարասանձ
լինել հնազանդ բերան 'ի սանձ.
Յուլ բըռնաբար առ խըթանեալ
ձըգէ զակօս զորով խեթկեաց:
Համ 'ի յաչաց ըղքուն սաստիկ
և 'ի քըմաց համ ըղխորտիկ.
Սընաս հոգւոյդ հասուցանեն
երկար հանդիստ սեղան փափկիկ:

Ե Այն ինչ մարմնոյդ տաս դիւրութիւն,
մի՛ կանխեսցէ յայն հեշտութիւն.
Եթէ գայ նա՝ լոկ մատիցէ
իբրև ընկեր 'ի յօգնութիւն։
Լիցի՛ հըլու՝ մի՛ իշխեսցէ,
իբրև նաժիշտ ըզհետ գայցէ.
Մի՛ տիկնաբար նա ճոխասցի,
յառաջաքայլ մի՛ կանխեսցէ։
Թէ և իցէ գոհ և հաւան
մընալ 'ի կարգ աղախնութեան,
Ո՛ընչեմ ըստէպ զի մի՛ գայցէ,
զի բազմասցին քեզ զանձք արդեան։
Զի մի՛ գայցէ՝ ուսո՛ր տանջել
ըզհամառօտ ըզքո նընջել.
Այսպէս երբեմն և ըզլեզուին
տես ըզճաշակ 'ի սով լլկել։
Լիցի՛ յարդեայ քոյին խըշտեակ,
ընդ սընարիւք կարծըր տախտակ.
Այդ անկողին դըժոխըմբեր
դիրդ հեշտութեանց չէ՛ ընդունակ։
Առ 'ի համեմ հանդերձանաց
օշինդըր ա՛րկ խոշոր խորտկաց.
Հիւթ դառնորակ և անամոք
ոչինչ հրապոյր ունի քըմաց։
Ըզդիւր մարմնոյն զանդորրալին
յեղափոխել 'ի վիշտ նըմին,
Մեր եռանդուն ուսոյց ըմբշաց,
ջանամ նըման լինել նոցին։

Ուսոյց 'ի փոկ յարջառաջիւ
արիւներանգ զողըն հերկիւ
Եւ յանըմբեր խորդ մազեղէն
ըզփափկասուն ըզմորթ խայթիւ։

Զաքաստա- րութեան պէտք են 'ի ճնշել անձն զմար- մինն։

Օրէ՛ն և դէպ դաժանանալ
առ 'ի մարմին ըմբոստացեալ.
Բայց սա՛նձ պիտի, զի մի՛ հոգին
'ի ձինչ մարմնի լիցի թօշնեալ։
Կայ 'ի յաքսոր վըտարանդի,
բայց ոչ 'ի բանտ յարգել նըստի.
Յորժամ շարժէ զանդամըս իւր
յորժամ ուղղէ մերըս հոգի։
Ըզգայութիւնք ծառայք հոգւոյն,
գործիք մըտաց են անկադոյն.
Մարմին խեղեալ չէ՛ ձեռընհաս
արբանեկել ըստ արժանւոյն։
Իյո պա՛րտ է նուաճել զայն,
բայց ոչ ջընջել իբր անպիտան.
Կատաղութիւն են այն ձըգունք,
ում Բանն ընտրող ոչ տայ պայման։
Ըսկըզընաչար օձըն դըժնեայ
գարանակալ 'ի սիրտ ըղձայ,
Զի պարտասեալ ըստիպեսցիս
թողուլ զանձուկ ըզպողոտայ։
Վասն այն ըստէպ 'ի միտ շըջէ,
ըզ խօլական ձիգըն սադրէ.
Զանադորոյն դիւտ և տարաղ
խոշտանգանաց մատուցանէ։

Ե՛ւ ընդդառաջ լարեալ հաղբից
մա՛ ըզՍարիւ քոյ ընթացից ,
Եթէ քարշել եթէ թողուլ
զերասանակ քոյ ընթացից ։
Արմա լեցի՛ն միտք քո հըլու ,
որոշեցի՛ն կամք զաչացու ,
'Ի գործ դընել զոր սա հաճի ,
և կամ թողուլ՝ զոր արգելու ։
Թէ արգելու զ՚մարմին խըզել ,
թո՛ղ ըզձաղկիչ 'ի հարուածել .
Եւ թէ շ՚նորհէ՝ առջի՛ր դարձեալ
զթողեալ վարոց առ 'ի ձաղկել ։
Երկաթախայթ գօտիք անձին
թէ հ՚րամայէ՝ խորտակեսցի՛ն .
Ա՛ծ ուժգնապիրկ ըզքո միջովք՝
թէ պատուիրէ քեզ վերըստի՛ն ։
Պահե՞լ ըզպահ քեզ հ՚րամայեաց ,
լե՛ր անսուաղ և ծոմակաց .
Պատուիրեա՞ց քեզ զի կերիցես ,
'ի պահելդ ըզգո՛յշ դու կաց ։
Է Պա՛րտ է անսալ Առաջնորդի ,
զի մի՛ օձ հի՛ն սըպըրդեսցի .
Որ առ խաբել կեղծիկ լուսով
Ճառագայթէ յոլովակի ։
Խօթ ոչ հեստէ առ 'ի խրատուէ
քաջ բըժըշկի՛ն զոր իւր ընտրէ .
Պահէ զինուոր երբ զէն առնու
զոր ինչ Սալար իւր պատուիրէ ։

Պա՛րտ է
վարիլ հա-
ճոյր Ա-
ռաջնոր-
դաց ։

Այլ երբ մարտիւ թեթեւագոյն
'ի վերջ կոչես ըզհեշտութիւն ,
Յայնժամ լիցիս դու ձեռընհաս
քաջ վայելել յաղատութիւն :

Չիք ինչ տեղի զառանցելոյ
և ոչ երկիւղ խոնջիլ մարմնոյ ,
Թէ ցանկութիւն հառաչեսցէ
նըկուն եղեալ յանզօր աջոյ :

Անկցի կոխան նա քոյ ոտից
երկար վարժիւք թեթեւ մարտից ,
Յորժամ ուսցիս զըրկել կամաւ
յախորժական 'ի վայելից :

Պարտ է ժուժկալել յօրինաւոր բերկրութեանց:

Հատջիր երբեմն 'ի զգայութեանց
զօրինաւոր ըղվայելուած .
Արութիւն մեծ՝ ոչ վայելել
յօրինաւոր 'ի բերկրութեանց :

Երբ հասանեն յիմարական
տօնք տարեկանք Արմըզդական , 9
Յայնժամ առատ քեզ հըրձեսցին
արմաւենեաց ոստք յաղթական :

'Ի փ՛լամինեան փախիր ուղւոյն՝ 10
յոր կառք երկձիք յաճախագոյն
Ոսկեքեղիք ոսկէանիւք
երթեւեկեն շըքեղագոյն :

Եւ մի վարձուք թէատրոնին
նըստիր 'ի խիտ 'ի բազմոցին ,
Թէ խաղասցէ Միմոս ըղխաղ ,
Թէ երգեսցէ ձայն զուսանին :

փութա՛մ յաւէտ 'ի յայց երթալ։
սուրբ Դամիանայ արեամբ զանդեալ,
Կամ բազմաջան պայծառադեղ
սուրբ տաճարաց գերազարդեալ։
Եւ կամ ընտրե՛մ մեկնիլ յայնժամ
յախորժելի լուռ Սենարան.
Լիցի յօդուտ մեկուսանալ
'ի շառաչմանց աշխարհական։
Քանզի այսպէս խոյս տաս 'ի բաց
'ի մերձաւոր յառթից մեղաց.
Ջեռի պատուարք են ապահով
'ի բազմադէմ խարդախութեանց։
Ո՛նդ ողբասցես արտասուալից
զանմիտ ռամկին զանբաւ ոճիր,
Եւ փոխարէն քոց արտասուաց
ա՛նդ հատուսցին վարձք լիալիր։
Ըզգօղ լալեաց որ 'ի սիրոյն՝
քեզ սըրբեսցէ Աստուած սիրուն.
Եւ զխեսցես դու կըշտապնդ
զեթերաբուխ խորխուխ մեղուն։
Սակայն թէ հոգք բազմադիմի
արգելուցուն քեզ տալ տեղի
Եւ ոչ շնորհէ վայր մի թաքչել,
յայնժամ արա՛ դու այսպիսի։
Թէ հարկեսցիս 'ի Կըրկիսին
բազմել 'ի բեմ տեսարանին,
Կամ յոսկեսար երիվարաց
արշաւանաց կալ 'ի զընին։

Ըզգըժկամակ զականջ քո լսից
առ լըրութիւն գեղգեղ ձայնից ,
Յորժամ կարի մարմաջէ այն
և ըղձածի քաղցր յեռմոսից :
Փակեա դու զակն երբ հանդէսք դան
'ի բազմահոյլ ժողովարան ,
Օ՜ որ հրաշակէ ձայն բոլորից՝
որում ծափէ շատխօս խուժան :
Թէատրոն կայսեր : Կայսր Արկադեան 'ի խաղ երթայր
'ի թէատրոն յոքնադումար ,
Այլ կողոպտէր յաչաց իւրոց
զախորժելին և բերկրարար :
Նա 'ի հընչել ռամկին 'ի ծափ
և 'ի կայթիւն ուրախութեամբ ,
Օ՜ աչս ամփոփեալ 'ի տեսլենէն
պըշնոյր յերկիր նա անթարթափ :
Քանզի խնթայր և զարհուրէր
զոլ հեշտութեան անձնանուէր
Թէ և մեղաց 'ի յարատոյ
այն գըլխովլին օտար լինէր :
Ծընեալ են աչք 'ի պէտս երկնի ,
պարտուպատշաճ ոչ է երկրի ,
Մատուցանել նոցա ձարակ
ակնապարար և բերկրալի :
Խընդրեն երկինք՝ խընդրեն ինքեան
վասն իւր ծընեալ զաչըս մարդկան .
Յանկայ նոցին զի անհամեցին
առատ խընդութիւնք ըստորինական ;

Մի՛ ընաւ թողցես անընտրաբար
  հրապոյրս աչաց վնասակար ,
  Եւ զանվնաս յոլովակի
  հաճե՛ր և բա՛րձ ինքնայօժար :
Ում ՚ի զննին գեղեցկութեան
  հաճո՛յ Հաստիչ գեղեցկութեան ,
  Հաճո՛յ նորին են գեղեցիկք ,
  այլ առաւել Հաստիչ նոցայն :
Երբ նահանջես ըզտեսութիւն՝
  զի մի՛ տեսցես գեղեցկութիւն ,
  Այդ գեղեցիկք չե՛ն քեզ հաճոյ
  քան զԱրարչին գեղեցկութիւն :
Գեղ հաստուածոց զաչըս կալցէ ,
  Հաստիչ ըզսիրտ գըրաւեսցէ .
  Բա՛րձ ՚ի յաչաց ըզգեղ Եւից
  զի մի՛ սըրտիդ սա խլեսցէ :
Երբեմն արդէ՛ն հոտոտելեաց
  ըզհոտ ծաղկանց՝ ծըխամոլեաց .
  Յունկըն տարփող մի՛ հընչեսցէ ,
  բայց թէ ցանցառ երգ նուագաց :
Բայց երբ տեղի տաս դու սոցին
  լեզե՛ր պատրաստ զըրկիլ ինքնին .
  Ջերմեռանդ սիրողք ոչ այսգունակ
  վայելուածոց ՚ի խայղ լինին :
Թէ յերգ բերի քոյդ ախորժակ ,
  ըզսըրբազան ընտրեա՛ նուագ .
  Լաւ յայնժամ բանք քաղցրացին
  քան զեղանակ քաղցրահագագ .

Չէ՛ պարտ մըտաց յարիլ այնպէս
յերգոց նուագ դաշնակապէս ,
Մ՝ինչ ծանրանալ թողուլ զեռամոս՝
յորում միտք ախորժապէս ։

Պա՛րտ է հրաժարել 'ի տարա-պարտ ընդ-վայրաքըն-նութենէ ։

Որո՞վ փութով առցես 'ի բաց թ.
զունայն ճարակ 'ի լըսելեաց ,
Եթէ վայել է նուագել
զօրինաւոր ըզվայելուած ։
Ոչի՛նչ օգտէ 'ի յամարան
մուտ 'ի կըրպակ երեկոյեան ,
Եւ ուսանել զի՞նչ նորալուրք
'ի վիպագիր թուղթ ամսական ։
Զանցըս մըտից աշխարհական
և զուխտ դաշանց խաղաղութեան ,
Յանկայ գիտել որ ո՞հետ վարի
դատարկապորտ անգործութեան ։
Զի՛ փոյթ է քեզ թէ ո՞պառաւիկ
առցէ մանուկ գեղածաղիկ ․
Կա՛մ օրիորդ չըքնաղադէմ
ըզձառադէմ զալէորիկ ։
Մա հե՞մ յաքսոր առաքեցաւ ․
'ի տոկոսեաց նա շահեցա՞ւ ․
Որո՞ւմ այն միւս 'ի ժամ մահուն
զիւր ըստացուած թող կըտակաւ ։
Մեռըն սիրող և կատարեալ
ոչ զայսպիսիս խնդրէ ըզգալ ․
Եւ ոչ հոգայ սին ճարակաց
և ոչընչից ըզհետ երթալ ։

Պարտ է հանապազ և ամենայն ուրեք խոկալ զԱստուածոյ:

Ունի զԱստուած 'ի բերանի,
զերկնից միայն նա բարբառի.
Այն զի զԱստուած զամենադեղ
քանդակեաց Տէր 'ի խոր սրտի:
Կիրթ նաւաստի զ°ծովուն ալեաց,
վաճառական ըզվաճառաց,
Եւ քաջ զինուոր սովորեցին
ճառ արկանել ըզմրցանաց:
Ըզգեղեցիկ ըզսիրուհւոյն
ցանկ զըրուցեն՝ յադուրդ չառնուն,
Սերտ տարփածուք՝ վառեալք լուցեալք
'ի ցանկութեան բորբոք հըրոյն:
Նախ անճաճանչ լոյսն Արփին
և անբոմբիւն՝ շանթ երկնային,
Ծով անալիք և բոց անջերմ
քան Տէր Յին՝ անխօս լռէին:
ժ Ամենուրեք և 'ի սըրտէ
միշտ զԱստուծոյ խօսըս առնէ,
Եւ ոչ յափրեալ նա տաղտկանայ
որ բարիոք զԱստուած սիրէ:
Նա առ տընին և յատենի
յիշէ զԱստուած իւր սիրելի.
Ո՛չ այլ ինչ ձայն ոչ այլ բարբառ
արտասանել նա նըկըրտի:
Օ՜ն որ անձին քաղցրահամէ,
զայն ամենից համեղ կարծէ,
Կամ պերճ լեզուաւ ցանկայ ըզնոյն՝
զի անուշեալ ամոքեսցէ:

Որինչ անձին ծանօթագոյն ,
ծանօթ կարծէ ամենեցուն .
Նա կամ տենչայ զի քան լեզուին
ներգործեսցէ ծանօթ ըղձոյն :

Ցուցանէ այս օրինակաւ Հորացին՝ որ յԵրգ Երգոց :

Նման այն անձկոտ Հարսըն պանծայր
առ Սաղեմեան դըստերաց պար ,
Օխա՞րդ փեսայն իւր փողփողէր
'ի գեղապանծ դիմաց տիպար :

Սիրելին իմ մի է (ասաց)
մի է ընտրեալ 'ի հազարաց .
Գիսակք նորա են կըռածոյք՝
ներկեալ 'ի գոյն սեաւ ագռաւուց :

Ճերմակ քան զձիւն 'ի Լիբանան ,
կարմըրագեղ է քան զորդան .
Գըլուխ նորա փարթամ և Ճոխ
'ի ցայտ ոսկւոյն 'ի Կեփազեան : [12]

Աչք իւր կըրկին՝ են երկուորեակք
կաթամբ լուացեալ սուրբ աղաւնեակք ,
Որք անբաժան հարօրանան
առ յորդահոս ջըրոց վտակք :

Ծընօտք և այտք կարմըրազգեաց ,
տաշտք խընկահոտք իւղեփեցաց :
Շըրթունք նորա շուշանք անոյշք
այլ ցօղ բըխեն զմըռնենեաց :

Որովայն իւր է փըղոսկրեայ ,
յեռեալ շողայ 'ի շափիւղայ .
Բզձեռըս իւր է՛ տեսանել
լըցեալ անգին ակամբք Թարսսայ :

Նարդք սըրունից՝ կինծք Պարսաւեան 13
յոսկի խարիսխ արձանանան .
Ըմբէ . զխա՞րդ 'ի կոկորդին
խորիսխ մեղու քաղցրածորան :
Որ գեղաղէշ ամենեւին ,
որ սիրելին է գըլխովին ,
Նա՛ է միայն՝ նա՛ իմ փեսայ ,
նա՛ է սէր իմ՝ սէր կաթոգին :
Առ հըռչակել 'ի լուր երկրի
ըզգեղ չըքնաղ իւր փեսայի ,
Ճարտըն այսպէս խորհըրդաբար
առակարկէր զոր երգեցի :
Մինչ որ շընչէն միշտ մծտագոյն
զվերին կողման 'զօդ մաքրագոյն ,
Ոչի՛նչ գիտէ բայց թէ խօսել
ըզծայրագոյն միայն Նարդոյն :
Լեզու որում քա՛ղցր է Աշխարհ ,
սիրող հոգւոյն թուի օտար .
Մա յԱշխարհէս զըրոյց եւ յոճ
խելամըտէ դըժուարաբար :
Որ միանգամ անձկով տարփման
սիրես զԱստուած ըզքո փեսայն ,
Նուանդագին ըստէպ շարժեա՛
զլեզուդ 'ի գով Աստուածութեան :
Լիցի 'ի շուրթն յոլովակի ,
այլ ոչ երբեք յուշոյ հեռի .
Քանզի վայել ըզսիրելին
միշտ յարաժամ ունել յուշի :

Համապա-
տասխան
Ներքնայու-
թեան Աս-
տուծոյ :

Նա ըզքո տիւ՝ նա ըզգիշեր ԺԸ
նա միայնակ առցէ՛ քո Տէր.
Տիւ և գիշեր նա՛ եղիցի
մտաց հանդէպ և առընթեր :
Եթէ՛ ուտես եթէ՛ գնաս ,
եթէ՛ գործես՝ թէ՛ վըշտանաս ,
Միշտ առընթեր զԱստուած տեսջի՛ր
ուշիւ մտաց որով խոկաս :
Լոյս ծայրագոյն թէպէտ բացեայ
յաչաց քոյին երևանայ ,
Բայց դու Լուսոյն ծայրագունի
ես հըպագոյն , մօտ քեզ և նա :
Ամենուրեք է համափայլ
թէ՛ և յանտես աչաց ծածկեալ.
Անտես գոլով՝ տայ տեսանել
աչաց քոյին զիւրըն շողալ :
Մօ՛տ է առ քեզ՝ ոչ տեսանես ,
շօշափէ նա՝ և ոչ գիտես .
Շարժէ ըզքեզ՝ պատի ըզքև ,
մօ՛տ է ներքուստ՝ հեռի կարծես .
Ամենադեղ դէմք փեսային
որ ընդ ակամբ ոչ անկանին ,
'Ի գեղեցիկ գոյս ամենայն
դիտող աչաց գան 'ի զընին :
Պա՛րտք է արարածոյն էրանել առ Աստուած : 'Ի յաշխարհի զոր ինչ տեսցես ԺԹ
ըզսիրելիդ ածեն 'ի տես .
Յամենայնի փայլէ պատկեր
անմերձ Բարւոյն գեղեցկապէս :

Եթէ ծագէ եթէ սուզի
Տիտան 'ի ծով փոփոխակի , 14
Զանմուտ Արփւոյն ծանիր նշոյլ
զանճառական և գերարփի ։
Քե՛զ ո՞վ Լոյս իմ (ասա՛մ ընդ միտ ,)
երկրպագեմ խոնարհամիտ ․
Քում համեմատ գեղեցկութեան
ոչի՛նչ ունին երկինք վըճիտ ։
Եթէ փայլէ կամար երկնից
'ի ցուրտ 'ի շող պայծառ ջահից ,
'Ի քէն Լոյս իմ՝ ունին աստեղք ,
ըզլոյս պայծառ խուրեանց վարսից ․
Լուսին յըստակ արծաթափայլ
բարձեալ 'ի կառս 'ի ձիւնափայլ
Յարփւոյն բոցոյ ճաճանչագեղ
զիւր ջահ մուրայ գիշերափայլ ։
Եւ ոչ զամբարք Արփիական
ինքնաճաճանչ լուսով շողան ․
Եւ ինքն Արփին յայլմէ առնու
զոր աստեղաց տայ զամենայն ։
Թէ երկնային մարմինք անգայտ
ճառագայթեն գեղեցկացայտ ,
Անհամեմատ է գեղեցիկ
Հաստիչ նոցին՝ որ ետ զայն ցայտ ։
Եթէ երկինք աչաց հաճոյ
'ի շիջանուտ փայլիւն բոցոյ ,
Հաճոյադոյն է անբաղդատ
անմուտ Արփւոյն աղբիւր լուսոյ ։

Ըզքեզ Լո՛յս իմ սերտիւ սիրեմ,
քեզ Լո՛յս քաղցրիկ՝ երկըրպագեմ·
Մի՛նչ այդպէս գեղեցկապանծ
ունին երկինք զոր նըկատեմ։
Նոր ծաղկաւէտ ծիլ նըկարէ
ըզ գարնային դաշտ և 'զանդէ,
Եւ հեզասահ ջուր վըտակին
քաղցրակարկաչ շուրջ խոխոջէ,
Եւ մինչ սուլէ զուարճաբար
օդ հեզասիկ քաղցրաբարբառ՝
Ըզ վարսագեղ ծառոց ըզգէս
տարուբերեալ 'ի խաղ ճարտար,
Բա՛րձ առ Բարձրեալ քո կաթողին
ըզ ձայն քաղցրիկ հառաչագին,
Եւ ըզ սըրտի քո զախորժակ
վերաբերեա՛ դու 'ի յերկին։
Ասա՛ գոչեա՛, դա՛շտք վարդափայլ
ծիծաղեցէ՛ք շըրթամբք պըտկեալ·
'Ի վարդափայլ 'ի կերպարան
ախո՛րժ է գեղ վայելչացեալ։
Դո՛ւք հեզասահ ջո՛ւրք թիւրաթեք
քաղցրակարկաչ խոխոջեցէ՛ք·
Անգիտանամ զի՞նչ սիրալիր
ձեր խոխոջմամբ ձայն կարկաչէք։
Խաղացէ՛ք հովք ընդ սաղարթաց
և դուք Զեփիւռք ընդ գիրգ ծաղկանց·
Խաղք այդօրիկ են հաճելի
'ի սակս անմեղ պարզմըտութեանց։

Այլ թէ հաճոյ և անուշիկ՝
ժըպիտ մարդկաց դիւրափոխիկ,
Թէ կարկաչոտ ջուրք անկայուն,
թէ մեղմաշունչ օդ խաղալիկ։
Անուշադո՛յն քեզ եղիցի
Հաստիչ նոցին ամենայնի,
Որ անուշէ 'զօդ և զառուս,
որ կեանըս տայ ծաղկանց դաշտի։
Արածի նա կենդանաբեր,
յերկնից հօտլիտ շուշանաբեր.
Շուշանք քաղցրիկք միշտ ոռոգեալք
յանհատահոս ծորան աղբեր։
Ոչ յայլ հօվիտ այսպէս փաղփուն
փայլեն շուշանք գեղեցկադոյն,
Եւ ոչ այսչափ յըստակ ալիք
յայլ աղբերաց բըղխեալ հեղուն.
Օդ բարեշունչ ախորժական
խաղայ 'ի դաշտ Ելիսական. [15]
Սիւկ այսպիսի խաղաղաշունչ
ոչ 'ի յայլում շընչէ կողման։
Այն երջանիկ երեաք դաշտին
մըշտադարուն հաճոյ թուխն.
Այլ առաւել հաճոյանան
ամբաւադեղ տեսլեամբ Այն։
Օ՛դ է Աստուած՝ ծաղիկ դաշտաց,
Աղբիւր կընքեալ անմահ բըխմանց.
Շընչէ բուրէ և ոռոգէ,
այլ ոչ նըման նիւթականաց։

Սաւէ շնչմամբ նոյն և մեղմ
ըղձոց սրտին յորում շնչէ.
Բուրմամբ խռով սիրտ ըղձմայլ,
երբ ռոգէ՝ մեղրը ծորէ։
Ե՛կ 'ի շնչել Օ՛դ բարեսիրկ,
Թանալ բուրել՝ Աղբիւր Ոսաղէկ։
Սիրտ խանդակաթ սիրէ զԱստուած
որ է Աղբիւր Օդ և Ոսաղէկ։
Սովլին բանիւք կամ զոյգ սոյա
առ քո Աստուած ըղձիտ ուղղեա՛.
Դու որ զԱստուած սիրես սերտիւ
այսպէս նա քեզ լիցի ներկայ։
Պա՛րտ է յաճախ 'ի ձեռ առնուլ երկնաւորաց աղօթս։ Սակայն յորժամ պէսպէս խուժան
քաղաքական գործառնութեան՝
Յայս վայելել ախորժ հանգիստ
քեզ ոտնառու լինին խափան,
Յայնժամ վաղեա՛ երագընթաց,
յայնժամ թեւօք թըռիր 'ի բաց.
Եւ ոչ մի հոգք ըզբաղալից
արգել լինին առ կարճ հայցուած,
Ասել երբեմն Տէր իմ Հաստիչ,
մերթ անուշակ Յիսուս փրկիչ,
Ոչինչ է խոչ, թէ և յատեան
կաս պատաղեալ 'ի հոգ ցընդիչ։
Ե՛կ սիրելիդ՝ Բաժին սրտիս.
դու միայնակ շատ սիրողիս.
Ոչինչ խնդիրք՝ բայց քեզ ցանկամ,
կարեմ ասել յամէն տեղիս։

Ոչ պաշտամունք Պալատական
և ոչ դափնին Թատրոնական,
Խանդաղակաթ քոյդ ըղձանաց
ընկըճեսցին խոչ և խափան ։
Ձայնք արձակեալք յանկարծակի,
ընդհատ հառաչք խորոց սըրտի,
Եւ բանք բեկբեկք՝ լռելի հընչմամբ
զորըս լեզուն տայ դեղակի,
Ե՛ն սըրտացայտ շանթիք ՚ի վառ
զոր բոց հանէ կայծակնավառ,
Այնպէ՞ս բուրեն որպէս կընդրուկք
՚ի սըրբազան արկեալ բուրվառ ։
Ե՛ն նետք ձըգեալք երկնասըլաց
սուրբ եռանդան ՚ի հաստ բազկաց,
Նետք դիպաձիգք ՚ի հարկանել
յաստուածեան սիրտ խոցուած վիրաց ։
Կարող ես դու այսպէս փըքին
՚ի ծուփ հողոց այս աշխարհին,
Ուժել ձըգել կորովաբար
՚ի մի վայրկեան ժամանակին ։
Այսու փըքնոք նետեալ ՚ի վեր
երագ երագ դիմեա՛ յեթեր .
Օ՜ի միշտ այսպէս ՚ի Սիրելոյդ
վայելեսցես խանդակաթ սէր ։
Նաև վայր մի կալ ՚ի բացէ
ըղսըրտակաթ սիրող տանջէ .
Որ կայ բացեայ՝ նա սիրողին
միշտ ՚ի սըրտի ներկայ մօտ է ։

Նա ոչ երբեք անյուշ լինի՝
որ եռանդեամբ միշտ բորբոքի ,
Ու՛մ միանգամ անյուշ մըտօք
մա՛րթ է լինել՝ գա՛ղջ է յայտնի :
Ներկայութիւն յաճախագոյն՝
տածէ ըզսէր զախորժ բարւոյն ,
Ա՛մէն սիրող զոր ինչ սիրէ՝
միշտ յարաժամ խոկայ ըղձոյն :
Գալատական խոնջեալ անբաւ ,
խորհի զ՚պատիւ յոր տռփեցաւ .
Մ՝ըտաբերէ ագահասիրտ
զոսկւոյն մըթեր զոր ըստացաւ :
Գըշնու սեղեխ երբ մերձակայ՝
'ի Տիրուհւոյն դէմ յոր տարփայ ,
Եւ նըկարէ ըզդէմ նորին՝
աչաց իւրոց երբ բացակայ :
Գ՝եղ աստուածեան քո փեսայիդ
զակընկառոյց կալցէ ըզմիտ .
Քեզ միշտ Աստուած ցայգ և ցերեկ
ընկերեսցէ յակն և 'ի միտ :
Եթէ՛ արթուն եթէ՛ 'ի քուն
սիրեա՛ զԱստուած փեսայդ սիրուն .
'Ի քո նիրհել՝ իւր տիպ քաղցրիկ
ածցէ ըզքեզ 'ի դուլ նորուն .
Երբ յարթմըննի միտք կաթոգին
յածին տարփմամբ յեթեր վերին ,
Յանոյշ 'ի նիրհ խաղաղական
գան պատկերին տիպք երկնային :

Մերթ 'ի կապիլ ըղձայութեան
'ի քընաբեր 'ի հանդըստեան
Գան գիշերայն նոյն երեւոյթք
որինչ եկին 'ի տուընջեան ։
Յորժամ նիրհէ ախորժաբար
ժիր նաւաստի յանդըդր դադար ,
Երազանայ զ̊թողեալ նաւուն
ըզհողմուռոյց ձըգտեալ պաստառ ։
Բազում անգամ երբ բազմաշխատ
կողմնի հովիւ 'ի փըսխաթ ,
Թուի խուզել յողըն անկեալ
զիւրոյ խաշանց մաքուր գըզաթ ։
Այն ինչ որսորդ անկեալ 'ի թաւ՝
խըփէ ըզխոնջ բիբ ընդ բարտեաւ ,
Թուի տակաւ վանել զերկչոտ
երէվայրիս՝ իւր բարակաւ ։
Եւ երբ խորդայ քաջ զօրական
յիւրըն յեցեալ պըղինձ վահան ,
Թուէ և լուեն փողք դալարունք ,
կարծէ հընչել կերկերաձայն ։
Միրե՞ս զԱստուած ըստ արժանի ,
տեսցես զԱստուած 'ի յերազի .
Միտք սովորեալ տիւ և գիշեր՝
հըսկէ արթուն՝ յերկին ածի ։
Այո գիտեմ՝ ոչ աղօթէ
որ միանգամ 'ի քուն նընջէ .
Եւ միտք ազատ նընջէն յայնժամ,
սիրտըն լուէ՝ բերան փակ է ։

Սակայն 'ի քուն բերան Թըմբրեալ՝
գիտէ զինքնին քաղել դարձեալ
Զաղօթից բան՝ զոր յարթմընի
բերկրիս ըստէպ դու շըշընջալ։

Ներգործութեան այնր որ գըտանի 'ի նընջել։

Ո՛ յապխտահաս քուն Թըմրութեան
է նըշանակ արդեանց տօնջեան.
Թէպէտ և քուն չէ՛ ինչ կարող
լինել արդեանց ծընընդական ։
Որչափ զօրեա՝ կացեալ արթուն
ձըգեալ զեռանդն 'յամուլ 'ի քուն.
Որչափ զօրես ցանկամ տևել
'ի գործ սիրոյն երկարադոյն ։
Որչափ շարժուածք են 'ի սըրտին,
որչափ զարկուածք 'ի յերակին,
Որչափ վայրկեանք հոսեն խաղան
յերկար 'ի պահ գիշերային,
Այնչափ ցանկամ մըտօք՝ կամաւ
ըղձերտ սիրոյն տալ ըզգըրաւ.
Այնչափ բանիւք ցանկամ ասել
Սիրեմ զԱստուած, և այս է բաւ ։
Վերջին բարբառ՝ անլուր շըրթանց
մըցի Սիրեմ՝ Սիրեմ զԱստուած.
Զըսկըզընաւոր բառըդ Սիրեմ՝
քուն շըրթնակապ հատցէ 'ի բաց ։
Նոր սաւառնեալ արձակեսցէ
ըղկապ շըրթանց զոր կաշկանդէ,
Զընդհատ թողեալ ըղձայն Սիրեմ
լեզուն ընդփոյթ կըրկին առցէ ։

Այսպէս ասել լիցիս մարթուն
ըզբան Հարսին՝ Սիրտ իմ արթուն ,
Նաեւ յորժամ ըզքեզ խոնջեալ
գողտրիկ աջով ամփոփէ քուն ։
Օ՜հ թէ մտաց մի՛ ծանրեսցի
առ այս թըռչան խանդաղալի ,
Պա՛րտ եւ արժա՛ն 'ի թօթափել
ըզսողոսկեալ տուընջեան փոշի ։
Սերտ հառաչանք խորոց սրրտին
գան թօթափեն զմածեալ փոշին .
Այսպէս Հիւսիս զամպ թանձրամած
վանեալ հերքէ յերեկոյին ։
Լո՛յս ըզճըրրագ յետ քո ընթրեաց Քննութիւն խղճի մտաց։
մանըր խուզել ըզքո գընաց ,
Ածել նոցա 'ի յերեւոյթ
ըզխորշ գաղտնի երիկամանց ։
Լուա՛ ըզքիծ աղտեղութեան ,
զոր ո՛չն հաճոյ՝ 'ի բա՛ց դու հան .
Եւ զի հովեալ մի՛ ցըրտասցի
յաւէլ յիղձ քո՝ բոց եռանդեան ։
Այսպէս էլցես եռանդնագոյն
ընդ արաւօտ 'ի յանկողնոյն .
Ընդ միտ ածել խորհրրդաբար
զազնուութիւն քո սիրելոյն ։
Ժ.Գ. Պէտք են անդուլ խընդրրուածաց ։
այլ են որոշ ժամք խնդրողաց ,
Յորում սովորք յաւիլ պըշնուլ
յիւրեանց Փեսայն ուշիւ մըտաց ։

Խիւսք ըղձարմին սընուցանեն ,
և երկնայինք զոգին տածեն .
Նուագի սէր և թալկանայ
թէ երկնային ջամբք պակասեն ։

Պարտ է պարապել 'ի հոգեկան մտածութիւնս ։

Աստուածախոհ մտածութիւն
աղբիւր է յորդ անմուտ լուսոյն ,
Նորա սա փայլեալ ճառագայթէ ,
ծագէ և զոյգ քաջարութիւն ։
Ոչինչ օտար և այլազգի
'ի յելս արփւոյն պայծառալի
Շողան գոհարք փաղփիւնափայլք՝
որք ծածկեցան 'ի գիշերի ։
Յետ բազմօրեայ կենակցութեան
յԱստուածախօս առանձնութեան ,
Յիջանել անդ 'ի Սինայէ
պայծառ էին դէմք Մովսիսեան ։
Առ հըպարոյն լինել անձին
'ի լոյս Արփւոյն աստուածային ,
Նա զի դէմք քո և սիրտ ոգւոյդ
ցոլացուսցեն լոյս երկնային ,
Նուիրեսջի՛ր ժամ հաստատուն
յԱստուածային խօսակցութիւն .
Նա մի երբեք փափաքեսցես
անցանել այնմ երագագոյն ։
Յանկա յաւէտ զի չկայ առցէ
քո ժամացոյց 'ի յաւաղէ ,
Որ ըղձահուն ժամուն ընթաց
հոսմամբ իւրով ուղղեալ չափէ ։

Ընտիր սիրողք զաւուրս իւրեանց
զորըս վատնէն բանք սընոտեաց ,
Վըկայէն զոլ հարեւանցիկ ,
անդխտանան ո՜րպէս էանց ։
Յաւէն ընդ Ձեզ նըսեմութեան
ընդ կարապետ գիշերական ,
Եւ ընդ երագ վազըս ձիոյ
ծովասուզիկ Արեգական ։
Երկնակենցաղ կեանք անուշակ
յոյժ անուշէն ըղժամանակ ,
Քան զոր առնէ քաղցր օրհորդ
ամոք բանիւք և համոզակ ։
Թէ եղիցի քեզ քաղցրագոյն
զոլ խօսակից ընդ Բարձրելոյն ,
Արշաւասոյր երագընթաց
քեզ թուեսցի ժամըն ողջոյն ։
Մի՛ լիցին հոգք ըզբաղարար՝
ըզժամ խոկման խափանարար ։
Քան զամենայն հոգ ըզբաղիչ՝
փեսայդ վերին նախամեծար ։
Ով է կարող և իմաստուն
ամենադեղ՝ ՚ի գութ անհուն ։
Չիրք բընութեան նորա անչափք
քեզ նիւթ յանհատ մըտածութիւն
Ընթարթ մընաց բիրք ՚ի նոսին ,
ակընկառոյց միշտ յառեսցին ։
Ըզ սիրտ շուար յինքն յանկուցէ
պայծառադեղ տեսիլ նորին ։

Յայնժամ հեղցէ սիրտ կաթոգնեալ
ըղձեծութեան թառաչ վառեալ.
Շրթունք լեզու հեկեկեսցեն
սիրայորդոր լալեօք թացեալ:
Ե՛ զի պատկեր Նանին սնտես
'ի քօղ մարմնոյն եկեալ 'ի տես,
Արծարծեսցէ ըղջահ սիրոյն
զերթ հովահար յարմարապէս:
Հանդիպեսցի բազում անգամ
'ի կերպարան չքնաղ մանկան.
Ոսկի թեքեւ ըղդոյն մանուկ
բանիւք քոյին խանդաղական.
Իսկ — Յես— նանան. Սիրուն Մանկիկ առ իս դարձիր,
(այսպէս ընդ միտ յեղեղեսջիր.)
Ո՛ւ ըղհամբոյր շրթանց իմոց՝
զոր տամ այտից քոց վարդածիր:
Մ՛ի զողջախոհ համբոյր շրթանց
սիրող հոգւոյս մերժեր 'ի բաց.
Ո՛եղ ըղ մանկան սիրեցելոյ
առնուլ տխպար՝ Սէր հրամայեաց:
Ո՞վ թէ տայիր ինձ կանխագոյն
զոր կեամ զարդիս կեանք յամրագոյն,
Յորժամ ըղքեղ օթեցուցին
բեթղէհեմեան վանք ցըրտագոյն:
Ճ՛եպեալ էր իմ երագաբար
յասպընջական Սիրոյս քարայր,
Եւ 'ի համբոյր շրթանց իմոց
մաշեալ էր իմ զերջանիկ այր:

Տրքնեալ էր իմ սիրուն Մանկիկ
առ օրոցաւ քո աղքատիկ ,
Թո՛յլ ինձ առնել գիրկս արկանել
քո աստուածեան ոտից փափկիկ ։
Կամ զօրէի դէթ զմանուշակ
սըրբել զաչքոյկ թաց յարտասուեակ ,
կամ ըղ մըրսեալ մարմին քընքուշ՝
յիմ ըստածել 'ի ծոց ջերմնեակ ։
Որդ դէթ ծընիր ես կողկողիմ
յիմ սիրտ եղկեալ դու ո՛վ կեանք իմ .
Հըրով սըրտիդ զիմ սիրտ պաղեալ
բոցավառեալ այրեա՛ ժըտիմ ։
Երբ առաջի դընես աչաց
կախեալ զՈստուած 'ի փայտ կենաց ,
Ուսի՛ր խօսել հառաչագին ,
աչօք թացեալ 'ի յարտասուաց ։
Ուա՛ղ , զի՞որդ վէրք ահագին
համաձարակ 'ի սուրբ մարմին ,
( Ոսա՛ ջերմնեակ դառն արտասուօք
ողողելովք զայտ տըխրագին ։ )
Ո՛հ այն դէմք ըսքանչելի
վէրնոց դառուց փափաքելի .
Ո՛հ կեանք իմ , ահա՛ փեսայս ,
ահա՛ միակ Տէր իմ սըրտի ։
Գո՛յ 'ի դըրուխ վիրաց պըսակ ,
ոչ ևս է այն ոսկեգիսակ .
Նաև ոչ մի դեղ վայելչատիպ
յաստուածեղէն փայլէ դիմակ ։

Շըրթունք շուշանք այս փայլէն,
այլ գառնորակ զըմուռ կաթեն.
Իւր անուշակ կոկորդ և քիմք՝
՚ի ճաշակեալ լեզուոյն լի են։
Ձեռք ոսկեձոյլք ճախարակեան՝
ճապաղէին գոհար Թարսեան.
Արդ կապուտակք և թաթաւունչք
բոսորանման ՚ի նիշ արեան։
Ո՞ թուեսցէ զանմեղ մարմնոյն
խոցուած վիրաց դաժանագոյն.
Վէրք բիւրաւորք և անհամարք
ըզմի վիրայ ունին ըզգոյն։
Դո՛ւք դո՛ւք հարուածք և վէ՛րք աղդոյ,
և դո՛ւք բևեռք փո՛ւշք ընդ լեզուոյ.
Դո՛ւք սիրելի վեհ գրաւականք
իմ Փեսային սիրեցելոյ։
Սիրուն գըրաւք իմ Փեսային,
անո՛յշ գըրաւք սիրոյ նորին.
Ըզձեզ տարայց միշտ քանդակեալ
՚ի սիրտ և յուշ յանջընջելին։
Յայնժամ ՚ի ձեռս իւր վիրաւոր
մատո՛ զերես արտասուաթոր.
Ոտք ծակոտեալք առցեն ըստէպ
ըզսերտ համբոյր ըզմեղրածոր.
Երբեմն յօդեա՛ կող ընդ կողաց,
երբեմն յօդեա՛ ըզդիր շըրթանց.
Աստուածեղէն քաղցրացի կող.
համբուրատու տարփող շըրթանց։

Կող ընդ կողի՝ սիրտ ընդ սրտին
յօդաւորեա՛ 'ի միասին ․
Կող տիգաբաց խընդրէ 'ի քէն
պահել յինքեան ըզ սիրտ քոյին ։
Թէ արտասուաց շիթ ցամաքէ ,
արտօսր հայցեա՛ 'ի Նըմանէ ․
Թերևս առ քո երաշտութեան
վըտակ լալեաց զայտ քո թացցէ ։
Բայց ոչ կարծեմ ցամաքեսցի ,
զի գառն անմեղ լուծցէ փոշի՝
Զադամանդեայ սիրտ սալացեալ,
'ի յորդ արեան իւր Ճապաղի ։
Լուծեալ փըշրեալ արեամբ նորուն
զիւրըն հեղցէ և սիրտ զարիւն ․
Ընդ այդ հաճի Փեսայն արեան , [16]
ընդ այդ հաճի հեղեալ արիւն ։
Ընդ այդ հաճի նա կաթողին ,
զ՞հաճոյ արիւն տուր Փեսային ․
Որ վաղուրեմն եղև շըռայլ՝ [17]
զիւրըն հեղուլ զարիւն անդին ։
Նոր զայս առնես՝ սիրտ խօսեսցի — Եղանակ
քան թէ լեզուն բարբառեսցի ․ — Հարցմա-նեան ։
Բազում ինչ սիրտ ուսցի խօսել
յորժամ լըռէ բարբառ ձայնի ։
ԺԴ Պարտ է Հարսին պահպանել ցանկ
'ի յաղօթել զայս եղանակ ․
Զըրոյցք նորա նուա՛զ լիցին ,
հայցուածք բազո՛ւմ՝ շըրթունքըն փակ ։

Բազմաբարբառ են հառաչանք՝
քան յօդաւոր պաճուճեալ բանք.
Սա՛ 'ի շրթունս յոլովակի,
'ի խոր սրտի են թառաչանք:
Երբ միտք դիմեն յելս երկնից,
հա՛րկ է կամաց գոլ ուղեկից.
Ուր նա ճախրէ թեւակոխէ
լիցի վառմամբ սա թեւակից:
Վառեսցի սա բոցակիզեալ
որչափ փայլմամբ նա պերճացեալ.
Փայլին եւ վառ կատարեսցեն
զընթաց իւրեանց զոր ըսկըսեալ:
Դէպք ի պարծանաց ցամաքութեան: Ն՛ զի մածեալ շուրջանակի
միտք 'ի խաւար անծագելի,
Հազիւ զաղօտ լուսոյն ըղշող
յինքըն ձըգել առնուլ մարթի:
Յայնժամ ցամաք սիրտ զըլանայ
աչաց ըզցօղ՝ իւ քաղցրանայ.
Լեզուն զիւր ձայն խանդաղագին
տալ արձակել՝ գո՛գ մոռանայ:
Երբ այս դիպուած պատահեսցէ
սիրտ քո խնկոյն բաբախեսցէ,
Ըստէպ բախմամբ զարհուրագին՝
որ ըզսըրտիդ յօդուած յօշէ:
Յետոյ սուզեալ ընաւորական
յանդունդս 'ի խոր քում չըքութեան,
Մաղթեա ծագել կըրկին յոգւոջ
զուրախարար լոյս աստուածեան:

Զօրէն աղօթք պաղատանաց
առնուլ ըզգիւտ խնդրոյն իւրեանց ,
Բեղնաւորիլ ամուլ սրտին՝
յամպ ջըրարբի երկնատեղաց :
Մի՛ դադարիր մի՛ լըքանիր ,
համբե՛ր անշարժ և պի՛նդ կացջիր ·
Զմութ գիշերոյն յաջորդեսցէ
բերկրապատար տիւ լուսալիր :
Շողայ փեբոս պայծառադոյն
յետ թըխպայորդ թանձըր ամպոյն ·
Յըստակադոյն փայլէ եթեր
յետ փայլականց ամպրայնոյն :
Յածնու հարկիւ զայրոյթ ալեաց
'ի խորտակիլ բարկ մըրրըկաց ·
փոխանակէ սիւք հեզաշունչ
վայրագաշունչ Արեւելեայց :
Ամառնակէզ Շուն Իկարեան
հերձու ձեղքէ խոր զանդաստան ·
Բայց զովարար յաջորդ անձրև
արբուցանէ ըզհող խոպան :
Լե՛ր քաջայոյս առ 'ի յերկնէ ,
նոր լոյս նոր բոյս՝ քեզ եկեսցէ ·
Նա՛ ըզմըտաց ըզշամանդաղ
և սա՛ ըզպաղ հերքեալ լուծցէ :
Սիրող փեսայն առ արծարծել
ըզհուր սըրտին մօտ 'յառկայծել ,
Ըզճառագայթ դիմաց իւրոց
յոլովակի գիտէ ծածկել :

Բայց ցուցանէ գեղեցկապանծ Ժե
ըզձառագայթ քաղցրիկ դիմաց ,
Բանիցս անգամ սիրտ վիրաւոր
գոչէ հեծմամբ՝ փեսա՛յդ իմ դա՛րձ ։
Կամի՞ս զի քեզ ցուցցէ զերես ,
միշտ հեծեսջիր դու դառնապէս ․
Լո՛յս իմ դարձիր , առ իս դարձիր ,
կանխեսցեն ցօղք արտասուալիր ։
Որպէս 'ի բլուր որթ եղջերուին
վազըս առնու թեթեւագին ,
Նոյնպէս փութա՛ ըշտապ յընթաց ,
փեսա՛յդ առ իս դառնալ կըրկին ։
Զի՞ այլ յամես ․ Կեա՛նք իմ դարձիր ․
հայցեմ ըզքեզ՝ առ իս դարձիր ․
Կա՛մ առաւել մահ առաքեա՛
քան կեալ այսպէս թըշուառալիր ։
Դառնալ առ քեզ յանձին կալցէ ,
տացէ համբոյր՝ զաչօրդ սըրբէ ․
Եւ խընդութիւն առատագոյն
յետ իւր դարձին քեզ մատուցէ ։
Թէ նախընծայ համբոյրք քաղցրիկ
կայլակէին զըմուռ սաստիկ ,
Վերջին համբոյրք տուեալք շըրթանց
մեղր հոսեսցեն երկնածաղիկ ։
'Նկա- րագիրն Աստուածոյ եւ Աստ- ուածայ- նոյ ։ Յայնժամ հոգւոյն ըզհին խաւար
'ի բաց հերքեալ առհաւասար ,
'Ի նըկատել մըտաց աչօք
զանձառ ըզլոյս լինի յարմար ։

Զի յերկրայնոց յաստուածային
քաջաթռուիչ բերի յերկին ,
Որպէս պայծառ բոցըն թեթև
յիւրըն ձըգտի 'ի կէտ վերին ։
Խաւարէ սաւառնացեալ
Վառաթեւից նըմանակցեալ ,
Զանգուցանէ զիւր զօրութեամբ՝
նոր զօրութիւն իւր ըզգեցեալ ։
Հայեցուածով միով հայի
'ի գեղեցիկ յոր ընկըղմի .
Ոչ այն տեսիլ ոչ հայեցուած
կարօտանայ՝ զի բազմասցի ։
Զարմանալիս նա տեսանէ ,
այլ հիացեալ ոչ մըտաւէ .
Տեսանէ զայն որ նախ ծածկեալ ,
և ծածկի այն՝ զոր տեսանէ ։
Զի մառախուղք պայծառագին
զաչօք պատի ըզ տեսողին .
Այլ նոյն իսկ մէգ մառախլապատ
օգնեն աչաց զորովք պատին ։
Փայլուն այս մէգ գործէ դիպան
յորժամ ձըգէ քօղ ծածկութեան ,
Զի միտք ներշնչեհ լիցի կարող
այսըմ ժուժել անմերձ փայլման ։
Տայ ժուժկալել անբաւ լուսոյն ,
այլ ոչ դիտել որոշագոյն .
Խէ զի՞նչ տեսցէ՝ անգիտանայ ,
զոր տեսանէ՝ հաճոյ է նոյն ։

Զայլ ինչ էակ ոչ նըշմարէ ,
ուր նըշմարել կարող ինչ է .
Լոյս ծայրագոյն յայլ ինչ չըքնաղ
ակն արկանել ոչինչ ներէ ։
Սապէս իմն աչք խըտտըղեալ
յարեգական 'ի շող մերձեալ ,
'Ի լոյս սաստիկ ոչ նըկատեն
ոչինչ մարմին լուսափայլեալ ։
Այսպէս յորժամ քընարք բաղում
քաղցրիկ հընչմամբ զունկըն լընուն ,
Ոչ ևս ըղձայ զայլ ձայն օտար ,
Թէ՛ և բախի թըմբուկ նորուն ։
Հոգևոր արբեցութիւն հոգւոյ ։ Ածի հոգին 'ի միմին պահու
յԱրքայական Տուն գինարբու .
Անդ զանապակ անուշաբար
ըմպէ խառնեալ կաթամբ մեղու ։
Ըզծաղկահոտ ըմպէ գինին , ԺԶ
յայնժամ լընու զծարաւ անձին .
Լընու այո՝ բայց և աճէ
նոյն ծարաւոյն կիրք սաստկագին ։
Զի երկնային օշարակաց
տուեալ բաժակ յումպ սիրողաց ,
Որչափ յաւէտ մատչի յարբումն՝
այնչափ յաւէտ քա՛ղցր է քըմաց ։
Թէպէտ և ցանդ արբցէ ըղձա ,
ոչ յըղփացեալ ինչ յափրանայ .
Մի՛շտ նոր նըշան նոր խընդութեան
յանձին բերեալ արտաքըս տայ ։

Այն ինչ կայտառք ազգ լուղական
'ի բնիկ տարեր զուարթ խաղան ,
Ոստնուն սուղ ինչ բարձր 'ի ջրոյն
յորում զեռեալ բընականան :
Ոչինչ ընդհատ շարժեալ հոգւոյն
յաստուածավառ առ 'ի բոցոյն՝
Կայտռէ 'ի վեր , և սուղ ոստմամբ
ձըգի յերկին 'ի գերաբուն :
Ոչ քաղցուալից նա բորբոքի ,
այլ եռանդեամբ արբեալ վառի .
Եռանդըն այն գերօրինակ
գայ 'ի սիրոյ վառեալ սըրտի :
Այն երկնային արբեցութիւն
'ի բաց վարէ ըզգաղջութիւն ,
Եւ վատթարեալ բըթէ ըզ սիրտ
առ երկրաւոր ուրախութիւն :
Զըզգայութիւն կըթուցանէ ,
այլ զոյժ մըտաց հըզօր գործէ .
'Ի կըթոտիլ ըզգայութեանց
նա ժիրաժիր և առոյգ է :
Արբեցուցիչ այն եռանդեան
ազդող 'ի սիրտ սուրբ բորբոքման՝
Զհետ գայ Հանգիստ չքնաշխարհիկ
խառն ընդ քաղցրիկ նիրհողութեան :
Այլ՝ սուրբ եռանդն որ 'ի յերկնէ ,
որպէս 'ի սուրբ կայքաւ շարժէ ,
Այնպէս Հանգիստն է գործօնեայ ,
այնպէս այն քուն՝ արթուն հըսկէ :

Սուրբ և անձեռն Հանգիստն այն որում 'ի [illegible] Հանգստեան [illegible] :

Չէ՞ սա այն սուտ Հանգըստութիւն՝
զոր խոստանայ լիրբ կեղծութիւն.
Ըզգո՛յշ լեջի՛ր՝ մի՛ պատրեսցիս
գեղապաճոյճ 'ի սուտ անուն։
Նա՛ զեղծութեանց՝ սա՛ ուղղութեանց
շաւիղ հորդէ դիւրագընաց.
Սա՛ հրամայէ 'ի գործ մըխիլ,
Նա՛ հեղգաբար կայէ 'ի բաց։
Ըզ մաղթանաց պէտ յարակայ,
ըզ սուրբ բաղձանս զոր սիրտ ըզգայ,
Զխղճ փըրկութեան որով վարիմք
Նա՛ զըսպառէ, զըրուատէ՛ սա։
Նա՛ անկուշող ըզգայութեան
սանձ արկանել լինի խափան.
Սա զգայութեանց ընդվըզելոց
տայ պատերազմ արիական։
'Ի մահաբեր փախի՛ր քընոյ
որ կարապետ է գեհենոյ.
Անգործական պըղերգ հանգիստ
ահ և սարսափ բերցէ՛ն ոգւոյ։
Հոգի անգործ ընդարմացեալ
հանգոյն մարմնոյ գիակնացեալ,
Արտաբերեալ ոչի՛նչ մըտօք
յոչի՛նչ սըրտիւ շարժեալ բերեալ.
Ոչ աղօթէ և ոչ սիրէ,
այլ ապագործ թըմրեալ ծիւրէ.
Վերին Սիրող միշտ նորագործ՝
զանգործական անձըն ատէ։

Մ՝ասն ըստորին ծառայական
երբ անկանի թոյլերասան ,
Մ՝ասըն վերին տիրականին
յառնել յերկին չէ՛ բաւական ։
Տիւ ընդ գիշեր՝ ջուր ընդ բոցոյն
նախ զուգեցին միահաղոյն ,
Եւ կեանք ընդ մահ ուխտըս դաշին
կռուեալ դիցեն յառաջադոյն ,
Դ՛ան չարութիւն գեղերեսեալ
քաջարութեամբ սեթեւեթեալ ,
Ճարտարարուեստ իւր մոլութեամբք
ելցէ 'ի վեր թեւապարեալ ։
Լընու անսուտ խաղաղութիւն
ըղձիտ թափուր 'ի յերկրայնոյն ․
Եւ երջանիկ գործէ ըղսիրտ՝
միայն ամբիծ հանդըստութիւն ։
Սրմա արատք և դուզնաքեան՝
մըտել 'ի սիրտ լինին խափան ․
Իղձ աշխարհի չըտայ քեզ թոյլ
ախորժաբար վայելել յայն ։
Ոչի՛նչ ընդ հատ տարօրինակ
զԱ՛րև բարձրեալ ծածկէ ամպեակ ,
Եւ ընթանայ առ խուն անձրև
պըղտոր ալեօք՝ սահուն առուակ ։
Դ՛ուն որ ջընջէ զ՛տիպ պատկերի
ըղսընոտեաց ամենայնի ,
Եւ որ միայն ըղփեսային
յիշումն ածէ՝ այն քուն բարի ։

Քանզի յայնժամ արթուն սիրող
զԱստուած միայն գիտել տարփող,
Զայլ ամենայն յերկրաւորաց
անգիտանայ՝ է անհոգող ։
Սիրտ պարզական առ 'ի խորհել,
և զաղաւնոյ թև 'ի թռուչել.
Զի շնորհեսցի ազատաբար
յանմեղ հանգիստ 'ի վայելել ։
Մխիթա- րութիւն համայ ընդ ապաշա- ծայնոյն ։ Ոչինչ լիցի քեզ բերկրագին,
ոչինչ լիցի զարհուրագին.
Այս լոկ ըզքեզ երկեցուսցէ
գոլ անհաճոյ քում փեսային ։
Նոյնպէս ընդ այս միայն բերկրեա՛, ժէ
այսըմ միայն դու փափաքեա՛,
Կարել նըմին հաճոյ լինել,
և զա՛յն կամիլ՝ զոր նա ըղձայ ։
Հա՛յր է և Տէ՛ր միանգամայն,
Տեառն իրաւունք՝ են հարկ հլութեան.
Նու Հօր իւրում հաճոյ լինել
է՛ անուշակ և բընական ։
'Ի կամըս քո դիւրադողդոջ
մի՛ թողուցուս կամիլ կամ ո՛չ.
Յորժամ նուազ դու կամիցիս,
յայնժամ յաւէտ ազատ անխոչ ։
Զի կամեսցիս յօժարաբար
զոր ոչ կամել մա՛րթ էր և կա՛ր.
Նաև յօժար ոչ կամեսցիս
զոր ինչ կամել մա՛րթ և հընար ։

Կա՛յ խընդագին յարկած չարեաց ,
կա՛յ նոյնպիսի և 'յ աջողուած .
Նաև յայնժամ քա՛ղցր եղիցի
արիաբար տանել վըշտաց ։
Փըշահեղձոյց դաժանանայ
երկնաշաւիղ նեղ պողոտայ .
Ոա՛րբէ . քանի՞ Խաչըս ահեղ
նա ակներև պարզեալ բանայ ։
Ս՛ես առաւել ուղ գեհենոյն
տատասկախիտ դաժանագոյն ,
Ա՛յս խորաձոր ամենուրեք
վերընծիւղէ փուշ մահաթոյն ։
Փուշք շառաւիղք են համբոյս
ըմբոստ մըտաց նըշկահելոյս .
Ոչի՛նչ շաւիղ է անտատասկ
յետ յանցանաց նախկին մարդոյս ։
Ը՞նդ առա՛ջ լիցին ժայռք վըշտամբեր՝
ուղևորին կենցաղասէր .
Թէ՛ ընդ լայն հետ 'ի Տարտարոս
և թէ՛ ընդ նեղ դիմէ յԵթեր ։
Այլ նեղ ուղին և փըշալից
ունի իւր վարձ սահմանակից .
Իսկ լայն ուղին՝ (աւա՜ղ զինև)
ունի զ՚պատիժ կապարակից ։
ԺԲ. Խաչն Առագաստ է փեսային
ծիրանազարդ յարիւն Յսին ,
Գըրկախառնեալ խանդաղակաթ
մատո՛ համբոյր սըրբոյ Խաչին ։

Պա՛րտ է
գերել ար-
ժանել Խա-
չին ։

Եթէ կամիս թէ ակամիս
 բարձցես ըզխաչ յուսոյդ վերայ,
 Ներքին տենչմամբ կամ փախըստեամբ
 ոչ նուազեալ թեթեւանայ։
Եթէ ազատ որ քեզ տուաւ
 հարկ է ունել ընկեր ըզցաւ,
 Մի՛ դըժկամակ տանիր նոյին,
 այլ ըսկսի՛ր տանել կամաւ։
Թէ ըստանձնել դու հրաժարես
 խաչ զոր մերժես՝ բազմօք ծանրես.
 Եւ ըստ անձըն դըժուարութեան
 թօշակ վարձուց սակաւ առցես։
Որդ տա՛ր ժուժկալ՝ տա՛ր խընդութեամբ,
 համբե՛ր խաղաղ ջերմեռանդեամբ.
 Եղիցի՛ Յիսուս՝ ըզձիգ քոյին
 մի միայն կէտ՝ բերկրիլ տարփմամբ։
Որ 'ի բուժիլ՝ դառըն բաժակ
 ըմպէ հիւանդ լուրջ ախորժակ.
 Ընկա՛լ ըզՅիսուս զուարթադին.
 Յիսուս է ըստոյգ հոգւոյ ճարակ։
Յիսուս է պարգեւ սուրբ Փեսային
 դըրաւ սիրոյն աստուածային.
 Ըզփեսայից սիրեա՛ պարգեւ
 սիրեա՛ զպարգեւ սիրոյ նորին։
Սիրեցելոյդ խոցեցելոյ
 խոցեալ սիրովդ լե՛ր համադոյ.
 Որով ըզքեզ սէրտ սիրեսցէ
 ըզնըմանակ անձին իւրոյ։

Այսպէս երկնից կենդանի լեալ
լիցիս երկրի դու մահացեալ.
Եւ մինչ երկնից կեաս կենդանի
լիցի առ քեւ երկիր մեռեալ։
Ցանկացիս դու ո՛վ խաչակից,
քակիլ մարմնոյդ յատնակապից,
Զի ընկալցիս 'ի Բարձրելոյն
յասպընջական գիրկ տենչալից։
Նոր վէրս տացես դու կարեւոր
զոր արձակէ աջ երկնաւոր.
Բայց սիրելի քեզ եղիցին
փըքին եւ աջ՝ վէրք նորանոր։
Վ.Թ. 'Ի սմին վայրի խանդակաթեալ
քաղցրիկ տապով եռանդնացեալ,
Գողգոջ ձայնիւ պաղատեցիս
փութաժամանն քեզ ձեռընկալ։
Խանդակաթ եմ. ինձ վարդ բերէք, 18
տուք անկելոյս՝ նեցուք դըրէք.
Հաստատեցէք զիս խընծորովք,
խանդակաթ եմ, ինձ վարդ բերէք։
Ծըրար տաշխին քաղցր եւ դառին
է ինձ փեսայն իմ կաթողին.
Խայթ սայրասուր մըխէ 'ի սիրտ,
ծածկէ զիւր դէմ անուշադին։
Թօշնեսցի ոյժ, քաղեսցի բոց,
եւ դեղնութիւն դըժգոյն դիմաց՝
Ցուցցէ ըզ սիրտ ձըմլեալ մըղձկեալ
սաստիկ սիրով խանդաղանաց։

Սէր Բու-
կայեան. ԷՉ
(Խանդա-
կաթ.)

Սիրողք համայն դեղնին դըժգոյն ,
զի յանդամոց բոլոր մարմնոյն
Տեղի տուեալ օգնիչ արեան
գայ 'ի յամրոց սըրտին նըկուն ։
Դէմք դալկահար և անձկալի ՝
ցուցցեն ըղձահ խոց փեսայի ։
Ո՛չ դէմք միայն վայել արժան
ունել Հարսին սաստ 'ի յերկրի ։
Սէր Աստուածեան բերէ թալկել,
բայց ոչ բառնայ զոյժ 'ի սիրել ։
Այլ առաւել աճէ ըղնոյն ,
և ըստիպէ առ 'ի սիրել ։
Թալկի՛ սիրող խանդակաթեալ,
բայց ոչ թալկի սէրըն վառեալ ։
Որքան թալկի սէր սիրողին
ոչ տայ նըմին դալ թալկանալ ։
Թալկի՛ սիրող , զի սէր եռայ՝
որով վառի սիրտըն նորա ։
Յորժամ եռայ սէրըն յաւէտ ,
յաւէտ սիրող և թալկանայ ։
Սէր գոր-ծող ։ Այլ փարատէ այս թալկութիւն
զանգործական սըղերգ ըղձքուն ։
Որ բարիոք և քաջ սիրէ ,
ոչ կայ անգործ՝ միշտ է գործուն ։
Նա մեծամեծ գործըս առնէ ,
այլ փոքրագոյն զայնըս գըրէ ։
Դըրէ ըզշատ որպէս սակաւ ,
խիթայ՝ և շատն ոչի՛նչ իցէ ։

Օ՜ որ յանձն առնու վաստակ և ջան ,
կամէր ըզնոյն տևել երկայն .
Նա՛ գանգատէ կըրել ըզնոյն
ընդ ժամ սակաւ անտևական ։
Քանզի սիրող յորժամ եռայ
Թըռչել ձախրէ , ոչ թէ գընայ .
Թևօք առնէ և ոչ ոտիւք
զուղի Սիրոյն ըզբարձրակայ ։
Թևք են նորա սուր և յարձակ — Սէր թռ. թռչելու։
շողեալ 'ի հուր մաքրատեսակ .
Նոյն ինքն ամբիծ անախտ սիրող
փայլատակէ զերթ հուր յըստակ .
Քանզի զօրէն թևոց բոցոյ
( որ վըտակոյն մասն է հըրոյ , )
Գընայ թեթև և խոյանայ ,
տապ և շողիւն 'ի նըմին գոյ ։
Որով տապով ջեռնու փայլի ,
նովին տակաւ և լուծանի .
Այսպէս 'ի ջահ բազմաբորբոք՝
մոմըն ծագէ և լուծանի ։
Ամենուրեք լոյս ծաւալէ ,
քաղցըր տապով զանձըն ծախէ .
Լուսոյն փայլմամբ նոյն և հըրով
լինի նըման նա Սերովբէ ։
Այն զի սիրեալ սա փոխադարձ — Սէր փոխ- [illegible]
'ի սիրող իւր փոխի յԱստուած ,
Թէպէտ և սա քօղասուզէ
ըզձառագայթ իւրոյ փառաց ։

Իօղաստուզէ, զի անհնարին
'ի յանսահման լոյս փեսային
Խուժել մտաց հողեղինաց
'ի ծանրահակ ձըռնչեալ մարմին։
Բայց թէ չնորհի յայս ստորիձան
Թըռչիլ սիրոյն ստուածական,
(Այլ 'ի յերկրի ցանցառ սիրող
վերամբառնալ գիտէ 'ի յայն։)
Յայնժամ զ°փեսայն Հարսըն ունի,
յայնժամ գըրկեալ փարին 'ի մի.
Տայ սուրբ համբոյր քաջագուարթ,
առնու համբոյր անձառելի։
Ո՛րով փարի կաթոգին նա ԻԱ.
ոչ յօժարէր թողուլ կամայ.
Բայց հէգ մարմին և աղցաւոր՝
թողուլ հարկէ զայն ակամայ։
Այլ մերձ է նա թէ և թողեալ
և երևի բացակայեալ.
Բացեալ է նա՝ զի վերըստին
կազդուրեսցին մտօք տաժանեալ։
Արդ ոչ ըստոյգ զըրկի համբուն
զոր խնդ բաղուկք մըտաց թողուն.
Ո՜ ի ըզթողեալ ըղձիւրելին
բաղուկք սըրտին ունին կայուն։
Իամզը էր արդեօք երբ կայր ներկայ,
ոչ սուղ օգուտ՝ երբ բացակայ.
Յառաւել շահ 'ի բաց մեկնի,
յետոյ յաւէտ քաղցրացի նա։

Օի զերկնային ուրախութիւն
ոչ համդարտէ երկարագոյն
Հարսըն տանել աքսորական
'ի տաղաւար անզօր մարմնոյն ։
Սան այն ժըտել հարկն զփեսայն
Թէ՛ և ընդդէմ յօժարութեան ,
Անտանելի զուարճութեանց
դընել կապար՝ առնել վախճան ։
Խանդաղանացդ որոց չի՛ք բաւ ,
Փեսա՛յդ չըքնաղ ամենաբաւ ,
Պէ՛ր չափ հայցեմ կապար կըշիռ ,
մի՛ ինձ բերցեն քո ձիրք զըրաւ ։
Ոչ առանց քո , և ոչ ընդ քեզ ,
կեալ ես զօրեմ յայս ասպարէզ ․
Առ 'ի ընդ քեզ կեալ երջանիկ ,
մարմնոյս իմ յարկ՝ խափան է մեզ ։
Եթէ զերես թագուցանես ,
քո հեռութեամբ մահ ինձ բերես ․
Եթէ կարի ես մօտակաց՝
մահ ինձ բերէ մերկ քո երես ։
Հան սիրելիդ զիս եղկելի ,
հայցեմ՝ 'ի հէգ մարմնոյ աստի ,
Յանդ ըղձմայլել զերծ 'ի մարմնոյ
քաղցր 'ի գըգուանս անձառելի ։
Այպէս խօսի արտասուագին ,
այլ արտասուօք տապք ոչ մեղմին ․
Օի ծընանի յորդ արտասուս՝
նոյն իսկ տապիչ բորբոք սըրտին ։

Հարսն ու-
ղէր զփե-
սայն՝ ժը-
ման տանել
զուարճու-
թեանց ։

Յայնժամ բորբոք որ տոչորէ՝
ըզմանրաթել սըրտին վատնէ .
Այլ նոյն խոկ բոց՝ հաճոյ նըմին ,
որով վառեալ բորբոքեալ է ։
Զի մի մեռցի՝ ցանկայ մեղմել
ըզբոց հաճոյ 'ի վայելել,
Եւ գուն գործէ ըզկիզանող
զամբար ջահից 'ի նուաղել ։
Այսպէս վառեալ՝ կամ ցուրտ ջըրով [19]
ցօղէ զանդամ առ աղբերով,
Կամ հովանեալ ըզլանջ մերկէ
առ զովանալ մեղմիկ օդով ։
Բայց ոչ օգնէ՝ ոչ ջուր ցըրտիկ ,
ոչ զովարար օդ բարեսիկ .
Օդ ըզզամբար կըրկնապատկէ ,
և հուր ջըրով աճէ սաստիկ ։
Քանզի յայնժամ բերէ 'ի միտ
զվերին բըլրոց սար ծաղկախիտ ,
Յոր հեշտ Զեփիւռք քաղցրիկ հընչեն ,
յոր ջուրք հոսեն ականակիտ ։
Ի յիշել անդ ծանր է նըմին՝ ԻԲ
նըստիլ օտար և բացային .
Սուզիլ անձկայ յերջանիկ գետ՝
զորով շընչեն սիւկք երկնային ։
Այսուիկ տարփմամբք գերօրինակ
աճեն հըրդեհք սիրատենչակ .
Եւ Զեփիւռոսք ըզնոյն մեղմեն
ոչ զայն մըղձկէ ջըրոց վըտակ ։

Ըղձեր հողմոց նա քանքարտայ՝
թէ զօրութիւն չէք 'ի նոսա.
Մ՛եր աղբերաց սառնասառուցց՝
խուն ցրտութիւն ընծայէ նա:
Զայն տապ ջերմոյ զոր ոչ մեղմէ
և ոչ հողմով ցածուցանէ,
Եթերաշունչ մեղմէ զայն սիւկ,
եթերաբուխ վըտակ մեղմէ:
Սէրըն յայնժամ աստուածային
'ի բաց առնու զիւր ջահ փըքին,
Մ՛եղմիկ կիզուլ՝ մեղմիկ խոցել
ըզսիրակեզ սիրտ կաթոգին:
Ճըշդէ նա զիւր ձիր գըգուանաց
չափ պայմանէ իւր գըրգանաց,
Զի մի աջ իւր առատաձիր
մըղձկեցուսցէ ըզսիրտ յոգնած:
Ի.Դ. Բազում անգամ Հարսըն արի՝
առ զուտ սիրոյն որով վառի,
Հրաժեշտ առնու 'ի բերկրութեանց՝
որոց ժուժել տանիլ մարթի:
Զաքսորանաց ընթացակից՝
զաղէտ վըշտաց ըզցաւալից,
Պաղատի նա ոչ՛ինչ մեղմել
յերջանիկ շիթ ցօղոյն երկնից:
Ցաւ ըղձանայ, բայց ոչ խընդրէ՝
փեսայն զիւր այտ զի սըրբեսցէ.
Եւ զի շըրթունք վարակեսցին
միայն լեղեաւ նա փափաքէ:

Հարսն հրաժարեալ յերկնային զուարճու- [illegible]

Աւեթե դըրէ զաշխար և սուգ՝
 զոր նուազեն ուրախութիւնք .
 Ըզթաս լեղւոյն փոքր համարի
 զոր ամոքեն քաղցըր մեղուք :
Նուրիլ ծընդիլ թախանձէ նա
 յանապակ վիշտ՝ որչափ և կեայ .
 Եւ չարչարիլ անմըխիթար
 կարօտակէզ խընդրէ անձկայ :
Ընտրէ ըզմահ որով մեռցի
 թէ սիրելով ոչ չարչարի .
 Եւ հրաժեշտ տայ 'ի մահուանէ
 զի առաւել չարչարեսցի :
Այս կեանք նըմին ոչ է սիրուն ,
 թէ չէ ցաւովք միշտ ըզգայուն .
 Հաճոյ նըմին և բերկրական՝
 կեանք ցաւագին և վըշտասուն :
Երբեմըն կեանք հաճոյական ,
 երբեմըն մահ է բերկրական .
 Յորժամ այն կեանք են մահատիպ ,
 յայնժամ յաւէտ հաճոյական :
Բառնայր արդեօք մահ ըզհընար
 'ի չարչարիլ երկարաբար ,
 Այլ մեռոտ կեանք տայ զանձկալըն
 հընար՝ 'ի սէր տանջիլ երկար :
Ախորժելի են չարչարանք
 քան ըզմահուն շուտափոյթ անցք ,
 Օ ի յամերամ չարչարանաց
 առատագոյն մընան բերկրանք :

Մինչ ճաշակէ հարսըն սիրող
զանոյշ կայլակ եթերացող,
Նա թէ ըմպէ բերանաբաց
զբաժակ վըշտաց լեղւոյն ջամբող։
Ուրախ անձամբ եւ թալացեալ
յիւր սուրբ Փեսայ հիւսեալ խառնեալ,
Նոյն յօդակապ ՚ի մի կապէ
ըզսիրտ զուարթ եւ ըզթաղծեալ։
Կենդանի՛ եմ միշտ առձայնէ,
այլ ոչ թէ ես՝ նա յեղեղէ.
Այլ կայ յիս Կեանք աստուածային,
որ ինձ անմահ կեանըս տայէ։
Կուրծք են անսիրտ եւ ամայի,
(զի իմ Փեսայ՝ զիմ սիրտ ունի.)
Օ՜ի զօրացայց կեալ եւ շընչել
զսիրտ Փեսայիս իմ կուրծ ունի։
Նորջանի՛կ հարսն աստուածական՝
երբ հասանէ յայս աստիճան,
(Որ է սիրոյն կատար վերին,)
եւ վայելէ ՚ի սուրբ Փեսայն։
Նոր ՚ի ստորին աստիճան կայ
թալկեալ անձամբ նուաղի նա.
Խնդրէ անձկով վազէ սիրով.
բայց եւ այնպէս է բացակայ։
ԺԳ. Մինչ չէր բացեալ՝ նա ոչ խնդրէր,
ոչ թալկանայր եւ ոչ վազէր.
Օ՜ի մի լիցի բացակացեալ
խնդրէ թալկով վազէ ՚ի սէր

Բաղդատու-թիւն վերջին աստիճանի Սիրոյն ընդ նախընթա-ցին։

Ճարտն 'ի կոչիլն և նա կոչէ ,
յորժամ խնդրի՝ և նա խնդրէ .
Զիւրըն կոչող նա ոչ ունի ,
խնդրէ ունել , անձկով կոչէ ։
Այլ երբ ելցէ 'ի բարձրագոյն
'ի ցանկալին կատար սիրոյն ,
Ոչ ևս յայնժամ ըզնոյն խընդրէ ,
ոչ ևս անձկով կոչէ ըզնոյն ։
Քանզի եգիտ զիւր սիրելի՝
յոր թալկանայր սէր անձկալի .
Ճարտըն ոչ ևս այլ թալկանայ ,
ուր և փեսայն այլ ոչ ծածկի ։
Ի բաց վանէ ըզթալկութիւն՝
սուրբ փեսային ներկայութիւն .
Այսպէս հերքէ վըտարական
տիւ լուսացայտ ըզմըթութիւն ։
Լըռեն շըրթանց հառաչք տըխուր ,
երբ ընդունին քաղցրիկ համբոյր՝
Այտք երեսաց այլագունեալք
նախ յարտասուաց թացեալք յաղբիւր ։
Զուարթագին դէմք կարմըրին .
այդ կարմրութիւն՝ սիրոյ է ծին .
Այդ կարմրութիւն բոցանըշոյլ
'ի դուրս ցայտէ 'ի հըրոյ սըրտին ։
Փայլատակեն բիբք իւր ական
'ի դողդոջուն 'ի ցայտ փայլման .
Ոչինչ ընդհատ 'ի պարզ գիշեր
ոսկեճաճանչ աստեղք շողան ։

Յանախտ 'ի դիրկ սուրբ փեսայի
երբ վայելեալ Հարսն ըզմայլն ,
Սէր ողջախոհ որով ջեռաւ՝
սքանչելապէս եռայ վառի ։
Նախ սէր ջեռնու՝ յետոյ եռայ ,
վառի՛ ապա երբ սաստկանայ ,
Մ՚ինչ 'ի սահման բոցոյն ելոյ
'ի վախճանի հասանէ նա ։
Յայնժամ կիզու Սէր կաթոգին
ըզսիրտ վառեալ սիրող Հարսին .
Հարսըն սիրէ խանդաղակաթ
ըզբոցակէզ ջահ փեսային ։
Յափըշտակէ՝ յափըշտակի ,
ըմբռնէ նա՝ և ըմբռնի .
Գիրկս արկանէ և ընդգըրկի ,
և միակ կեանք զերկոսս ունի ։
Մ՚ահ յաչաղկոտ է անհըզօր՝
խըզել քակել ըզկապ հըզօր .
Սէրըն յօդիչ սըրտից նոցա
տևէ ցըմահ երկարաւոր ։
'Ի վայելուած սուրբ գըրգանաց
և 'ի գորով հառաչանաց ,
'Ի յանկ հանէ Հարսըն սիրող
զաստուածադիր ըզկէտ կենաց ։
Յաքսորանաց զերծեալ նորա
'ի հայրենիս դիմէ ապա .
Առնու զանուն քաղաքացւոյ
'ի սահմանին յեթերակայ ։

Ընթացակցի գընացելոյն
շըքնաղ կաձառ զօրաց Հրաքուն .
Կայ ընդառաջ Սէրն աստուածեան
յԱպարանիցն 'ի գերաքուն :

Յաղթական հանդէս հոգւոյ մինչեւ յերկինս :

Ո խորդ փայլէ հրաշագընին՝
շըքեղ հանդէս յաղթանակին ,
Յելս հոգւոյն յաղթականի
բարձրագըլուխ յերկրէ յերկին :
Հազիւ զօրէ աստեղաքնակ
վիպասանել Մուզայն երգակ ,
Բայց ըստ կարի նուագեսցէ
իմ Թալիա քանահիւսակ :
Կուրս ելանեն կառք ոսկեղէն
փայլակնացայտք և ամպեղէն .
Քան ըզպայծառ լոյս տուընջեան
ամպք այնոքիկ փայլատակեն :
Յորս 'ի մէջ Սէր աստուածեան
յաղեղն 'ի ջահ բարենըշան ,
'Ի յերեսաց շողք հատանին
քան ըզձաձանչ արփիական :
Հաւատ ամբիծ նըստի յաջմէ ,
և անտըխեղծ Յոյս 'ի ձախմէ .
Սա՛ զիւր նըշան՝ նա՛ զիւր կընիք
գեղեցկապէս արտայայտէ :
Սէն ըզգըլխով քող պատըրուակ
նոյն և զաչօք ունի համակ .
Ո օգոստափառ Խաչին պարզէ
զամենայաղթ ըզմըրցանակ :

Միւս անքըթիթ և աչագեղ
զաչըքն ունի 'ի յարկ աստեղ.
Խարխուխ անշարժ կայ 'ի ձեռին,
իւր պատմուճան կանաչագեղ:
Ի մերձաւոր բազմոց կառայ
Նըստի ակումբ Րաջարութեանց,
Իւրաքանչիւր յիւրում կարգի
կան զետեղեալ պայծառազգեաց:
Պարք զուարթնոց վերուստ Ճախրեն
և ցընծալից ծափս հարկանեն.
Դասք երկնախումբ երաժըշտաց՝
քաղցրանուագ գեղապարեն:
Կէսք սաղմոսեն քաղցրաբարբառ,
կէսք փըղոսկրեայ շարժեն կիթառ.
Երգք ցընծութեան են ձայնակից
ընդ հեշտալուր գործեաց բարբառ:
Կրկնեն զեռամոս քաղցրահընչիւն,
երբ խորտակեալ ըղկապ մարմնոյն՝
Թռչի հոգին վերաբազմիլ
յօգոստափառ 'ի գահ անուոյն:
Լինի նըմին զոյգ թևակից՝
իւր Զուարթուն նախ ուղեկից,
Ըզթև նորին դեռ անընտել՝
ուղղէ յանդէտ ընթացս ելից:
Ցոյց տայ ըզԿաւս՝ և վերոտնեն.
ըղհետ կառաց յանժամ կըրձեն
Րուբըն Սոլոխք ամօթապարտք
որք 'ի մարտին նըկուն եղեն:

Մարմին ըմբոստ նուաճեցեալ,
և աշխարհի փառք ընդոտնեալ,
Եւ լեգէոնք Տարտարոսին՝
դաւաճանման զոյգ վատթարեալ։
Կառք յաղթական օդոստական՝
ընդ երկնային ճախրեն սահման,
Ընդ տասնեսին անցեալ թատրոն
աշխարհին այն եթերական։
ՙՆորա լուսով դրոշմեալ կընքէ
զփայլուն կամարս յոր հասանէ.
ՙՆորանըշոյլ լուսով շողան
պարք աստեղաց զորըս կոխէ.
Երբ հասանէ յոլորտ Մերին
շարժիչ այլոց ամենայնին,
Գան յերևան՝ երջանկաւէտ
արքայութիւնք եթերային։
Ստորագ-րութիւն Հրեշէին Երինէ։ Փայլէ վերուստ Մայրաքաղաք
բոլորագեղ և գերունակ,
Համակ պայծառ և փողփողուն
շողայ 'ի փայլ ոսկւոյն յըստակ։
Պատի զնովաւ ծիր պարըսպաց
'ի ձիւնափայլ յասպիս լուսանց.
Յայնչափ գոհար ճառագայթէ
որչափ են յաղթ նեցուկք իւր սեանց։
Երկոտասան դուռք փեռեկին
սքանչելակարգ 'ի պարըսպին,
'ի մարգարիտ փայլէն չըքնաղ
'ի միաձոյլ և յերկնածին։

’Ի ժամանել աստէն կառաց ,
ըզկայ առնու առ սեամ դըրանց ։
Պայծառ ակումբ՝ զուարթագին
ոստնու ’ի վայր առ ’ի կառաց ։
Նա յօսկեղէն գաւիթ ’ի լայն
’ի ներս մըտէ , դըրունք բանան .
Մ՝ընան միայն Հաւատ և Յոյս՝
ա՛նդ արտաքոյ հանդէպ դըրան ։
Զի մուտ նոցա խափանեալ է ,
ուր միտք անքոյթ զայն տեսանէ .
Յոր հաւատաց յառաջագոյն
և յոր տարփաց՝ յա՛յն վայելէ ։
Առաջնո՛րդ է Սէրըն ինքնին [illegible]
կանխէ ըզխումբ իւր կառակցին .
Յառաջ խաղայ Հարսըն նորէկ
դիտել ըզվայր եթերային ։
Բ՝ընակք երկնից ընդառաջեն ,
յաղթականին երկինք ծափեն .
Ըզնորամուտ ՝Քաղաքացեաւ
երկնակամարք դիրկս արկանեն ։
Կէսք պըտեղամբ վարդըս քաղեն ,
կէսք ըզփափկիկ շուշան կըթեն .
’Ի ծոց նորա և առ ոտիւք
երկաքանչիւրք ծաղիկ սըփռեն ։
Ի՛ որ կայլէ փունջ մանուշակ ,
է՛ որ հիւսէ ծաղկեայ պըսակ .
Մա՛ ըզգլխակ լընու ծաղկօք ,
լընու ծաղկօք նա՛ ըզդաստակ ։

Լցեալ բուրմամբ անուշութեան
և ուղեկցեալ գունդք վերնական
Ածի առ գահ փութանակի
Երեքսրբեան Երրորդութեան։
Ընդ Սրովբէից գունդք բոլորեալ՝
կան գըլխակոր թևասքօղեալ,
Ի դասադաս սրբերգութիւն
անլըռելի փառաբանեալ։
Ընդ ծերակոյտ վերին երկնից
ծափս հարկանեն՝ են երգակից,
Եւ 'ի գըլխոց հանեալ ըզթագ՝
հեղուն զանձինս առ գահոյից։
Փայլէ 'ի գահ լուսածագող,
զմըրըխտագեղ գեղեցկաշող,
Կոյսըն Դըշխոյ Դուստր Աստուծոյ
Հարսըն նորին նոյն և ծընող։
Մա՛յր ողջախոհ՝ սուրբ Միածնին,
Դուստըր՝ սիրուն Հօրըն վերին.
Մըխիթարչին Հարսըն անախտ
տաճար ւաթոռ աստուածային։
Լուսին կոխան նորին հետոց,
Աստեղք պըսակ, Արփին՝ օթոց,
Գեղեցկագոյն փայլէ միակ՝
Արփւոյն Լուսնոյն Զարդուց այլոց։
Ոսկի 'ի յաջ մօտ առ Արքայն,
ուր եւ մարմին՝ նըստի միայն.
Ունի հըզօր իշխանութիւն
Արքայուհւոյ Աստուածական։

Օ՜ հայրըն սիրուն՝ այս Թագուհի,
բուրեալ 'ի հոտ Լիբանանի,
Որդւոյն հանդէպ կացուցանէ
և նա ածէ Հօրն առաջի։
Օ՜ որ Մ՛այր՝ Որդւոյն մատուցանէ,
Որդին՝ իւր Հօր մատուցանէ.
Մեր փոխադարձ Որդւոյն և Հօր՝
լի՛ թաթաղուն ըղձնա գործէ։
Պըսակ փառաց արժանագոյն,
գահ յարակայ սօթոց լուսոյն,
Տալ երջանիկ Հարսին վըճռէ
Երեքանձնեան Սուրբ Պետութիւն։
Յայնժամ վայրի՝ բոլորովին
լըցեալ յանձրև 'ի լուսածին, 22
Լինի յարմար և անկաւոր՝
մըտել 'ի ծոց յաստուածային։
Բաղմեալ անքոյթ յայն աստուածեան
գաղտնածածուկ սըրըսկապան
Դիտէ ըզվարձ՝ յոր նախ անձկայր
և ըզգխտեալ ունի յայնժամ։
Նա զոր ունի վարձ պարգևաց,
տեսանէ զայն 'ի դարս անանց՝
Մ՛ընալ յաւէժ անկապտելի
և աննուաղ յամէն չարեաց։
Կըլանէ նա բերանալիր
զայն խընդութիւն անդընդալիր,
Ոյր չէ՛ք երբէք խափան ընդհատ՝
յերկևանաց ներհակակիր։

Փառք է.
բանեալ
Հօգւոյն։

Օ՜ի ցաւ և սուգ՝ մահուանք դաժանք
են 'ի յերկնից արտասահմանք,
Եւ միանգամ ժառանգեալ տուրք
են անկապուտք և անխախտանք ։
Նոյն ինքն Աստուած լեալ 'ի գլխին
լինի պարգև սիրող Հարսին.
Յայնժամ և Հարսն երանական,
լինի նըման տեսեալ Եւին ։
Գիտէր նախ Հարսն օտարական՝
որչափ փեսայն իւր Աստուածեան
Ամենիմաստ՝ ամենագեղ,
և սիրելի՝ հըզօր՝ փարթամ ։
Գիտէր նա զայս ձիրըս անբաւ
քօղեալ պէսպէս ընդ առակաւ.
Տեսեալ էր նախ 'ի հայելւոջ
զիւրըն Արփի ընդ պատկերաւ ։
Լոյսըն ծածկեալ պայծառագոյն
յայնժամ յաղօտ ամպ Հաւատոյն
Այժըմ անքօղ անմերձարկու
շողայ հերձմամբ ծածկող ամպոյն ։
Դէմ յանդիման այժըմ յաւի ԺԵ
'ի խանդակաթ յիւր սիրելի.
Այնպէս պայծառ զայն Ճանաչէ՝
որպէս ինքն էր նըմին յայտնի ։
Ճանաչէ զայն՝ սիրէ նոյնպէս
զոր սէրտ սիրեաց երբ ոչ եւտես.
Արդ տեսանէ՝ զի յարաժամ
զայն սիրեսցէ երջանկապէս ։

Այս տեսութիւն պայծառագոյն
  վարձք արժանի է կոյր Սիրոյն.
  Շնորհէ նըմին սիրել անվերջ
  պայծառերես տեսեալ Բարւոյն:
Քա՛ղցր է սիրել զանհուն Բարին,
  Թէպէտ սիրել հա՛րկ գըլխովին.
  Որչափ նուազ ազատ է Սէր,
  այնչափ հաճոյ և քաղցրագին:
Ո՛րչափ իցէ Սէրն անուշակ,
  ո՛րչափ Աստուած սիրատենչակ,
  Ո՛րչափ փայլէն պարգևք ձըրից
  զոր պատրաստեաց աջ ընդարձակ,
Զայն ոչ ետես ակըն բընաւ
  և ոչ 'ի լուր ունկան հասաւ.
  Չէ՛ ձեռընհաս պատմել լեզու,
  մեր մըտեղեաց 'ի սիրտ չանկաւ:
Գիտեն վերինք փորձք կըրթական,
  յայտնել բանիւ ոչ են իշխան.
  Կա՛ց Թա՛լիա՝ արձանացի՛ր
  առ փակ սեմովք եթերական:
Առ երջանիկ սեամ Արքունեաց
  ըղձքոյդ կախեա՛ քընար աղեաց.
  Սաւառնաթև խոյացի՛ սիրտ
  ուր ոչ զօրէ ձըկտիլ Քերթած:
Առ խոյանալ անքոյթ 'ի նոյն,
  Ս՛ոյլըդ գըթած չըքնաղ Սիրոյն՝
  Իզմեր ուղղեա՛ թև ապիկար,
  ձե՛ռըն մատո նորափետրոյն:

Տո՛ւր սրբաշարժ սրբոյն Թեոց՝
փայլատակել յաստուածեան բոց ․
Հերիք է մեզ և կայծ անգամ՝
'ի քոյդ վառեալ սրբոյդ հրնոց ։
Որ զիմ Արհեստ վերծանեսցէ ,
տո՛ւր զի ուսեալ՝ քաջ սիրեսցէ ․
Տո՛ւր զի ուսեալ՝ քաջ սիրեսցի ,
զի և ինձ շահ երգ իմ բերցէ ։
Մե՛րձ է վախճան Ներթողութեան ,
բայց մի՛ սիրոյս լիցի վախճան ․
Սէրըն որ տայ բարուք սիրել՝
ձըգի տևէ և յետ մահուան ։
Հագներգութեան տաղք իմ Վերջին
'ի սուղ պատուէր ամփոփեսցի՛ն ․
Օ՛ ի բարիոք միշտ սիրեսցես՝
սիրեա՛ զԱստուած , սիրեա՛ մեկին ։

# ՎԱԽՃԱՆ

## ՀԱՏԸՆՏԻՐ ԻՄԱՍՏՔ ՄՐԲՈՑ ՀԱՐՑ

Պատճառ սիրելոյ զԱստուած է Աստ- Ա
ուած. եւ չափ պայման՝ սիրել անպայման: Բեռ-
նարդոս:

Նոյն ինքն պայմանն՝ է սիրել անպայման:
Օգոստինոս:

Ճշմարիտ Սէրն չէ գոհ ընդ մի աստիճան: Բ
Մինչ 'ի բարձրագոյնս թռուցանէ, եւ առ կա-
տարելագոյնս անդադար ջանայ հասանել: Լաւ-
րենտիոս Յուստինեան:

Երբ զձայն լսես եւ զբախումն Սիրելւոյդ ո՛,
բա՛ց զդուռն. տեղի տացեն ամենայն խոհք եւ
խռովք: Գրիգորիոս:

Յայսմանէ՝ զի մեք մարդոյ սիրով եւ ըղձմամբ Գ
եռանդագին վերին յաստուածայինս, յորում քա-
ջանայ է հասանել կատարելութեան, զինչ գայ
'ի բաց թօթափել զամենայն ինչ՝ որոց մարթ է
յապաղեցուցանել զնա առ 'ի վերել յաստուած:
Թովմաս Ագուինացի:

Նախադասելի է Սիրոյն քան զարենակցութիւն, Դ
եւ Աստուածպաշտութիւն քան զազգականու-
թիւն: Ամբրոսիոս:

Որովհետեւ առողջութիւնն է պատճառ ու- Ե
տելոյ եւ ըմպելոյ, զինչ երթայ ողախորէն զզ-
ուարճութիւնն կանոնաւոր, եւ յոլովէ յառա-
ջել եւ նկրտել, մինչեւ լինել սորին աղագաւ՝ զոր

ինչ առողջութեան աղագաւ գործել առնեմ չանցնէ և ժամ ժամմ. և ոչ նոյն եղանակ է երկարաւանչե-րոյն : Զի որ ինչ շատ է առողջութեան, ա-ժան է հեշտութեան : Օգոստինոս :

Յորժամ պղարս հարկաւորութեան կճարել ջանամ, ծառայեմ հեշտախտութեան. ընդ քօղով հարկին անկանիմ 'ի հաղբս հեշտախտութեան : Բեռնարդոս :

Ձ. Ո՛չ ուտելն մարմնոյ չէ՛ աստուածահաճոյ՝ քայց ըստ որում գործ առաքինութեան. որ է այնպի-սի՝ ըստ որում լինի պարտուպատշաճ ընդորոշու-թեամբ : Թովմաս Ագուինացի :

Զոհս մատուցանէ 'ի յաղթութեանն, որ ժա՛մ ներկայերոյ կարէ իւր պասայաութեամբ, և ժամ ջնջոյն պահաւութեամբ անկալ խողովակէ մար-մնն : Լեւոն :

Եթէ տկարացուցանել գոյն գործեմ և մաշել մարմինն, ոչ և ունիմ՝ որոյ ընկերակցութեամբ և սատարութեամբ կարեցայց առ մեծամեծ գործս, Գրիգոր Նազիանզացի :

Նմանէս պարտ է հալածել զքո մարմին՝ զի ծառայեսցէ, և այնպէս պարտահանել զնա ծառա-յութեամբ, զի մի մեռցի : Եթէ զմարմին քո խողովակես ըստ չափ, սպանանես զքո քաղաքացե-տարցեալ՝ եթէ հալածես զնա ըստ արժանն, քանդանես զքո թշնամի : Բեռնարդոս :

Է. Ոչինչ այնպէս լա՛ւ է հոգւոյն՝ եբրև շնա-շանդել : Օգոստինոս :

Զի՞նչ քաղցրագոյն քան զարգասիս Աս-տուածսիրութեան : Ինչ չէ լաւ Աստուածսի-

րութեանն, այլ՝ 'ի ներոյ, և ոչ 'ի տրտմութենէ:
*Բեռնարդոս:*

Զգեղեցիկ և զբազմադէմ կերպարանս, ըզ-պայծառ և զզուարճալի գոյնս սիրեն աչք: Բ.
Ո՞ գրաւեցին զոքա զհոգի իմ. գրաւեսցէ զնա Աստուած՝ որ արար զայսոսիկ, թէպէտ և բարիս յոյժ, այլ՝ նա՛ ինքն է բարին իմ, և ոչ այսոքիկ: *Օգոստինոս:*

Զհրապուրանաց անոյշ հոտոց ոչ յոյժ փոյթ ունիմ: Յորժամ ոչ գան, ոչ խնդրեմ. յորժամ գան՝ ոչ մերժեմ. պատրա՛ստ եմ նաև զրկիլ միշտ յայնցանէ: *Նոյն:*

Հեշտութեանց լսելեաց պնդագոյնս թակարդեալ էին զիս և նուաճեալ՝ այլ արձակեցեր զիս և ազատեցեր: Արդ՝ 'ի հնչմունս զորս կենդանացուցանեն պատգամք քո, յորժամ երգին քաղցր և արուեստաւոր ձայնիւ, խոնարհեալ լինիմ՝ թէ փոքր մի հանգչիմ. ոչ զի յարեցայց, այլ զի յարեայց յորժամ կամիմ: *Նոյն:*

Չէ՛ արժան (խօսել) զանօթի կամ զանեղըտ ծրայ. որպիսի են սոքա. Ո՞չ վարէ զատենակալութի. ո՛ հրաժարեաց յատենակալութենէ. յէնչ սակս տուգանեցաւ սա. ի՛ւ այնչափ զանձեցանա, և մեծացաւ յոյժ. զինչ միայն եթող սմա 'ի մեռանել խորամ... և այլ այսպիսիք բազումք: Թ.
*Ոսկեբերան:*

Տեսանեմք զերկրագործս՝ յորժամ 'ի մի վայր ժողովին յանկարծ և անյանկոյթ զրուցաբանել զերկրագործութենէ. արհեստաւորք զարհեստից իւրեանց, վաճառականք զվաճառաց իւրեանց,

և ատենաբանք զմաչացութեանց իւրեանց խօսս ՚ի դէմ արկանել: Այլ՝ աւա՜ղ աղէտիցս. վասն զի ծառայքն Աստուծոյ անփոյթ են լսել կամ խօսել զորս անէ են իւրեանց վիճակի: *Լաւրենտիոս Յուստինեան*:

Ժ Որ սիրէն զԱստուած՝ զամենեսին առ սէրն Աստուծոյ յորդորէ. առ ամենեսին զսէրն Աստուծոյ գովէ. և թէ քանի՞ քաղցր իցէ սէրն Աստուծոյ, քանի՞ չար և դառն՝ սէր աշխարհի, ցուցանէ ... Ամենեցուն քա՜ղցր համարի՝ որ ինչ քաղցրանայ անձին, ամենեցուն հաճոյ զոր սիրէն, ամենեցուն յայտնի՝ որ ինչ ծանօթ է ինքեան: *Օգոստինոս*:

Քա՜ղցր են ՚ի կոկորդ Հարսին՝ գովեստք Փեսային: *Գիլբերտոս*:

Ա՛յս է մեծաբարբառ սրտի, ա՛յս՝ վառեալ սիրոյ, զամենեսին յորդորել ՚ի գովել զցանկալին: Ա՛յս է սեփական մտաց՝ որ զօրհնաբանապատ բերկրի մեծապէս ՚ի խորհելն զԱստուծոյ, որ հիացեալ զարմանայ ընդ գասս նորա: *Ոսկեբերան*:

Ա՛յս ողորմութիւն է սիրողաց, զի զսէր իւրեանց ոչ կարեն ծածկել լռութեամբ: *Լաւրենտիոս Յուստինեան*:

Խօսի զսիրելւոյն իբրև ճշմարտապէս սիրեցեալ, և ճշմարտապէս սիրելի, զի սիրէ յոյժ: *Բեռնարդոս*:

ԺԱ Կամի՞ս գիտել զի՞նչ սիրես, տե՛ս թէ զի՞նչ խորհիս: *Լաւրենտիոս Յուստինեան*:

Հաստատարիմ հոգին՝ անյեղանօք յոգւոց հանէ առ ներկայութեանն, համայն և քաղցրութեամբ

հանգչի ՚ի յիշատակն ։ *Բեռնարդոս* ։

Յիշատակն Աստուծոյ մի երբեք հեռասցի ՚ի քէն ։ Զմտաւ ած զնա միշտ ընթերակայ, և ըզ-քեզ միշտ առաջի աչաց նորա ։ *Դորոթէոս* ։

Նմանողութիւն է երանութեան՝ հանապազոր-դեան յիշատակ Աստուծոյ ։ *Բեռնարդոս* ։

Մա՛ր և եթէ կարօղ ես կանգնել զսեղան քո․ զի ոչ տեղին խափանէ, և ոչ ժամանակ արգե-լու ։ Բայց թէպէտ և ծունր ոչ կրկնեսցես, և ոչ բախեսցես զկուրծս, և ոչ յերկինս զձեռս ամբարձցես, եթէ լոկ զմիտս եռանդագինս ընծա-յեցուսցես, զկատարելութիւն աղօթիցն ՚ի գլուխ հանես ։ Քանզի հնար է և՛ ելելոյն ՚ի հրապա-րակ, և՛ շրջելոյն՝ առնել աղօթս երկայնաձիգս․ հնար է և նստելոյն ՚ի կրպակի և խաղախորդին՝ նուիրել Աստուծոյ զանձն ։ *Ոսկեբերան* ։

Թէպէտ և ՚ի բաղանիս իցես՝ աղօթս արա․ ուր և իցես՝ աղօթս արա ։ Տաճա՛ր ես դու, մի տեղի խնդրեր .... Աստուած մե՛րձ է միշտ ։ *Նոյն* ։

Պատաղեալ ես դու զարարողն․ օրհնեսցէ անձն քո զԱստուած ։ Աերաժնոր առնուս․ Տե՛ս զինչ ասէ Առաքեալ․ Եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, զամենայնն ՚ի փառս Աստուծոյ արա-ջիք ։ *Օգոստինոս* ։

Ո՛հ լոյս ծայրագոյն և անմատոյց, ո՛րչափ բա-ցական ես յիմմէ տեսութենէ, որ այսպէս առա-ջի կամ քում տեսութեան ։ Ամենայն ուրեք ներ-կա՛յ ես բովանդակ, և ես չտեսանեմ զքեզ ։ ՚Ի քեզ շարժիմ, և ՚ի քեզ եմ, և առ քեզ ոչ կա-

րեմ մատչել։ 'Ի ներքս եմ ես դուռ, և շինև, և ես չտեսանեմ զքեզ։ Անսելմոս։

Յամենայն 'ի գործս կամ 'ի խորհուրդս քո՝ զԱստուած առ ընթեր քո յիշեսցես. և զամենայն ժամանակ յորում ոչ խորհիս զնմանէ, կորուսեալ համարեսցիս։ Բեռնարդոս։

ԺԲ. Կատարեալ Սէրն Աստուծոյ յո՛ր կողմն և դառնայ՝ ունի ընդդէմ աղքատարութեան սիրոյ։ 'Ի վեր արկանէ զայսոսիկ իբրև շղթայս. և յամենայնի զոր նկատէ, յինքն ցուցանէ յիշատակ սիրոյն իւրոյ։ Ալեքսանդրոս Ալեքսանդրեան։

Եթէ իւրաքանչիւր 'ի բարեաց բերկրալի է, խորհեա՛ց ուստի ուղղի, թէ քանի բերկրալի իցէ բարին այն բովանդակեալ զուարճութեան ամենայն բարեաց... Եթէ բազում են և մեծամեծ բերկրութիւնք 'ի բերկրալիս, ո՛րպէս և քանի բերկրութեան կայցէ յայնմ որ արար զնոսին՝ բերկրալիս։ Անսելմոս։

Քանզի Աստուած զարարածս իւրև անդունդ էր ոչնչութեան առաջի, ընդ այնս սիրողաց իւրոց եւս գործեաց առ ինքն։ Բասիլիոս Սելևկիացի։

ԺԳ. Թէպէտ զամենայն ժամանակ կենաց պա՛րտ է քեզ առ գործ աստուածային նուիրել... բայց արժան է ունել որոշ և պայմանեալ ժամս, որով լիագոյն պարապեսցիս յԱստուած, և որ զքեզ առ ծայրագոյն մաքրութեան օրինօք կա՛յս շնորհ ունիցի։ Ոգոստինոս։ կամ Հեղինակն Թղթոյն առ Դեմետրիադէս։

Պէտք է առաջի աղօթականին՝ սրբազան պատ-

հեր Աստուծոյ, ծննդեանն, կամ կաթնարբու-թեանն, կամ վարդապետութեան նորա և կամ մահուանն ... և որ ինչ այսպիսի դէպ եղիցի, հարկ է այնմ կամ սերտել զհոգին 'ի սէր աստուածէ-նութեանց, կամ զմարմնոյն վարել զմոլութիւնս, վանել զհրապոյրս, և շիջուցանել զցանկութիւնս ։ Բեռնարդոս ։

Հեռի լիցին յաղօթից բազում բանք, այլ ոչ պակասեսցեն բազում պաղատանք ։ Օգոստինոս ։ ԺԴ.

Այդ գործ յոլովակի կատարի առաւել հեծու-թեամբք քան բանիւք, արտասուօք քան խօսակ-ցութեամբ ։ Նոյն ։

Աղօթեա՛ յաւուր, աղօթեա՛ հաստատարմութեամբ և սիրով, աղօթեա՛ ծպութեամբ և երկայնմտու-թեամբ ։ Նոյն ։

Ոչ վասն այնր յաղօթից արժան է դադարել ... այլ ասելով ևս աղօթել ։ Բոնավենտուրա ։

'Ի սեան սրտէ և ողջախոհ հառաչանօք սի-րեա՛ զնա (այսինքն զԱստուած,) բոլորովեա՛ց ա-նա, անչափ նմին ։ Օգոստինոս ։

Եթէ աղօթից սպէղ հայցէ և արտասուաց՝ անձն ջերմեռանդն, վասնզամ դարձցի ։ Բեռ-նարդոս ։ ԺԵ

'Ի մարմնի աստ մարթ է լինել առ ներկայու-թեան Փեսայն յաճախ խնդութեան, այլ ոչ լիութեան ։ Նոյն ։

Սէրն մատուցէ, և սէրն արբեցուցանէ .... արդարև բաժակն է զօրութեան սիրոյն, արբեցու-ցիչ և յափշտակիչ ։ Գիլբերտոս ։ ԺԶ

Բազում անգամ և յէջանք երբ 'ի ջուր կայս-

ամէն, ստորնոտն 'ի վերոյ քան զջուր, և զանյանէն զխաղաղարար բնէջ օթևանի էակեանց, յորժամ զանձինս առ ծոցը մի յօդն վերամբարձ ոտնին: Այսպէս անշուշտ՝ մտօք արբեալն՝ յորժամ ներքին իմն կայթմամբ 'ի բաց կայտառէ յանձնէ... երևի ելեալ ընդ սահման բնածին կրաւորութեան: Ռ.*իքարտոս վիկտորեան*:

Յայլոց գործառնութեանց ննջեմ և դադարեմ. Վասն որոյ ասէր իմ հոգի ազատագոյնս առ 'ի դադարել յայս արբեցութիւն և յըմպել զգինին: Ո՜վ կարգ նորաշաւիղ: Յարբեցութենէ քուն, և 'ի քնոյ արթնութիւն: Գ.*իլեբերտոս*:

Բարի քուն՝ յափշտակութիւն է մտաց և օտարացումն յախորժակաց մարմնոյ, և (եթէ մա՛րթ ինչ իցէ ասել) նաև 'ի զգայութեանց մարմնոյ: Յայնժամ առաւել լո՛ւրջ է և հոգէ Սէրն հոգևոր, յորժամ իսպառ թմրին ամենայն կիրք և ցնցաւոր ախորժակք: Ո՜վ նինջ և՛ արբեցութիւն, երկնաքանչիւր իւր զուարճարարութեան զնմանութիւն բերեն: Ն.*ոյնն*:

Գինեբերբոսք արբեցութեան քո Տեառնայ զիս յաղթահարէ, և քեզ աւանդէ, թմրեցուցանէ և զարթուցանէ: 'Ի մոռացումն ածէ ինձ զաշխարհայինս, և ոչ թողացուցանէ մոռանալ զքեզ: Ն.*ոյնն*:

'Ի քաղցր քուն հանգուցեալ իմոյ՝ հոգ հոգեղէս արթնագոյն ևս երազէ զքեզ: Քաղցր քուն է և քաղցր երազ՝ ոչ գիտել զայլ ինչ, գիտել զքեզ միայն: Ն.*ոյնն*:

Մկրտեալ էին (Մանկտիքն) այլ՝ հոգւով արեամբ, և ոչ ջաղջաւով։ *Բեռնարդոս*։

Մայրեալ կենդանական և արթուն թմրութեան ըմբռնորէ զներքին զգայութիւնս։ *Նոյնն*։

Մեք՝ թէ ճշմարիտ սիրեմք զՔս, պարտիմք ոչինչ կամել, և ոչինչ ամենևին գործել, քան զոր ճանաչեմք կամել նմա։ *Հերոնիմոս*։ ժե

Որ մերձենայ յԱստուած՝ մի հոգի է, և յաստուածային իմն անբաժան գլխովին փոխարկի. ոչ ևս զօրէ զգալ կամ իմանալ՝ բայց զԱստուած, և զոր զգայ կամ իմանայ Աստուած։ *Նոյնն*։

Ճշմարիտ սիրողն զայն միշտ ջանայ կատարել, որով կարո՛ղ իցէ հաճոյ լինել յաչս սիրելւոյն։ *Լաւրենտիոս Յուստինեան*։

Որ ուրախ լինի ՚ի Տէր, յոչինչ արտածո մարթի անկանել յայսմ զուարճութենէ։ *Ոսկեբերան*։

Այն արբեցեալ ոչինչ սիրէ երկրաւոր, ոչինչ նիւթական, ոչինչ ապականացու, և կամ փոյթ ինչ ունի զնոցանէ, յորմէ հետէ ելեալ է ՚ի տեղւոջէ երանեաց. և եթէ երբեմն ինչ ինչ ՚ի նոցանէ ՚ի վեր արկանէ իբրև ՚ի հարևանցի, անարժան համարի վայելել յայնս։ Եթէ յանկարծ ինչ յայտնեսցի պատահեսցի, զանց զնովաւ առնէ. ոչինչ ազդի ՚ի տեղել յախորժակ ինչ անցից։ *Բեռնարդոս*։

Որք միաբան են ընդ աստուածային կամաց, են գոգցես աստուածք ոմանք, ամենակարողք կարեաց կամաց։ *Բոնավենտուրա*։

Որ չունի սեփական կամս, զնորայն կամս՝ մշտ կար առնէ: Տորոթէոս:

Ուր սէր է՝ չէք անդ կասկած, այլ՝ ճաշակ քաղցրութեան: Բեռնարդոս:

Յայնմ որ սիրէ, կամ ոչ լինի վաստակել, և կամ սիրէ վաստակն: Օգոստինոս:

Սաստ և տաժանական կարծեցեալն՝ փոխարկէն 'ի հեշտութիւնս հոգևորս. զի ոչինչ իսկ ծանր են սիրողաց՝ վաստակք, այլ նոքին իսկ բերկրեցուցանեն: Նոյնն:

ԺԸ Կամայ և ակամայ կրել ունիս զ'ի վերայ հասեալ վիշտս: Այլ եթէ մատնիս կամօք՝ շահեցիս յոյժ. իսկ եթէ դժկամակութեամբ, ամբարտաւանս և հայհոյութեամբ, և ոչ իսկ այսպէս փոքրագոյն արարցես զվիշտս, մեծ ևս գործեցես զմեղսն: Վասն որոյ զայսուհետ ընդ մեզ ածեալ, զհարկն՝ կամաւոր արասցուք, օրհնութիւնս վերառաքելով Տեառն: Այսպէս նեղութեանց ակամայք՝ լինիցին քեզ արդեանց անձնիշխան կամաց: Ոսկեբերան:

ԺԹ Թուլամտեայ մարմին՝ յորժամ շարժեսցի նորա լինի ախտարագոյն և թուլագոյն: Թուլամտեայ հոգին՝ յորժամ նուաղի առ ստորակութեան յորդորանացն տենչանաց: Թուլութիւն մարմնոյն է շարժումն նորա կամ ոչինչ բնաւ, և կամ դանդաղեայ յոյժ: Թուլութիւն հոգւոյն է շարժումն նորա սաստիկ: Գիլբերտոս:

Ոչ թուլանայ սէր, այլ՝ սիրողն: Ուր գոյ սէր, անդ և թուլութիւն՝ եթէ հեռի իցէ սիրելին: Ո՞րչափ է թուլութիւն, բայց զգածումն

ինչ ծիւրիլ սիրողին վասն բացակայ սիրելւոյն: Նոյնն:

Ոչ երբէք անգործ է սէրն Աստուծոյ, զի գործէ մեծամեծս՝ եթէ է. իսկ եթէ հրաժարէ 'ի գործելոյ՝ ոչ է սէր: *Մեծն Գրիգոր*: Ի

Գործէ մեծամեծս, և համարի փոքր. գործէ բազում, և համարի սակաւ. գործէ յերկար և համարի սուղ: *Թովմաս Ագուինացի*:

Սէրն բերէ ոչ աստիճան առ աստիճան, այլ ընդ ամենայն միանգամայն, թռիչս արշաւել և ոչ քայլափոխել: *Ռիքարդոս Վիկտորեան*:

Թողեալ լինի կամովին 'ի դժկամակէն, յոր- ԻԱ
ժամ զբաղումս ընդգրկող ախորժակէն՝ թուլացուցանէ զպակասութի ապականացու մարմնոյն, և հարկն թողացուցանէ: *Թովմաս Ագուինացի*:

Արշաւելն զսա՝ է թողացուցանել զհայեցողութեանն 'ի պակասութենէ անտի մարմնոյն: Նոյնն:

Ա՛ն ներկայ բացակայութեան, և բացակայ ներկայութեան նորա, որ կորնչի, միանգամայն և ապացանի: *Ռիքարդոս Վիկտորեան*:

Բոցակէզէ քաղցրութեամբ: *Թովմաս Ագուինացի*:

Հոգի քո հալեալ նուաղի՝ ոչ զօրելով ժուժալ, և սիրելին քո անցեալ գնայ: Նուաղումն քո քաղցրանալ է նորա: Ի հեշտութեանց սաստկութեան միջոցին մեղմեալ կազդուրեն, զորոյ բերել զհանապազորդութիւն չե՛ս ձեռնհաս: *Գիլբերտոս*:

Ման հաստապանելոյ և պանդխտի յաշխարհի ԻԲ
աստ՝ չէ՞ք զուարճագոյն յիշատակ քան քաղաքին

*

այնորիկ յորմէ պանդխտանայ։ Նաև յիշատակութեան Քաղաքին 'ի պանդխտութեան չէ առանց ցաւոց և հառաչանաց։ *Օգոստինոս*։

'Ի զուր ջանահնար լինի ոք՝ շնորհաց այսպէս թալկացելոյ մեղմել ցաւս, արգահատել զթշուառութեան. եթէ ոչ 'ի ներքուստ պա՛րտ է բուժել զվէրս սրտին։ Վասն այնորիկ ոչինչ մարդկային մխիթարութեամբ անուշի սուրբ դառնութիւն ծածուկ ցաւոցն։ Ռ*իքարտոս* Վ*իկտորեան*։

Ոչ է առանց Աստուծոյ յորմէ հնար է առնուլ զմխիթարութիւն, որ ուսաւ ոչինչ սիրել բայց 'ի նմանէ ... Միայն մխիթարիչ իւր է նա՝ որ և բնակիչ։ *Նոյնն*։

ԻԳ. Մե՛ծ է և յոյժ մեծ, եթէ 'ի մարդկայնոց և եթէ յա̄ծայնոց զրկեալ լինել 'ի մխիթարանաց։ Թ*ովմաս* Կ*եմպացի*։

Սրբուհին Թերեզիա այսպէս սովոր էր խօսել ընդ Աստուծոյ. Տէր, Կ*ամ չարչարիլ*, *և կամ մեռանիլ*։ 'Ի *Ժամագիրս*։

Սրբուհին Մարիամ Մագդաղենացի Փացեան յամենայն երկնային գգուանաց՝ որովք լնոյր յորա-նայր, սովորալի առաքինութեամբ հրաժարեալ, զայն սովոր ունէր 'ի բերանի, Չ*արչարիլ*, *և ոչ մեռանիլ*։ 'Ի *Ժամագիրս*։

ԻԴ. Նպաստէն ամենայն նախընթացն մարթին լինել 'ի հաստատութեան. բայց այս նախ է միաւորութեան սիրողին ընդ սիրելոյն։ Զի թալկացեալն, և խնդրողն և ընթացողն՝ հեռի է. զի ոչ թալկանայր և ընթանայր, թէ չէր հեռի. և վասն այն թալկանայ և խնդրէ և ընթանայ, զի

մի հեռասցի ։ *Թովմաս Կեմպացի* ։

Որ ունի՝ դեռ ոչ տարակայի, այլ առաւել առընթեր կայ և կամ ուներ պնդէ ։ *Նոյնն* ։

Ըստ 'ի նախընթացս աստիճանս հոգին սիրէ և սիրի, խնդրէ և խնդրի, կոչէ և կոչի ։ Իսկ յայսմ աստիճանի սքանչելապէս և անճառ յափշտակէ և յափշտակի, առնու և կալեալ լինի, գրկէ և գրկի, և միայն ընդ միոյն յօդի սիրոյն շաղկապաւ ։ *Նոյնն* ։

Ով սուրբ և ողջախոհ սէր ․ ով քաղցր և անուշակ ախորժակ ։ Ով մաքուր և անխառն դիտաւորութեան կամաց ․ որպիսի այնչափ առաւել անխառն և մաքրագոյն, որչափ յայնմ ոչինչ սեփական թողումն խառնեալ ։ Այնչափ քաղցրագոյն և յաւէտ անուշակ, որչափ բոլորն աստուածային է որ ինչ զգամք ։ Այսպէս զգածիլ՝ է աստուածանալ ։ *Բեռնարդոս* ։

Երանի՞ այնմ որում շնորհեալ է առնուլ զճաշակ համօրէն այսմ քաղցրութեան ։ Որ ոչ այլ ինչ է՝ բայց սէր սուրբ և ողջախոհ, սէր քաղցր և անուշակ, սէր պարզ միանգամայն և անկեղծ ․ սէր փոխադարձ, ներքին և հզօր, որ ոչ 'ի միում մարմնի, այլ 'ի միում հոգւոյ զերկոսին յօդէ 'ի մի, զերկոսին առնէ ոչ եւս երկուս, այլ մի միայն ։ *Բեռնարդոս* ։

Երբեմն լինի արդարև ելանել և 'ի բաց մեկնել եւս և 'ի մարմնական զգայարանաց, մինչ ոչ եւս զգալ անձին՝ որ զգայ զԲանն ։ Լինի այս, յորժամ միտք յանկուցեալ անճառելի քաղցրութե Բանին՝ ըստ երագ ինչ զանձն գողանայ յանձնէ ,

մանաւանդ թէ՝ յաճախագէս, և ուծանոյ յանձնէ ա 'ի վայելել 'ի Լանն ... Այլ երբ իցէ այս-չափ ցո՞ր վայր տանելոր : Լաւղոր հեծանեցութեան, այլ՝ ուսող վայրենեան, և ճորձ՝ ցանցառ : Լէո-նարդոս :

Սէրն աստուածային՝ ձայլ յայլմէ առնէ և յա-ճախագէս զինքն, ոչ թողացուցեալ զսիրողս՝ լինել անձանց տեսակս, այլ գիտողին ճոխացելոց յայնս զորս սիրէն : Դիոնեսիոս Արէոպագացի :

Սէրն՝ (որ հզօր է իբրև զմահ,) յղէ զսի-րողն արտաքոյ անձին, և զետեղէ 'ի սիրեցեալն, անձկագոյն 'ի ներքոյ միաւորելոյ ընդ նմին : Մեծն Ալպերտ :

Հայեցողութեամբ աստուածային հասանի լինել 'ի մեզ սկզբնաւորութեան իմն երանութեան, որ ծաւալի՝ ոչ 'ի հանդերձելումն հանապազոր-դեայն : Թովմաս Ագուինացի :

ԻԵ 'Ի գալ կատարելոյն խափանեսցի մասն 'ի շա-տէս, և եղիցի յերկնաւանդերորում և՝ ողջախոհ և լրացեալ սէր, ձանձրութեան լինելի, տեսու-թեան դէմ յանդիման, միաւորութեան հաստատ, ընկերութեան անթամ, նմանութեան կատարեալ : Յայնժամ ծանիցէ հոգին՝ որպէս ծանուցեալն է . յայնժամ սիրեսցէ՝ որպէս սիրեցեալն է . և խնդասցէ Փեսային 'ի վերայ Հարսին, ծանիցէ և ծանիցի, սիրեսցէ և սիրեսցի : Լէոնարդոս :

Անդ ծամ առցուք և տեսցուք . տեսցուք և սիրեսցուք . սիրեսցուք և գովեսցուք : Օգոս-տինոս :

Ո՛վ Բարութիւնք Տեառն քաղցունք, անմա-

հաճանք, անհամեմատք, յաւիտենականք և անփո-փոխելիք ։ Ա՞րդ էջէ տեսանել չքեղ բարութեանք Տեառն ։ Օգոստինոս ։

Ո՛չ ուրախութիւն 'ի վեր քան զուրախութիւն, առաւելեալ քան զամենայն ուրախութիւն, որոյ արտաքոյ չէք ուրախութիւն ։ Ա՞րդ մօտեց 'ի քեզ ։ Նոյնն ։

Ո՞վ Տէր որ միշտ վառիս, և ոչ երբէք շիջանիս ․ ո՞վ Տէր, Աստուած իմ՝ վառեա զիս ։ Նոյնն ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅԵՐՐՈՐԴ ԳԻՐՍ

1. Հարկք են նոքին · այսինքն Հարկատուութիւնք, հարք, կամ սակք · ռամկ՛ · Վէրկի։

2. Աղուանից գահ · այսինքն Իտալական, Հռովմէական։ Աղուանք, է երկիր ինչ 'ի Թագաւորութեան Նէապօլսոյ։ ես, Իտալիա։

3. Խոսրոյ · Տե՛ս Գիրք Ա. 22։

4. Մորփեոս։ Կեղծեք բանաստեղծից առնեն զնա որդի Քնոյ և Գիշերոյ։ Աստուած Երազոց։ Նկարեն սևագէմ, և պսակաւ Մաքիւ, այսինքն Խաշխաշիւ, որոյ սերմն է Թմրեցուցիչ և քնաբեր։

5. Լէթէ · կամ Գետ Լէթէան · Ըստ առասպելեաց՝ է գետ դժոխոց · որք ըմպեն անտի՝ մոռանան զանցեալսն ամենայն։

6. Քուն։ Առասպելք յօդեն զսմանէ գոլ որդի Երեբոսի և Գիշերոյ։ Նկարեն Թևաւոր, ունի 'ի ձեռին զաւազան և եղջիւր լի խաշխաշիւ զոր և ցանէ 'ի վերայ նոցա զորովք արկանէ զնինջ։

7. Ընդ Երկինս անծանօթս · այսինքն յանծանօթ կլիմայս, կամ 'ի գաւառս։

8. Կինթիա · ըստ քերթողաց Լուսին · Տե՛ս Գիրք Բ. 7.

9. Տօնք տարեկանք Որմզդականք · այսինքն Աւուրք Բարեկենդանին։ 'Ի հնումն առ հեթանոսս էին տօնք 'ի պատիւ Բաքոսի կամ Որմզդական Դից, կամ որ նոյն է Սպանդարամետ դից գինւոյ և արբեցութեան։

10. Փլամինեան ուղի · է ընդարձակ և երկայնաձիգ փողոց Հռովմայ, յօրինեալ սալայատակ 'ի Փլամինոսէ հիւպատոսէ, որ ձգի մինչ 'ի Որիմինի քաղաք։ Յայս փողոց 'ի Բարեկենդանի լինին ձիարշաւք և կառարշաւք · Իտալերէն՝ Գօրսօ։

11. Դոմեանք · են ստորերկրեայ գամբարանոցք

Վկայից Նահատակելոց, յորոց բազումք կան մինչև ցայսօր 'ի Հռոմ պատուեալք 'ի հաւատացելոց. Խաչերէն՝ Գռադափձալէ:

12. Ոսկի Կէփուլէայ. կամ ոսկի Ոփուլայ. այսինքն մաքուր, ազնիւ:

13. Կիձիս Պարոնեան. Պարոս, է կղզի յԱրշիպեղագեան ծովուն, հռչակաւոր վասն սպիտակ և ընտիր մարմարինից:

14. Տիտան. Որդի Երկնից և Վեստայի: Ըստ բանաստեղծից՝ Արեգակն:

15. Դուստ Եփարքին, Տես Գիրք Բ. 18:

16. Փէտայն Արէան. է բան Եւէց ըստ Լատին Թարգմանութեան. գլ. Ի. 25. 26:

17. Եղն Նէոայլ. այսինքն կարի առատաձեռն և առ անարժանս:

18. Շուն Իկարէան. է Շուն, կամ Շնիկ Համաստեղութիւնն. յորոյ 'ի ծագելն յամարայնի՝ լինի տօթ սաստիկ, որով պատառոտին 'ի տապոյ երեաք անդոց: Ըստ բազում առասպելաբանութեան էր սա Շուն Իկարիոսի, կամ Իկարոսի հօր Էրիգոնեայ, որ վասն հաւատարմութեանն առ տէր իւր՝ յետ ինքնասպան մահուն վասն մահու տն, փոխեցաւ 'ի Դից 'ի կարգս Համաստեղութեանց երկնից:

19. Հանգիստ: Առաջնորդ մոլար աղանդոյն Հանգստականաց՝ եղև Միքայէլ Մոլինոս երէց Սպանիացի յամին 1627: Սա ուսոյց վարդապետութիւն նոր և մոլար 'ի խորհրդական Աստուածաբանութեան. աշակերտք նորա կոչեցան Իտալերէն Գուիէթիզմօթի, այսինքն Հանգստականք. զի գլխաւոր հիմն վարդապետութեանն էր այս, թէ Պարտ է ընդունայնանել զանձն առ 'ի միանալ ընդ Աստուծոյ, և ապա կալ մնալ 'ի կատարեալ հանդարտեան, այսինքն 'ի պարզ հայեցողութեան և եթ հոգւոյ, ոչինչ խորհրդածել, և ոչինչ ամենևին ունել փոյթ ընդ արտաքոյ շարժմունս կրից եղելոց 'ի մարմնի: Գիրք նորա մոլորականք դատապարտեցան յամին 1687:

20· Ինչ Հորդ ԲԵՐԷՔ· հայի 'ի բանն Երգոց երգոյն· գլ· Է· 5· ըստ Լատին թարգմանութեան, որ ասէ, Հաստատեցէք զիս ծաղկօք· ուր Հայ թարգմանն դնէ՝ Խնձով:

21· Այնպէս վառեալ և այլն· Այսպիսի սքանչելի ներգործութիւնք աստուածային հրաբորբոք սիրոյ պատմին զՍրբոյն Ստանիսլաւոսէ Քոստքայ, զՍրբոյն Փիլիպպոսէ Ներեան, և զայլոց բազմաց աստուածախոհ արանց և կանանց, որոց հասեալ 'ի գերակատար միաւորութիւն ընդ Աստուծոյ վարէին յերկրի կեանս անհամեմատս մարմնաւորաց, խօսէին և գործէին նորասքանչս և անօրինակս, զորոց զբազումս ունիս ընթեռնուլ 'ի Վարս Սրբոց:

22· Թալիա է մին յինն Մուզայից · տես Գիրք Ա· 4:

23· Զարդարոյ աշխոյ· այսինքն քան զայլ ամենայն աստեղս:

24· Ոսկի 'ի ձեռն· այսինքն ոսկի գաւազան ունելով 'ի յաջոյ ձեռին:

25· Լուսեալ յանձինս 'ի լուսածին· այսինքն Երանեալ հոգին օժանդակեալ Լուսոյ փառաց՝ լինի յարմար ատ-տեսութիւն աստուածային էութեանն:

ИМЕНИ МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑՈՒՑԱԿ

ԲԱՆԻՑ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԽՈՐԱԳՐԱՑՆ, ՈՐ 'Ի ԸՍՏԱՌՆՑՍ ԽՈՐԱՓԱՆԵԼԵԱՑ ԳՐՈՑ ։


Նախերգանք Թարգմանչին ։ 3
Նախադրութիւն Առաջին Գրոց ։ 7
ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ ։ 9
Ովիդիոս չուսուցանէ սիրել բարւոք ։ 10
Կոչումն Աստուծոյ և Ածածնին ։ 11
Յորդորին ամենեքին սիրել բարւոք ։ 11
Տնկակից է Սէր եւս և յանշունչ արարածս ։ 12
Մարդկային սրտի վայել է սիրել ։ 13
Սէր յաղթէ և հզօրաց և իմաստնոց ։ 16
Այսպիսի Սէր չէ մանուկ այլ՝ յաւէժածին ։ 18
Այս Սէր ոչ դիմէ առ Պատիւ ։ 20
Ոչ բերի առ Ճոխութիւն ։ 27
Ստորագրութիւն Կառաց և Յաղթանակի Աստղկան կամ Ափրոդիտեայ ։ 30
Սէրն որ տայ բարւոք սիրել՝ ոչ ձգի գեղեցկութեամբ մարմնոյ ։ 32
Սէրն որ տայ մարդկան սիրել բարիոք, բերի յԱծ ։ 42
Որ սիրէն զԱծ, ստանայ զամենայն բարի ։ 42
Նոյն իսկ անշունչ արարածք սիրեն զԱծ ։ 44
Ած 'ի նմանութիւն Աղբեր ։ 46
Քաղցր է սիրողին Ած և անուշակ ։ 48
Քաղցրութիւն ածային սիրոյն է անպատում ։ 52
'Ի Սէրն Աստուծոյ ոչինչ ցաւ կամ երկիւղ ։ 52
Որ սիրէն զԱծ, սիրի յԱստուծոյ ։ 55
Արարչութիւն աշխարհի յայտնէ զսէրն Աստուծոյ առ մարդիկ ։ 58
Նոյնպէս յայտնէ ստեղծագործութիւն հոգւոյն ։ 60
Մարդեղութիւն Բանին և ծնունդ Քսի վկայեն զսէրն Աստուծոյ ։ 61
Խորհուրդ սրբոյ Հաղորդութեան է առհաւատչեայ սիրոյն Աստուծոյ ։ 62
Այլ նշանք ածային Սիրոյն ։ 63
Առակ Անառակ որդւոյն ։ 65
Դարձ Սամարուհւոյն ։ 67
Բարերարութիւնք Քսի եղեալք առ Հրէայս՝ են նշանք սիրոյ նորա ։ 69

Մահն Ք̃ի և պարագայք այնորիկ են նշանք սիրոյ ։ 71
Խտիր 'ի մէջ երկրաւոր և երկնաւոր հեշտութեանց ։ 74
Սրբուհին Մարիամ Մագդաղենացի 'ի ներքս ածի խօսիլ 'ի Մասսիլեան քարայրէն ։ 76
Համընտիր իմաստք Սրբոց Հարց ։ 81
Ծանօթութիւնք յառաջին գիրս ։ 91

---

Նախադրութիւն Երկրորդ Գրոց ։ 103
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ։ 105
Ամենայն ինչ ուղղի արհեստիւ ։ 106
Նշանակին անգղըք կանանց ։ 106
Ստորագրութիւն զինուորական կրթութեան ։ 108
Պարտ է փոյթ մեծ ունել գեղեցկութե̃ հոգւոյն ։ 109
'Ի մահուչափ մեղաց պարտ է բացէ 'ի բաց խորշիլ ։ 111
Օրինակ սրբուհւոյն Պղանքայի ։ 113
Օրինակք սրբոց Վկայից ։ 114
Պարտ է փախչել յառթից մեղաց ։ 116
Առաւելապէս պարտ է պահել զաչս ։ 117
Նաև 'ի մանունց պակասութեանց պարտ է փախչել ։ 120
Օրինակ սրբոյն Աղոյիսի Գոնզակայի ։ 122
Տարփածուք փոյթ մեծ ունին մարմնոյ գեղեցկութեան ։ 123
Պարտ է տալ պատերազմ ընդ մոլութիւնս ։ 128
Ապաշխարութիւն յետ անկմանն ։ 129
Պարտ է քաջարութեամբք ( այսինքն առաքինութեամբք ) զարդարել զոգին ։ 133
Անձն առաքինասէր ապախտ առնէ զհրապոյրս աշխարհի ։ 138
Նշանակին խաղք ինչ՝ մանկանց սովորականք ։ 138
Սպասահարկութիւնք զոր սովոր են մատուցանել տարփածուք ։ 140
Առաւօտեան գոհութիւն ։ 142
Բարեյարդար գրութիւն մարմնոյ յեկեղեցւոջ ։ 142
Մատուցումն աղօթից ։ 144
Պարտ է աղօթել մտադիր ։ 146
Պարտ է նուիրել Աստուծոյ զաղօթս ձեռամբ Ածամօրն ։ 147
Պարտ է փախչել 'ի սնափառութենէ ։ 149

Պարտ է առ ոչինչ գրել զպայմանումն անբարեաց : 151
Պարտ է զգոյշ լինել 'ի հրապուրանաց մոլորեցուցչաց : 154
Պարտ է մատչել յունկնդրութիւն ածային քարոզութեանց : 156
Պարտ է պարապել յոգեշահ վերծանութիւնս : 157
Որ սիրէն զած՝ պարտ է սիրել և զընկերն : 159
Նաև զթշնամիս պարտ է սիրել : 159
Պարտ է բաշխել ողորմութիւն առ աղքատս : 160
Պարտ է գործել և զայլ գործս ողորմութեան : 163
Խրատել պարտ է զմոլորեալս : 166
Պարտ է մխիթարել նպաստիւք զհոգիս ննջեցելոց : 170
Պարտ է կարդալ յօգնութիւն զՍ՜բս զընդ Ք՜սի թագաւորեալս : 173
Պարտ է ժաել արտասուօք զպաշտպանութիւն սրբոյ կուսին : 174
Պաշտամունք ընծայելիք սրբոյ Կուսին : 174
Որ սիրէն զԱ՜ծ պարտի սիրել և զկոյս Ա՜ծածինն : 175
Հատընտիր իմաստք Սրբոց Հարց : 177
Ծանօթութիւնք յերկրորդ գիրս : 185

---

Նախադրութիւն Երրորդ Գրոց : 191
ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ : 195
Եղանակ (կամ պայման) սիրելոյ զԱ՜ծ : 196
'Ի կոչել Ա՜յ պարտ է վաղվաղակի տալ պատասխանի : 198
Փեսայն որ յԵրգս Երգոյ՝ առ դուրս Հարսին : 198
Պատասխանի Հարսինն : 199
Պարտ է 'ի բաց առնել զխոչս : 201
Դիւցազնական փախուստ սրբոյն Աղեքսիոսի : 202
Պարտ է նմանող լինել դիւցազանց : 207
Պարտ է նուաճել զմարմին : 208
Չափաւորութեան պէտք են 'ի ճնշել անդ ըզմարմինն : 210
Պարտ է վարել հոգևոր Առաջնորդաւ : 211
Պարտ է ժուժկալել յօրինաւոր բերկրանաց : 212
Թէոդոս կայսր : 214
Պարտ է հրաժարել 'ի տարապարտ ընդվայրաքննութենէ : 216

Պարտ է հանապազ և ամենայն ուրեք խօսել զԱստուծոյ ։ 217
Ցուցանի այս օրինակաւ Հարսին որ յԵրգս Երգոց ։ 218
Հանապազորդական ներկայութիւն Աստուծոյ ։ 219
Պարտ է արարածովքս ելանել առ Աստուած ։ 220
Պարտ է յաճախ 'ի կիր առնուլ երկնաւորաց աղօթս ։ 224
Ներգործութիւնք այնք որ գնայ 'ի ննջել ։ 228
Քննութիւն խղճի մտաց ։ 229
Պարտ է պարապել 'ի հոգեկան մտածութիւնս ։ 230
Իղձ առ Յիսուս մանուկ ։ 232
Իղձ առ Քրիստոս խաչելեալ ։ 233
Եղանակ մտածութեան ։ 235
Դէպք և պատճառք ցամաքութեան ։ 236
Նկատողութիւն Աստուծոյ և Աստուածայնոց ։ 238
Հոգևոր արբեցութիւն Հոգւոյ ։ 240
Սուրբ և անմեղ Հանգիստն այն որոշի 'ի վնասա-կար մոլորութենէ Հանգստականաց ։ 241
Միաբանութիւն կամաց ընդ Աստուածայնոյն ։ 244
Պարտ է գիրկս արկանել խաչին ։ 245
Սէր թալկացեալ կամ ( խանդակաթ ) ։ 247
Սէր գործող ։ 248
Սէր բորբոքեալ ։ 249
Սէր փոխակերպիչ և միաւորիչ ։ 249
Հարսն աղաչէ զՓեսայն վախճան առնել զուար-ճութեանց ։ 251
Հարսն հրաժարեալ յերկնային զուարճութեանց յաստի կեանս, առ 'ի չարչարիլ և ևս ։ 253
Բաղդատութիւն վերջին աստիճանի սիրոյն ընդ նախընթացիցն ։ 255
Յաղթական հանդէս հոգւոյ մտելոյ յերկինս ։ 258
Ստորագրութիւն Հրեղէն երկնից ։ 260
Մուտք հոգւոյն յերկինս ։ 261
Փառք երանեալ հոգւոյն ։ 263
Համընտիր իմաստք Սրբոց Հարց ։ 267
Ծանօթութիւնք յերրորդ գիրս ։ 282

*Tip. ed Edit. li Monaci Armeni*
*di S. Lazzaro in Venezia.*